

ՄԵՐ ՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼԶԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXI

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST

XXI

*This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*



YEREVAN - 2002

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

XXI

ЕРЕВАН – 2002

17A26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

XXI

*Մեկնասուրյամբ
Արմեն և Բերսաբե Շերեճեան Դիմնադրամի - ԱՄՆ*



ԵՐԵՎԱՆ – 2002

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՂՏ 950
ԳՄԳ 63.3(5)
Մ 663

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Բայրուրդյան Վ.Հ., Հարությունյան Ն.Վ.,
Հովհաննիսյան Ն.Հ. (մախագահ), Չոբանյան Պ.Ա.,
Սաֆրաստյան Ռ.Ա.

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXI)-
Եր., Զանգակ-97, 2002, 408 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի
XXI հատորը ներառում է տարբեր սերունդների պատկանող հայ արևելագետների աշխատությունները: Աշխարհագրական – տարածքային ատումով նրանք ընդգրկում են Արաբական Արևելքը, Իրանը, Թուրքիան, Քրիստոնյա Արևելքը և Գին Արևելքը: Թեմատիկ ատումով ժողովածուի
հոդվածներում արծարծվում են իին շրջանի, միջին դարերի, նոր և նորագույն պատմության, քաղաքականության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների զրականության, արվեստի, լեզվաբանության և հարակից այլ աղբիական հարցեր:
Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, մշակույթի հարցերով զբաղվողների ինքախու նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Մ 0503030000 2002թ.
0003(01)–2002

ԳՄԳ 63.3(5)

ISBN 99930-2-478-3

© Հեղինակներ, 2002 թ.

ՎԱՀԱՆ ԲԱՅՔՈՒՐԴՅԱՆ

XX ԴԱՐԻ 20-30-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶՐԴԱԿԱՆ
ԱՊՍԱՍՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐԶ-ԻՐԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1923 թ. Լոզանի կոնֆերանսում մեծ տեղաբյուրեղների հավաքական կամքով տասպամաքար դրվեց Սևրի դաշնագրի վրա: Այդ կոնֆերանսը հանդիսացավ ոչ միայն հայկական հարցի զերեզմանումը, որն առաջին աշխարհամարտի տարիներին և հետպատերազմյան քաղաքական սակարկումների շրջանում տևակամորեն չարչրկվում էր վերապայան համակարգի դիվանագիտական ատյաններում, այլև վերջնականապես փակեց քրդական հարցը, որը մույնպես Սևրի դաշնագրի ծնունդ էր, սակայն մեռավ առանց հասակ քաշելու: Միանգամայն իրավացի է Արշակ Սահրաստյանը, երբ դառնությանը գրում է, որ չնայած իրենց տված քազում խոստումներին և Սևրի դաշնագրի տակ դրած ստորագրությանը, դաշնակցային տերությունները Լոզանում «ծախեցին և Քրդստանը և Հայաստանը»¹:

Ի տարբերություն հայկական հարցի, որը չնայած իր ծախողմանը, այնուամենայնիվ քննարկման հարց հանդիսացավ Լոզանում, քրդական հարցը առհասարակ դուրս մնաց քննարկումների օրակարգից, որովհետև դեռևս 1921 թ. դաշնակիցները փաստորեն հրաժարվել էին քրդերի ազգային ինքնորոշման պահանջ առաջադրելուց²: Կոնֆերանսում քրդական հարցը քննարկվեց գլխավորապես որպես Մոսուլի խնդրի քաղկացուցիչ մաս: Ի դեպ, Վերսալի կոնֆերանսում անհաջողության մատնվելով իր տարածքը Իրաքյան Քրդստանի հաշվին ընդարձակելու հավակնությունից, Իրանը Լոզանում կրկնեց իր այդ պահանջը՝ 1922 թ. դեկտեմբերի վերջին դիմելով Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներին, որպեսզի նրանք Թեհրանի նկատմամբ դրսևորեն «քաղաքացկամություն» և իրանա-թուրքական «Քրդստանյան սահմանը» վերանային հօգուտ Իրանի: Որպես իր այդ պահանջի հիմնավորում, իրանական դիվանագիտությունը վկայակոչում էր այն, որ 1919 թ. օգոստոսի 9-ի անգլո-իրանական պայմանագրին համապատասխան, անգ-

լիացիներն իբր 1920 թ. իրենց խոստացել են վերադառնալ հարցում քննա-
տաք գնալ Իրանի ցամաքայիններին:

Մակայն անգլիացիների պատասխանը վերին աստիճանի կոչու
էր, եթե չստանք կոպիտ: Մեծ Թրիտանիայի արտաքին գործերի պետա-
կան քարտուղար լորդ Քերզոնը, որը Լոզանում գլխավորում էր անգլիա-
կան պատվիրակությունը, հայտաբարեց, որ պարսիկներին առհասա-
րակ ոչ մի խոստում չի տրվել, իսկ եթե նրանք վկայակոչում են 1919 թ.
պայմանագիրը, ապա այն այլևս գոյություն չունի: Դրան լորդ Քերզոնն
ավելացրեց, որ «այլևս գոյություն չունի մալ Թուրքիայում քրդական պե-
տության, կամ քրդական ինքնավար մահաբնդի առեղծման հարց» ինչպես
ենթադրվում էր Սերի պայմանագրում³: Նա կտրականապես մերժեց
մալ Իրանի պահանջը՝ բուլլատելու, որ իր մերկայացուցիչը մասնակցի
Լոզանի կոնֆերանսին, քանի որ այնտեղ քննարկվելու էր Մուսուլի հար-
ցը, որտեղ իրանական դիվանագիտության պնդումով «միայն Թուրքիա-
յի հետ ունեց ընդհանուր շահեր»⁴: Այսպիսով լորդ Քերզոնը վրեժ էր լա-
ծում պարսիկներից, որոնց հետևողական պահանջների հետևանքով
1921 թ. Անգլիան սակաված էր իր գործերը դուրս բերել Իրանից:

Եթե Լոզանից հետո քաղաքացիար հայկական հարցը հանվում
էր միջազգային դիվանագիտության բերածրարաններիցև ուղարկվում ար-
խիվ այն պատճառաբանությամբ, որ Արևմտյան Հայաստանը հայա-
բառի է եղել (չկա հայ), հետևաբար չկա մալ հայկական հարց), իսկ Հա-
յաստանի արևելյան հատվածում ստորեմը գտել է լուծում ի դեմս հայ-
կական երկրորդ համըսպետության՝ Խորհրդային Հայաստանի գոյու-
թյան, ապա քրդական հարցին վիճակված էր շարունակել իսողալու քա-
ղաքական մանրադրամի դեք, այս անգամ բուրք մտրահայտ ազգայնա-
կանների՝ միլլի-քեմալականների ձեռքերում, նոր տառապանքներ բերե-
լով քուրդ ժողովրդին:

Դեռևս 1921 թ. քեմալականները լծվել էին ետանդում գործունեու-
թյան, հույս ունենալով քրդերի ազգային ու կրոնական զգացումներն օգ-
տագործել նավթով հարուստ Մուսուլի վիլայեթը անգլո-ֆրանսիական ե-
րախից սղոկելու և «մոր Թուրքիային» միացնելու համար: Այդ կարևոր
գործը գլուխ բերելու համձնարարությունը Մուստաֆա Բեմալը դրել էր
իր մերձավորագույն զինակիցներից մեկի՝ զեմերալ Օզդեմիր փաշայի
փրա, որը քանիցս քնդումակություն էր դրսևորել մալ դիվանագիտության
քնագավատում, գտնելով ծագած հարցերի ոչ սովորական լուծումներ:
Թուրքերին և քրդերին անվանելով «մեկ միասնական կրոնի զավակ-
ներ», զեմերալը կոչ էր անում նրանց միավորվել Անկարայի կառավա-
րության շուրք և արյուն քառիել «հանուն հավատի» ընդդեմ իսլամի ռլա-
քին բշմամբների և առաջին հերթին անգլիացիների⁵: Մյաժամանակ մա
հաջողությամբ շրջանառության մեք էր դնում քեմալականների քաղա-

քական զինամեղի հիմնական զենքը՝ «հակահիմալերիախտական» կարգախոսանքը: Ընդ որում քրդական այն բոլոր առաջնորդները, որոնք հրաժարվում էին ենթարկվել քեմալականների կամքին, պիտակավորվում էին իբրև «հիմալերիախիզմի գործակալներ», «կրոնական ֆանատիկոսներ», «հետադիմականներ» և այլն:

Իրաքի քրդերին իրենց կողմը գրավելու նպատակով, քեմալականները նրանց ազդեցիկ առաջնորդների հետ ստորագրեցին մի պայմանագիր, որով խոստանում էին նպաստել Իրաքյան Քրդատանի անկախության «սուրբ գործին»: Այսպեսով Անկարան իր համաձայնությունն էր տալիս ստեղծելու «անկախ Քրդատան»՝ սակայն Իրաքի հաշվին⁶:

20-ական քվակականների սկզբին քեմալականների սեռտոմ ուշադրության կենտրոնում էր գտնվում մահ Իրանական Քրդատանը: Այստեղ, որպես պատասխան ինքնագլխության ձգտող ցեղերի հնազանդեցման իրանական կառավարության հետևողական քաղաքականության, 1922 թ. կեսերին բռնկեց քրդական մի հուժկո անջատողական շարժում շեք-բաք ցեղի առաջնորդ Իսմայիլ ադա Սըմկոյի գլխավորությամբ: Ապստամբներն առաջ քաշեցին Իրանի տարածքում անկախ Քրդատանի ստեղծման պահանջ⁷:

Փաստեր կան այն մասին, որ Իրանական Քրդատանի ազատագրմանը ձգտող քրդական ուժերը իրենց ներշնչումն առնում էին բուրքերից ու բոլշևիկներից: Քեմալականներն աշխատում էին պարսկական շրջանները պահել մշտական ապստամբության մեջ, որպեսզի պարսիկները թշնամաման քրդերի հետ և դռանով իսկ բուրքերը ունենան Իրանի գործակցությունը ընդդեմ քրդական շարժման: Բացի այդ, քեմալականները ձգտում էին այդ շարժումներով քրդերի ուշադրությունը շեղել Թուրքիայից և այն կենտրոնացնել Իրանական Քրդատանի վրա⁸: Թուրքական գլխավոր շտաբի վարչության պետ Բասրի-Բեյը 1922 թ. գաղտնի հրահանգ էր իջեցրել Օզդեմիր փաշային, որտեղ ասվում էր, որ Սըմկոյի հաղթանակը և նրա ազդեցության մեծացումը քրդերի շրջանում չի համապատասխանում Թուրքիայի շահերին: «Մակայն, - շարունակվում էր հրահանգում, - ներկա պահին նրա հետ թշնամանալը ևս բնավ մեր օգտին չէ: Ուստի դուք մեծ ծառայություն մատուցած կլինեք հայրենիքին, եթե կարողանաք խնայել ցեղերին և նրանց տրամադրել Սըմկոյի դեմ, օրինակի համար տարածելով լուրեր, որ Սըմկոն այդ հեղափոխությունը բարձրացրել է անգլիացիների փողերով և քրդերի արյունը թափում է ծանայելով անգլիացիներին և բացառապես հանում սեփական շահերի»⁹:

Անկարայում սովետական դեսպան Ս. Արսլովի հետ «անկեղծ գրույցի» ժամանակ Մուստաֆա Քեմալը «բարեկամ երկրի» դիվանագիտական ներկայացուցչից չէր բացքնում, որ «Ուրմիա լճի շրջակայքում բնակվող քրդերը ցամկություն են հայտնել գործելու Թուրքիայի հետ հա-

մատոդ»: Որ նրանք իրենց տրամադրության տակ ունեն անհրաժեշտ քանակությամբ զենք, դրամ և պատրաստ են հանդես գալու «անգլիական խմայեթիաղիզմի դեմ»: Այնուհետև ղեկնելով քաղաքական խորհրդածությունների գիրկը, «Քուրքերի հայրը» իր գլուցակցին պարզաբանում է. «Քրդական հարցը խնդրված ու քարո խնդիր է: Անգլիան օգտվում է նրանից, որ քրդերը պատկանում են երկու պետության՝ Թուրքիային և Պարսկաստանին և խաղում են դրա վրա: Անգլիան ցանկանում է իր տիրապետության տակ ստեղծել քրդական պետություն և դրանով իսկ հանդես գալ հրամայողի դերում մեր, Պարսկաստանի և Անդրկովկասի նկատմամբ... Այժմ քրդական առաջնորդները բաժանվել են. մի մասը հակված է դեպի Իրանը, մյուսները դեպի Անգլիան, երրորդները դեպի մեզ... Սուլեյմանիեում անգլիացիները շնչյա Մահմուդին ստիպեցին հանդես գալու մեր դեմ... Մենք, Քուրքերս, — քննիծաղով շարունակում է Քեմալը, — նույնպես պարտքի տակ չենք մնում: Բուրջիստանի հարավում մենք օգնեցինք քուրդ Ֆեթհիկին և ուրիշներին ապստամբելու անգլիացիների դեմ»¹⁶:

1922 թ. օգոստոսին Ուզա-խանի գործերը ջախջախեցին Սըմկոյի ապստամբությունը և գրավեցին նրա մատավայրը՝ Չեքիկ-կալեն, դրանով իսկ միառժամանակ վերջ տալով Քուրքերի միջամտությանը Իրանի ներքին գործերին:

Օգոստոսին Վերկակի առանդարտի» քաղաքականություն և Իրանի ու Իրանի քրդերի ազգային խճերի նկատմամբ ընդունելով «անկախության» ջատագովի կեցվածք, քեմալականները Թուրքական Քրդաստանում և Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջանների նկատմամբ ընդհակառակը, իրականացնում էին ավանդական «արյան ու երկաթի» քաղաքականություն, անխնայ կերպով ճգնելով անկախության որևէ ձգտում և առհասարակ մպառակադրվելով հիմքից վերացնել քրդական հարցը: Տարված լինելով «Թուրքիան Քուրքերի համար» շավինիստական գաղափարներով, քեմալականները ծրագրել էին փայփայում Թուրքիան վերածելու ազգային-էթնիկական առումով համատարր մի պետության: Ուստի նրանք պատրաստվում էին շարունակել երկու-քուրքերի կողմից սկսած Արևմտյան Հայաստանը «խորք տարրերից» սրբի-մարքելու քաղաքականությունը, կազմելու համար միասպաղաղ մի Թուրքիա: Այժմ հերթը հասել էր քրդերին, և Անկարան որոշել էր իր հասկացած ձևով լուծում տալու քրդական հարցին:

Ներկայացնելով այդ հարցում Մոստաֆա Քեմալի քաղաքականության շրջադարձը դեպի «ծանր ճեղքի» մարտավարությունը, քուրդ ազգային գործիչ Քյամուրան Բեդիլխանին նշում էր, որ նրբ քրդերը նրան հիշեցրին իր ժամաանակին իրենց տված առատ խոստումների մասին, նա որպես պատասխան քրդերին ցույց տվեց բնդանոթներ և ավին,

հրամայեց փակել քրոյական դպրոցները, ձերբակալել ազդեցիկ ու հայ-քենասեր գործիչներին և նրանց համձնել տխրահույակ «ամկախության դատարաններին»¹¹: 1923 թ. հոկտեմբերի 18-ին թուրքական Ազգային Անձ ժողովը (ԹԱՄԺ) ընդունեց «ավագակային շարժումները ճնշելու վերաբերյալ» օրենք, որը կառավարությանը հնարավորություն էր տալիս ցանկացած շարժում որակել որպես «ավագակային-քանդիտական» և անողոր դաժանությամբ ճզմել դրանք:

Այսպիսով, հայերի նկատմամբ ադրեմ փորձարկված «տոտալ մաքրագործման» գործելակերպը մտնում էր իր եերթական փուլը: Քրդերը հանդգնեցին, որ հայերի ու հույների կոտորվելուց և քիբա ուժով երկրից քշվելուց հետո, իրենք թուրքիայի մեջ մնացել են մեռակ և այժմ թրքական վտանգը բացառապես կենտրոնացած է իրենց դեմ: Նրանք հասկացան մահ, որ իրենց խղճությունը ազգայնական քեմալականների համար ոչ մի արժեք չի ներկայացնում, ասավել ևս հաշվի չեն առնվում իրենց նախկին օժանդակությունները թուրքական պետությանը: Միաժամանակ նրանք խորապես զոջացել էին, որ «բուրքի մեռած ժամանակ», այսինքն համաշխարհային պատերազմի եզրափակիչ էտապում, երբ պարտված թուրքիան Մուղղուսի զինատաղարով համձնվել էր դաշնակիցների ողորմածությանը, իրենք պահը ձեռքից բաց թողնեցին և շղիմեցին ապստամբության:

Այս ծանր մտայումները քրդերին մղում էին ներքին կազմակերպվածության: Դեռևս 1920 թ. աշմանը մի խումբ ազդեցիկ քրոյական առաջնորդներ՝ ջիրբանի աշիրեբապետ գնդապետ Խալիտը, Բիրիսի երեսփոխան Ալի Ռ-զգան, Քեմալ Ֆեկի Իյլը, շեյխ Սայիդ Նախշրանդին և ուրիշներ ստեղծեցին մի կազմակերպություն, որն ընդամենը հնգամյա աշխատանքներից հետո դարձավ կատարյալ մի ցանց, և արմատ րոնեց թուրքիայի քուրդ բնակչության շրջանում, իսկ ամենակարևորը՝ նամախոհներ գտավ Իրանում, Իրաքում, Սիրիայում և նույնիսկ Սօվիետսում:

1925 թ. փետրվարի կեսերին արևելյան վիլայեթներում բռնկեց քրդերի ապստամբություն շեյխ Սայիդի ղեկավարությամբ: Կարճ ժամանակամիջոցում այն ընդգրկեց 14 վիլայեթ: Ապստամբների թիվը հասավ մոտավորապես 40 հազար մարդու: Նրանց նպատակն էր ձերբազատվել թուրքական լծից և ստեղծել անկախ քրոյական պետություն՝ Դիարբեքի մայրաքաղաքով: Ապստամբության բուն կազմակերպիչը «Ciwata Azadi Kurd» («Քրդերի ազատության միություն») կազմակերպությունն էր¹²:

Թուրքիայի Ժողովրդա-Հանրապետական կոսակցության կառավարությունը շեյխ Սայիդի ապստամբությունը որակեց որպես «հետադիմական», «քրդերի կրոնական մոլեռանդության պայթյուն», որը նպատակ ունի վերականգնել խալիֆարը, սահմանել շարիարական նոր-

մեր, տապալել կատարող «աշխարհիկ-աքիտական» վարչակարգը և խափանել Թուրքիայի նվթարականացումն ու արդիականացումը: Ընդդրում բուրժական մամուլը վարչապետ Ալի Էնթի-բեյի և ներքին գործոց նախարար Ջեմալ-բեյի հրամանով սկսեց բռնի քաղաքային մղել այն առումով, որ քրդերն ապստամբել են օտարերկրյա տերության (յումա՝ անգլիացիների - Վ. Բ.) ստորադրների հետևանքով¹³:

Ի դեպ, ապստամբությունն առիթ ծառայեց Էնթի-բեյի կատարարության փոփոխման համար, որովհետև ԺՀԿ-ն ժայռանել ազգայնականները նրան մեղադրեցին քրդական շարժումը ճնշելու ժամանակ ցուցաբերած անվճռականության մեջ:

Ապստամբության չբջանում Անկարան հետևողականորեն աշխատում էր Խորհրդային Միության ղեկավարներին ևս ներշնչել հակաբուրժական տրամադրություններ, քրդական ազգային շարժումը մերկայացնելով որպես պոռնիսկերիախտական, արևմտամետ, գործակալական: Դեռևս 1921 թ. օգոստոսի 4-ին արտաքին գործերի գծով բուրժական կոմիսար Յուսուֆ Քեմալ-բեյը Գ. Չիչերինին հասցեագրված հուշագրում նշում էր, որ անգլիացիների նվիրական իրձն է պատմել ստեղծել Հնդկաստանը պաշտպանելու և Մուսոլի նավթը ստանալու համար: «Այդ նպատակով, - շարունակում էր նա, - անգլիացիները սլամավորել են Միջագետքի և Սև Օսլի միջև ստեղծել մեկ կամ մի քանի փոքր պետություններ, որոնք պետք է գտնվեն բրիտանական հովանու ներքո. քանի որ Հայաստանի մասին, որը նախատեսված էր այդ նպատակի համար, ներկայումս խոսք անգամ լինել չի կարող, ուստի Անգլիան աշխատում է այդ նույն ծրագրի համար օգտագործել, ի միջի այլոց սպարդում կերպով, սքիկաների կողմից ղեկավարվող քրդական բանդաները»¹⁴:

Դժվար է հավատալ, որ Մոսկվան չէր կուսում քեմալականների այս «ենդափոխական-հակախմբերիախտական» ճամաբուսկությունների քաբմված խմաստը: Սակայն առաջնորդվելով գուտ պրագմատիստական հաշվարկներով, խորհրդային ղեկավարները ոչ միայն ընդունում էին դրանք, այլև տուրք տալիս Անկարայի շովինիստական նկրտումներին, այդ թվում նաև քրդական հարցում:

1925 թ. մարտի 3-ին բուրժական կատարարությունը նորից գլխավորեց Իսմայլ Ինենյում: Այն մշակեց վարչական և քաղաքական միջոցառումներ շեյխ Սայիդի ապստամբությունը ճնշելու համար: Մուստաֆա Քեմալի պաշտոնական խոստովանությամբ, բուրժական կատարարությունը ստիպված էր դոս համար ռազմական դրության մեջ պահել կամոնավոր գործերի ութ-ինը դիվիզիա: Թուրքական գործերի թվական ու տեխնիկական գեորագանցությունը, միասնության քացակայությունը քուրդ առաջնորդների միջև, հասուն քաղաքական կազմակերպության քացակայությունը, որն ունենար գործողությունների հատակ ծրագիր, և

մի շարք այլ պատճառներ կանխորոշեցին քրդական ապստամբության պայտարությունը: Մինչև 1925 թ. ապրիլի կեսերը ապստամբների գլխավոր ուժերը շրջապատվեցին ու ֆախջախվեցին Գեմջույի գոգանվառում: Շեյխ Սալիդը և ապստամբության մյուս ղեկավարները բռնվեցին Մուրադ շայ գետի կամրջի վրա: Հունիսի վերջին նրանք բոլորն էլ «սակախորթյան դատարանի» վճռով կախադան հանվեցին Դիարբեքիում:

Հետագրքիր է նշել, որ այդ ապստամբությանը իրենց եռանդուն մասնակցությունն էին բերել նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի հայ, ասորի և չերքեզ բնակչությունը, որի մասին մեզ են հասել առանձին կցկտուր տեղեկություններ: Այսպես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին Դիարբեքիի «սակախորթյան դատարանը» մահվան դատապարտեց Չնշկածագի բնակիչ դարբին Պողոսին, որը մեղադրվեց քրդական ապստամբությանը եռանդուն մասնակցություն ունենալու և իւրերեղում ապստամբների օգտին լրտեսությամբ զբաղվելու մեջ: Ընդդրում «Հաքիմիեթի միլիթե» բերքը գրում էր, որ հայ և ասորի կամավորները միանում էին ապստամբներին, Բրդատանի հետ միավորված անկախ Հայաստան ստեղծելու համար¹⁷: Տեղական մահամզապեսի ամունով բուրջական բանակի հրամանատարության կողմից իջեցված շրջաբերական մամակում ասվում էր, որ «մերչնչվելով մեր դեմ անզուսպ վրիժառության զգացումներով, հայերն անկասկած սպասում են հարմար առիթի, որպեսզի ոչնչացնեն բոլոր ոչ հայկական տարրերին, այդ թվում նաև քրդերին, որոնց այժմ օգնում են: Մեր տարածքում և մեր մահմեդական ռասայի ոսկորների վրա նրանք ցանկանում են վերականգնել մեր Հայաստան»¹⁸:

Մինչև շարժումը սկսելը, քուրդ ապստամբները ենթադրում էին, որ օտար պետությունները օգնություն չեն ցուցաբերի բուրբերին: Մակայն դա այդպես չեղավ: Սահմանակից տերություններից ոմանք ուղղակի կամ անուղղակի ձևով օժանդակեցին նրանց: Օրինակ, Սիրիայի ֆրանսիական իշխանությունները թույլ տվեցին բուրբերին օգտագործել սիրիական երկաթուղիները ապստամբության շրջանը զորքեր ու սպասազինություն ուղարկելու համար:

Շեյխ Սալիդի ապստամբությունը ճնշելուց հետո բուրջական իշխանությունները քրդերի նկատմամբ սկսեցին կիրառել պետական ահաբեկչության և բնաջնջման քաղաքականություն: Անգլիացի դիտորդ Արմատրոնգը այդ առթիվ գրում էր. «Բրդատանը հրով և սրով ավերածության ենթարկվեց: Տղամարդկանց տամջում և մահապատժի էին ենթարկում, կանանց և երեխաներին տանում էին անհայտ ուղությամբ և սպանում, գյուղերն այրում էին, իսկ դաշտերը ամայացնում: Թուրքերը կազմակերպեցին քրդերի մի այնպիսի կոտորած, որը իր դաժանությամբ չէր զիջում սուլթանության ժամանակ հայերի նկատմամբ կատարված հաշվեհարդարին: Նրանք կոտորում էին ոչ միայն քրդերին, այլև հույն-

րին, հայերին, բուլղարացիներին... Դատարանների որոշմամբ գտնվող փոխարկան արագությունը քրոնիկ կախաղան էին բարձրացնում, սարքում ու քանոնները նետում»¹⁷։

Այդ անագործյան դաժանությունների նպատակն էր սաբոտաժի միջոցով անդամալուծել քուրդ ժողովրդի կամքը։ Ապստամբությունից հետո քուրդերի և քրդերի միջև բացվել էր շատ խորը մի անդունդ։ Հայտության եզր այլևս չէր մնացել։ Ողջ քրդությունը վատված էր ստեղծության և վրեժխնդրության զգացումներով։ Թուրք-քրդական հարաբերությունները ստեղծելի կերպարանք էին ստացել։ Այդ բոլորը հիմնավորապես համազգեցին քրդական զանգվածներին ու նրանց ղեկավարներին, որ չլիճաղջելու դեպքում իրենք դատապարտված են տանելու հայերի ճակատագիրը։ 1925 թ. հունիս-հուլիսին Իզան-խրաքյան սահմանի հարևանությամբ, Հաքյարխում, ապստամբության դրոշ պարզեց «ամկախության դատարանի» որոշմամբ կախաղան բարձրացված անվանի քրդական առաջնորդ Մեյլի Արդու Դադերի որդին՝ Մեյլի Արդուլլահը։ Կանի և Բիթլիսի շրջաններում ծավալվեցին թե՛ մարտեր քրդական ապստամբների ու կառավարական զորքերի միջև։ 1926 թ. աշնանը զեյլալի, հասանան, զիքյան և ճայդարան գեղերը նախանջելով դեպի Արարատ լեռը, բարձրացրին նոր ապստամբություն։ Մեծ և Փոքր Արարատների միջև ընկած թամբաթղը, որը թուրքերն անվանում են Ջիրի, դարձավ քրդական ապստամբական նոր շարժման գլխավոր օջախը և հենակետը։ Այստեղ սկսեցին կենտրոնանալ մեծ թվով քրդական ջոկատներ։ Ողջ 1926-1927 թթ. ընթացքում այդ ջոկատները հանդուգն մարտաշարվեցին էին կազմակերպում նաև դեպի Խնուսի, Վարդոյի, Մուշի, Սոլիմաի, Շապաղզրի, Գեքբանի, Գեմջի, Լիջեի և այլ շրջաններ։

Ապստամբների դեմ հակառակական ռազմական ռժիռ, այդ թվում նաև մեծ քանակությամբ ինքնաթիռներ օգտագործելուց զատ, թուրքական իշխանությունները լայնորեն սկսեցին կիրառել նաև վարչական միջոցառումներ։ Այսպես, 1927 թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը ընդունեց • 1097 օրենքը քրդերին երկրի արևելյան վիլայեթներից արևմտյան վիլայեթներ տեղահանելու վերաբերյալ¹⁸։ Այդ օրենքի համաձայն մեկ միլիոն քրդեր աքսորվեցին Արևմտյան Անատոլիա։ Ընդդրում Վ Նիկիտինի արտահայտությամբ, այդ յոթի տարագրությունը իրագործվում էր ճիշտ նույն մեթոդներով, ինչպես հայերի դեպորտացումը ստաջիմ համաշխարհային պատերազմի ժամանակ¹⁹։

Արարատի շրջանում քրդական ապստամբական շարժումը նախապատրաստել էր «Հոյրուն» («Ամկախություն») ռազմաքաղաքական կոմիտեին, որը ստեղծվել էր 1927 թ. օգոստոսին Միրխայուն և Լիբանանում տեղի ունեցած քրդական կազմակերպությունների համագումարում²⁰։ Այստեղ ձևակերպվեց «Հոյրունի» քաղաքական ուղեգիծը և

մշակվեց նրա կանոնադրությունը: Ըստ էության «Հոլլանդ» վերածվեց քաղաքական կուսակցության: Նրա նպատակն էր հռչակվում Թուրքական Բրդատանի անկախությունը: Կուսակցության յուրաքանչյուր անդամ տալիս էր «եղբայրության ուխտ» կամ երդում պայքարելու համար հանուն անկախ Բրդատանի ստեղծման: Բրդական հարցի վերաբերյալ Թուրքիայի սահմաններից դուրս քաղաքություն ծավալելու նպատակով «Հոլլանդ» արտասահմանում Սիրիայում, Լիբանանում, Եվրոպայի մի շարք երկրներում և ԱՄՆ-ում ստեղծեց կուսակցության մասնաճյուղեր: Կուսակցության ծրագրում հատկապես կարևոր ուշադրություն էր դարձվում «իրանական կառավարության և եղբայրական իրանական ժողովրդի հետ մշտական եղբայրական հարաբերություններ հաստատելու հարցի վրա» (նոդ. 4):

«Հոլլանդի» գործունեությունը հռանդուն աջակցության արժանացավ սկյուռքում գործող Հայ Թեոսոփիական Դաշնակցություն կուսակցության կողմից: Հարկ է նշել, որ դեռևս 1926 թվականից սկսած քուրդ և հայ գործիչները միմյանց հետ սերտ համագործակցությամբ զբաղված էին քուրդ զանգվածների մտքերը պատրաստելով և տարամերժ ուժերը հաշտեցնելով: Առհասարակ Հայաստանի առաջին համադարձության կործանումից հետո, 1921 թվականից սկսած, հայ քաղաքական տարագիրները, մասնավորապես ՀԹԴ ղեկավարները, բոլորում էին վերագնահատության մի շրջան, վերլուծության ենթարկելով անցած և գալիք քաղաքական իրողությունները և կշեռքի վրա դնելով ապագա կարելիությունները: Դեպքերի ընթացքը համոզել էր քրդերին և վտարանդության մեջ գտնվող հայ գործիչներին, որ նախ, եթե պետք է շարունակել պայքարը իրենց ժողովուրդների իրավունքները ոտնահարող Թուրքիայի դեմ, ապա անհրաժեշտ է իրար մոտենալ ու հասկանալ միմյանց և ապա, մեծ տեղությունների տված խտառումների անիրական լինելու պայմաններում ավելի իրական արժեք կարող է ունենալ երկու դրացի ժողովուրդների համագործակցությունը: Անշուշտ այլ հարց է, թե այդ մտանդացունը իմնված էր քաղաքական հեռանկար պարունակող առույգ հաշվարկի վրա, թե ոչ: Սակայն բոլոր դեպքերում վերահիշյալ մտածումը աստիճանաբար տեղ էր գտնում երկու կողմերի ղեկավարության մտքի մեջ, դառնալով «սանհրաժեշտ ազդակ մը երկու ժողովուրդներու ազատագրական շարժման»²¹:

Այսպիսով դաշնակցությունը կրկին հետապնդեց հայ-քրդական հանընդաշխության գործը և թե Թուրքիայում, թե նրանից դուրս կարողացավ գտնել քուրդ ղեկավարներ, որոնք ընթացեցին միասնության խորհույրը ընդդեմ «մեծ թշնամու»: Դեռևս 1924 թ. դաշնակցության և «Բրդատանի անկախության կոմիտեի» միջև կնքվել էր մի նախնական

համաձայնություն, մկատի առնելով Սևրի դաշնագրի սահմաններն ու հիմունքները:

Ըստ այնմ, «Հոյրունի» կանոնադրության մեջ մտցվեց հայերի հետ համագործակցության վերաբերյալ հատուկ կետ, որտեղ ասվում էր. «Երաբեկամություն և գործակցություն հայ ժողովրդի հետ, որպես բախտակից ազգի՝ հանդեպ հասարակաց թշնամին, Հայաստանի և Քուրդիստանի անկախությանց և հուլային ամբողջության փոխադարձ ճանաչումն ընդունելով որպես անվիճելի նախադրյալ»²²:

«Հոյրունը» հանդես եկավ 4 կետից բաղկացած մի հայտարարությամբ, որի 4-րդ կետում ասվում էր. «Համագումարը կը հայտարարեի երասարակալ, որ Հայաստանը ու Քուրդիստանը, որ դարեւոյ ըմակած են այս երկու ժողովուրդները, կը մերժեն ենթարկվիլ որևէ օտար իշխանության, ձգտելով իրենց անկախության: Եվ որ այդ երկու երկրները կը պատկանին միայն հայ և քուրդ ժողովուրդներուն»²³:

1925 թ. շինի Մայիղի ապստամբության շրջանում սիյունցի հայկական մամուլը հայ-քրդական համագործակցությունը գնահատեց որպես երկու դրացի ժողովուրդների քաղաքական ապագայի առումով կարևորագույն խնդիր: Այդ նույն թվականին դաշնակցության քյուրդի նախածնունդությամբ ընկերվարական միջազգայնականի (սոցիմուտերն) Մարտիի համագումարի դաշնակցության պատվիրակները ներկայացրին մի հիշատակագիր, որտեղ գնահատական էր տրվում քրդական ազատագրական շարժմանը: Դրանից հետո ևս դաշնակցության ներկայացուցիչը թե Լոնդոնի և թե Ցյուրիխի մեջ տեղի ունեցած համագումարներում մանրամասն ներկայացրել է քրդական շարժումը, պահանջելով Քուրդստանի ճանաչումը²⁴:

Ինչ հերթին «Հոյրունը» ևս քրդական զանգվածների շրջանում մղում էր հետևողական քարոզչություն հայ-քրդական բարեկամության անհրաժեշտության և կարևորության մասին: 1928 թ. Սուրիյա Բեղիբխանին երասպարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր. «1927 թ. հոկտեմբերին քուրդ ժողովրդի և հայ ժողովրդի ներկայացուցիչների ամունից, որոնք համերաշխորեն միավորվել են ընդհանուր թշնամու Քուրդիայի դնմ, «Հոյրունը» իրականացրեց համընդհանուր եաշտեցում: Իմ ժողովրդի ամունից հերոսական հայ ժողովրդի նկատմամբ ես աբուսեայտում եմ իմ խորին համակրանքը և հավաստիացնում մրան, որ մեծագույն հարգանքով եմ վերաբերվում դեսի նրա օրինական ազգային իրձը, որպիսին հանդիսանում է միազյալ անկախ Հայաստանը»²⁵:

Ամրադատմաբով «Հոյրունի» և դաշնակցության միջև ձևավորված համաձայնության դրդապատճառներին, քուրդ ազգային գործիչներից Ջիննար Միլոպին գտնում էր, որ «գոյություն չունի ոչ մի կազմակերպություն և ոչ մի երկիր, որը օգնության ձեռք մեկնեի «Հոյրունին» և դրս-

Լորեր քարհեղանական վերաբերմունք դեպի մա: Ուստի մենք նպատակահարմար համարեցինք քարհեղանուքյուն հաստատել հայերի հետ»: Քրդաստանի և Հայաստանի միջև սահմանների որոշման հարցը, ըստ Միլլուպի, թողնվելու էր «սաբազա ցրդական և հայկական կատավարությունների որոշմանը»: Տեղի էր ունեցել մաս պարտականությունների քաժանում: Հայերը իրենց վրա պարտավորություն էին վերցրել մյութական օգնություն ցուցաբերել «Հոլլանդիան», իրականացնել նրա կապը տարբեր երկրների ցրդական համայնքների հետ, սպառնալի կապը Արաբատի ապստամբների և «Հոլլանդիան» միջև: Միլլուպին հայտնում է մաս, որ Ամերիկայում և Եվրոպայում հրատարակվող քարյացկան հայկական մամուլը մեծ ծառայություններ էր մատուցում ցրդերի վերաբերյալ կանխակալ կարծիքը վերացնելու, ինչպես մաս հակաքրդական քարոզությունը դիմագրավելու առումով²⁶:

Իր հերթին դաշնակցությունը ևս 1929 թ. ապրիլին գումարված իր 11-րդ ընդհանուր ժողովում ընդունեց մի դիմում, որտեղ ասվում էր. «Ժողովը հատկապես ողջունում է ցրդերի ապստամբությունը թուրքերի դեմ: Ժողովը գտնում է, որ այդ շարժումն անհրաժեշտ է հայկական և քրդական հարցերի լուծման համար և հրավիրում է գիտակից հայության ու շաղկոթյունն ու համակրանքը այդ անօրինակ և հերետական պայքարի նկատմամբ»²⁷:

Քրդական շարժման նկատմամբ իր համակիր դիրքորոշումն ու աջակցությունը դաշնակցությունը էիմմավորում էր հետևյալ փաստարկներով. ա) քրդական շարժումը զարգանում էր Թուրքահայաստանի տարածքում, ուստի ամեն մի հայ, որ հետաքրքրված է իր հայրենիքի ճակատագրով, պետք է համակրանքով վերաբերվի քրդական հարցի նկատմամբ. բ) ցրդերի հակաթուրքական պայքարը խոչընդոտ է հանդիսանում Թուրքահայաստանում թուրք-մուհաբիթների տեղավորման համար, որոնք մեծ վտանգ են ներկայացնում հայ ժողովրդի համար. գ) անկախ Քրդաստանի ստեղծումը խափանում է Թուրքիայի պահպանության համար ձգտումների իրագործումը. դ) քրդական շարժումը թուլացնում է Թուրքիան և դրանով իսկ մախադդյալներ ստեղծում «միացյալ անկախ Հայաստանի» համար պայքարի ծավալմանը²⁸:

Ոչազրալ է ներկայացնել հետևյալ փաստը ևս. 20-ական թվականների վերջին դաշնակցության ակամավոր գործիչներից Ռուբեն Տեր-Մինասյանը «Դրոշակ»-ում հանդես եկավ «Արիական ցեղերի միության մասին» մի հոդվածով, որի տակ հեղինակը հասկանում էր հայ-պարսիկ-ցուրդ համերաշխ գործակցություն՝ պատմելու համար թուրքական կատավարությանը: Ոգևորված իր ծրագրի իրագործման հետևանքով, Ռ. Տեր-Մինասյանը մեկնում է Իրան, ամժամբ ղեկավարելու համար իր առաջադրած ծրագրի գործադրությունը և լծվում երանդուն

գործունեության²⁹։ Նրա ծրագրի շրջանակներում, ինչպես նաև 11-րդ ցմիկահատիկի ժողովի որոշմանը համաձայն, դաշնակցության Իրանի կենտրոնը «որոշ համեմատարակամեծությամբ» գործիչներ էր ուղարկում Արաբառի շրջանը, որոնցից չափերը հենց այնտեղ էլ գոկվեցին։ Շահական կառավարությունը Առաջատականի թմուկալ առաջնորդ Նեքոսե արքեպիսկոպոս Մելիք-Թամպյանին և Իրանի դաշնակցական ղեկավարության մի խումբ գործիչների մեղադրեց Արաբառի քրոական խնդրի հետ մասնակցություն ունենալու մեջ և պալատական մախաբար Թեյմուր Թաշի միջոցով նրանց որպես ամբաստանյալների Թավրիզից կանչեց Թեհրան սատելիտ համար³⁰։


Այս փաստը անշուշտ վկայում է այն մասին, որ Ռեզա շահի կառավարությունը հավանություն չէր տալիս ոչ միայն «Արևական ցեղերի միության» գաղափարին, այլև դաշնակցություն-«Հոյբուն» համագործակցությանը։

Ինչ վերաբերվում է բուրջական կառավարության դիրքորոշմանը հայ-քրդական համագործակցության նկատմամբ, ապա վերջինս ինչպես և սպասելի էր, որոշվեց խիստ բշտամական վերաբերմունք, հանձինս նրա տեսնելով լուրջ սպառնալիք Թուրքիայի ազգային անվտանգության համար։ Քեմալականները «Հոյբուն» կուսակցությանը և նրա անդամներին ինչպես նրա «իմպերիալիզմի գործակալներ»։ Անկարայում լույս տեսավ պաշտոնական «Կոմաչ գիրք» («Հոյբուն-Նաշնակ»), որտեղ զարգացվում էր այն միտքը, որ 1925 թ. շինյա Մայիլի ապստամբությունը ճնշելուց հետո քրդական շարժումը «վերակենդանացավ» շնորհիվ «Հոյբունի» և դաշնակցության համագործակցության։ «Հոյբունի» արտակարգ ռազմական ներկայացուցչի հանգամանքով 1926 թ Արաբառի շրջան ուղարկվեց հայտնի քուրդ գործիչ, բուրջական բանակի նախկին ալա Իհսան Նուրին, որը գլխավորելու էր Արաբառյան շարժումը, որպես «հեղափոխական բանակի հրամանատար»։ Նրանից բացի կային նաև երկու գլխավոր ղեկավարներ, որոնցից մեկը քեդալի ցեղի առաջնորդ Իբրահիմ Հըսոբ Թեյլին էր, իսկ մյուսը Ջիլան քեյը, որի անվան տակ հանդես էր գալիս խնուսի Արտաշես Մուրադյանը։ Վերջինս ապստամբական ղեկավարության մեջ ներկայացնում էր «հայկական թևը»։ Սակայն մինչև ապստամբության պայթելը, Ջիլան քեյը «բուլլիկյան թակարդի մը գոհ գնաց, բանտարկվեցավ և անհայտ մնաց, թե ինչ եղավ իր վախճանը»³¹։ Կազմվեց քաղաքացիական վարչակազմ, որը գլխավորեց Հըսոբ Թեյլին։ Ապստամբները հրատարակում էին «Արդի» թերթը։ 1930 թ. հունվարին Իհսան Նուրին այդ թերթում հրատարակեց մի հոդված, որով բոլոր քրդերին կոչ էր անում ապստամբներին օգնություն ցույց տալ զենքով ու պարենամթերքով։ Քրդական զինված ջակատները Իհսան Նուրին վերակազմակերպեց լեռնային հրոսա-

կային պատերազմ մղելու համար: Միաժամանակ նա կապեր հաստատեց Իրանում շահական վարչակարգի դեմ զինված պայքարը վերսկսած Իսմայիլ-աղա Մըհկոյի հետ: Արաբատի ապստամբական կենտրոնը Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Սիլիայի քրդերի շրջանում տարածեց մի դիմում, որտեղ կոչ էր արվում միավորվել բուլղարական լծից ազատագրվելու պայքարում: Դիմումի պատճենն ուղարկվեց Ազգերի Լիգա²²:

1927 թ. գարնան վերջերին մոտ 10. 000-ոց բուլղարական մի քանակ Իզդերի և Ռայազնտի կողմից միաժամանակ հարձակում ձեռնարկեց Արաբատի դեմ: Այսպիսով Արաբատի շրջանում սկսվեց առաջին ապստամբությունը: Ընդհուպ մինչև 1930 թ. հունիսը բուլղարական կառավարական զորքերի և քրդական զոկատների միջև ընթանում էին կատաղի մարտեր, որոնց ընթացքում բուլղարը տվեցին մարդկային և նյութական խոշոր կորուստներ: Զրդերին հաջողվեց նույնիսկ զգեստել 12 ռազմական ինքնաթիռներ²³: 1930 թ սկզբերին Թուրքիայի բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները ըստ էության գտնվում էին քրդերի հսկողության տակ: Այդ պայմաններում բուլղարական կառավարությունը ստիպված էր ճարպկորեն խուսափել: Նա մի կողմից քրդերի դեմ ուժեղացնում էր ռազմական ճնշումը, մյուս կողմից հրատարակում ներում՝ քրդական աշխրթները ձուլորեցնելու և պատակտելու նպատակով: Անկարան որպես ընդհանուր քննիչ Իբրահիմ Թալիին ուղարկեց արևելյան նահանգներ, իրր թե դրանք բարեկարգվելու համար, սակայն իրականում նրա խնդիրն էր ողջ քրդաբնակ շրջաններում հայտարարել ռազմական դրություն, ջարդերը ավելի արագ ու անադճուկ կազմակերպելու համար: Քեմալական այդ գործիչը իսկապես դրսևորեց «ֆայլուն ընդունակություններ» քրդական շարժման դեկավարներին կաշառելու և ծուղակը գցելու արվեստում: Նա նույնիսկ մի հատուկ պատվիրակություն ուղարկեց Իսհան Լուրիի մոտ, առաջարկելով քրդերի համար ընդհանուր ներում, իսկ անձամբ նրա համար մի քարձր պաշտոն կամ Թուրքիայում կամ արտասահմանում: Այդ բոլորի դիմաց ապստամբական բանակի նրամամատարից սրահանջվում էր միայն մեկ բան՝ քրդերին մղել ննազանդության: Կտրականապես մերժելով այդ առաջարկը, Իսհան Լուրին հայտարարում է, որ քրդերը վերջ կտան պայքարին միայն այն դեպքում, երբ բուլղարական զորքերը կպարպեն Քոչոտանը և Թուրքիան կճանաչի նրա անկախությունը²⁴:

1930 թ. հունիսի սկզբներին պայթեց Արաբատի վերջին մեծ ապստամբությունը: Արաբատի շրջանից ապստամբները շարունակում էին ռազմերթ կազմակերպել դեպի Ջիլան, Վան, Բուլանդը-Մանազկերտ, Մուշ, Կաղզվան, Խնուս, Կոդր, Կարս և այլն: Թուրքական կառավարությունը զենքի կոչեց մեծաթիվ պահեստայինների, ռազմական զործողությունների շրջանում կենտրոնացրեց հսկայական քանակությամբ կուկային հզորություններ և ինքնաթիռներ: Արևելք ուղարկվեց բոլոր զորք-



րի գրեթե մեկ երրորդ մասը և ծախսվեց մի քանի տասնյակ միլիոն լիբա: Անցնելով վճռական գործողությունների, կառավարական գործերին հաջողվեց ակիացիայի աջակցությամբ քրոջերին քչել իրանա-բուրքակական սահմանին եղած լեռնային կիրճերը, որտեղից փրկության ճանապարհը մեկն էր՝ անցումը իրանական սահմանը:

Սակայն Ռեզա-չահ Փեհլևի կառավարությունը, որն այդ շրջանում շարունակում էր վարել քրդական շարժումները ճզմելու քաղաքականություն, բայց սովեց, որ բուրքական գործերն անարգել անցնեն իրանական սահմանը և հետագուղեն ապստամբներին մինչև նրանց կատարյալ ոչնչացումը: Բանը նրանում էր, որ դեռևս 1926 թ. ապրիլի 22-ին, Խորհրդային Միության միջնորդությամբ, Թեհրանում Իրանի և Թուրքիայի միջև կնքվել էր քարեկամության և անվտանգության վերաբերյալ պայմանագիր, որի մեջ պարունակվում էին նաև հողվածներ քրդական շարժումները համատեղ ուժերով ճնշելու վերաբերյալ: Պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն, կողմերը պարտավորվում էին բայց չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբավորումների կազմավորումը կամ ներկայությունը, որոնք մշատակ ունենին խախտելու մյուս կողմի խաղաղությունն ու անվտանգությունը, կամ վտիխտության ենթարկելու կառավարման համակարգը, ինչպես նաև այնպիսի անձանց կամ խմբավորումների ներկայությունը, որոնք իրենց առջև մպատակ են դրել իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պայքարելու մյուս երկրի դեմ:

Պայմանագրի 6-րդ կետում ասվում էր, որ սահմանամերձ գոտու քնակիչների հանգստությունն ու անվտանգությունն ապահովելու համար, պայմանավորվել կողմերը բոլոր միջոցները կձեռնարկեն, որպեսզի վերջ տան սահմաններին հարակից տարածքներում քնակվող ցեղերի հանցավոր գործողություններին ու սալյուսմներին, որոնք կարող են վնաս հասցնել երկու երկրների խաղաղությանը²⁵:

Թուրք-իրանական սահմանների ճշտված շլինելը երկու երկրների միջև մշտապես առաջացնում էին բյուրիմացություններ: Ուտոի 1929 թ. ապրիլին Անկարայում ստորագրվեց կոնվեցիա սահմանների անվտանգության մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրանական և բուրքական գործերի կողմից քրդերի նկատմամբ պատեմիչ գործողություններ իրականացնելու ժամանակ նրանք անարգել անցնում էին սահմանը և փրկություն գտնում մյուս երկրի տարածքում, 1930 թ. Իրանը և Թուրքիան կնքեցին մի նոր կոնվեցիա «սահմանային միջադեպերի կարգավորման գծով համատեղ գործողությունների վերաբերյալ», որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի համաձայնագիր անհնազանդ քրդական ցեղերի դեմ համատեղ գործողություններ իրագործելու վերաբերյալ²⁶: Առոտասրակ

ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական պատճառներով թուրքիան և Իրանը երկուսն էլ շահագրգռված էին հնարավորին չափ յուտ վերացնել իրենց գլխացավանք պատճառող քրդական հարցը:

Հենվելով վերոհիշյալ պայմանագրային իրավասությունների վրա, քեմալական պատժիչ զորամասերը Բազիրզայան-Յարլընջայա-Այրնեկ-Ղոնքաթ-Քիրի գծով շարժվելով առաջ, կտրեցին քրդերի տեղաշարժի յուր ուղիները, աշխատելով նրանց վերցնել աքցանի մեջ: Սակայն անակնկալ կերպով Մակույի շրջանից իրանական քրդերը Մրմկույի գլխավորությամբ արագ երթով հասան ապստամբներին օգնության: Շրջապատման փուլանը, ինչպես նաև Բաչկալայի, Մարայի, Բարդիզալայի, Արճնչի, Պատոնոցի, Վանի, Ջիլյանի և մի շարք այլ շրջաններում բռնկած քրդական ապստամբության լուրը ստիպեց բուրջական հրամանատարությանը հապտապ զորքերը դուրս բերել Իրանի տարածքից, դրանք նետելու համար ապստամբական նոր հողեհի դեմ: Ծավալվեցին կատաղի մարտեր, որոնց մասնակցում էին նաև իրանական քրդերի զինված ջոկատները: 1930 հուլիսի 14-ին քրդերի շեշտակի գոռը Արալլիսի մոտ կենտրոնացած բուրջական վաչտի վրա ռմեցավ այն հետևանքը, որ դիմելով մագապուրծ փախուստի, բուրջական այդ զորամասը Ղամաղուռի շրջանում անցավ Խորհրդային Հայաստանի սահմանը և Մեսկ-վայի կարգադրությամբ միաժամանակ մնաց այնտեղ²⁷:

Սակայն յնայած այդ մասնակի հաջողություններին, ապստամբների ուժերը զնալով նվազում էին, մինչդեռ քեմալականները Արարատի շրջանում կենտրոնացնում էին նոր բաթն ուժեր և ավելի լայնորեն էին օգտագործում ռազմական ամրացիան: Միաժամանակ բուրջական եատուկ ծառայություններին հաջողվում էր պատակտել քրդերին և նույնիսկ համոզել առանձին ցեղերի իրենց զինված ջոկատներով հանդես գալու ցեղակիցների դեմ:

Նուրբացած ուժերով մինչև սեպտեմբերի 25-ը շարունակելով դիմադրությունը, Ինսան Նուրին մի քանի այլ առաջնորդների հետ ստիպված եղավ անցնել Իրան: Մինչդեռ Իրքսահիմ Հըսզե թեյլին, հայտնվելով բշմամական շրջապատման մեջ, դաժան ծնեովա պայմաններում շարունակում էր դիմադրությունը: Քանի որ այդև անհնարին էր դառնում ապստամբներին հարած տեղական բնակչության կերակրելը, Հըսզե թեյլին որոշեց «սուրն անցնել յուր կիները, անգոր ծերերը և երիտաները, որով կը մնային հեղափոխական զորամասերը, որոնք իրենց հետևի յուր կամուրջները այրած՝ պետք է կռվեին մինչև վերջին մարդը: Ու Հըսզե թեյլին, հեղափոխական անգբությամբ մը, կը ծեռնարկեր ամեննն առաջ այդ ծրագիրը գործադրել իր ազգականներուն վրա, ահուկի ու հուզիկ շղերդության մը տեսարանը քանալով Արարատի քարձրույններուն վրա»²⁸:

Դաժան մարտերից մեկի ժամանակ Իբրահիմ Հրսզե Թեյլիմ և սպանվեց, իսկ նրա զինակիցները զերի ընկան: Այսպիսով փակվեց քրդերի հակաբուլղարական պայքարի այդ հերոսական էջը ևս, որը տևեց երկու տարի (1927–1931):

Թեև Արարատի ապստամբությունը չընդգրկեց ամբողջ Քրդստանը և զանգվածային մեծ տարրեր հրապարակ չըրեց, սակայն ի տարբերություն քրդական այլ շարժումների, այն այդի ընկավ իր քաղաքական հտուակ ընդունումներով և տոկոմությամբ: Արդարև, այն կարող է համարվել քրդական ազատագրական շարժման մեծագույն դրվագը:

Այդ ապստամբությունը ի յիջ դարձրեց Արևմտյան Հայաստանը «յուրացնելու» ուղղությամբ քննալական կառավարության կողմից նպաստված մի շարք մտահոգումներ: Այսպես, դեռևս 1927 թ. Անկարան որոշել էր 100, 000 քուրդ մոհաջիթմեր սնակեցնել Արևելյան մահազմեղում: Այդ նպատակով ԹԱՄԺ-ը քվեարկել էր հոգուտ մեկ միլիոն ոսկի քուրջերի⁴⁰: Ծրագիրը ամբողջապես տապալվեց:

Պատերազմական ծախսերը Թուրքիայի ֆինանսները հասցրեցին ծայրահեղ լարվածության: Արտաքին փոխառություն հաջողեցնելու ուղղությամբ կատարված փորձերն ավարտվեցին կատարյալ ծախողմամբ, որի հետևեցով Թուրքիան քախվեց ավելի մեծ դժվարությունների: Անկարայում սկսվեց կառավարական ճգնաժամ: Սուր հակասություններ սկսվեցին քուրդական հանրապետության մախսուզան Մուստաֆա Քեմալի և փարչապետ Իսմեթ Ինենյուի միջև: Քեմալի հավանությամբ Ալի Ֆեթհի քեյը ստեղծեց «Ազատ հանրապետական կուսակցությունը», որը խտորեն քննադատեց Ինենյուի քրդական քաղաքականությունը:

Արարատի ապստամբությունը ճնշելուն հետևեց դաժան հաշվեհարդարը ոչ միայն ապստամբների, այլև առհասարակ քրդերի նկատմամբ: Պատժիչ զորամասերը կազմակերպում էին զանգվածային կոտորածներ, տեղահանություններ: «Հոյրումի» տյայգներով սպանված ապստամբների թիվը հասնում էր 10–15 հազար մարդու, ավերվել էին 660 գյուղեր, կրակի ճարակ դարձել 15, 206 բնակավայրեր: Քրդերին լեզուն պաշտոնապես արգելվեց, քրդական հրատարակչությունները քրճագրավվեցին ու այրվեցին: Դասագրքերից իսպառ հանվեց «քուրդ» և «Քրդստան» բառերը: Այսուհետև քրդերը կոչվելու էին «լեռնային բուրքեր»: Վերջապես Քրդստանը մեկուսացվեց մնացած աշխարհից և օտարերկրացիների մուտքն այնտեղ խստիվ արգելվեց⁴¹:

1930 թ. նոյեմբերի 1–ին համդես գալով ԹԱՄԺ-ի բացման ախարատության ժամանակ, Մուստաֆա Քեմալը հայտարարեց, որ Թուրքիայի արևելքում տեղի ունեցող իրադարձությունները «սպառնալիք էին համդիսանում մեր անկախության համար»⁴²: Իսկ վարչապետ Իսմեթ Ինենյուն ի լուր աշխարհի հայտարարեց. «Այս երկրում միայն բուրք ազգը

կարող է պահանջներ ներկայացնել էթնիկական և ռասայական իրավունքների վերաբերյալ: Մնացած տարրերը դրա իրավունքը չունեն: Ավելի զազգելի հայտարարությանը համդեա եկավ արդարադատության նախարար Մահմուդ Էսադ քեյր: «Մենք ապրում ենք Թուրքիայում, աշխարհի աննաազատ երկրում: ... Թուրքը այս երկրի միակ տերն է: Շագունով ոչ մարտը բողոքեղ (իմա՝ քրդերը Վ. Բ.) այս երկրում ունեն միայն մեկ իրավունք. լինել ծառաներ ու ստրուկներ: Այս ճշմարտությունը թող հիշի և՛ բարեկամը, և՛ թշմանիմ, թող այն իմաման նույնիսկ լեռները»: Իսկ «Մլղիներ» քերթը տարագրեց մի նկար. Արաբատ լեռան վրա պատկերված էր մի գերեզման, որի տասպանաբարի վրա գրված էր «այստեղ թաղված է ներառըրյալ Զրդստանը»⁴²:

Նեոաքքեղ է նշել, որ Արաբատի ապստամբության առաջին շրջանում բողոքական մամուլը մեծ թվով նյութեր էր տարագրում հայերի մասնակցության մասին, բայց կտահելով, որ այդ նյութի լայն լուսաբանումը իրենց շահերի օգտին չէ, «վերեն եկած հրամանի մը հետևանքով ալևա բառ մ'իսկ չարտասանեցին, երևի հայ-քրդական միացյալ դատի ծանրութենեն գզուշանալով»⁴³:

Ապստամբության ճնշումից հետո դաշնակցությունը լծվեց եռամյուն գործունեության տեղի ունեցած իրադարձությունների իրական պատկերը ելդուպայի և Անեբիկայի հասարակական կարծիքին հասցնելու համար: Այդ կուսակցության ջանքերով արևմտյան մամուլում տարագրվեցին ցցադո տեղեկություններ բողոքական ամագորտյն դաժանությունների վերաբերյալ: Հայկական սիյուրքում կազմակերպվեցին հանգամակություններ իօգուտ ապստամբների ընտանիքների: Միաժամանակ դաշնակցությունը դիմումներ էր կատարում Մոցիմտերնին, նրան հորդորելով համդեա գալ քրդերի պաշտպանության քայլերով⁴⁴:

Չմայած այն հանգամանցին, որ Արաբատի ապստամբության շրջանում Ռոզա Շահի կատավարությունը պայմանագրային հիմքի վրա աջակցում էր բողոքական կատավարությանը ջախջախելու համար քրդական շարժումները, չբավարարվելով այդ համագործակցության ծավալներից, Անկարան իրանական կատավարությանը մեղադրեց Թուրքիայի նկատմամբ ոչ բարեկամական վերաբերմունքի մեջ: Այսպես, 1930 թ. հուլիսի 8-ին «Հիքիմիեթի միլլիե» պաշտոնաթերթը հանդես եկավ մի կոչու հողվածով, որտեղ մասնավորապես ասվում էր. «Թուրքական հասարակական կարծիքը չի կարող հասկանալ, թե ինչպես կարող էին հարևան պետության տարածքում կազմակերպվել բազմաթիվ բանդաներ մեր տարածքի վրա ասպատակ սիոնելու նպատակով և ինչպես կարող էին այդ բանդաները սահմանն անցնելուց հետո կապեր պահպանել իրենց կենտրոնական կազմակերպության հետ»: Իսկ «Ռեպուրիլե» քերթը 1930 թ. հուլիսին էլ ավելի կարոկ տոնով գրեց. «Երե Իրանը

ի վիճակի չէ ինքը դաս տալ բանդիտաներին, որոնք զինվում են նրա տարածքում, սպա մա իրավունք չունի ատարկելու, որ այդ դասը տան ուրիշները»⁴⁵։

Կ. Սասունին հայտնում է այն տեսակետը, որ Արարատի շրջանի ապստամբության ժամանակ գոյություն ունեւ թուրք-բուլղարական համագործակցություն, որն ուղղված էր ոչ միայն քրդերի, այլ Իրանի դեմ։ «Ուստական գործերը, - գրում է նա, - Արաքսը անցան և իրենց աջակցությունը բերին քրդական բարբարոս զորքին՝ խեղդելու քրդական հեղափոխությունը։ Այսպեսով չրավականացան, այլ ռուս-քրդական միացյալ դիվանագիտությունը ճնշումներ բանեցուց պարսկական կառավարության վրա, որպեսզի այս վերջինը համաձայն գտնվի փոքր Արարատը ձգել Թուրքիա և իր զինական ուժով գործակցի Արարատի ճնշման։ Պարսկաստանը երկար ժամանակ ընդիմացավ այս քաղաքական ճնշումներուն։ Ժամանակ մը այնքան լարվեցան Պարսկաստանի և Թուրքիա հարաբերությունները, որ մեծ մտահոգության մատնեցին աշխարհը, թուրք-պարսկական պատերազմի մը հավանականության առջև, որ կրնար միջազգային մեծ բարդություններու դուռ բանալ»⁴⁶։

Իսկուպես Արարատի ապստամբության թե՛ շրջանում թուրքական կառավարությունը դիմել էր Թեհրանին, պահանջելով իրեն զիջել փոքր Արարատի փնջերին գտնվող մի տարածք, պատճառաբանելով, որ այն անհրաժեշտ է Թուրքիային խափանելու համար քրդերի շարժումները Իրանից Թուրքիա և հակառակը, ինչպես նաև վերջնականապես ջախջախելու համար ապստամբներին։ Սակայն առաջնորդվելով ռազմա-տորառեզիական ու քաղաքական նկատառումներով, իրանական կառավարությունը մերժել էր այդ պահանջը։ Թեհրանում մասնավորապես գտնում էին, որ սահմանի այդ հատվածը ռազմավարական առումով տիրապետող է հանդիսանում թուրքալեզու ազերիներով քնակեցված Աուրադատականի համար, որի նկատմամբ Թուրքիայի ղեկավարները փայտիայում էին թաքնված, իսկ երբեմն նաև քաջահայտ պանթուրքիստական հավակնություններ։ Թեհրանի համար մտահոգի էր նաև այն, որ նշված տարածքով Թուրքիան ռոդլը եք կտամար դեպի Լախիջևան, որի նկատմամբ այդ ժամանակ հավակնություններ ունեւ ինքը՝ Իրանը։

Շահական կառավարության մերժմանը Թուրքական մամուլը խոկոյն պատասխանեց սուր քննադատական հոդվածներով, մույնիսկ կասկածի տակ դնելով թուրք-իրանական բարեկամության ու պայմանագրային հարաբերությունների անկեղծությունը։ Իրանի նկատմամբ թուրքական ճնշմանը անմիջապես միացավ նաև Խորհրդային Միությունը։ «Բուլղարիկական կարմիր բանակեն, - գրում է Կ. Սասունին, գորամասեր անցան Աուրադատականի շրջանը և բռնաբարեցին պարսկական հողե-

րը, պատրվակելով, թե Կովկասի մեջ ասպատակութիւն հարուցողները անցած են պարսկական հողը և թուրքական բանակը ստիպված է եղեր զանոնք հետապնդել: Բայց այս բոլոր գործողութիւնները, ինչպես մահ թեհրամաի մեջ բանեցված ճշյունները (թուրքական և քրքական դեսպաններու կողմն) ցույց կուտային, թե բարքերը առիք մը կը փնտրեին իրենց զորքերը մտցնելու Ատրպատական և քրտական շարժման հետ, լուծելու մահ համաքրքական ծրագրի մեկ մասը»⁴⁷:

Սակայն քեմալականների պահանջները չէին սահմանափակվում միայն նրանով, որ բարքական զորամասերը մտնեին Սակուի շրջանը և զտավեին փոքր Արարատը: Նրանք պահանջում էին մահ, որ «պարսկական զորքը գործակցի քրքական բանակին՝ Արարատի գործողութիւններու ընթացքին և այդ սահմաններում վրա գտնված պարսկական զորքերը ենթարկվին քրքական ընդհանուր հրամանատարին»⁴⁸:

Սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Իրանի պետական ինքնիշխանութիւն կտախտ ոտմահարում: Ուստի Իրանը ինքնապաշտպանութիւն մարտակով զորքեր կենտրոնացրեց Ատրպատականի սահմանների վրա, մահ այդ քայլով մտադիր լինելով արգելել պարսկահպատակ քրդերի անցումները պետական սահմանը, որպեսզի չմասնակցեն Թուրքիայում ընթացող քրդական շարժմանը: Միաժամանակ Թեհրանը հասկացրեց Թուրքիային, որ իրանական զորքերը չի են վճռականութեամբ պաշտպանելու հայրենիքի սահմանները, եթե թուրքերը փորձեին ներխուժել Իրան:

Այս իրադարձութիւնները հուզել էին միջազգային հասարակական կարծիքը, որը համեմատելով Իրանի պաշտպանութեամբ: «Այս համայն կարծիքը և միջազգային միջամտութեամբ մը հավանականութեամբ թուրք-պարսկական պատերազմին կը ստիպեին թուրքերը գործնականի մեջ ջլլալ չափավոր, իսկ խտացի մեջ՝ ծայրահեղ»⁴⁹:

Սակայն կշտադասելով մի շարք կարևոր հանգամանքներ, Իրանը հետզհետե զիջեց իր դիրքերը, գործը ծայրահեղութեամբ շտանելու համար: Նախ դիրքորոշման այդ փոփոխութեամբ մեջ կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ քրդական ազատագրական շարժումները և առհասարակ «Ազատ Բրդստանի» և քրդական անկախութեամբ գաղափարը մույնքան փտանգավոր էր Իրանի համար, որքան և Թուրքիայի: Այդ գաղափարի իրականացման դեպքում Իրանը կկորցնէր երկրի քրդաբնակ ընդարձակ հողամասերը՝ Իրանական Բրդստանը, որի տարածքում կարող էր ստեղծվել «անկախ Բրդստան» և որ ավելի փտանգավոր էր, այդ տարածքը կարող էր միանալ Թուրքական Բրդստանին, եթե ինտրզի այնտեղ ստեղծվէր քրդական անկախ պետութեամբ: Առհասարակ պետք է նշել, որ քրդական ասպատակութիւնը և անկախ Բրդստանի հարցը վերջին հաշվով իրար մտա թերեց այն պետութիւններին, որոնց տարածքներում քրդական զանգվածներ էին բնակվում և պատմականորեն

քրթական երկրամասեր տնեին իրենց տիրապետության տակ: Ինչպես հայտնի է այդ պետություններն էին Թուրքիան, Իրանը, Իրաքը և Սի-րիան: Մյուս կողմից Իրանի համար մտահոգի էր այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը քրթական հարցում գործակից էր Թուրքիային, նուազուրեմ կերպով չափարկում էր քրթական հարցը և Իրանի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով նույնիսկ չէր խորշում ռազմական մի-ջամտություններից: Թեև Իրանում հիանալի զիտակցում էին նաև, որ բնւ միջազգային հասարակական կարծիքը գործում էր Իրանի օգտին, սա-կայն ճգնաժամի պարագաներում կարող էր սահմանափակվել լուկ բո-ղոքներով:

Վերջապես նշված շրջանում Իրանի ներսում ևս ցեղերի ապս-տամբություններն ընդունել էին սպառնալից բափ: Դեռևս 1929 թ. գնեթի էին դիմել քահարու, ղաշղայի և բախթիարական ցեղերը: Այդ շարժումը աջակցություն գտավ էն—մեջբեֆի և Քարբալայի բարձրագույն շիքթա-կան հոգևորականության կողմից, որը հրապարակեց հատուկ ֆիթվա, որտեղ հավանություն էր տալիս «եերիտիկոս կառավարության» դեմ ցե-ղերի մղած պայքարին: 1929—1933 թթ. ցեղերի զինված ելույթներ էին տե-րի տնեումս նաև Քրդստանում, Լորեսթանում և Բալուջեսթանում:

Այս բոլորը առիպեցին Ռ-րզա շահի կառավարությանը Թուրքիայի նկատմամբ մշակել քաղաքական նոր գիծ՝ այսինքն գործակցել նրա հետ ընդդեմ քրդության: Ընդդրում իրենց երկրների և արտասահմանի հասա-րակական կարծիքը մուշտության մեջ գցելու համար երկուստեք սկսեցին օգտագործել «մանվածապատ դիվանագիտությունը»:

Այդ բոլորի հետևանքով թուրք—իրանական հարաբերությունների զարգացման քափանիլը սկսեց արագորեն պտտվել: 1932 թ. հունվարի 23—ին Թեհրանում ստորագրվեց արժանագրություն սահմանների ճշտման վերաբերյալ, ըստ որի Իրանը Արարատի փեշերին գտնվող Խո-ղի մի նեղ շերտ զիջեց Թուրքիային, որը անմախտաղեպ կերպով ուժե-րացրեց Թուրքիայի ռազմավարական դիրքերը ոչ միայն սահմանի այդ հատվածում, այլև բերև ողջ տարածաշրջանում: Այդ նույն թվականին ստորագրվեց նաև թուրք—իրանական պայմանագիր արքիտրածի և այս-պես կոչված «նաշտեցման ընթացակարգի» վերաբերյալ³⁰: Իսկ 1932 թ. նոյեմբերի 5—ին կնքվեց թուրք—իրանական բարեկամության պայմանա-գիր, որը ռատիֆիկացվեց 1933 թ. դեկտեմբերի 28—ին:

Թուրք—իրանական հարաբերությունների զարգացման համար նոր խթան հանդիսացավ 1934 թ. Ռ-րզա—շահի պաշտոնական այցը Թուրքիա: Ընդհանրապես Իրանի շահը համակրանքով էր վերաբերվում Մուտաֆա Քեմալ Աթաթուրքի իրականացրած բարեփոխումների նկատմամբ և չառ հարցեցում ընդօրինակում էր նրա կառավարման մե-թոդները: Այցի ընթացքում Աթաթուրքը բացառիկ ջերմ վերաբերմունք

դրսւորեց դեպի Իրանի մեծատերը: Նրանք իրար դիմում էին ոչ այլ կերպ, քան «եղբայր» արտահայտությամբ: Այդ այցը սկիզբ դրեց բուրժուարական պայմանագրի ու կոնվեցիաների մի ամբողջ շարքի ստորագրմանը, այդ թվում նաև «քրդական հարցի» լուծման վերաբերյալ մի համաձայնագրի⁵¹, ըստ որի կողմերը համաձայնվում էին փակել իրենց սահմանները քրդերի շարժումները մեկ երկրից մյուսը արգելակելու նպատակով և պայմանավորվում էին քրդական ապստամբությունների լուծման դեպքում իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով «վերականգնել կարգն ու հանգստությունը»:

1937 թ. հունիսի 8-ին Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Աֆղանստանի արտգործնախարարները Թեհրանի Սաադաբադյան պալատում կնքեցին քառակողմ մի համաձայնագիր, որը ստացավ Սաադաբադյան պակտ անվանումը: Դա ըստ էության մեքմադդարսևեյան մի խլամական դաշինք էր, որի մեջ իր տեղն էր գտել նաև քրդական հարցը: Նրանում չտալով քրդերի անունը, նշվում էր, որ այդ դաշինքը ստորագրած պետությունները պարտավորվում են համատեղ պայքար մղել իրենց երկրների ազգային անվտանգությանը ապառնացող անջատվողական շարժումների դեմ: Ընդորում Սաադաբադյան պակտի ստորագրումից հետո քրդական հոծ բնակչություն ունեցող վերահիշյալ երեք պետությունները մշտապես «խտրիդակցություններ» էին անցկացնում միմյանց հետ երեքի համար էլ հրատապ ու կարևոր քրդական հարցի կապակցությամբ, մշակելով համատեղ ծրագրեր իրենց երկրներում կամ սահմանակից շրջաններում քրդական ազատագրական շարժումները համատեղ ուժերով հենց սաղմում խեղդելու համար:

VAHAN BAYBURDYAN

THE KURDISH UPRISINGS OF 20-TH CENTURY 20-30-IES AND THE TURKISH-IRANIAN RELATIONS

The convention of Sevr was revised in 1923 during Lozan Conference by the common wish of Great Powers. As a result the problems of Armenia and Kurdistan specified in the articles of the convention were removed from the agenda of international discussions.

Kemalists, the Turkish nationalists carried on the policy of double-dealing standards: they encouraged the struggle of the Kurds of Iran and Iraq against their own governments. Whereas in Turkish Kurdistan guided by the chauvinistic slogan "Turkey is for the Turks" they carried on the policy of State terrorism, national and social oppressions. The Kurdish people answered them with national liberation movements. In particular, the strong revolt of Sheikh Said broke out in 1925. Another great uprising of the Kurds concentrated near Mount Ararat took place in 1927-1931. The Government of Ankara oppressed it with much difficulty. The Kurdish military-

political committee of Hoybun, a political party virtually prepared and led that uprising having the aim to free the Kurds from the Turkish yoke and to form independent Kurdistan in the territory of Turkey. A close cooperation existed between "Hoybun" and the Armenian Revolutionary Dashnaksutyun Party. Correspondingly political agreement was concluded between these two parties, and the basis of that agreement were the articles of Sevr Convention concerning the Independent Armenia and Independent Kurdistan.
Կարծում ենք վերոնկարյալով էր նաև պայմանավարձված՝ 2002 թ. օգոստոսի 19-ին Թել-Ավիվում ՊՌ ներքին գործերի և Իսրայելի պաշտպանության նախարարների միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ղազալի հատվածից իսրայելյան գործերի աստիճանաբար դուրսբերման մասին պայմանավորվածության ձևաբերումը, պայմանով, որ

պաղեստինյան իշխանությունները կձեռնարկեն թուր միջոցները տա-
րածքի «բնականում գործունեությունը ապահովելու և Իսրայելի դեմ ցան-
կացած ունձագություն կանխելու ուղղությամբ»: Այնուամենայնիվ, պետք
է նշել, որ իսրայելյան այս հերթական կիսամիջոցները, նպատակաուղղ-
ված են ոչ թե ավերված ՊՒ տարածքներում իրավիճակի քարելավմանը,
ալ միտված են առաջին հերթին միջազգային հանրության աստիճանա-
բար անող դժգոհությունը նվազեցնելուն: Իսրայելի ղեկավարները քաջ
գիտակցում են, որ ներկա պայմաններում Պաղեստինի իշխանությու-
նները ի վիճակի չեն լիարժեքորեն վերահսկելու տարածքները (ՊՒ հեղի-
նակազրկում, ավերված տնտեսություն, գործուն օստիկանություն, ինչ-
պես նաև ժայռահեղական կազմակերպությունների վրա ներագրելու
լծակների քացակայություն), ուստի և իսրայելյան կողմը կարևորանի
ցանկացած պահին նորից ուժային միջոցների դիմելու և պաղեստինյան
տարածքները գրավելու մշտական հնարավորություն:

Ինչ վերաբերում է պաղեստինցիներին, ապա նրանք անկախ ի-
րենց ղեկավարության ղեկը թողումից, 18 ամիս պայքարի և քաղմաթիվ
զոհարարություններից հետո, կզման կարգավորման՝ ոչ պակաս, քան ա-
զատություն և անկախություն ստանալու ակնկալիքով: Ներկայումս
ակնհայտ է նաև այն, որ Իսրայելի քաղաքական ղեկավարության ողջ
սպեկտրում չկա որևէ մեկը, որը ի վիճակի է հաշվի առնել այդ փաստը:
Առանց վերջինիս խորը գիտակցման իրավիճակը սպառնում է դառնալ
անկանխատեսելի և նոյն լուրջ հետևանքներով:

Վերոհիշյալից կարելի է հանգել հետևյալ եզրակացության:

Առաջինը, իսրայելյան Կենսատուժ ներկայացված թուր քաղա-
քական ուժերը կողմ են «երկաթե» պատի կառուցմանը ու հետևաբար
պաղեստինցիների նկատմամբ հետապնդումների և ռազմական գործու-
ղությունների սատակացմանը:

Երկրորդ, եթե նույնիսկ Աշխատանքի կուսակցությունն ունի «եր-
կաթե» պատից էլ հեռու գնացող իր սեփական ծրագիրը, այնուամենայ-
նիվ նա հավանաբար ի վիճակի չի լինի կազմել այնպիսի կառավարու-
թյուն, որն ի զորու կլինի գործակալներին իրականացնել այդ ծրագիրը:
Կարծում ենք միաստիճանակ հետո մենք ականատես կլինենք Իսրայել-
յան Ազգային միասնության կառավարությունների ձևավորմանը՝ թե որ-
քան գործնական կամ զուտ խորձալ ցույց կտա ժամանակը:

Ակնհայտ է, որ պայքարը Պաղեստինի համար թևակոխել է իր
վճռորոշ և միգուցե վերջնական փուլը: Սակայն մեկ բանում պետք է
փտուսի լինենք, որ արդար և շարունակական խաղաղության հաստատ-
ման նախաձեռնությունը երբեք դուրս չի գա Իսրայելից: Միայն միջազ-
գային հանրության վճռական միջամտությունն ու աջակցությունը կա-

յող է փրկել Պաղեստինն ու մրա մարտնչող ժողովուրդը «երկաթե» պատով ջախջախվելու դաժան հեռանկարից:

ROUBEN KARAPETYAN

A NEW STAGE OF THE STRUGGLE FOR PALESTINE

Since the creation of the state of Israel in 1948 the Palestinian problem has become the core of the Arab-Israeli conflict. During almost the half century of wars, hatred and bloodshed between the Arabs and Israel the problem of Palestine is still remained unresolved. The peace process initiated at the beginning of 90's has brought some practical results together with the hope that eventually the Palestinian state will be established alongside with Israel.

This article analyzes the present situation in Palestine and the future prospects of Palestinian Autonomy as well as its leadership. The regional and global background to the current phase of the Israeli-Palestinian conflict is also included at the article. What does the future hold in store for the Palestinian Autonomy? What lies behind the uncompromising policy of A. Sharon and his government? How will be the perspectives of Palestine without Y. Arafat?

The general conclusion is that at this stage the initiative for the establishment of lasting peace will never come from Israel. Only the strong interference of international community and its assistance could help the struggling Palestinian people to avoid the prospect of being smashed by the "iron" wall.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Agence France Presse, Paris, 14 սեպտեմբերի 2001.
2. Maariv, Tel Aviv, 5 հոկտեմբերի 2001.
3. New York Times, 2 հոկտեմբերի 2001.
4. ԱՄՆ մայրապետ Քլինթոնի կողմից ներկայացված առաջարկի համաձայն, այն մասը, որը հրեական է պետք է պատկանի Իսրայելին, իսկ այն մասը, որն արաբական է՝ Պաղեստինի պետությանը, ներառյալ Հարան ալ-Շարիֆ (ալ-Ակսա համալիրը): Արևմտյան Պառզ պետք է մնա Իսրայելի ինքնիշխանության տակ: Այս տարբերակը հաստատում էր Երուսաղեմի արևելյան մասում հրեական բնակավայրերի գոյությունը:
5. Le Figaro, Paris, 28 սեպտեմբերի 2001.
6. Yedioth Aharanot, Tel Aviv, 1 հոկտեմբերի 2001.
7. AFP, 3 դեկտեմբերի 2001.
8. Նույն տեղում; ԱՄՆ պաշտպանության քարտուղար Դ. Ռամսֆելդի մանր առաջիկա 2002 թ. հունիսի 20-ին:
9. AFP, 19 նոյեմբերի 2001.
10. BBC, 24 հունիսի 2002.
11. MERIP, (Middle East Research Information Project), Press Information Note 82, 26 հունվարի 2002.

12. Le Figaro, 16 հոկտեմբերի, 2001.
13. 2001 թ. նոյեմբերի 23-ին իսրայելյան «Մաարիվ» օրաթերթում հրատարակված Գնդաֆի (Gallup) հարցման արդյունքների համաձայն, իսրայելցիների 55%-ը կողմ է հակամարտության վերջնական կարգավորմանը, 20%-ը կողմ է ՊՆ-ն սլատերազմ հայրարելու, 19%-ը՝ ներկա ստատուս-քվոյի պահպանմանը: Համաֆի կողմից իրականացված սահարելյական գործողություններից հետո խաղաղության կողմնակիցների թիվը նվազել է մինչև 32%: (Haaretz, 4 դեկտեմբերի 2001):
14. Newsweek, New York, 13 օգոստոսի 2001.
15. MERIP, Press Information Note 50, "Sharon's National Unity Government: Shoring Up the Iron Wall," by Jeff Halper, 13 մայիսի 2002.

ԱՁԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ (1898—1908 թթ.)

XIX դ. վերջին և XX դ. սկզբին սուլթանական կառավարությունը հուլանափոքրական քաղաքականություն էր վարում Արևմտյան Հայաստանի մանհեղական բնակչության նկատմամբ: Նա ոչ միայն չէր ոչնչացնում Արևմտյան Հայաստանի բնակչության այդ շերտերին, այլև քաղաքական նկատառումներով ստվարացնում էր դրանք:

Թե ինչ արագությամբ էր բռնակալը առաջ տանում այդ գործը, կարելի է դատել հետևյալ տվյալներից. 1894-1896 թթ. ցարդերից առաջ Այլ քաղի 18 գյուղերում քրդեր բուրբովին չկային: Սակայն 1898 թ. արդեն կային քրդական 108 տնտեսություններ: Համարյա նույն քանը տեղի ունեցավ նաև Արճաշի 20 գյուղերում, որ քուրդ տնտեսությունների քանակը նշված ժամանակամիջոցում 21-ից բարձրացավ 189-ի¹: Բրդական տարրը այդպիսի տեմպերով առաջադիմեց նաև Թիմարում, Հայոց Չոքում, Արճակում, Բերկրիում, Կարճկանում, Մոկսում, Մանճուղիեում, Շատախում, Գավաշում, Բաշկաղեում, Մեմուրեք-յուլ-Համիդիեում, Ալաշկերտում, Մաք-սու գավառակում և այլ վայրերում²: Ամենուրեք քրդերը նվաճում էին հայերի գյուղերը, հաստատվում նրանց հողերի վրա:

Արյուրների և գրակամության մեջ քրդերի բվաքանակի մասին կան իրարամերժ տեղեկություններ: Այսպես Ֆ. Գոյազմովը ենթադրում է, որ 1890-ական բվակամների կեսերին ամբողջ Թուրքիայում քրդերը կազմում էին 1, 5-2 մլդ, որից 1, 5 մլդ. բնակվում են ասիական Թուրքիայում, ավելի ճիշտ էրգրումի, Դիարբեքիի Բիթլիսի, Խարբեքի, Մուսուլի վիլայեթներում և Մուլեյմանե սանջակում³:

Վանի ռուսական փոխնյութատեսը նկատում է, որ 1908 թ. Թուրքիայում ապրում էին շուրջ 1, 5 մլդ. քուրդ, ընդ որում չի նշում, թե դրա ո՞ր մասն էր բնակվում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում⁴:

Պ. Ի. Ավերյանովը ցույց էր տալիս, որ 1911 թ. Օսմանյան կայսրության մեջ հաշվվում են 1. 740. 000 քուրդ, որոնք կազմում են

Արևմտյան Հայաստանի բնակչության մոտ կեսը, իսկ մանկեղական բնակչության՝ 2/3-ը⁷: Նույն հեղինակի պնդմամբ, Արևելյան Անատոլիայի որոշ շրջաններում քրդերն ավելի մեծ թիվ են կազմում, հասանելով Քիթլիսի վիլայեթում բնակչության 55%-ի, իսկ Մոսուլի վիլայեթում՝ 64%-ի⁸:

Է. Պելլիի հայոց պատրիարքարանի տվյալներով, 1912 թ. հայկական վեց վիլայեթներում ապրում են 678 հազ. քուրդ, որից 242 հազ. մոտակայք, 182 հազ. քոչվոր, 140 հազ. ղղզլըքաշ, 77 հազ. զազա և 37 հազ. Նոբի⁹:

Թուրքական կառավարող շրջանները խուսափում էին քրդերի թվաքանակի հրապարակումից, քայք պաշտոնապես հայտարարում էին, որ նրանք հայկական վեց մահանգներում կազմում են մեծամասնություն:

Դժվար չի նկատել, որ այդ հեղինակները քաղաքական նկատառումներով ուռճացնում կամ նվազեցնում էին Արևմտյան Հայաստանի քուրդ ազգաբնակչության թիվը: Ոմանք կարծում էին, որ դրանով կարողանան միջազգային դիվանագիտությունից հայկական հարցը, մյուսները ենթադրում էին հակառակը: Իրերի մեան պայմաններում Արևմտյան Հայաստանի քրդերի թիվը կարելի է որոշել միմիայն մոտավոր ճշտությամբ: Բերած տվյալներից եթե հրականությանն ավելի մոտ համարենք Պ. Ի. Ավերյանովի տեղեկությունները և դրա հետ միասին նկատի ունենանք, որ քրդերի զգալի զանգվածը տակավին գտնվում էր իր հայրենիքում, այսինքն՝ Մոսուլի վիլայեթում, Դիարբեքիի, Քիթլիսի ու Վանի մահանգների հարավային փայրերում, ապա կարելի է համաձայնվել, որ Արևմտյան Հայաստանում քրդերի թվաքանակը պետք է տատանվեր 1 միլիոնի սահմաններում: Թերևս հետագայում հետազոտողները կարողանան ավելի ճշտել քրդերի թիվը, անկասկած է սակայն, որ Արևմտյան Հայաստանում նրանք հայերից քիչ էին և կազմում էին երկրի բնակչության երկրորդ խոշոր զանգվածը:

Արևմտյան Հայաստանում քրդերը բնակվում էին գերազանցապես Վանի, Քիթլիսի ու Դիարբեքիի վիլայեթներում: Այդ մահանգների որոշ շրջաններում նրանք կազմում էին բնակչության նույնիսկ մեծամասնությունը (Հեքյարիի սանջակում, Արսիլայի դաշտում, Խոչարում, Մոտկանում, Նորդուզում, Վարդույում, Խմուսում և այլն¹⁰): Խարբերդի և Էրզրումի վիլայեթներում քրդերի թիվը համեմատաբար քիչ էր, Սկզզի վիլայեթներում ավելի քիչ, հասանելով հազիվ 29. 000-ի¹¹:

Քրդերի ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղերում, իսկ քաղաքներում՝ խիստ աննշան տոկոսը: Գյուղերում նրանք զբաղվում էին անասնապահությամբ ու երկրագործությամբ, իսկ քաղաքներում՝ պաշտոնավարությամբ, մյուլթեզիմությամբ կամ քանսիդարությամբ, օրամշակությամբ և այլն:

Քուրդ գյուղացիության կեսից ավելին վարում էր կիսաքրոջվորական կյանք և ապրում համարյա բացառապես ամասնապահությամբ, իսկ մնացածը՝ զբաղվում էր երկրագործությամբ¹⁰։ Կիսաքրոջվորական քրդերը կոչվում էին աշիրեթական, քամզի դեռ պահպանում էին տոհմացեղային կապերը և ունեին որոշ ինքնուրույնություն, իսկ երկրագործ քրդերը՝ ուսյաներ։ Մրանք արդեն զրկվել էին այդ կապերից և ընկել պետության ու ադաների իշխանության տակ։

Ուսյա-քրդերը ցրված էին Արևմտյան Հայաստանի տարրեր վայրերում, մինչդեռ աշիրեթական-քրդերը ապրում էին որոշակի տարածություններում, հանդիսանալով այդ տարածքների փաստացի տերերը։ Քրդական որոշ աշիրեթներ բազմամարդ էին, իսկ մյուսները՝ սակավամարդ։ Բազմամարդությանը հատկանշվում էին հատկապես ցեղային միություններով ապրող քրդերը, իսկ սակավամարդությանը՝ ատանձին ցեղերով ու հատկապես համայնքներով ապրողները։

Սուլթան Համիդը թեպետև պաշտպանում էր քրդերին հայերի դեմ, սակայն քրդերի նկատմամբ նույնպես վարում էր շովինիստական քաղաքականություն, ենթարկվում ազգային ու սոցիալական ճնշման։ Նա թուլացնում էր քրդերի դիմադրական ուժը, երբ պաշտպանում էր նրանց շահագործող վերնախավի շահերը և ռոմանիալում աշխատավորական զանգվածների կենսական խնդիրները, չեզոքացնում էր քրդերի միավորման փորձերը, երբ սեղմանում էր նրանց առաջնորդների մեջ տևական կռիվներ։ Բռնակալը ուղղակի և անուղղակի միջոցներով արգելակում էր քրդերի ազգային գիտակցության զարգացումը և, պահելով կրոնական մակարդակի վրա, ձգտում էր ձուլել նրանց թուրքերի հետ։

Սուլթան Համիդի կառավարությունը քրդական որոշ զանգվածներին ենթարկում էր մահ կրոնական հալածանքների¹¹։ Նրա հրոսակները հետապնդում էին հատկապես եզդիներին, որոնք լինելով քրդախոս, դավանանքով տակայն մահմեդականներ չէին։ Չտանելով թուրքական իշխանությունների բռնությունները, եզդիները փորձում էին հավատափոխվել, սակայն ձգտում էին ընդունել ոչ այնքան իսլամություն, որքան քրիստոնեություն, մասնավորապես ուղղափառություն, կամենալով անցնել Ռուսաստանի հովանավորության տակ։ Ուշագրասվ է, որ բացի եզդիներից, թուրքական բռնություններից ազատվելու համար դավանափոխության փորձեր էին կատարում նաև քրդական այլ զանգվածներ։ Այսպես 1901 թ. Դերսիմի ղրգըրաչները ներկայացուցիչներ ուղարկեցին Քիթլիա ու Մուշ, պարզվելու համար այստեղի հայերի ուղղափառությունը և նրանց կարգը։ Եթե իմանային, որ հայերն այդտեղ են ուղղափառներ, ապա իրենք ևս պետք է հետևեին նրանց օրինակին։ Քրդական որոշ զանգվածներ այդպիսի դիրք էին բռնել նաև Վանի վիլայեթում։ Ռուսական փոխխուսադոս Ա. Թումանսկին, անդրադարձնալով քրդերի

այդ տրամադրություններին, 1901 թ. նոյեմբերի 27-ին գրում էր. «Քրեքի վիճակն այդպիսին է նաև Վանի վիլայեթում, որտեղ քրոնրը սպասում են իմ վերադարձին, որ տան մեան խնդրագրեր»¹².

Սուլթան Համիդը քրդերից գառ Արևմտյան Հայաստանը ձգտում էր քնակեցնել նաև թուրքերով: Զգտնելով ուրիշ հնարավորություն, նա զարկ տվեց Բաղկանների արտամղված թուրքերի և ցարիզից դժգոհ Անդրկովկասի մահաձեղականների տեղափոխումներին դեսպի իր կայսրության արևելյան մասերը: Այդ եկվորները, որոնք հայտնի էին մուհաջիրներ (գաղթականներ) անունով, հաստատվում էին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում: Դեռ 1895 թ. սեպտեմբերի 2-ին «Մշակ»-ը գրում էր. «Բաղկան գաղթականները շրջապատեցին Անատոլիայի հայ գյուղերը և մասամբ անցան դեսպի հարթերը և Դիարբեքի: Աբասուտանի, Արդահանի և Ղուրդիսի ավերի մուսուլմանները և Կաղզվանի քրդերն ու թուրքերը շրջապատեցին Արաշկերտի, Բասնեի, Բայազետի, Մամազկերտի հայերին և մյուս մասը մնաց Թուրքումի, Լաքիմանի, Քիսքիմի և Տրասպիզոնի կողմերում: Իսկ Կարսի նահանգի մոլեռանդ մուսուլմանները քնակվեցին գլխավորապես քաղաքներում, օրինակ՝ Մեքաստիյա, հարթերը, Էրզրում և Երզնկա, իսկ փոքրամասնությունը ցրվեց այդ քաղաքների մոտակա գյուղերում»¹³.

Իշխանությունները եկվորներին քնակեցնում էին ոչ միայն վախած ու տարագրված, այլև տակավին իրենց գյուղերում ապրող հայերի հողերում և այդպիսով առաջին իսկ օրից ստեղծում բշմամական հարսքերություններ մուհաջիրների ու տեղացիների միջև: Հետագա տարիներին սուլթանի սատրապները մուհաջիրների հոսքը դեսպի Արևմտյան Հայաստան ավելի ուժեղացրին: Միայն 1900 թ. այստեղ քերեցին Ռուսաստանից, ավելի ճիշտ՝ Կովկասից 7000 հոգի, իսկ Բաղկաններից՝ Բոսնիայից ու Ռումիլիայից՝ 895 ընտանիք¹⁴:

Կատավարության վարած քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում նկատելի արագությամբ մեծացավ թուրք քնակչության թիվը: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նշում էր, որ առաջին համաշխարհային պատերազմի մախադյակին հայկական վեց վիլայեթներում ապրում էր 666. 000 թուրք¹⁵, իսկ Պ. Ի. Ավերյանովը այդ թիվը հասցնում էր մինչև 888. 000-ի, երբ գրում էր, թե հայկական վիլայեթներում 1911 թ. հաշվվում էր 3. 552. 000 մարդ, որի 1/4-ը թուրքեր են¹⁶: Զմայած դրան, Արևմտյան Հայաստանում իրենց քանակով թուրքերը կազմում էին ազգաբնակչության երրորդ խոշոր զանգվածը: Երկրի որոշ շրջաններում նրանք հանդիսանում էին քնակչության մեծամասնությունը (Սվազի վիլայեթում, Էրզրումի, Երզնկայի, Դեղզանի, Բաքերդի և այլ զավատներում¹⁷), իսկ այլ շրջաններում՝ փոքրամասնությունը (Բիթլիսի,

Գիարքեօսի վիպերնեում, Վանի վիպերի մի շարք վայերում¹⁶): Թուրքերի հիմնական զանգվածը հաստատված էր կայսրության այլ շրջաններում, զինավորակապես կենտրոնական ու արևմտյան Անատոլիայում: Բավական է նշել, որ Ասիական Թուրքիայում նրանց թիվը կազմում էր շուրջ 8 միլ¹⁷, իսկ Արևմտյան Հայաստանում, ինչպես ասվեց այն չէր հասնում նույնիսկ մեկ միլիոնի:

Արևմտյան Հայաստանում թուրքերի մեծ մասը բնակվում էր գյուղերում և զբաղվում երկրագործությամբ ու անասնապահությամբ, իսկ փոքր մասը՝ քաղաքներում և զբաղվում պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ, մյուլթբեզմությամբ, վաճառականությամբ, արհեստներով, օրամշակությամբ և այլն: Երկրի որոշ քաղաքներում թուրքերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի մյուս ժողովուրդների, թուրքերն ազատ էին ազգային ու կրոնական հարաձայնեցման: Մակայն համլոյան դժնյակ պայմաններում նրանք ևս ոչ այն չափով, ինչ քրդերը և մանավանդ հայերը ենթարկվում էին սոցիալական հարստահարումների ու կեղեքումների:

Աբդուլ Համիդի կառավարությունը համեմատաբար մեղմ քաղաքականություն էր վարում շերքեզների նկատմամբ: Մահմեդական այս զանգվածը բախանցեց Թուրքիա և Արևմտյան Հայաստան Դրիմի պատերազմից հետո և մեծ քանակ կազմեց XIX դարի վերջին քառորդում: Կառավարության կողմից շերքեզները տեղավորվեցին Արևմտյան Հայաստանի Մանազկերտ, Բուլանջի, Ախլաք, Մուշ, Գեմեջ, Աղջեազ գավառներում, ինչպես և Խարքերդի, Էրզրումի ու Մլվազի վիպերների մի շարք շրջաններում: Ամենուրեք նրանք ցրված էին քրիստոնյա ու մահմեդական բնակչության մեջ, իսկ հաճախ էլ խցկված նրանց գյուղերում¹⁸: Չերքեզները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ, աճեցնում էին հատկապես ընտիր ձիեր:

1890-ական թվականների հայկական կառույցներից հետո թուրքական կառավարությունը շերքեզների նոր ներգաղթ կազմակերպեց դեպի Թուրքիա ու Արևմտյան Հայաստան: Կառավարության կողմից տեղծվել էր հատուկ համեմատողով, որ մտախել Բիբլիսում, եկվորնեյին ուղարկում էր հայաշատ ու տնտեսապես դեռ կայուն գյուղեր, որ դրանց միջոցով կարողանան քանակապես մտքացնել և նյութապես հյուծել բնակիչներին: Այլամատեսը գրում էր. «Դիտմամբ կը փնտրվին հայաշատ ու բարգավաճ գյուղեր հոն հաստատելու համար կովկասահայերու վրեժխնդրությամբ բռնավորված քաքարները: Այլևս գաղտնի չէ, որ թուրք կառավարությունը՝ հայ գյուղերը իսլամ... տարրերու լցնելու քաղաքականությունը ամենին հաջող քայլերին միայն կը նկատե՛ն՝ գտնոց հայերնն պարպելու համար»¹⁹:

Համիդյան պաշտոնյաները տեղավորվում էին մեքագաղթյաներին մաս արևմտահայ ազգային ազատագրական պայքարի օջախներում, մասնավորապես Տարսուզում, որ պատևի առիթով օգտագործեն նրանց հայկական շարժումների դեմ, շահագրգռելով հայերի շարժական ու անշարժ ունեցվածքներով, գյուղերով ու հողերով: 1902 թ. «Դրոշակ»-ը գրում էր. «Մյու դաշտի գյուղերն են լեցված 3 հազարն ավելի գաղթական չեքեզներ», որոնց «օր ավուր կը սպասեն Սասնոյ կոտորածին, որ նրան ու գրավին Սասնոյ և Սին լեռնաշղթային գեղեցիկ լեռնաքնակ հայ գյուղերը. ինչպես ատնցմն քանի մը հազար տուն, 6-10 տարի առաջ, եկան և բռնի քար ու քանդ ընելով Վարդոյի և Խամդերսի (Մյու դաշտի հյուսիսային լեռնաշղթան) լեռնաքնակ հայ գյուղերը, իրենց հաստատվեցան այն տեղերը»²⁷: Բայց քանի դեռ չէր սկսված Սասնի կոտորածը, շարունակում էր թեթրը, պաշտոնյաները հարկադրում էին հայ գյուղացիներին՝ հոգավ չեքեզների «սպրտատի բուրք պիտուլքները»²⁸:

Շարունակելով չեքեզների մեքագաղթը դեպի Թուրքիա, սուլթանի կատավարությունը գործակալներ էր ուղարկում Կովկաս, որոնց համոզում էին լեռնականների՝ բողմել Ռուսաստանը: Եվ վերջիններս խաբվելով նրանց կեղծ խոստումներից ու դժգոհ լինելով ցարիզմի գաղութային քաղաքականությունից, լքում էին հարազատ՝ վայրերը, մեկնում Թուրքիա:

Ի տարբերություն մախորդ տարիների, երբ ռուսական կատավարող շրջանները քաղաքական ու ռազմական մկատառումներով, արգելակում էին լեռնականների արտագաղթը, 90-ական թվականների վերջերից, այլևս չէին խոչընդոտում նրանց: Այժմ ցարիզմը գտնում էր, որ լեռնականների արտագաղթով մախ՝ կատելոծի ազատ տարածություն, որը կտրամադրվի կայսրության կենտրոնական շրջաններից տեղափոխվող գյուղացիներին, երկրորդ՝ կմարտի իր թիկունքը բշմամական տարրերից և ապագայում Թուրքիայի դեմ պատերազմելիս, կազատվի ավելորդ լարվածությունից: Դիշտ է, ցարական շրջանները չէին անտեսում այն հանգամանքը, որ լեռնականները տեղափոխվելով Թուրքիա, կդառնան իրենց կատաղի բշմամիները և այսպես թե այնպես օգտակար կլինեն հակառակորդին, բայց միաժամանակ գտնում էին, որ թուրքական կողմում նրանք քիչ փոփոխվող կլինեն, քան սեփական թիկունքում:

Ղարազլիսին նրկու բռնակալները՝ Համիդ II-ն ու Նիկոլայ II-ը Կովկասի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության տեղաբաշխման հարցում կարծես հասել էին փոխադարձ ըմբռնման: Նրանցից մեկը իր նրկրից արտահղում էր մահմեդականներին, իսկ մյուսը՝ քրիստոնյաներին, կոպիտ կերպով ոտնահարելով այդ ժողովուրդների ազգային շահերը: Ուշագրավ է, որ ռուսական կատավարող շրջանները, երբ տեսան, որ Թուրքիան հայերի արտագաղթը բողաւարում է նրանց նա չվերա-

դատնալու պայմանով, իրենք էլ սկսեցին մայրը կատարել լեռնականների նկատմամբ: Կովկասի գլխավոր կառավարչապետ Գոլիցինի 1898 թ. փետրվարի 6-ի այն զեկուցագրին, թե երկրամասի մահմեդականներից 6000 ընտանիք դիմել են իրեն՝ Թուրքիա գաղթելու խնդրագրերով, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանեց՝ բուլլատրել՝ ետ չվերադառնալու պայմանով²⁴:

Թուրքական կառավարության վարած քաղաքականության հետևանքով տասնյակ հազարավոր չերքեզներ արտագաղթեցին Ռուսաստանից դեպի Օսմանյան կայսրություն: Առաջին համաշխարհային պատերազմի մախոթյակին հայկական վեց վիլայեթներում մրտանց թիվը արդեն հասնում էր 62. 000-ի²⁵:

Չեմբարկելով կրոնական հալածանքների, սուլթանական իշխանությունները սակայն օգտագործում էին չերքեզների դավանանքը և աշխատում էին բուրքացնել նրանց: Այդ պատճառով էլ չերքեզների համար նրանք չէին քացում դպրոցներ և կուլտուր-լուսավորական այլ հաստատություններ, աշխատում էին որքան հնարավոր է հեռու պահել գիր ու գրականությունից, ժամանակի քաղաքակրթությունից: Չինելով չերքեզներին, բուրքական պաշտոնյաները օգտագործում էին նրանց հայերի, մասամբ նաև քրդերի դեմ և այդպիսով ավելի էին բուրքացում ազգամիջյան թշնամությունը:

Սուլթանի կառավարությունը, ի թիվս քրիստոնյա այլ ժողովուրդների, հետապնդում ու հալածում էր նաև հույներին. արգելակում էր նրանց լեզվի ու կուլտուրայի զարգացմանը, ամարգում էր ռոդաֆաա հավատը, պղծում սրբությունները: Չդիմանալով այդ թնճություններին, հույների որոշ մասը՝ մոտ 15. 000 մարդ թողեց պապենական քրիստոնեությունը և ընդունեց մահմեդականություն²⁶: Սակայն հույների մեծամասնությունը դիմագրավեց համիդյան սարսփներին և պահպանեց իր լեզուն ու դավանանքը: Պ. Ի. Ավերյանովը նշում էր, որ 1911-1912 թթ. ամբողջ Թուրքիայում ապրում էր շուրջ 1, 5 միլիոն հույն²⁷, իսկ պատրիարքարանը զույգ էր տալիս, որ հայկական վիլայեթներում նրանց թիվը կազմում էր 42. 000 մարդ²⁸: Հույներն ապրում էին գերազանցապես էրզրումի և Սվազի վիլայեթներում և զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, հանքանշակությամբ, իսկ որոշ տեղերում նաև արհեստով ու առևտրով:

Սուլթանական կառավարությունը ազգային հալածանքների էր ենթարկում Արևմտյան Հայաստանի նաև մյուս ժողովուրդներին՝ պարսիկներին (13. 000 մարդ), լազերին (10. 000 մարդ), գնչուներին (3. 000 մարդ), երեսներին և այլոց²⁹:

Պարսիկները ապրում էին գերազանցապես Վասպուրականում և մասամբ Տարսուսում ու Բարձր Հայքում, զբաղվում էին առավելապես երկ-

րագործությանը, ինչպես նաև արհեստներով ու առևտրով, լազերը քնակվում էին հիմնականում Տրապիզոնի ու մասամբ Էրզրոմի վիլայեթներում: Նրանք երբեմնի վրացիներ էին, քայք պատմական համագամացիների քերտնով մահմեդականացել էին, թուրքացել, գրադվում էին մեծ մասամբ երկրագործությանը: Հրեաները ապրում էին Վանի վիլայեթի Բաշկալի ու Գեակալ շրջաններում, ինչպես և Արևմտյան Հայաստանի որոշ քաղաքներում³⁰: Նրանք գրադվում էին երկրագործությանը, արհեստներով, առևտրով ու վաշխատությանը: Ակամատեսներից մեկը գրում էր, թե հրեա առևտրականները Վասպուրականի որոշ շրջաններ քաժամել են իրար մեջ և պարտավորվել են լանցմել միմյանց սահման: Նրանք «ամեն առևտրի մեջ անաբզել մուտք են գործում, կան այնպիսիներ, որ ամեն գործ կատարում են»³¹:

Այդպիսով, թուրքական բռնապետությունը Արևմտյան Հայաստանի ժողովուրդներին, հատկապես ոչ թուրքերին սոցիալական հարստահարման հետ մեկտեղ ենթարկում էր նաև ազգային ու կրոնական հալածանքների, սկզբամտում էր նրանց մեջ ազգամիջյան թշնամություն, որ կարողանա հեշտությանը ճնշել ազատագրական նկրտումները, վարում էր ուժացման քաղաքականություն, աշխատում էր պահել խավարի ու սոցիալության մեջ, խոչընդոտելով նրանց նաև հոգևոր աստիճանագրում: Սուլթանի կատավարությունը դաժան քաղաքականություն էր վարում հատկապես հայերի նկատմամբ, դատապարտելով նրանց ֆիզիկական քնաջնջման:

Շնորհիվ նրա այդ քաղաքականության Արևմտյան Հայաստանում XX դ. սկզբին նկատելի արագությամբ մեծացավ մահմեդականների, մասնավորապես թուրքերի թիվը, իսկ հայերինն, ընդհակառակը, նվազեց³², զգալիորեն սրվեցին ժողովուրդների միջև եղած հակասությունները, պահպանվեցին նրանց սոցիալ-տնտեսական և կուլտուրական տարբերությունները³³, կաշկանդվեց նրկրի զարգացումը, շարունակելով մնալ զերազանցապես գյուղացիական³⁴: Ինքնըստիմյացան հասկանալի է, որ այդ ամենը քացասարար էին ազդելու Արևմտյան Հայաստանի ժողովուրդների ազատագրական շարժումների վրա:

AZAT HAMBARYAN

THE NATIONAL POLITICS OF SULTAN GOVERNMENT TOWARD MUSLIM POPULATION OF WESTERN ARMENIA (1898-1908)

Based on unpublished archival materials and other primary sources, author considers some peculiarities of politics of Ottoman sultan Abdül Hamîd II toward the Muslim population of Western Armenia, namely Kurds, Turks, North Caucasians. The Muslims of Ottoman Empire were regarded by the bloody tyrant as the basis of

regime and as allies in the struggle against Armenian national-liberation movement. Author concludes that this politics of oppressive Turkish government was aimed to increase the percentage of Muslim population, in particular Turks, regarding the Armenians.

ՃԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Ուլախ, ֆ. «Կ. Պոլսի ղեկավարությունը», գ. 1584, քր. 32-34:
2. Տես «Մարմ», 1904, № 4, էջ 25-26, Ս. Հայկունի, Բազըրևանդ, Ջրարաշխ զավառ, Վ. Ա. Էջմիածին, 1894, № 105-106, 125, 149, 270, 304, «Մշակ», 1907, № 134:
3. Ф. Грязнов, Военный обзор передового театра в Азиатской Турции, ч. II, СПб, 1897, стр. 55-56.
4. Վրացական ՄԱՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ցուց. 2, գ. 492, ք. 72:
5. П. И. Азерьянов, Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб, 1912, стр. 13.
6. Նույն տեղում:
7. Հայկական ՄԱՀ ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների խոնք», գ. 39, քր. 12-13:
8. Ա.-Ղ. Վանի, Բիրյոնի և Էրզրոմի վիլայեթները, Երևան, 1912 ք.:
9. Վրացական ՄԱՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, ք. 183:
10. Տես Մալխաս, Ներկա ստիչ և իր պատճառները, Տրասպոլոն, 1909, էջ 28:
11. Արևմտյան Հայաստանի քրդերը շունհին միասնական կրոն: Նրանց ճնշող մեծամասնությունը մահմեդականներ էին, առարարաժամկետով սուննի և շիա ուղղությունների, իսկ մյուս մասն էլ՝ դրզդջաշներ և եզդիներ էին: Ըստ Պ. Ի. Ալիբյանովի տեղեկությունների, 1911 թ. Արևելյան Թուրքիայում բնակվող 1. 740. 000 քրդերից 1. 475. 000-ը համարվում էին սուննիներ, 200. 000 դրզդջաշներ, 40. 000 եզդիներ, իսկ 25. 000-ը՝ շիաներ (տես նրա նշված աշխատությունը, էջ 13): Ի տարբերություն սուննիների ու շիաների, որոնք ապրում էին երկրի համադրյա քոյոք շրջաններում, դրզդջաշները ապրում էին գերազանցապես Դերսիմում, իսկ եզդիները՝ Վանի ու Դիարբեքի վիլայեթներում, ինչպես և մասամբ Բիթլիսի վիլայեթում, Ալաշկերտի ու Բայազետի զավառներում:
12. Հայտնի է, որ սուննիզմը իբրև մահմեդականության հիմնական ուղղություն առաջացել է VII-VIII դդ. և ավարտվել IX դ.: Նրա կողմնակիցները դուրանի հետ միասին ճամաչում էին նաև սուննի (այսինքն Մոհամեդի ճառերը կամ նրա մասին եղած պատմվածքները պարունակող գրքերի) սքրությունը: Իսկ շիիզմը իբրև մահմեդականության երկրորդ ուղղություն, առաջանալով նույնպես VII-VIII դդ., պահանջում էր, որ Մոհամեդից հետո առաջին խալիֆը պետք է խաճարել Ալիին՝ Մոհամեդի հորերդուրում և փեսային: Այդ ուղղության կողմնակիցները գտնում էին, որ սուննիներին մարգարեները՝ Աբու Բեքիրը, Օմարը և Օսմանը եղել են սուկ բունատիրոջներ: Մահմեդականության այս երկու ուղղությունների կողմնակիցները կրոնական քողի տակ վարում էին իրար դեմ քաղաքական պայքար, որն օգտագործվում էր հարստանաբող վերնախալի կողմից:

13. Դժգոյրաշարժումը (թուրքերին նշանակում է կարմիր զուխ, ի պատիվ իրենց 12 շիայական իմամների նրանք կրում էին այնպիսի գլխակապ, որն ունենար 12 ծիրանազայն զոլեր) հանդիսանում էր շիիզմի աշխատեականությունը, նրա գլխավոր հենարանը: Պայքարելով սոմենիների դեմ, ղրգըրաշները հաճախ դաշնակցում էին քրիստոնյաների հետ և դրա համար վերջիններիս նկատմամբ չէին ըջված այնպիսի ատելություններ, ինչպես սոմենիները: Դժգոյրաշների մի մասը մահմեդականացած քրիստոնյաներ, ավելի մշտ՝ հայեր էին և շարունակում էին պաշտել մաև պապեմական դավանանքը: Այդ հանգամանքը նույնպես մերժեցնում էր ղրգըրաշներին քրիստոնյաների հետ: 1911 թ. սեպտեմբերին Վանի անգլիական փոխյուզատես կապիտան Սիլլ գրում էր, որ ղրգըրաշները «քրիստոնեությունը համարում են իրենց հաւատքի մոտ, սիրում են քրիստոնյաներին և ետեկապես ատում բուրքերին» (ՌԱՏԱ, ֆ. «Քաղաքխիվ», 1911, ցուց. 482, գ. 719, ք. 118): Համարյա նույն քանն էր հաստատում մաև Սյուրմեյանը, որը 1947 թ. հրատարակած իր հուշերում նշում էր, որ Երզնկայի սանջակում ղրգըրաշները պաշտում էին Ալիին ու Քրիստոսին, գնում էին ուխտի քն իրենց էրքեմաները (տները) և քն քրիստոնյաների վանքերը: Նրանք հայերի հետ միասին և հայերի պես տոնում էին Վարդավառը, Կաղանդը, Ջատիկը և այլն (Սյուրմեյան, Երզնկա, Գանձրի, 1947, էջ 200):
14. Եզդիների կրոնը իր մեջ պարունակում էր հեթանոսական բազմաթիվ տարրեր: Իսկինն նրանց բնութագրում էր իբրև «մարական ցուրի սկզբնական տխուր, մնացած իր մոզական սալորություններով» (տես նրա Երկեր, հ. 4, էջ 408): Իսկ Ս. Ա. Եղիազարյանը, խոսելով եզդիների կրոնի մասին, ենթադրում էր, որ այն եղել է ինքնատիպ: Բայց որովհետև գրի չի առնվել, այլ ավանդել է սերունդից սերունդ, ռասի դարերի ըմբացում առավաղվել է կամ ենթարկվել հարևան ժողովուրդների հավատալիքների ազդեցություններին: Հենց դրանով է մա բացատրում այն փաստը, որ եզդիների կրոնում կան ինչպես զրադաշտական, այնպես էլ քրիստոնեության ու մահմեդականության տարրեր: Եզդիները պաշտում էին հրեշտակ Մելեկ Թաուգին, որին պատկերում էին սփրամարզի տեսքով (ՌԱՏԱ, ֆ. «Քաղաքխիվ», 1912, ցուց. 482, գ. 719, ք. 182-186): Նրանք պաշտում էին մաև քրդական դիցաբանության մեջ «սատվածային առանձնահատկություններով օժտված» իրենց մախառոց՝ Եզդանին, որը իբր քն մախառու բազալներ է երկրի վրա, իսկ հետո բարձրացել երկինք: Եզդիները գտնում էին, որ համդիրձյալ աշխարհում իրենց իռզինեց պետք է անբաժան լինեն Եզդու կամ սուրբան Եզդու իռզուց, իսկ դրա համար պարտավոր են վառ պահել նրա հիշատակը (Ամինն Ավդյալ, Անդրեւովկասի քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 87):
15. Կային քրդական մաև որիչ գամգամներ, որոնք կանգնած էին տակալին տոտեմիզմի մակարդակի վրա: Նրանց կարծիքով իրենց հարազատների իռզինեց քայի նրկինք բարձրանալուց կամ գետնի մեջ ճոնկեց կարող էին տեղափոխվել մաև քույրերի ու կենդանիների մեջ, փրկել նրանց քնության արհալիքներից, ամենական փորձանքներից ու դժբախտություններից, հետո պահել լաբերից: 1879 թ. «Մշակ» -ի

- բրահմիցը հաղորդում էր, որ Դերսիմում «շատերան մեջ կո՛վ մը, «շխար մը, գառ մը, ձի մը կապած կը սնուցանեմ» երբեք չը բանցմնելով, և իրենց մեծած հայրը, եղբայրը, որդին է կըսեն, զոր իօր թե իրենց կը ճանչնան, որ մտնելին վերջը չեզոքն անոնց կացեր է: Սնկտ մը այսպես պահած ձուռն վազը կը շփեր և երբ ձին իրեն կը քսվեր ա կը խառաք. անավասիկ տեսա՞ր, կըսեր ինձի, որ եղբայրս զիս կը ճանչնա («Մշակ», 1879, No 41):
16. ՌԱԶԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1901, գ. 1587, ք. 23, ֆ. «Քաղաքիսիպ», 1901, ցուց. 482, գ. 711, ք. 10:
17. «Մշակ», 1895, No 100:
18. Տես «Գրքակ», 1900, No 10, էջ 145-146:
19. Տես Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, քք. 12-13:
20. Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 10:
21. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, ք. 183, Ա-Դո, նշված աշխատությունը, էջ 168, 186, 193, 218:
22. Տես Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, էջ 24:
23. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 8:
24. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1087, գ. 585, ք. 1, В. Тейлор, Путешествие по Армении, Курдистану и Верхней Мессопотамии в 1866 г., Тифлис, 1873, стр. 65. «Գրքակ», 1902, No 8, էջ 121, Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 20-22, «Աղբյուրամատ», 1909, No 19:
25. «Գրքակ», 1906, No 11, էջ 166, տես նաև 1907, No 4, էջ 63:
26. «Գրքակ», 1902, No 8, էջ 121:
27. «Գրքակ», 1903, No 2, էջ 25:
28. Տես ՌԱԶԱ, ֆ. «Քաղաքական տեղան (մոր)», գ. 2419, ք. 5:
29. Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, քք. 12-13:
30. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 16:
31. Տես Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, քք. 12-13:
32. Տես Պ. Ի. Ավերյանով, նշված աշխատությունը, էջ 16:
33. Տես Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, քք. 12-13:
34. Տես Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1087, գ. 585, ք. 19:
35. «Աշխատանք», 1912, No 28-75, էջ 7:
36. Ուշագրավ է, որ նրկրի մի շարք շրջաններում գյուղերի հայկական անունները, պահպանվեցին՝ մույմիսկ այն բանից ձուռ, երբ նրանցում արտամղված հայերի փոխարեն հաստատվեցին քուրդեր և այլ մահմեդականներ: Որոշ տեղերում նորեկները փոխեցին հայկական գյուղերի վերջին վանկերը, հարմարեցնելով դրանք իրենց արտասանությանը (տես «Գրքակ», 1903, No 6, էջ 84):
37. Չմայած կատավարության կողմից կիրառվող դաժան հետապնդումներին արևմտաուսայրը, շարունակելով պահպանել ա հնարավորության սայնամներում առաջ մղել իրենց ազգային արժեքները, հոգևոր կուլտուրան, մահ XX դ. սկզբին գտնվում էին հասարակական համեմատաբար քարծր մակարակի վրա և ավելի կարևոր դեր էին խաղում երկրի տնտեսական, քաղաքական ա կուլտուրական զարգացման գործում, քան իրենց հարևանները: Լինլլ նշում էր, որ հայերի «առաջադիմությունը որչա՛ում է ամբողջ երկրի առաջադիմությունը, իսկ արտագաղթը նրան է

բերում երկրի անկում» (Լինո, Армения, Тифлис, 1970, т. II, стр. 348): Հայերը ազդեց ու ներգործում էին հասարակական դեռ ցածր մակարդակի վրա կանգնած մահմեդականների վրա: Դրա հետևանքով Բաքրը Հայքում, Տարսուսում, Վասպուրականում ու Փոքր Հայքում թուրքերն ու քրդերը աշխատում էին ընդօրինակել հայերի կենցաղը, իսկ որոշ տեղերում մուսլիմիկ խոստում ու աղոթում էին հայերին: Մալխասը նշում էր, որ Վանում «թուրքերեն շատերը, մասնավորապես խոսեց քաղերտ բնակիչներին մանր խառնուրդանները, շատիկաններին ոճանք հայերին կը խոսեին, այնքան որ զորավոր էր հայերենի ազդեցությունը քաղաքին մեջ: Հազվադեպ չէին այն պարագանները, երբ ուրախության ժամանակ թուրքերը հայկական երգեր կը երգեին» (Մալխաս, Գամրուս վրա, հ. Ա, էջ 94-95): 1909 թ. Ա-Ղ-ում գրում էր. «Տանիկ ժողովուրդը թե տեմպերամենտով և թե կենցաղով անհամեմատ քարճր է կանգնած մահմեդական մյուս տարրերից, մասնավորապես քրդերից, քայքայ զբախն տիրող տաքր, որը կոչված է իրր առաջ մղելու երկիցը, մտավորապես և տնտեսապես շատ ետ ճնաշած է և կաշտորապես անհամեմատ ավելի ստոր առտիճամի վրա կանգնած, քան հայ ժողովուրդը, չնայած քաղաքական և սոցիալական այն ծանր պայմաններին, որի մեջ գտնվում էր վերջինս: Ընդերիվ այդ նուամնացության, տանիկ ժողովուրդը... հաճախ եղել է գործակից այն վայրագությունների, որ տեղի են ունեցել մահմեդական մյուս տարրերի կողմից» (Ա-Ղ-ը, նշված աշխատությունը, էջ 250):

38. Արևմտյան Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր փոքր գյուղերով: Դեռ 80-ական թվականներին ամեն մի հայ գյուղ միջին հաշվով ուներ՝ Բաղուսում՝ 33, 1 տնտեսություն, Քըղիում՝ 26, 2, Չարսանբակում՝ 24, 0, Մուշում՝ 34, 3, Բասնում՝ 27, 7, Նոնուսում՝ 17, 7, Վարդուսում՝ 21, 6, Նարբերդում՝ 40, 9 տնտեսություն և այլն: (տես А. М. Колубакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1821, т. III, ч. I, стр. 2-ой, стр. 313): Անշուշտ, կային գյուղեր, որոնց ունեցած տնտեսությունների քանակը անցնում էր 400-500-ից, քայքայ դրանց թիվը փոքր էր: Էլ ավելի փոքր էին քրդական ու ասորական գյուղերը: Ինչ վերաբերում է թուրքերին, ապա նրանց մասին չունենք տեղեկություններ: Օգտվելով գյուղերի սակավամասնությունից, իշխանություններն ու աղաները հեշտությամբ ճնշում էին նրանց բնակիչների նշույթները: Ուստի գյուղերի սակավամասնությունը նույնպես ուներ քաջասակամ նշամակություն ազատագրական շարժումների համար:

АНУШ ОГАНЕСЯН

ИЗ ИСТОРИИ ПРОСВЕЩЕНИЯ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (XIX в.)

Появление первых научных обществ в Османской империи было теснейшим образом связано с социально-экономическими и политическими процессами, происходившими в стране в эпоху нового времени.

Смолкнувший под стенами Вены победный клич османского войска (1683 г.) знаменовал начало конца военно-политического могущества Турции. Еще раньше наметился кризис ее феодального строя, приведший к XIX в. к необратимому отставанию страны от передовых государств Западной Европы. Порта, называемая некогда "блистательной", постепенно попадала все в большую зависимость от европейских держав, которые в середине XIX в. начали борьбу за "османское наследство".

Отдельные государственные деятели, видевшие безнадежное отставание своей страны, неоднократно пытались провести ряд реформ, чтобы спасти государство от распада и раздела¹. Однако реформы эти носили верхушечный характер: они не затрагивали основ существующего строя. Проводившие их представители феодального класса видели в этих реформах лишь средство сохранения империи, укрепления своей власти в новых исторических условиях.

Проведение реформ, рост международных связей Османской империи привели к появлению в стране представителей интеллигенции, получивших светское образование, хорошо знакомых с достижениями западной культуры, из среды которых вышли первые турецкие просветители.

Подобно западным мыслителям XVIII в., полагавшим, что достаточно просветить людей, чтобы добиться установления идеального строя, представители турецкой интеллигенции также придавали огромное значение развитию просвещения и культуры. Они считали одной из основных причин отсталости своей страны недостаточное развитие образования и знаний, а основой экономических и культурных успехов Запада — как раз высокий уровень просвещения².

В целях более широкого ознакомления с культурными достижениями Запада в Османской империи еще в годы правления султана Махмуда II появляются первые так называемые "научные кружки". Так, в Стамбуле появилось "Научное общество" ("Cemiyet-i İlmîye"). Это общество, а скорее кружок, было создано группой ученых, собиравшихся на даче одного из них — Исмаила Феррух-эфенди в Ортакее. Цель его: изучать поэзию, прозу, историю и "истинные науки" ("gerçek ilimler")³. Деятельность этого кружка, однако, не оставила заметных следов — он вскоре распался.

Уже на первом этапе проведения танзиматских реформ у турецких государственных деятелей зародилась идея о необходимости создания в Турции научного центра. Учредителями его стали Мустафа Решид-паша и его единомышленники⁴. Этот центр получил название "Encümen-i Daniş" — "Комитет по делам знаний". Открытие "Комитета" было обставлено со всей помпой. На торжественном открытии его 18 июля 1851 г. присутствовал сам султан Абдул-Меджид, Мустафа Решид-паша, были приглашены представители иностранных посольств. Очевидно, такая помпезность объяснялась желанием Порты продемонстрировать перед лицом "просвещенной Европы" свою готовность следовать по пути вестернизации⁵.

"Комитет по делам знаний" был создан по образцу "Французской Академии". В его состав вошли 40 "действительных членов" и 30 "членов корреспондентов". Среди иностранных членов "Комитета" значились такие видные ориенталисты, как историк-австриец Хаммер, лингвист-француз Бианки, англичанин Редхауз⁶. Включение в состав "Комитета" таких государственных деятелей как Мустафа Решид-паша, министр иностранных дел Али-паша должно было продемонстрировать то большое значение, которое Порта придавала этому мероприятию.

Перед "Комитетом" были поставлены правительством задачи: содействовать развитию литературы и науки, подготавливать к изданию труды по турецкому языку, османской истории, переводить книги с иностранных языков.

Первыми трудами "Комитета" были "Грамматика османского языка" ("Kavaid-i Osmanîye"), составленная Ахмедом Джевадет-пашой (историограф) и Фауд-пашой (впоследствии министр иностранных дел) и арабско-персидско-турецкий словарь Редхауза⁷.

В 1854 г. султану Абдул-Меджиду были преподнесены первые три тома "Истории Османской империи", составленные Ахмедом Джевадет-пашой по поручению "Комитета"⁸. Остальные тома, доводившие описание событий до 1826 г. были изданы в 1861—1884 гг. Этот труд включил в себя материалы предшествующих хроник, а

также новые архивные документы: тексты дипломатических договоров, султанские фирманы и т. д. История Джевдета написана в целом в духе традиционной османской историографии: сохранен тот же династийный принцип изложения, больше преобладает описательность событий, чем их оценка и анализ. Однако, для нас интересным является то, что в "Истории Джевдета" впервые в турецкой историографии появляются отголоски пробуждающегося национализма турок. В предисловии он пишет об истории ислама, в которой два "великих миллета" — арабы и турки — сыграли "важную роль". Османская империя, пишет он, возродила силу и мощь ислама, придала ему жизненную силу. Произошло это благодаря некоему "особому национальному характеру турок". Туркам от природы присущи, якобы, такие человеческие достоинства, как храбрость, стойкость, благородство, способность к восприятию достижений культуры и распространению ее среди других народов. Благодаря этим качествам турки смогли создать обширную Османскую империю.

В предисловии к "Kavâid-i Osmaniye" Ахмед Джевдет пишет о том, что "турецкий язык — один из древнейших языков мира". На нем "говорили наши славные предки, создавшие высокие цивилизации в Центральной Азии". Позднее он подвергся значительному арабо-персидскому влиянию. Нужно постараться вернуть ему его прежнюю "чистоту", — считал он.

Ахмед Вефик в своих лекциях знакомил слушателей с трудами европейских ученых, посвященных истории тюркоязычных народов, читал свои переводы с чагатайского. Этот интерес к "своим братьям по языку и крови" (Ахмед Вефик) также был связан с пробуждающимся национализмом турок. Другим фундаментальным трудом стала "История османского государства" Хайрулла-эфенди — вице-президента.

Об истории Хайрулла-эфенди чешский ориенталист Шлехта-Вшерд писал: "Характерный момент, который выгодно отличает этот труд от всех предыдущих османских историй — это дыхание терпимости и относительная беспристрастность... Выражение иронии и слепого презрения к европейским государствам и обычаям, как и вообще к христианству здесь почти полностью отсутствуют. Вместе с тем, постоянные влечения синхронной истории Европы в повествование об османских событиях и важность, которая впервые этому придана, являются неслыханным новшеством, поскольку прежние местные историографы совершенно не удоставляли за границу своим вниманием и даже новые делают это лишь поверхностно и ограниченно"³.

Отметим также, что в этот период было издано несколько исторических сочинений, написанных в отдаленном прошлом, ряд книг по математике, астрономии, географии, физике, медицине.

В основном, это были компиляции или переводы научных книг и учебных пособий, написанных европейскими специалистами. Однако, они требовали от специалистов—турок определенных знаний, выдвигали задачу разработки своей научной и технической терминологии.

В 1862 г. "Encümen-i Daniş" прекратил свое существование, перестав пользоваться финансовой поддержкой государства.

В 60—ые гг. представителями турецкой интеллигенции были основаны общества, деятельность которых была гораздо успешнее. Наиболее значительным из них было "Османское научное общество" — "Cemiyet-i İlmîye-i Osmaniye", созданное в 1861 г. сторонником европеизации Турции Мехмедом Тахиром Мюнифом¹⁰.

Устав общества был определен султанским указом от 3 июня 1861 г. Общество ставило перед собой цели:

1. Заниматься распространением знаний и наук в пределах Османской империи путем издания собственных и переводных сочинений, чтением публичных лекций и т. д.

2. Общество должно выпускать журнал "Mecmu'a-i Fîlüh" — "Журнал наук".

3. Общество должно воздерживаться от обсуждения религиозных проблем и тем, касающихся современной политики¹¹.

Ежемесячный взнос членов общества составлял один меджидие. Эти взносы и ежемесячные отчисления Министерства народного просвещения составляли финансовую основу деятельности общества.

В июле 1862 г. в качестве печатного органа этого общества вышел первый номер ежемесячного журнала "Mecmu'a-i Fîlüh". Он являлся первым научно—популярным журналом Турции, пропагандировавшим науку и культуру Запада, в нем печатались оригинальные и переводные обзоры по истории отдельных стран, статьи по литературе, языкознанию, естественным наукам¹². Любопытна статья об английской культуре, написанная Шеаки, одним из деятельных сотрудников журнала. В ней он указывает на тесную связь движения науки с требованиями времени — преобладание опыта над умозрительными изысканиями. Для проведения своих идей авторы часто прибегали к схоластическим приемам: статья строилась таким образом, что один задавал вопросы, а другой разъяснял его недоумения.

При "Обществе" была создана типография, публичная библиотека, насчитывавшая до 600 томов и читальня при ней¹³. Общест-

во открыло курсы английского и французского языков, а с 1863 г. оно организовало чтение бесплатных публичных лекций. (Стамбульский университет открылся лишь спустя 6 лет). В. А. Гордлевский отмечал, что "эти лекции первого свободного университета в Турции, из которых слушатель узнавал об успехах знания на Западе, сыграли в образовании османского общества большую роль"¹⁴.

31 декабря 1869 г. в здании университета была проведена первая публичная лекция, на которой присутствовали более 300 слушателей, в том числе великий везирь и другие государственные деятели. Это была лекция по физике и химии, прочитанная Дервиш-пашой, получившим образование в Европе¹⁵. Литератор и историк Ахмед-Вефик-эфенди читал лекции по истории, придворный врач Селих-эфенди — естествознанию.

Однако чтение публичных лекций не превратилось в систематические курсы. Многие из лекций, сопровождавшиеся опытами, воспринимались аудиторией как чудеса и фокусы¹⁶. Такое восприятие было естественным результатом уровня подготовки слушателей. И все же эта популяризаторская деятельность "Османского научного общества" была существенным шагом вперед в культурной жизни Турции.

В 60-ые годы в Турции развернулась борьба за создание литературного турецкого языка, понятного народу и освобожденного от чрезмерно многочисленных арабо-персидских лексических и грамматических заимствований. Эта борьба нашла отражение в публицистике "новых османов"¹⁷, а также в попытках реформы алфавита. Первый проект этой реформы был разработан азербайджанским просветителем Мирзой Фатали Ахундовым и в 1863 г. представлен на рассмотрение "Османскому научному обществу"¹⁸. В 1863—1864 гг. в одной из стамбульских школ велось преподавание по текстам, снабженным новыми дополнительными знаками¹⁹.

Конец существованию общества положил большой пожар, во время которого погибла и типография общества (1866 г.).

Таким образом, возникновение в Турции в XIX в. ряда обществ было новым фактором общественной и культурной жизни страны. Эти общества способствовали созданию и распространению книг по османской и зарубежной истории, литературе, пробуждали интерес публики к достижениям культуры на Западе.

Новым явлением в общественной мысли Турции стало распространение таких понятий, как "патриотизм", "отечество", "нация". Эти понятия были отголосками зарождающегося национализма турок. Первые проблески национального самосознания турок отразились в трудах историков, членов научных обществ. Они положили

начало новому явлению в турецкой историографии: именно в это время турецкие историки, писавшие ранее только об истории ислама и Османской империи, начинают изучать историю других народов, главным образом торкочязычных, пытаются отыскать свои этнические корни. Переняв у европейских просветителей идею о том, что история есть философское воспитание опытом прошлого, историки общества пытались найти в собственной истории примеры для подражания. Они приписывали туркам некую "особую роль" во всемирной истории. Эти пока еще нечеткие тенденции развились впоследствии в новых исторических условиях в националистическую концепцию истории, нашедшую отражение в трудах "Турецкого исторического общества".

ANUSH HOVHANISSYAN

FROM THE HISTORY OF ENLIGHTENMENT IN THE OTTOMAN EMPIRE (19TH CENTURY)

The appearance of the first scientific societies in the Ottoman Empire was connected with the reform movement named *Tanzimat*. Reforms covered social-economic sphere, as well as the field of culture and education. On the processes of development in the field of culture and education caused by the interior problems at the same time influenced the penetration of western ideas. That was evoked by the rise of international relations of the Empire and the increasing penetration of the western capital in the Turkish economy.

The ideas of European Enlightenment were widely spread and thanks to the efforts of the Turkish enlighteners in 50-s of the 19th century the first scientific societies appeared in the Ottoman Empire ("Cemiyet-i Ilmiye"). This societies promoted the publication and circulation of books on local and foreign history, and awakening of the interest to the achievements of the western culture.

Using the foreign searches, especially Turkish ones, the article analyzes the history of the appearance of the first scientific societies (cultural and historical) in the Ottoman Empire in the 19th century.

ПРИМЕЧАНИЯ

1. Имеются в виду реформы Салима III, Махмуда II, танзиматские реформы. Вот что писал британский посол в Константинополе Страдфорд Канинг в своем донесении лорду Пальмерстону 7 марта 1832 г.: "Турецкая империя со всей очевидностью идет к своему распаду, и сближение с европейской цивилизацией дает ей единственную возможность удержать ее хоть на какое-то время". См. U. Heyd. The Ottoman "ulema" and westernization in the time of Selim III and

- Mahmud II – "Studies in Islamic history and civilization". Jerusalem, 1961, p. 63–96.
2. Nî. Berkes N. The development of Secularism in Turkey, Montreal, 1964, Gibb H. A. R. and Bowen H., Islamic society and the West. A study of the impact of Western civilization on Muslim Culture. Vol. I, London 1950. Altar C. Onbeşinci yüzyıldan bu yana türk ve batı kültürlerinin karışık ilişkili etkileme güçleri üstünde bir inceleme. Ankara, 1981.
 3. Levend A. Ş. Türk kültürünün gelişmesinde derneklerin ve kurumların rolü – "Türk Dili" – c. XVII, No 198, Ankara, 1968, s. 650.
 4. Karal E. Z. Osmanlı tarihi, VII cilt, Ankara 1977, s. 205.
 5. См. The bigining of modernization in the Middle East. The 19th century Chicago – London, 1968.
 6. См. Aktepe M. – Turkiyede akademik meselesi ve II Abdulhamide dil akademisi hakkında sunulan layiha – Belgelerle TTDergisi, II cilt, 8 sayı, Mayıs, İstanbul, 1968.
 7. См. Смирнов В. Д. Турецкая цивилизация, ее школы, софты, библиотеки, книжное дело. "Вестник Европы", кн. 8–9, 1876, с. 25–27.
 8. Первые три тома охватывали историю Турции от основания Османского государства до 1786 г. См. Tarih-i Cevdet, İstanbul, 1309 (1893)
 9. Цит. по Жалтыков А. Д. Печать в общественно–политической и культурной жизни Турции, М. 1972, с. 54.
 10. См. Levend A. Ş. Türk kültürünün ... s. 651.
 11. İskit S. R. Turkiyede neşriyat hareketleri tarihine bir bakiş . İstanbul, 1939, s. 54–55.
 12. Турецкий исследователь Ш. Мардин, давая обзор журнала за 1862–1863 гг. показывает, что он систематически знакомил турецких читателей с научными идеями Запада. См. Mardin Ş. The genesis of Young Ottoman Thought Princeton. 1962, p. 239–240.
 13. Гордлевский В. А. Очерки по новой османской литературе. Избр. соч., т. II, М. 1961, с. 366–368.
 14. ibid с. 367.
 15. Bilsel C. İstanbul üniversitesi tarihi İst. 1943, s. 13
 16. Karal E. Z., op. cit. с. 205.
 17. См. Петросян Ю. А. Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII–начало XXв.), М. 1985, с. 49–77.
 18. Кононов А. Н. Реформа алфавита в Турции (к истории вопроса), УЗ ЛГУ, No 282, вып. II, 1959, с. 158–169.
 19. Рассматривался также вопрос о применении армянской графики взамен арабской. Известно, однако, что реформа алфавита была проведена в Турции лишь в республиканский период.

ԱՐՏԱԿ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅՈՒ ՄԱԿ-ՈՒՄ

Արարա-խորայելական, դեռևս վերջնականորեն չկարգավորված հակամարտության խոնի վրա առանձնապես խիստ սրությամբ է դրված Երուսաղեմի կարգավիճակի հարցը: Չնայած կնքված բազմաթիվ համաձայնագրերին և պայմանագրերին¹, Երուսաղեմի շուրջ հակամարտող կողմերը դեռ չեն եկել ընդհանուր հայտարարի: Իսկ դա խստում է այն մասին, թե որքան կարևոր և առանցքային տեղ է զբաղում Երուսաղեմը արաբ և հրեա ժողովուրդների կյանքում և շուրջ 55 տարի տևող արարա-խորայելական հակամարտության մեջ:

Երեք հազար տարի առաջ Հուդայական անապատի ծայրամասում գտնվող Երուսաղեմ քաղաքը նվաճվեց հրեաների քազավոր Դավիդի կողմից, որը այդ քաղաքը դարձրեց ոչ միայն իր քազավորության մայրաքաղաքը, այլև հոգևոր-մշակութային կենտրոնը²: Այդ իրադարձությունը շրջադարձային հանդիսացավ քաղաքի պատմության համար, քաղաք, որը մինչ այդ ոչինչով առավել չէր ավելի հին ու ավելի հայտնի պաղեստինյան քաղաքներից, այնպիսիներից՝ ինչպիսիք էին Մեզլաթն, Երիցովը և Աշքելոնը³: Դավիդի որոշումը՝ Երուսաղեմ տեղափոխել հրեաների գլխավոր առյուծ մասունք հանդիսացող տապանը, որը եետագայում Սողոմոնի կառավարման տարիներին տեղադրվեց «սրբության սրբոց» հանդիսացող տաճարում⁴ խիստ քարճրացրեց Երուսաղեմի նշանակությունը: Հենց այս քաղաքում, համաձայն երեք կրոնների գաղափարախոսության, տեղի են ունեցել համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունները:

Երուսաղեմը նվաճվել է ավելի քան 80 անգամ, հաճախ է ավերվել և վերականգնվել՝ երբեմն փոխելով իր արտաքին տեսքը⁵: Երուսաղեմի պատմության դրամատիկ զարգացման լավագույն արտացոլում է հանդիսանում տարբեր ժամանակներում քաղաքին տրված տարբեր անվանումները⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1917 թ. դեկտեմբերի 11-ին Պաղեստինյան ճակատում գտնվող անգլիական զորքերի հրամանատար գեներալ Ալենբիին փոսով Երուսաղեմ: Զաղաքի իշխանությունը անցավ անգլիական ռազմական արմինխաորացիային:

Քաղաքը կատարելու առաջին իսկ օրերից անգլիացիները մի շարք քայլեր ձեռնարկեցին պատերազմից քայքայված Երուսաղեմում իրավիճակը կարգավորելու նպատակով:

1920 թ. անգլիական կառավարությունը վերացրեց ռազմական կառավարումը քաղաքում և հաստատեց քաղաքացիական վարչակազմ՝ գերագույն կոմիսարի գլխավորությամբ: 1923 թ. Ազգերի Լիգան պաշտոնապես հաստատեց բրիտանական մանդատը Պաղեստինի վրա՝ ընդգծելով հրեական ազգային օջախի ստեղծման անհրաժեշտությունը: Անգլիացիները Երուսաղեմում ստեղծեցին քաղաքացիական և դատական հաստատությունների կանոնակարգված ցանց: 1924 թ. առաջին անգամ ընտրվեց քաղաքային խորհուրդ, որի կազմի մեջ մտան յոթական ներկայացուցիչներ երեք կրոնական համայնքներից՝ հրեական, քրիստոնեական և մուսուլմանական: Քաղաքապետ նշանակվեց մուսուլմաններից, իսկ նրա տեղակալներ դարձան մեկ հրեա և արաբ քրիստոնյա⁹: Իսկ քաղաքացիական աշխատակազմի ղեկավար նշանակվեց Երուսաղեմի մալսեխի ռազմական նահանգապետ՝ գեղապետ Ռոնալդ Սթրալը, որը ավելի շատ արաբամետ կողմնորոշում ուներ¹⁰: Երուսաղեմի դատնալը Պաղեստինի մանդատային տարածքի վարչական կենտրոն՝ հանգեցրեց տեղի բնակչության շահերը արտահայտող երկու հիմնական խմբավորումների (արաբական և հրեական) միջև լարվածության ուժեղացմանը: Երեւանայնաշին կրոնական հարցերի լուծման նպատակով անգլիացիները թուլատրեցին հրեաներին ստեղծել Գերագույն կրոնական խորհուրդ (Ռաբինատ), իսկ մուսուլմանները ստեղծեցին Գերագույն մուսուլմանական խորհուրդը¹¹: Որպես գործադիր օրգան Երուսաղեմում հրեաների ինքնակառավարման նախադր 1921 թ. ստեղծվել էր Ազգային կոմիտեն (Վասալ Լեոնմբ), իսկ ավելի ուշ այստեղ հաստատվեցին սիոնիստական շարժման գլխավոր կազմակերպությունները՝ Հրեական Գործակալության Գործադիր Կոմիտեն, Հրեական Ազգային Ֆոնդը: Միաժամանակ ուժեղանում էր Երուսաղեմի արաբական երկու հայտնի տոհմերի (Հուսեյնիների և Նաչաշինների) ազդեցությունը Պաղեստինի արաբական բնակչության վրա: Այդ համգամանքը հաշվի առնելով 1921 թ. գերագույն կոմիսարը Երուսաղեմի իսլամ կրոնապետի պաշտոնին նշանակեց Ամին ալ-Հուսեյնին, որը հարցորդ տարի ընտրվեց Գերագույն մուսուլմանական խորհրդի նախագահ: Այսպիսով, Երուսաղեմը դառնում է պաղեստինյան արաբների ազգային շարժման կենտրոն և 1936 թ. այստեղ ստեղծվում է Արաբական Գերագույն Կոմիտեն:

Երուսաղեմի բնակչությունը արագորեն աճում էր և ավելանում էին նոր թաղամասեր, որոնք մեծամասամբ պառիպանում էին կրոնա-համայնքային սկզբունքով կառարված աշխարհագրական բաժանումը

(քրիտանական մանդատի շքանում էրուսաղեմում կառուցվեցին 36 նոր քաղամասեր) ¹²:

Հրեական քաղաքների մնացորդնակ ինտենսիվ աճը էրուսաղեմում չէր կարող չհարուցել արաբների դժգոհությունը, որը ի վերջո հանգեցրեց զինված քախումների արաբների և հրեաների միջև: 1928 թ. սեպտեմբերին վեճ առաջացավ էրուսաղեմի Արևմտյան պատի (լացի պատ) հետ կապված: Հրեաները արգելափակեց տեղադրեցին աղոթք անող կանանց և տղամարդկանց միջև, որը հարուցեց Մուսուլմանական Գերագույն Խորհրդի խիստ դժգոհությունը: Լարվածությունը արագորեն վերանց զինված քախման 1929 թ. օգոստոսին ¹³ հանգեցնելով բազմաթիվ զոհերի ինչպես արաբական, այնպես էլ հրեական բնակչության շրջանում:

1936 թ. իրադրությունը էրուսաղեմում նորից լարվեց՝ կապված Գեթմանիայից դեպի Պաղեստին հրեական մեծ ներգաղթի հետ: Մուսուլմանական Գերագույն Կոմիտեն Ամին ալ-Հուսեյնի գլխավորությամբ հայտարարեց համընդհանուր զործադու սկսելու և հարկերը չվճարելու մասին այնքան ժամանակ, քանի դեռ չի կասեցվել հրեաների ներգաղթը ¹⁴: Պաղեստին ժամանած քրիտանական կառավարական հասնձնաժողովը Պիլի գլխավորությամբ՝ առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական պետությունների, իսկ էրուսաղեմում, Բեթղեհեմում և Նազարեթում հաստատել միջազգային վերահսկողություն կամ մանդատ ¹⁵: Հանձնաժողովը առաջարկեց Բալթայի հռչակագրի ¹⁶ դրույթները յտարածել էրուսաղեմի վրա, և որ քաղաքի բնակիչներն իրենք ընտրեն իրենց քաղաքացիական պատկանելիությունը ¹⁷: Սակայն 1938 թ. նոյեմբերին քրիտանական կառավարությունը այս ծրագրի իրականացումը համարեց պրակտիկորեն անիրականանալի ¹⁸: Ամբողջ 1937-38 թթ. ընթացքում էրուսաղեմում զինված քախումները շարունակվեցին ¹⁹:

Անգլիական իշխանությունները, զինված քախումներին վերջ տալու նպատակով, ասիական Արաբական Գերագույն Կոմիտեին հայտարարեցին օրենքից դուրս, պաշտոնագրկեցին այդ կազմակերպության նախագահ ալ-Հուսեյնին, ինչպես նաև էրուսաղեմի քաղաքացույիս Խալիլին՝ նրա փոխարեն քաղաքացույիս նշանակելով հրեա Դանիել Օտտերին ²⁰: Սակայն սկսած 1939 թ. Անգլիան փոխեց իր վերաբերմունքը արաբների հանդեպ: Բրիտանական կառավարությունը 1939 թ. մայիսի 17-ին հրապարակեց հաշվետվություն Պաղեստինի վերաբերյալ (Սպիտակ զիբբը) ²¹: Սպիտակ զիբբը, ըստ էության, չնայել էր հայտարարում քրիտանական կառավարության խոստումը հրեաներին՝ նպատակ Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծմանը: Մրաժամանակ Սպիտակ Գիբբը նախատեսում էր դեպի Պաղեստին հրեական ներգաղթի սահմանափակում, հրեաների կողմից հողերի գնման սահմանափակ-

կում, և նույնիսկ անկախ Պաղեստինյան պետության ստեղծում տաս տարի անց²¹։ Հրեաները դիմեցին զանգվածային գործադուլների և սաղրիչ գործողությունների։ Սկսված երկրորդ համաշխարհային պատերազմը միաժամանակ բուլացրեց լարվածությունը Երուսաղեմում։ Մակայն 1944 թ. վերջին պարզ դարձավ, որ Անգլիան չի հրաժարվելու այն քաղաքական կուրսից, որ նախատեսված էր 1939 թ. Սպիտակ գրքում։ Երուսաղեմի կարգավիճակի հարցը մնում էր անհայտ։ Այսպիսի պայմաններում երեական զինված կազմակերպությունները²² սկսեցին ռազմական սաղրիչ գործողություններ ձեռնարկել քրիտամական իշխանությունների դեմ²³։ Բրիտանական իշխանությունները քաղաքի որոշ մասերում մտցրին արտակարգ դրություն և Երուսաղեմի, ինչպես նաև ողջ Պաղեստինի հարցը ստիպված էին տեղափոխել ՄԱԿ²⁴։

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նստաչափում, որը տեղի ունեցավ 1947 թ. ապրիլի 28-ից մայիսի 15-ը, ստեղծվեց հատուկ հանձնաժողով, Կամադայի, Չիխալովակիայի, Գվատեմալայի, Եթիոպիայի, Պերուի, Եվրոպայի, Ռուսիայի, Հարավսլավիայի, Հնդկաստանի, Իրանի և Ավստրալիայի ներկայացուցիչներից, որը պետք է ներկայացներ ծրագրեր պաղեստինյան հարցի, այդ թվում նաև Երուսաղեմի կարգավիճակի, լուծման վերաբերյալ։ Հատուկ հանձնաժողովը ուղևորվեց Պաղեստին²⁵։ Այս ընթացքում Պաղեստինյան հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը առաջ ցաշեց երկու ծրագիր։ Առաջինը կոչվում էր «մեծամասնության ծրագիր»²⁶ և առաջարկվել էր Կամադայի, Պերուի, Գվատեմալայի, Եթիոպիայի, Չիխալովակիայի և Ռուսիայի, ներկայացուցիչների կողմից։ Այն նախատեսում էր տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ Երուսաղեմը թողնելով միջազգային նկատման տակ։

Երկրորդ ծրագիրը, որ առաջարկվել էր Հնդկաստանի, Իրանի և Հարավսլավիայի ներկայացուցիչների կողմից և կոչվում էր «փոքրամասնության ծագիր»²⁷, նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն՝ կազմված 2 ինքնավար մասերից, Երուսաղեմ մայրաքաղաքով։ Այս նախագիծը պաշտպանում էին ԽՍՀՄ-ը և արաբական երկրները։ Այս առաջարկությունների ուսումնասիրության համար ստեղծվեցին երկու ենթակոմիտեներ։

Իր հերթին Անգլիան պարտավորվում էր ընդունել և ի կատար ածել ՄԱԿ-ի այն որոշումը, որը միաժամանակ կընդունեին և՛ արաբները, և՛ հրեաները։ Անգլիայի ներկայացուցիչը հայտարարեց, որ Անգլիան իր գործերը Պաղեստինից դուրս կրերի ամենաուշը մինչև 1948 թ. օգոստոսի 1-ը։ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2-րդ նստաչափում 1947 թ. սեպ-

տեմբերի 16-նոյեմբերի 29-ը, քախումը այս 2 ծրագրերի շտաբը ավելի ակնառու դարձավ:

Երուսաղեմի կարգավիճակի շտաբը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան իր առաջին բանաձևը հրապարակում է 1947 թ. նոյեմբերի 29-ին²⁰: Դա No 181 (II) բանաձևն էր²¹: Համաձայն այդ բանաձևի Երուսաղեմը պետք է ստանար հատուկ միջազգային կարգավիճակ, այսպես կոչված *corpus separatum*, լիներ միասնական և գտնվեր ՄԱԿ-ի վերահսկողության տակ: Անգլիական կառավարությունը հայտարարեց, որ դուրս է բերելու իր զինված ուժերը Պաղեստինից: Երուսաղեմում, որը շարունակում էր իրավաբանորեն մնալ Մեծ Բրիտանիայի իրավասության տակ, սկսվեցին զինված բախումներ: 1948-49 թթ. արաբա-իսրայելական պատերազմը հարցականի տակ դրեց ՄԱԿ-ի կողմից Երուսաղեմին տրված կարգավիճակը²²: Հին քաղաքի հրեական բաղամասերը հայտնվեցին մեկուսացված վիճակում, իսկ Նոր քաղաքը բաժանվեց գոտիների, որոնք վերահսկվում էին կամ արաբների կամ հրեաների կողմից²³: 1948 թ. մայիսի 14-ին քաղաքը բողոքին վերջին քրիստոնեական գործերը: Նույն օրը Աբարական Լեզեոնը՝ կազմված սիրիական, լիբանանյան, իրաքյան, եգիպտական և հոգդանանյան զինված ուժերից, շրջափակեց Երուսաղեմը արևելքից, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից:

Այսպիսի պայմաններում, ՄԱԿ-ի միջնորդությամբ, 1948 թ. հունիսի 11-ին կնքվեց զինադադար, ըստ որի արևելյան Երուսաղեմը հայտնվեց Հորդանանի, իսկ արևմտյան Երուսաղեմը՝ Իսրայելի վերահսկողության տակ: ՄԱԿ-ում շարունակվում էին Երուսաղեմի կարգավիճակի շտաբ քննարկումները և ՄԱԿ-ի միջնորդ Զալկ Բեռնարդտը, անարդյունավետ համարելով Երուսաղեմի կարգավիճակը որպես *corpus separatum*, առաջարկեց Երուսաղեմը ամբողջովին համձնել Հորդանանին²⁴: Այդ առաջարկությունը խիստ բացասական արձագանք ունեցավ ՄԱԿ-ում, որը հակված էր պահպանել քաղաքի միջազգային կարգավիճակը:

1948 թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց՝ 194-րդ բանաձևը կրկին հաստատելով Երուսաղեմի միջազգային կարգավիճակը²⁵:

1949 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան երրորդ անգամ ընդունեց բանաձև Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ: Քաղաքին դարձյալ տրվում էր միջազգային կարգավիճակ, *corpus separatum*²⁶: Այդ մակագծին կողմ քվեարկեց 38, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 7 երկրներ: Այդ ընթացքում քաղաքի կարգավիճակի հարցի շտաբ քննարկումները և իրադարձությունների հետագա զարգացումները համգեցրին նրան, որ և՛ Իսրայելը, և՛ Հորդանանը հրաժարվեցին ՄԱԿ-ի վերտիրալ բանաձևերի իրականացումից:

Դեռ 1948 թ. օգոստոսի 2-ին հրեական զորքերի հրամանատար Դավիդ Բեն Գուրյունը հրապարակել էր □ 12 հուլիսագիրը, ըստ որի արևմտյան երուսաղեմը հայտարարվում էր օկուպացված տարածք, որի վրա տարածվում էր Իսրայելի իրավասությունը: Իսկ 1948 թ. դեկտեմբերի 13-ին Հորդանանի պաշտամունք օրենք ընդունեց արևելյան երուսաղեմի անկախության մասին³⁶:

ՄԱԿ-ի՝ 1949 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած քանաձևից երկու օր անց, դեկտեմբերի 11-ին, Իսրայելի վարչապետ Դավիդ Բեն Գուրյունը հայտարարեց, որ երուսաղեմը համոզիսանում է Իսրայելի անբաժան մասը և հավերժական մայրաքաղաքը և, որ ՄԱԿ-ի ոչ մի քանաձև չի կատարում փոխել այդ պատմական փաստը: Իսրայելի կառավարությունը որոշում ընդունեց Կենտրոնը (պաշտամունք) արևմտյան երուսաղեմ տեղափոխելու մասին: Իսրայելից հետո, 1950 թ. ապրիլին Հորդանանը արևելյան երուսաղեմը հռչակեց Հաշիմյան թագավորության երկրորդ մայրաքաղաք³⁷:

1950-1967 թթ. ընթացքում երուսաղեմի կարգավիճակի շուրջ ՄԱԿ-ը որևէ արժանազան որոշում կամ քանաձև չընդունեց: Մինչդեռ քաղաքի տարածքը ընդարձակվում էր, իսկ քնակչության թիվը աճում էր³⁸: Երուսաղեմի կարգավիճակի հարցը նորից քննարկման առարկա դարձավ 1967 թ. աղաթա-խրայելական պատերազմից հետո³⁹, նոր ամբողջ երուսաղեմը գտնվում է Իսրայելի վերահսկողության տակ:

Corpus separatum կարգավիճակի փոխարեն ԱՄՆ-ը ՄԱԿ-ում առաջարկեց երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս, որպես հիմք ընդունել այն, որ քաղաքը պետք է լինի միասնական և մրա հետագա կարգավիճակը պետք է որոշվի հասկանաբար կողմերի առաջարկություններից ելնելով: Միաժամանակ ՄԱԿ-ը առաջարկեց կողմերին խուսափել միակողմանի քայլերից՝ քաղաքի կարգավիճակը որոշելիս:

Սակայն, Իսրայելն արդեն 1967 թ. հունիսի 28-ին փոխեց երուսաղեմի սահմանները ի հաշիվ արվարձանային հրեական քնակավայրերի: Քաղաքի տարածքը երկու անգամ մեծացավ, իսկ քնակչության մեջ մտնող երեք անգամ գերակշռեցին հրեաները: Քաղաքը փաստացիորեն դարձավ միասնական: 1980 թ. հուլիսի 30-ին Իսրայելը պաշտոնապես անկախության ենթարկեց ամբողջ երուսաղեմը՝ քաղաքը հայտարարելով Իսրայելի միակ և անբաժանելի մայրաքաղաքը:

Երուսաղեմի կարգավիճակի շուրջ հետագա քննարկումները արդեն կատարվում էին աղաթա-խրայելական հակամարտության կարգավորման ընդհանուր խնդիր վրա: Ընդ որում երուսաղեմի կարգավիճակը քննարկելիս՝ ավելի շատ խոսվում էր արևելյան երուսաղեմի և ոչ թե ամբողջ երուսաղեմի մասին:

1993 թ. կնքված Օսլո-1, 1995 թ. Օսլո-2, և 1998 թ. Ռայ-Փրան-թելյնի պաղեստինա-իսրայելական համաձայնագրերում⁴⁰ Երուսաղեմի հարցը դիտվում էր սուկ որպես խնդիր, որը պետք է քննարկվի արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման վերջնական փուլում: Ընդ որում, մեծանունները չէր արգելում Իսրայելին շարունակել հրեական նոր թաղամասերի կառուցումը արևելյան Երուսաղեմում: Այդ ծանցամասնքը լարվածության յուրք աղբյուր էր, քանզի փոփոխության էր ենթարկվում դեմոկրաֆիական իրավիճակը իսրայելական հրեաների:

Իսրայելա-պաղեստինյան հետագա բանակցությունները և միջնորդությունները ցույց տվեցին, որ, իրոք, հակամարտող կողմերի համար, ամենադժվարը Երուսաղեմի կարգավիճակի հարցն է: ԱՄՆ-ի նախագահ Բիլլ Կլինթոնը՝ 2000 թ. հուլիսի 11-14-ը Քեմփ Դևիդում հանդես եկավ Իսրայելի և ՊԱԿ-ի միջև վերջնական պայմանագիր կնքելու շուրջ առաջարկություններով: Քեմփ-Դևիդում Երուսաղեմի կարգավիճակի յուրք քննարկումներ սկսելու ժամանակ կողմերը տարածայնություններ ունեցան այն խնդրի շուրջ, թե համարվում են արդյոք Երուսաղեմին շրջապատող արվարձանները արևմտյան ափի մասը, թե ոչ: Այդ տարածքը կազմում է արևմտյան ափի 7%-ը և պաղեստինցիները, քնակամարար, պնդեցին, որ այդ տարածքները համարվեն արևմտյան ափի անբաժան մասը: Կլինթոնը առաջարկեց Պաղեստինյան ինքնավարությանը հանձնել սկզբում արևմտյան ափի 73%-ը (առանց վերոնիշյալ 7 տոկոսի) իսկ հետագա 10-25 տարվա ընթացքում մինչև 94%-ը (առանց արևելյան Երուսաղեմի)⁴¹: Բանակցող կողմերը կտրուկ կերպով մերժեցին Կլինթոնի առաջարկությունները և Քեմփդեյվիդյան բանակցությունները ավարտվեցին անապշյունք: Բիլլ Կլինթոնը, որը ցանկանում էր մինչև իր նախագահության ժամկետի ավարտը հասնել իսրայելա-պաղեստինյան համաձայնագրի կնքմանը, 2000 թ. դեկտեմբերի 24-ին հանդես եկավ նոր առաջարկությամբ⁴² արևելյան Երուսաղեմը բաժանել մուսուլմանական, հայկական կամ քրիստոնեական և հրեական մասերի:

Պաղեստինցիները ստանալու էին արաբական թաղամասերը, մերսոյալ Հարամ-ա-Շարիֆը, արևելյան Երուսաղեմի 25%-ը և արևելյան Երուսաղեմի արաբական արվարձանները: Իսրայելը պահելու էր հայկական և հրեական թաղամասերը և արևելյան Երուսաղեմի հրեական արվարձանները, մերսոյալ արևմտյան պատը: (Այստեղ քաղ էր մնում հաղորդակցության հարցը): Ինչպես սպասվում էր, մերժվեցին նաև այս առաջարկությունները:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Երուսաղեմի կարգավիճակի հարցը ՄԱԿ-ի կողմից գրեթե դադարում է քննարկման առարկա լինելուց: Վերջին տասնամյակներում ՄԱԿ-ը Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս՝ սահմանափակվում է սուկ բանաձևերի ընդունու-

մով, որոնք պարզապես կոչ են անում Իսրայելիմ դադարեցնել Արևելյան Երուսաղեմում երեսկան մեր թաղամասերի շինարարությունը և չեն անդրադարձնում քաղաքի կարգավիճակի կամ պատկանելիության հարցին:

Մեր կարծիքով Երուսաղեմի կարգավիճակի հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել հետևյալ երեք հայտանի իրողությունները՝

1. Երուսաղեմի փաստացի դրությունը, այն է քաղաքի՝ ամբողջովին Իսրայելի վերահսկողության տակ գտնվելը:

2. Արարների պահանջները: Պաղեստինցիները ոչ մի կերպ չեն ուզում հրաժարվել Արևելյան Երուսաղեմից, որը համարում են ապագա պաղեստինյան պետության մայրաքաղաք:

3. ՄԱԿ-ի քանադակները Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ, որոնք իրավաբանորեն հաստատում են քաղաքի միջազգային կարգավիճակը:

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ երեք դրույթները գրեթե ամբողջովին հակասում են միմյանց: Այդ ստույգով, մեր կարծիքով Երուսաղեմի կարգավիճակի որոշման հարցում լավագույն տարրերակ կարող է լինել ՄԱԿ-ի մախլեին մախազահ Բիլլ Բեինբունի մախսագիծը: Կարծում ենք Երուսաղեմի կարգավիճակի վերջնական որոշումը կնպաստի մաս խորայնա-պաղեստինյան հակամարտության վերջնական կարգավորմանը:

ARTAK H. HOVHANNISYAN

THE STATUS OF THE JERUSALEM IN THE UNO

Jerusalem has emerged as a major point of contention in Israel's negotiations with its Arab neighbors, particularly the Palestinians. Claims of historic, religious and legal rights to the city have been asserted by the various parties to the conflict and, accordingly, these three aspects should be reviewed: The observation that, "Jerusalem is holy to three religions," tends to mislead, since Jerusalem is holy to Jews, Muslims and Christians in fundamentally different ways. Jerusalem contains sites holy to Muslims and Christians, and is one of many locations of religious significance to them. Israel has advanced a coherent case, based upon the precepts of international law, for sovereignty over Jerusalem. The Palestinians, for their part, have failed to offer any legal grounds in support of their claim to the city. Their claim seems to be based solely on their desire to possess it. Throughout history, the Jewish People has maintained a presence in Jerusalem, ever since King David established the city as his capital nearly 3, 000 years ago.

Following the World War I victory of the Allies in the Middle East, Britain occupied Mandatory Palestine, including what is now Jordan, which was separated from the rest of Mandatory Palestine by Colonial Secretary Winston Churchill and

given to the Hashemite family of Arabia in 1921 — assuming military and administrative control for the area.

This situation was endorsed by the international community, and in 1922 Britain was awarded the Mandate for Palestine by the League of Nations which entailed, among other things, the fostering of a Jewish National Home in the territory, as proposed by the Balfour Declaration.

On 29 November 1947, the United Nations General Assembly voted for partition Mandatory Palestine into Jewish and Arab states, and to make Jerusalem a "separate body" (*corpus separatum*) under a special international regime, with "suitable guarantees for the protection of Holy Places."

The Jews accepted the resolution, but the Arabs both those living inside and beyond the territory of the Mandate rejected the partition resolution and the plan to internationalize Jerusalem, thereby nullifying the proposal.

From a legal perspective, the departure of the British in May 1948 left Jerusalem's status undetermined. The end of the 1948–49 Arab-Israeli war found the western part of the city in Israeli hands, and the eastern part (including the Old City) controlled by Jordan. In 1949, Israel and Jordan signed an armistice, dividing Jerusalem into two demarcated zones. These lines, however, were seen by both sides to be temporary until a peace treaty could be concluded; neither party viewed the cease-fire lines as permanent borders.

On 30 July 1980, the Israeli Knesset adopted the Basic Law: declaring Jerusalem, as the Capital of Israel.

Between July 11–24, 2000, U. S. President Clinton, Israeli Prime Minister Ehud Barak and PNA Chairman Yasser Arafat met at Camp David in order to negotiate a final settlement of the Palestine-Israel conflict based on the Oslo accords. The city will be divided along the principle of "Arab sections to the Arabs, Jewish sections to the Jews." The Palestinians will get the Arab neighborhoods of East Jerusalem and the Arab quarter of the Old City, including the Temple Mount (*Haram-as-Sharif*). Israel will keep the Jewish neighborhoods and the Jewish and Armenian quarters of the Old City, including the Western Wall. The issue of how to link up the patchwork of Arab and Jewish neighborhood remains a thorny one. The negotiations ended in failure with a bland communique, since the sides could not agree about the issue of Jerusalem. The Palestinians demanded sovereignty over all of East Jerusalem, including the Haram-As-Sharif (Temple Mount).

ՇԱՆՈՅԱԳՐՈՒՅՅՈՒՆՆԵՐ

- 1993 թ. կնքվեց Օսլո 1, 1995 թ.՝ Օսլո 2, 1997 թ.՝ Հերբոնի, 1998 թ.՝ Ուաշ-Փրանքիչի պայմանագրերը, որոնցով պաղեստինցի արաբները ստացան որոշակի տարածքներ և ինքնավարություն Հորդանան գետի արևմտյան ափում և Ղազախի նահանգում:
- Авдиев В. И., История древнего Востока, изд. 3, М. 1970.
- Струве В. В., История древнего Востока, М. 1941.
- Авдиев В. И., История древнего Востока, изд. 3, М. 1970. Ստովածաշում, Գիրք Թագավորաց:

8. Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, изд. Общество по исследованию еврейских общин, т. 2, Иерусалим, 1982.
9. Եզիպտացիները այն անվանել են Ռաշայինում, հրեաները՝ Իզրայում (յապապտորյան քաղաք), իսլամները՝ Երուսղիմա, հոմոսեական կայսր Ադրիանոսը՝ Էն Կապիտոլինա, արաբները՝ Մադինատ Ռալտ ալ Մադնիս (Տաճարի քաղաք) կամ Էլ-Կոթս (Սուրբ):
10. Եզիպտոսից Երուսղեմ ուղարկվեցին անդամներ, իսկ տիֆի և խոլերիայի իտանձարակի դեմ պայքարելու նպատակով ստեղծվեցին պոլիկլինիկաների ցանցեր և ամբուլատոր կետեր: Ընդ որում այդ օգնությունից օգտվեցին 2000 խայր, որոնք փախել էին թուրքական քարոջի:
11. The Balfour Declaration, London, 1961. [Http://www.aziga.com/](http://www.aziga.com/), Mandate For Palestine, Department of State, Washington D. C., 1931.
12. Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, т. 2, Иерусалим, 1982.
13. Там же.
14. Там же.
15. 1925 թ. ապրիլին Լորդ Բալֆուրը ծանդեստեղ կերպով կատարեց Հրեական համալսարանի բացումը: 1929 թ. քաղաքը էքսկորնիկացվեց, 1936 թ. սկսեց գործել «Մարայի ճայն» քաղիսկայանը: Մտաւմանական բաղամասերի կառուցումը կատարվեց եր հիմնականում Հին քաղաքի հյուսիսում, քրիստոնեական բաղամասերը՝ հարավ-արևմուտքում, իսկ հրեական բաղամասերը կառուցվում էին հյուսիս-արևելքում, արևմուտքում, հարավում և արևարմամներում: Краткая Еврейская Энциклопедия, Иерусалим, т. 2, Иерусалим, 1982.
16. Steen V., Holy Land 1929, From Haven To Conquest, Readings in Zionism and The Palestine Problem until 1948, ed. W. Khalidi, The Institute For Palestine Studies, Beirut 1971, pp. 273-301.
17. Simpson J. Hope, On the Employment of Arab Labour, From Haven To Conquest, pp. 303-307.
18. Reid Th., Reservations on the Plans For the Partition of Palestine, From Haven To Conquest, pp. 409-432.
19. Հոլակազիրը նախատեսում էր Պաղեստինում հրեաների համար ստեղծել Ազգային օջախ:
20. Reid Th., Reservations on the Plans For the Partition of Palestine, pp. 409-432.
21. Краткая Еврейская Энциклопедия, т. 2.
22. Barbour N., The Dark Path of Repression 1937-1938, From Haven To Conquest, pp. 335-342.
23. Краткая Еврейская Энциклопедия, т. 2.
24. Barbour N., The White Paper of 1939, From Haven To Conquest, pp. 461-475.
25. Ibid, pp. 461-475.
26. Այդ ժամանակ Պաղեստինում գործում էին Հազանա, Էցե, Լեհի, Իրզուն Յվի Լեուի հրեական զինված կազմակերպությունները: The Zionist Military Organizations, From Haven to Conquest, pp. 595-600.

27. White Paper on Violence 1946, From Haven to Conquest, pp. 601–612. 1946 թ. հունիսի 22-ին Էզնի գրողայինները պայթեցրին «Դավիդ թագավոր» հյուրանոցը՝ սպանելով 82 մարդու:
28. Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը խորայնապահստիյան հակամարտության հանդեպ, Երևան 2001, էջ 8:
29. Muhammad Z. KH., Palestine in the UNO, 1948, From Haven to Conquest, pp. 6–23.
30. Report to The General Assembly by the UN Special Committee on Palestine, Official Records of the Second Session of GA, 1947, Supplement No 11.
31. Ibid.
32. Building For Peace in the Middle East: an Israeli–Palestinian Dialogue, UN, 1992.
33. Report to the General Assembly of the UN Special Committee on Palestine, Official Records of the Second Session of GA, Supplement No 11.
34. Glubb J. B., The Battle for The Old City of Jerusalem, From Haven To Conquest, pp. 785–788.
35. Ibid, pp. 785–788.
36. Neff D., Fallen Pillars: US Policy Towards Palestine and Israel since 1945, Washington D. C., 1995, pp. 129–131.
37. Պրինակով Ե. Մ., Սի դավադրության պատմություն, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ և 80-ական թթ սկզբներին, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, էջ 125:
38. United Nations Resolutions, Historical Documents, [Http://ariga.com.peacebiz](http://ariga.com.peacebiz).
39. Neff D., Fallen Pillars: US Policy Towards Palestine and Israel since 1945, p. 132.
40. Ibid, p. 135.
41. Արևելյան Երուսաղեմի հյուսիսային մասում առաջացավ նոր արարական շրջան, իսկ արևմտյան Երուսաղեմի հարավ-արևմուտքում առաջացան հրեական 10 նոր թաղամասեր:
42. Հինգ օրվա ընթացքում Իսրայելը գրավեց Ղազան, Սիմայի թերակղզին, Գոլանները, Հորդանան գետի արևմտյան ափը, արևելյան Երուսաղեմը:
43. The Israeli–Palestinian Agreement: In the Footsteps of Camp David, International Affairs Report, Anti Defamation League, New York, September, 1993. p. 10. The Israeli–Palestinian Agreement on the West Bank and Gaza Strip, Washington, D. C, September 28, 1995 The Wye Memorandum, Historical Documents, Washington D. C. 23.10.1998.

ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՄՈԴԵԼԸ

Աշխարհի երեք մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի վրա տարածված երբեմնի Օսմանյան կայսրությունը էթնիկական առումով միատարր կազմավորում չէր: Նա տարբեր ազգությունների, կլանների և հարանվանությունների, քաղաքակրթությունների կրողների մի խալտաբղետ խառնարան էր: Նրա տարածքնեղյուն թուրքերի հետ միասին բնակվում էին ասորիները, աբաքները, թուրքաբերը, հայերը, երեսները, հունգարացիները, հույները, սերբերը և պալոմակալան այլ ժողովուրդներ, քրդերը և ոչ թուրք էթնիկական այլ խմբեր և կազմավորումներ, որոնք կազմում էին կայսրության բնակչության մեծամասնությունը:

Օսմանյան կայսրության կազմավորման առաջին օրվանից ազգային հարցը հանդիսացել է նրա մեղքադատական կյանքի ամենատար հիմնականդիրքներից մեկը, որը մշտապես ցնցել է այդ պետության գոյության հիմքերը և ի վերջո դարձել է նրա կործանման հիմնական պատճառներից մեկը:

Հայկական հարցը, որպես համաօսմանյան ազգային հարցի օրգանական մաս, ամցել է զարգացման երեք փուլ և յուրաքանչյուր փուլում ունեցել իր ստանձնահատկությունները և քննորչ գծերը, որոնք երբեմն համընկել են Օսմանյան կայսրությունում ազգային ընդհանուր հարցի հետ, իսկ երբեմն էլ՝ էականորեն տարբերվել նրանից:

Նման ընդհանրություն-տարբերությունները տիպական էին ոչ միայն հայկական հարցին, այլև հունական, ասորական, քաղկական, աբաքական և այլ ազգային հարցերին:

Ի հավելումն, պետք է նշել, որ հայկական հարցը յուրաքանչյուր փուլում ունեցել է իր կենդրենտ բովանդակությունը, բովանդակման ձևերն ու մեթոդները:

Առաջին փուլն ընդգրկում է պատմական մի մեծ ժամանակաշրջան, XVII դարից, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև

Կասրն Երրինի պայմանագրից, որով Արևելյան Հայաստանն անցավ սրբաբնական, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան տիրապետության ներքո, մինչև Բեռլինի 1878 թ. միջազգային կոնգրեսը:

Այս փուլի յուրահատկությունը կայանում է նրանում, որ հայկական հարցը ներքին, ներօսմանյան հարց էր: Հայերը չունեին հատուկ կարգավիճակ: Նրանք իրավական, քաղաքական և քաղաքացիական առումով գտնվում էին նույն վիճակում, ինչ վիճակում գտնվում էին կայսրության մյուս ոչ բուրք, քրիստոնյա բոլոր ժողովուրդները: Դա մի քառով կարելի է բնութագրել որպես իրավագուրկ վիճակ: Նրանք համարվում էին «տայյա»՝ հարկատու, ոչ լիարժեք, տիրապետող բուրք ազգին ստորադաս և նրա հետ համեմատած երկրորդ կարգի ժողովուրդ: Համոն աբդարության հարկ է նշել, որ ծանր վիճակում էին գտնվում նաև ոչ բուրք մահմեդական ժողովուրդները, մասնավորապես մահմեդական առաքները, ինչպես նաև քրդերը:

Օսմանյան կայսրություն տիրում էր սուլթանի՝ փառլիառնի կամքը, իսկ տեղերում տեղ ու տեղօրեն էին վալիները և փաշաները: Գործում էին մահմեդական իրավունքի՝ շարիաթի օրենքներն ու սովորույթային իրավունքի՝ ադաթի նորմերը, որոնք իրավական առումով չէին պաշտպանում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների շահերը:

Հայերը, ինչպես և մյուս քրիստոնյաները, զրկված էին զենք կրելու, դատարանում վկայություն տալու, անգամ ձի նստելու իրավունքներից: Դրանից կարող էին օգտվել միայն բուրքերը կամ մահմեդականները, որոնց համոդիպելիս հայերը և մյուս քրիստոնյաները պարտավոր էին նրանց զիջել ճանապարհը: Նման ստորացուցիչ սահմանափակումները և արգելքները շատ ու շատ էին:

Քրիստոնյաները, այդ թվում և հայերը, չունեին անձի և գույքի անձեռնմխելիություն, քանի որ Օսմանյան կայսրությունում գործող օրենքները, նորմերը և սովորույթները նման երաշխիքներ չէին տալիս:

Կար նաև կրոնի հարցը: Օսմանյան կայսրությունում սովորական երևույթ էր հայերի կրոնական զգացմունքների ոտնահարումը: Կրոնական հարածանքները, բոնի բուրքացման քաղաքականությունը, հայերի ծանր սոցիալ-տնտեսական վիճակի հետ միախորսված, հաճախ ստիպում էին նրանց դավանափոխ լինել: Դիշտ է, դա հայերի մոտ միաժամանակյա զանգվածային բնույթ չկրեց, ինչպես վրացիների մոտ, սակայն այնուհամարձ, դրա փտանգը մշտապես կախված էր նրանց գլխին:

Համանման մղձավանջային վիճակում էին գտնվում առանց քաջատության Օսմանյան կայսրության մյուս բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Անա թե ինչու սբառնագիտական գրականության մեջ ընդունված է Օսմանյան կայսրությունը բնութագրել որպես ժողովուրդների քսնու:

Օսմանյան իշխանությունները, բազի վերոնշյալներից, որոնք կիրառվում էին բոլոր ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես, քրիստոնյաների նկատմամբ, ունեին նաև առանձնահատուկ քաղաքականություն հայերի նկատմամբ: Մինք նկատի ունենք երկու կարևոր համգամամբ:

Առաջին, սուլթանական իշխանությունների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի վարչատարածքային քաժամման հարցում: Նրանք XVII-XIX դդ. բազմիցս վերսձևում և վերակազմավորվում էին Արևմտյան Հայաստանի մարզերը, մինչև որ գտնվեց այն տարբերակը, որն առավելագույնս էր համապատասխանում նրանց շահերին: Դրա հիմքում դրված էր հայկական շրջանները կոտորակելու, տրոհելու գաղափարը, այն հաշվով, որ դրանք միացվեն թուրքական շրջաններին և այդ ուղիով «փոքրացնեն» բուն հայկական տարածքները և նրա հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը թուրք, քուրդ և մանհեղական այլ ժողովուրդների համեմատությամբ:

Երկրորդ, սուլթանական կառավարությունը Արևմտյան Հայաստանը զավթելուց հետո ամմիջապես ձեռնամուխ եղավ նրա ժողովրդագրական կազմի շեշտակի փոփոխությանը, նպատակ ունենալով արհեստականորեն նվազեցնել հայերի բժաքանակը նրանց բնօրրանում: Նա խրախուսում և հովանավորում էր ոչ հայկական էթնիկական տարրերի՝ քուրդերի, քրդերի, չերքեզների և այլոց ներթափանցումը կամ վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանում: Նրանց ազնագնու ձեռքն էին անցնում հայերին պատկանող հողերը, որտեղ նրանք տեղ ու տնօրեն էին: Նրանց տրվում էին զանազան արտոնություններ, որի հետևանքով հայերը ոչ միայն ամտեսապես, այլև իրավական տեսակետից կախման մեջ էին ընկնում իրենց հայրենիքի տարածքներում նորաստաստար մանհեղական փաշաներից, աղաներից և բեզերից:

Թուրքերի, քրդերի և չերքեզների քնակեցումը հայկական շրջաններում և տեղաբնիկ հայերի պապենական հողերի քոնագրավումը հարցի մի կողմն էր: Հարցի մյուս կողմն այն էր, որ Օսմանյան իշխանություններն անդնդհատ քախումներ և ընդհարումներ էին հրահրում եկվոր մանհեղականների և տեղաբնիկ հայերի միջև, արհեստականորեն նրանց լաքում միմյանց դեմ, պաշտպանելով նորաքնակներին ընդդեմ հայերի: Դեռ ավելին. օսմանյան իշխանությունները շատ հաճախ քրդերի և չերքեզների ձեռքով էին իրականացնում հայերի քաղղերը:

Այսպիսին էր ընդհանուր գծերով սուլթանական կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ XVII-XIX դարերում:

Այսպիսով, երբ բնութագրելու լինենք հայկական հարցի բովանդակությունն առաջին փուլում հայերի ազգային խնդիրների տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ հայերը հետամուտ էին երեք կարևոր նպատակների: Առաջին, պահպանել Արևմտյան Հայաստանի տարածքներն

իրենց ձեռքում և կանխել դրանց բռնագրավումը թուրքերի, քրդերի և շեքեզների կողմից: Հայերի նկատմամբ այս հարցում այն էր, որ տարածքների կորուստն ամխտատափելիորեն կհանգեցնե՞ր հայերի անհետացմանը, քանի որ տարածքն է այն միակ հուսալի հիմքը, որի վրա կարող էր գոյություն ունենալ տվյալ ժողովուրդը, որպես էթնիկական ինքնություն:

Երկրորդ, պահպանել Արևմտյան Հայաստանի հայկական էթնիկական-ազգային և կրոնական դիմապատկերը, դիմազրավել նրա դեմոգրաֆիական կազմը արհեստականորեն փոփոխության ենթարկելու օսմանյան կառավարողների քաղաքականությանը:

Երրորդ, դիմակայել հայերի էթնիկական և կրոնական ձուլման բոլոր փորձերին, որ դրսևորվում էին Օսմանյան կայսրությունում՝ կառավարման բոլոր մակարդակներով:

1870-ական թվականների վերջերքին 1880-ական թվականների սկզբներին հայկական հարցը բևեկոխեց իր զարգացման երկրորդ փուլը: Այս փուլում հայկական հարցը դադարեց ներօսմանյան մերքին հարց լինելուց և վերածվեց միջազգային հարցի, դառնալով միջազգային դիվանագիտության քննարկման առարկա և ավելի մեծ՝ Արևելյան հարցի քաղաքացույցի մասը:

Երկրորդ փուլում, որն ընդգրկում է 1878-1914 թթ., առաջ քաշվեցին հայկական հարցի լուծման մի քանի տարբերակներ:

Սկզբնական շրջանում, ընդհուպ մինչև 1908 թ. երկտարաբանական հեղափոխությունը, հայկական հարցի ամենատարածված մոդելը քարեներդումների մոդելն էր, որ պարբերաբար առաջ էր քաշվում եվրոպական մեծ տերությունների, ինչպես նաև զանազան քաղաքական ուժերի կողմից:

Այս մոդելն առաջին անգամ պաշտոնապես առաջ քաշվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, 1878 թ մայսի 3-ին, Ստամբուլի մերձակա Սան Ստեֆանո քննակալարում ստորագրված հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով¹ և Բալթիկ կոնգրեսի 1878 թ. հուլիսի 13-ին քննարկված տրակտատի 61-րդ հոդվածով: Այդ պայմանագիրը, որն անրազրեց Օսմանյան կայսրության ռազմական պարտությունը և մի շարք տարածքային կորուստներ Բալկաններում և Կովկասում, պարտնակում էր հատուկ հորված Արևմտյան Հայաստանում քարեներդումներ կիրառելու վերաբերյալ: Դա հենց 16-րդ հոդվածն էր, որտեղ արձանագրված էր, որ «Բարձր Դուռը պարտավորվում է անհպալ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հատուցվող քարեկավումներ և քարեներդություններ, և զերժ պահել հայերի անվտանգությունը քրդերից և շեքեզներից»²:

Պայմանագիրը պարտնակում էր ևս մի շատ կարևոր կետ. կողմերը համաձայնվեցին, որ Ասիական Թուրքիայում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում, ռուսական զորքերը կմնան վեց ամիս ժամանակով, որի ընթացքում այնտեղ պետք է կիրառվեին քարեփոխումները: Ռուսական զորքերի ներկայությունը քարեփոխումների իրականացման յուրօրինակ երաշխիք էր:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը հայկական հարցի լուծման հետևանքների տեսանկյունից, ընդհանուր առմամբ արժանի է դրական գնահատականի:

Սուլթանը և Օսմանյան կայսրությունն այդ պայմանագրով ընդունում էին հայերի ամասելի ծանր վիճակը, նրանց ամապահով դրությունը և քրդերի ու չեքեզների քաղաքական դերակատարությունն այդ հարցում:

Նրանք պաշտոնապես պարտավորվում էին շտկել դրությունը, հայերի գոյության համար ստեղծել կյանքի նորմալ պայմաններ և սանձել քրդերի ու չեքեզների խժոժությունները:

Եվ այս ամենն ամրագրված էր միջազգային փաստաթղթում, որի տակ դրված էին սուլթանական Թուրքիայի պաշտոնական ներկայացուցիչների ստորագրությունները:

Սան Ստեֆանոյում ստորագրված պայմանագիրն, անշուշտ, ուներ մեկ թերություններ և վրիպումներ: Նրանում խոսք չկար Արևմտյան Հայաստանում վարչական ինչ-որ միավոր ստեղծելու մասին, որը կարող էր ռեֆորմների կիրառումը և այդ անհմաններում հայկական հարցի լուծումը դնել իրավական հիմքի վրա, որն իր հերթին հարցի լուծումն ավելի հուսալի կդարձներ:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը ռուսական դիվանագիտության հարցանակն էր, որը խիստ անհամզատացրեց եվրոպական մրցակից պետություններին: Նրանք փախնում էին, որ Օսմանյան կայսրությունը կընկնի լիակատար կախման մեջ Ռուսաստանից և Արևելյան հարցում գոյություն ունեցող ստրատեգիական հավասարակշռությունը կփոխվի հոգուտ Ռուսական կայսրության, իսկ դա նակատում էր նրանց շահերին և նրանք դա թույլ տալ չէին կարող:

Այդ գործում նաևկապես ակտիվ էին Անգլիան և Ավստրո-Հունգարիան, որոնք վայելում էին Գերմանիայի և նրա կանցլեր Բիսմարկի աջակցությունը: Նրանց հաջողվեց հասնել այն բանին, որ երազիումի հատուկ կոնգրես, որը քաջվեց Բեռլինում 1878 թ. հունիսի 13-ին և տևեց մինչև հուլիսի 13-ը: Կոնգրեսում Անգլիային և Ավստրո-Հունգարիային, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի աջակցությամբ հաջողվեց վերանայել Սան Ստեֆանոյի որոշումները, թուլացնել Ռուսաստանի դեր-

քեր, և ընդհակառակը, ուժեղացնել իրենց դիրքերը և ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա²։

Բեռլինի կոնգրեսը, Սան Ստեֆանոյից հետո, երկրորդ անգամ անդրադարձավ հայկական հարցի լուծման քաղաքականության մոդելին։

Բեռլինի կոնգրեսում ստորագրված տրակտատի 61-րդ հոդվածը ամբողջությամբ նվիրված էր այդ խնդրին, որը, սակայն, սկզբունքային մի շարք հարցերում տարբերվում էր Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածից, և այդ ի վնաս հայերի էր։ Դա է վկայում նրա բովանդակությունը. «Բարձր դուռը համձն է առնում հայաբնակ վայրերում անհասպար իրագործել տեղական կարիքներից բխող քարելավումներ և քարեխիտումներ և ապահովել հայերի անվտանգությունը շերքեզներից ու քրդերից։ Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բարձր դուռը պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությունը»³։

Եթե Սան Ստեֆանոյի պայմանագրով ռեֆորմները պետք է իրագործվեին Արևմտյան Հայաստանում, ուսական գործերի ներկայության պայմաններում, որը, ինչպես նշվեց, որոշակի երաշխյք էր իսկապես դրանց իրագործման համար, ապա ըստ Բեռլինի տրակտատի, ուսական գործերը դուրս էին քերվում և ամեն ինչ բողոքվում էր սուլթանի հայեցողությանը։ Եւ միայն պարտավորվում էր պարբերաբար պետություններին հաղորդել իր ձեռնարկված քայլերի մասին։ Վերջիններս ձեռք էին քերում միայն հսկողական ֆունկցիաներ։

Զավիչտականն այն էր, որ տերությունները սուլթանին էին համձնարարում «ապահովել հայերի անվտանգությունը շերքեզներից ու քրդերից», այն դեպքում, երբ ինքը սուլթանն էր քրդերի ու շերքեզների հակահայկական բոլոր գործողությունների գլխավոր հրահրողը։ Դրա լավագույն օրինակն այն է, որ հենց Բեռլինի կոնգրեսից հետո, 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի հրամանով ստեղծվեց քաջասպան քրդերից կազմված և օսմանյան կառավարության հաշվին պահվող հեծելազոր, որը նրա անունով կոչվեց «Համիդիե»։ 30 զնդերից կազմված այդ հեծելազորի գլխավոր նպատակը հայկական ջարդեր կազմակերպելն էր, որը մա «իսայրուն» կերպով դրսևորեց հատկապես 1894-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ։

Հատկանշական է նաև այն, որ Աբդուլ Համիդ II-ի հատուկ հրամանով արգելվեց կայսրության ողջ տարածքում «էրմենիստան»՝ «Հայաստան» անվան օգտագործումը։

Իսկ եթե նկատի առնենք մաև այն հանգամանքը, որ մեծ տերությունների միջև մշտապես գոյություն ունեին տարածայնություններ և հակասություններ, ապա հասկանալի կդառնա, որ այդ տարածայնություններից սուլթանը կարող էր օգտվել և, իրոք, փայլուն կերպով օգտվեց ռե-

Ֆորմները ձևափոխելու և իր զարդարասրահային քաղաքականությունը շարունակելու համար:

Այլ կերպ ասած, Բեռլինի տրակտատով վերացվեց Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրականացման համար Սան Ստեֆանոյի ստեղծած մեխանիզմը և դրա փոխարեն իրական ոչինչ չառաջարկվեց: Դժվար է յիմանալանել Մուսա Պրեմսի այն կարծիքի հետ, որ հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում ընդունված որոշումների գոհ դարձավ, քանի որ «անգղո-գերմանական մրցակցությունը և բխմարկային մարտավելիզմը բոլոր չովեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի իրագործումը»:

Այդուհանդերձ, հայկական հարցի լուծման քարեմուրագումների մոդելը, որպես առյուծախն, ուներ որոշակի առավելություններ:

Նախ, այդ մոդելի առաջադրումն ինքնին խոստովանություն էր սուլթանի կողմից այն մասին, որ Օսմանյան կայսրությունում հայերի վիճակն իրոք ծանր էր և գոյություն ուներ հայկական հարց, որը լուծում էր պահանջում:

Երկրորդ, այս մոդելը ձևակաճորեն ընդունելի էր հայկական հարցի մեջ ընդգրկված բոլոր երեք կողմերի համար՝ արևմտահայության, եվրոպական պետությունների՝ Անգլիա, Ավստրո-Հունգարիա, Գերմանիա, Ռուսաստան, Ֆրանսիա, և Օսմանյան կայսրության համար:

Երրորդ, մա մշտապես նկատի էր առնում որոշակի տարածք և, քստ էության, ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի հիմնական շրջանները՝ Էրզրումի, Խարքեղի, Սվազի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքի, իսկ մեկ այլ տարբերակով՝ մաև Տրապիզոնի, վիլայեթները:

Քարեփոխումների մոդելը, աակայն, կատարման և իրագործման մեխանիզմի առումներով, ուներ մաև մի շարք էական բեռություններ: Նա առյուծա էլ չունեցավ իրական և ազդեցիկ լծակներ, որոնք քարեմուրագումների վերաբերյալ ընդունված և միջազգային փաստաթղթերում ամրագրված բազմաթիվ որոշումների իրականացումը դարձնեին պարտադիր, անկասելի և անշրջելի: Եվրոպական պետությունները բավարարվում էին ընդունված որոշումներով և լույզ զանազան հայտարարություններով և հարկ չէին համարում իրենց իսկ ձևակերպումներով ընդունված որոշումների իրագործման համար դիմել գործնական և աղյուսավետ քաղերի:

Ինչ վերաբերում էր Օսմանյան կայսրությանը, ապա նրա կատարաբողմներն աչա հարցում մշտապես վարել են երկդիմի քաղաքականություն: Նրանք մի կողմից հրապարակայնորեն ընդունում էին հայկական շրջաններում քարեփոխումների անհրաժեշտությունը և իրենց ստորագրությունը դնում միջազգային համապատասխան փաստաթղթերի տակ,

իսկ մյուս կողմից մեծ եռանդով և արտակարգ ջանասիրությամբ իրագործում հայկական ջարդեր:

Արդյունքն եղավ այն, որ գործեց ոչ թե քաղցրեմորզումների, այլ հայերի զանգվածային կոտորածների մողելը:

Երկրորդ փուլում երևան եկավ հարցի մեկ այլ տարրերակ՝ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման մողելը, որն առանձնապես մեծ տարածում գտավ 1908 թ. երխտբուրջական հեղաշրջումից հետո: Դրան նպաստեց այն համգամանքը, որ երխտբուրջերը ասարարեզ իջան XVIII ֆրանսիական հեղափոխության հոյակած «Ազատություն, երջարություն, հավասարություն» լոզունգների մերջո: Կայսրության բոլոր ժողովուրդները ցեմությանը դիմավորեցին սահմանադրությունը վերականգնելու և արյունաբքու սուլթան Ադրուլ Համիդ II-ի դաժան վարչակարգը վերացնելու երխտբուրջերի խստումները: Մաքղիկ կարծում էին, որ նոր դաքաշրջան է սկսվում Օսմանյան կայսրության պատմության մեջ: Դրանց մեջ էին նաև հայերը:

Օսմանյան կայսրության ապակենտրոնացման զաղափարը իր ցեքն կողմնակիցներն ունեցավ կայսրության համարյա բոլոր ժողովուրդների, անգամ բուրքերի քաղաքական առանձին գործիչների մոտ:

Այդ սկզբումքի ցեքն կողմնակից էր սուլթան Ադրուլ Համիդ II-ի գարմիկ, իյխան Մաքահեղղիները, որը մեծ հեղինակություն էր վայելում երկրում: Նա մտահոգ էր Օսմանյան կայսրության հեռամեացությունը հարքահարելու և այն առաջադեմ ու զարգացած պետության վերածելու հարցով: Կրա կարծիքով դրա համար անհրաժեշտ էր, քացի այլ քայլերից, արմատապես փոխել ազգային քաղաքականությունը ոչ բուրք ժողովուրդների նկատմամբ: Մաքահեղղիները կողմնակից էր, որ բոլոր ոչ բուրք ժողովուրդներին տրվի լայն ինքնավարություն: Դեռ ավելին, նա գտնում էր, որ ազգային ծայրամասերին կարելի է ինքնավարություն տալ և այդ հիման վրա ստեղծել իքավահավասարազոր պետական կազմավորումների կոնֆեդերացիա:

Սա, անշուշտ, շատ համարձակ տեսակետ էր, և Մաքահեղղիները, փաստողեն իր ժամանակից առաջ էր ընկել: Հեռագայում, ազգային հարցում Մաքահեղղիների հայացքների պաշտպանությամբ հանդես եկավ 1911 թ. ձևավորված «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը, որը հավանություն տալով Օսմանյան կայսրության ապակենտրոնացման սկզբումքին, առաջադրեց «Բաղկանյան երկրները՝ քաղկանյան ժողովուրդներին», «Արաքական երկրները՝ արաքաներին», «Հայաստանը՝ հայերին» և «Բրդստանը՝ քրդերին» լոզունգները, որոնք

պետք է դառնային Օսմանյան կայսրության ներքին ինքնավար շրջաններ⁶։

Ապակենտրոնացման սկզբունքն իր եռանդուն պաշտպաններն ունեցավ հատկապես արաբական երկրներում, որոնք դրա մեջ էին տեսնում իրենց բազմաթիվ քաղաքական, տնտեսական, ազգային և մշակութային հարցերի լուծման բանալին։ Արաբների դիրքորոշումը շատ կարևոր էր, քանի որ նրանք Օսմանյան կայսրության ժողովուրդների շարքում բխարանակալ ամենաշատն էին։ 1912 թ. Կոնիդիում արաբները հիմնեցին Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման՝ «Լամարքազիա» կուսակցությունը, որն իր բաժանմունքներն ուներ Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Իրաքում և այլուր։ Նրա ղեկավարն էր արաբական հայտնի փիլիսոփա, սոցիոլոգ և երասպարակախոս Ռաֆիկ ալ-Ազմը։

«Լամարքազիայի» ծրագրային սրահանջն էր Օսմանյան կայսրության արաբական և մյուս ոչ քուրդական վիլայեթների վերածումն ինքնավար մահանգների՝ իրենց տեղական կառավարությամբ և մահանգային օրենսդիր ժողովներով։ Նման կարգավիճակ էր նախատեսվում նաև հայկական վիլայեթների համար՝ դիտելով այդ տեղիծված պայմաններում հայկական հարցի լուծման լավագույն տարրերակ։

Օսմանյան կայսրության ապակենտրոնացմանը կողմնակից էին նաև հայերը, պաշտպանելով նրա երկու տարրերակներն էլ՝ Մաքբահեդդինի և «Լամարքազիայի» առաջադրած մոդելները։ Այս հարցում սերտ հարաբերություններ հաստատվեցին հայերի և արաբների միջև, սատար կանգնելով միմյանց։ Դրա լավագույն դրսևորումն եղավ Ալաբական առաջին կոնգրեսը, որը գումարվեց «Լամարքազիայի» նախաձեռնությամբ 1913 թ. հունիսի 18-23-ին Փարիզում։ Նրանում Եզլապտսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Պաղեստինի հայրենասիրական կազմակերպությունների ներկայացուցիչների և ազգային-քաղաքական գործիչների հետ միասին մասնակցում էր նաև արևմտահայերի պատվիրակը։ Կոնգրեսը վերստին հավաստեց արաբների դիրքորոշումն Օսմանյան կայսրության ապակենտրոնացման հարցում։

Արաբական առաջին կոնգրեսն իր քննարկումների ժամանակ անողորմարժավ հայկական հարցին և նրա լուծման տարրերակին։ Նրա ընդունած բանաձևի 8-րդ կետը հատուկ միջոված էր հայկական հարցին, որտեղ ասված էր. «Կոնգրեսը հավանություն է տալիս և պաշտպանում օսմանյան հայերի պահանջները, որոնք հիմնված են ապակենտրոնացման սկզբունքների վրա և նրանց պատվիրակի միջոցով ռդջույն հղում նրանց»⁷։

Հանդես գալով Արաբական կոնգրեսի բանաձևի վերոնշյալ 8-րդ կետի քվեարկության ժամանակ, կոնգրեսի նախագահ, «Լամարքազիա-

յի» հիմնադիրներից և ղեկավարներից մեկը, արքայական ազգային-ազատագրական շարժման ակամավոր գործիչ Արզնի Համիդ Ջահրալին, որը 1916 թ. կախաղան հանվեց Երիտթուրքական տրիտովիերատի անդամ, հայ և արաբ ժողովուրդների դասի՞ն Ջեմալ փաշայի կրամանով, նախարարեց. «Մեր հայ եղբայրների դրոշյունը նման է մեր դրոշյունը: Նրանք այնպիսի մարդիկ են, ինչպես և մենք, նրանք արտագաղթում են, ինչպես և մենք, նրանք ստածում են այնպես, ինչպես և մենք, նրանք պահանջում են այն, ինչ մենք ենք պահանջում: Եվ մենք ցանկանում ենք հաջողություն մեզ և նրանց, և մենք միասնական ենք ապակենտրոնացման պահանջի մեջ»¹:

Երիտթուրքական կառավարողները, որոնք խիստ կենտրոնացած պետական համակարգի կողմնակիցներ էին և ոչ թուրք ժողովուրդների հանդեպ վարում էին քարոզիկ և բռնի թուրքացման քաղաքականություն, կտրուկ դեմ էին ապակենտրոնացմանը, դա համարելով կործանարար կայսրության գոյության համար: Նրանք հանդես էին գալիս թուրքիզմի՝ կայսրության բոլոր ժողովուրդների ձուլման, բռնի թուրքացման կամ վերացման և այդ ուղիով «մաքուր» թուրքական «ազգի» ձևավորման քաղաքականությամբ: Նրանք ոչ միայն մերժում էին ապակենտրոնացումը, այլև հալածանքներ սկսեցին նրա զատագույնների դեմ, որից չխուսափեց անգամ իշխան Սաբրահեդդինը: Վերջինս ամվելոսպահ տպանությունից խուսափելու համար, փախավ իր հայրենիքից և հանգրվանեց Եվեյցարիայում:



Այժմ անդրադառնանք լիբանանյան կամ ավելի ստույգ «լեռնալիբանանյան մողելի» Երթյան բացահայտմանը և հայկական հարցի լուծման համար նրա կիրառման փորձին:

Լեռնալիբանանում XVIII դարի վերջին և XIX դ. կեսերին քրիստոնյա և մահմեդական տարբեր համայնքների, մասնավորապես մարոնիների և դրուզների միջև, որոնց շատ հաճախ միանում էին նաև սուննի, շիա, ինչպես նաև քրիստոնյա տարբեր համայնքներ, պարբերաբար տեղի էին ունենում արյունալի բախումներ ու ֆարդեր: Նրանք շատ հաճախ հրահրվում էին Ստամբուլի, ինչպես նաև եվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Անգլիան սովորաբար հովանավորում էր դրուզներին, իսկ Ֆրանսիան կանգնած էր քրիստոնյա-մարոնի համայնքի քիկունքում: 1845 թ. մայիսին բռնկվեց հերթական բախումը մարոնի և դրուզ համայնքների միջև, որը վերածվեց զանգվածային սպանոյի: Արյունալի բախումների զոհ դարձան տասնյակ հազարավար մարդիկ, հիմնահատակ կործանվեցին տասնյակ գյուղեր և այլն: «Ըստղաղություն հաստատելու» պատրվակով միջամտեցին

բողոքական գործերը, որոնք պատժիչ գործողություններ կիրառեցին «սանհմազանդների» նկատմամբ՝ պատճառելով նոր մարդկային զոհեր:

1860 թ. զարմանը բռնկվեցին դրուգական-մարտնչական նոր քաղաքներ, որոնք վերածվեցին զանգվածային ջարդերի: Մարտիմների և դրուգների զինված խմբերը միմյանց կոտորում էին Քեյրտբում, Պահլեում, Մադրասում, Դեյր ալ-Կամարում: Համարյա ողջ Լիբանանի տարածքում ավերվեց մոտ 60 գյուղ և քնակավայր: Նույն թվականի հուլիս ամսին ջարդեր սկսվեցին Դամասկոսում և նրա շրջակայքում: Այստեղ մահմեդական մուսուլմանները, նրբենն բողոքական զինվորների ուղղակի մասնակցությամբ, կազմակերպեցին քրիստոնյաների լայնածավալ ջարդեր, որի ընթացքում սպանվեց 20. 000 մարդ, ոչնչացվեց 380 քրիստոնեական գյուղ, 540 եկեղեցի, 40 տաճար և այլն: Մեծ էին նաև մահմեդականների և դրուգների զոհերը և կորուստները:

Ստեղծված պայմաններում, 1860 թ. սեպտեմբերի 5-ին, Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Պրուսիան և Ֆրանսիան ստեղծեցին միջազգային հանձնաժողով, որին նրանց ճնշման ներքա անդամակցեց նաև Օսմանյան կայսրությունը: Հանձնաժողովի նպատակն էր քացառապես տեղի ունեցած կոտորածների պատճառները և պատժիչ մեղավորներին: Սակայն նրա գլխավոր խնդիրն էր ձեռք առնել այնպիսի միջոցներ, որը կկանխեր նման իրադարձությունների կրկնումը և մշակեր Լիբանանի կառավարման նոր վարչածն կամ նոր կարգավիճակ՝ ստատուս:

1861 թ. հունիսին հանձնաժողովն ավարտեց այդ քաղաքական-իրավական փաստաթղթի մշակումը, որը ստացավ «Լիբանանի օրգանական ստատուս» անվանումը: Նա ստորագրվեց 1861 թ. հունիսի 9-ին, Մտամբուլում, Օսմանյան կայսրության և վերոնշյալ եվրոպական պետությունների միջև որպես կոնվենցիա: Ըստ այդմ, Լեռնալիբանանը դառնում էր ինքնավար մահանգ՝ մութասարիֆիյա, որը ղեկավարում էր քրիստոնյան մահանգապետը՝ մութասարիֆը: Մութասարիֆը նշանակվում էր սուլթանի կողմից: Նա կարող էր լինել միայն քրիստոնյա և նրա թեկնածությունը պետք է հավանության արժանանար եվրոպական պետությունների կողմից: Վերջիններս, համոզես էին զաղխ որպես Լեռնալիբանանի ինքնավարության երաշխավորներ¹⁰:

Լեռնալիբանանի առաջին կառավարիչ-մութասարիֆ հաստատվեց հայազգի Կարապետ Արթին Դաուդյանը, պետական գործչին քննորոշ քարձր հատկամիչներով օժտված և արդարամիտ մի անձնավորություն, որի ջանքերի շնորհիվ խաղաղություն հաստատվեց նրան վտանգված ինքնավարությունում: Նա շատ քարի իշխողություն է բռնել Լիբանանի պատմության մեջ, իսկ նրա գործունեությունը արժանացել այնպիսի հեղինակավոր մասնագետների ղրական գնահատականին, ինչպես Քամալ Մալիքին, Ֆելիպ Հլոթին, Ա. Կրիմսկին և այլն:

Համաձայն Օրգանական ստատուտի, մութասարիֆին կից ստեղծվում էր Վարչական խորհուրդ, կազմված 12 հոգուց՝ երկուական ներկայացուցիչ վեց իմնական կրոնական համայնքներից՝ մարոնիական, դըռզական, սուննի, շիա, ուղղափառ քրիստոնյաների և հունա-ունիթորական: Նրա իրավասությունների մեջ էր մտնում հսկողությունը հարկերի հավաքման, բաժանման և ծախսերի վրա:

Լեռնալիբանանը բաժանվեց 6 շրջանների՝ մուդիրիյա, որոնց գլուխ կանգնեցին մուդիրները, որոնցից երեքը՝ մարոնի, մեկը՝ դըռզ, մեկը՝ ուղղափառ և մեկն էլ՝ ունիթորական: Օրգանական ստատուտը սահմանում էր մաս կաշտունների բաժանման սկզբունքն ըստ կրոնական համայնքների, այն հաշվով, որ նրանց իրավունքները չտուճահարվեն: Լեռնալիբանանը ստանում էր սեփական ռազմականություն և դատական համակարգ ունենալու իրավունք¹¹:

Ահա այսպիսին է ընդհանուր գծերով լիբանանյան մոդելի բովանդակությունը:

Լեռնալիբանանի Օրգանական ստատուտը, որը գոյություն ունեցավ մինչև 1914 թ., իր ժամանակի համառոտաբանական քաղ էր և, կարելի է ասել, ամենախաղիկ երևույթ մի այնպիսի հետաքննարկում, ռազմաֆեոդալական պետությունում, ինչպես Օսմանյան կայսրությունը:

Լեռնալիբանանը, մնալով Օսմանյան կայսրության կազմում, ստացավ իրոք ինքնավարության կարգավիճակ, որը նվազագույնի հասցրեց սուլթանական իշխանության միջամտությունը մութասարիֆության ներքին գործերին: Երկրամասում հաստատվեց խաղաղություն և համագործակցություն տարբեր կրոնական համայնքների միջև և արժանագրեց դրոշակի առաջադիմություն տնտեսական, ազգայական և կրթական-մշակութային մարզերում:

11. См. об этом в книге: Peter Karsten, Peter D. Howell, and A. P. Allen, *Military Threats: A Systematic Historical Analysis of the Determinants of Success*. Westport, Connecticut, 1984.
12. К. J. Holsti, *International Politics: A Framework for Analysis*. Sixth Edition, Englewood Cliffs, 1992, p. 126.

ԱՆՈՒՇ ԱՏԱՄԲՈԼՅՅԱՆ

ԻՐԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՀԴԻ ԲԱԶԱՐԳԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Թեև Մոհամմեդ Ռեզա Փեհլևի շահի իշխանության տապալումը քաղաքագետների կողմից գնահատվում էր ոչ միայն որպես Իրանում ամերիկյան քաղաքականության ամմախաղկալ, մեծագույն անհաջողություն, այլև լիակատար պարտություն, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ղեկավար շրջանները որևէ չափով պատրաստ չէին անգամ այս պարագայում համակերպվել Իրանում իրենց մախկին դիրքերից հրաժարվելու մտքի հետ: Դրա լավագույն վկայությունն է, քերևա, այն, որ ԱՄՆ-ի Պետության գործառնության Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի հարցերով զբաղվող բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը՝ Հ. Սանդերսը, Իրանից շահի հեռամալու հաջորդ իսկ օրը՝ 1979 թ. հունվարի 17-ին, շտապեց ամերիկացուհու Իրանում ստեղծված միանգամայն մութ իրադրության վերլուծությանն ու մեկնաբանությանը, պարզաբանել նրա հնարավոր հետևանքներն Իրանում և ընդհանրապես Միջին Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության ապագայի համար¹:

Նույն օրն ևեք Միացյալ Նահանգների մախագահ Ջ. Քարտերն իր հարցազրույցներից մեկի ժամանակ հավատում էր Իրանում ԱՄՆ-ի քաղաքական նպատակների կայունությունն ու այն պահպանելու անհրաժեշտությունը՝ իրականում որեղորդ անգամ հիշեցնելով այն բոլոր գործոնները, որոնք ԱՄՆ-ը համարել և համարում էր իր ռազմավարության հիմքը և որոնցից, հասկանալի պատճառներով, մտադիր չէր երթել հրաժարվել²: Ավելորդ չէ նշել, որ Միացյալ Նահանգների այդպիսի դիրքորոշումն ուղեկցվում էր մաս և այն պատճառաբանությամբ, որ այդ են պահանջում մաս Իրանի և տարածաշրջանի՝ առանց քաջատության բոլոր երկրների կենսական առաջնահերթ շահերը, և որ այնտեղ ԱՄՆ-ի դիրքերի հետագա ապահովումը միանգամայն համահունչ է մախ և առաջ հենց վերջիններիս շահերին:

Հայտնի է, որ մախապես ԱՄՆ-ի ղեկավար շրջանները, չմայած Իրանում աներիկյան ալմադական քաղաքականության շարունակման

ձևերի հետ կապված տարածայնություններին², մեծ հույսեր էին կապում Շահիուր Բախթիարի՝ իրենց և շահի համատեղ ջանքերով տեղեփված կառավարության հետ: Դեռևս 1979 թ. հունվարի սկզբներին ամերիկյան ադմինիստրացիան հայտարարում էր, որ պատրաստ է լիովին համագործակցել Բախթիարի կառավարության հետ, անկախ այն քանից՝ շահը կմնա Իրանում, թե՛ ոչ³:

Փորձելով յուրովի քաջատրել Իրանում տեղի ունեցածի պատճառները՝ Քարտերը միաժամանակ հույս էր հայտնում, որ իրենց կողմից հովանավորվող Բախթիարի կառավարությունը, որին պատրաստ են աջակցել այսուհետև ևս, կկարողանա վերջ դնել արյունահեղությանը, վերականգնել երկրի կայունությունը և Իրանը վերադարձնել նորմալ կյանքի⁴: Հատկանշական է, որ Իրանում ընդդիմության հանդեպ իր վերաբերմունքը նույնպես այս պահին Քարտերը կապում էր այն հանգամանքի հետ, թե վերջիններս որքանով լոյս կլինեն Բախթիարի կառավարությանը: Մակայն հունվարի կեսերին այսօրյա Խոմեյնին, ինչպես և պետք էր սպասել, կարակամապես մերժեց Բախթիարի նորաստեղծ կառավարության հետ համագործակցելու Քարտերի հորդորները⁵: Հաջողություն չունեցավ նաև Փարիզ մեկնելու և Խոմեյնու հետ քամակցելու Բախթիարի ինքնավստահ փորձը⁶:

Այսուհանդերձ, Իրանում ծավալվող բռտն գործընթացները միանգամայն կանխատեսելի էին դարձնում Բախթիարի կառավարության մտալուտ ճակատագիրը: Այդ էր պատճառը, որ շարունակելով աջակցել Բախթիարի կառավարությանը, ԱՄՆ-ը, միաժամանակ, փորձում էր կապեր հաստատել և, հնարավորության դեպքում, երկխոսություն սկսել հոգևոր ընդդիմության հետ⁷: Մանավանդ, որ Խոմեյնին արդեն 1979 թ. հունվարի սկզբներին հայտարարում էր, որ Իրանը պատրաստ է լավ հարաբերություններ զարգացնել Միացյալ Նահանգների և Արևմտյան Եվրոպայի երկրների հետ, եթե նրանք դադարեցնեն աջակցությունը շահին և միջամտությունը իր ներքին գործերին⁸:

Երբ Խոմեյնին 1979 թ. փետրվարի 1-ին վերադարձավ Իրան և անմիջապես իր կողմից ստեղծված ժամանակավոր կառավարության վարչապետ նշանակեց Մեհդի Բազադգանին, արդեն փետրվարի 12-ին իր հարցազրույցի ժամանակ Քարտերը հայտարարեց, որ ջանալու է խաղաղ համագործակցություն շարունակել Իրանի հետ⁹: Հաջորդ իսկ օրը՝ փետրվարի 13-ին, Պետդեպարտամենտի ներկայացուցիչը հաստատում էր, որ Թեհրանի նոր վարչակարգն ընդունել է նախագահ Քարտերի համագործակցության առաջարկը, և համոզմունք էր հայտնում, որ Միացյալ Նահանգներն ու Իրանը շարունակելու են երկկողմ հարաբերությունները¹⁰:

Հարկ է նշել, որ այդ ժամանակ Իրանում Միացյալ Նահանգների դեսպան Վ. Սադլիվենը ամերիկյան կառավարության կողմից տեղեկացված էր այն մասին, որ չնայած Իրանում կառավարության փոփոխությանը՝ ԱՄՆ-ի իշխանությունները որոշել են շարունակել Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները և հրահանգ էր ստացել այդ մասին արաչտոմսային հայտնել Իրանի արտգործնախարարին¹²։ Սա, փաստորեն, մշամակում էր, որ Միացյալ Նահանգները արաչտոմսային ճանաչում էր Իրանի նոր վարչակարգը։ Վաշինգտոնի այսպիսի կողմնորոշումը միանգամայն համապատասխանում էր Սալիստակ տանը կազմակերպված մանուլի ասուլիսի ժամանակ Քարտերի այն արտահայտությանը, որ ԱՄՆ-ը ձգտում է լավագույնս օգտագործել Իրանում կառավարության փոփոխությունը և ի հնարավորինս անել ամեն ինչ՝ այնտեղ ամերիկյան շահերի պաշտպանության համար¹³։

Այսպիսով, իրադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Իրանից շահի հետանալը և Իրանում նոր կարգերի հաստատումը ամենևին էլ չնվազեցրին այնտեղ Միացյալ Նահանգների ակտիվությունը։ Ուղղակի ԱՄՆ-ի դիվանագիտության քաղաքականության մեջ սկսվեց ոչ տևական, սակայն կարևոր և հագեցած նոր փուլ։

Այդ շրջանում ամերիկյան քաղաքականության առաջնահերթ նպատակն, անշուշտ, շարունակում էր մնալ Իրանում իր ներկայությունն ապահովելը և պահպանելը, որին և ուղղված էին նրա հիմնական ջանքերը։ ԱՄՆ-ը, ամենայն հավանականությամբ, հասցրել էր ձեռքազատվել շահի կորստյան և Բախրիսի վաղաճեցիկ կառավարության ֆիասկոյի հարուցած ընկճվածության զգացումից և զրեթ չէր կասկածում, որ ոչ մեծ ջանքեր գործադրելով՝ Բազարգանի կառավարությանը կկարողանա հաջողությամբ օգտագործել որպես այլընտրանք։

Իրանի նոր իշխանությունների առաջին քայլերն այս տեսակետից ԱՄՆ-ի համար ավելի քան հուսադրող էին։ Վերջ հիշատակված մամուլի ասուլիսի ժամանակ Քարտերը հայտարարում էր, որ Իրանում ամերիկյան դեսպանությունը խորհրդակցել է Բազարգանի նորաստեղծ կառավարության հետ, և որ այն շատ արդյունավետ է եղել, քանի որ երաշխավորել է Իրանում ամերիկյան քաղաքացիների ապահովությունը¹⁴։ Բազարգանի կառավարության աջակցությամբ հնարավոր եղավ իրականացնել Իրանից ամերիկյան մեծաթիվ քաղաքացիների տարահանումը, ինչը ենդափոխության հարթամակից հետո ամերիկացիներին ամենից շատ հուզող խնդիրներից մեկն էր։

1979 թ. փետրվարի 14-ին ցուցաբերվող հարձակում զործեցին թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան վրա և պատանդ վերցրին դեսպանության աշխատակիցներին¹⁵։ Բազարգանի և կառավարության մյուս

քարձրաստիճան պաշտոնյաների ցանցերով նրանց հնարավոր եղավ ազատել¹⁶։

Միացյալ Նահանգների ղեկավար շրջանները, հետապնդելով ուղղակի մպատակներ, սկսեցին կերպով հետևում էին Իրանում ընթացող պրոցեսներին և Բազարգանի կատավարության ու ամենձամբ խոմեյնիներիցին և արտաքին քաղաքականության քննազննարարական ձևերով քայլերին՝ երկու երկրների միջև փոխհարաբերությունների հետանկարներն ափսիսի ճիշտ գնահատելու համար։

ԱՄՆ-ը որոշակի հույսեր էր կապում մախ և առաջ Բազարգանի հետ։ Վերջինս՝ որպես լիբերալ-բուրժուական գործիչ, իր համոզմունքներով և համապատասխան կեցվածքով կարծես դեմ չէր հաշտվել ԱՄՆ-ի հետ (ինչպես և կասկածալիտական աշխարհի հետ ընդհանրապես) և ազգային տնտեսությունը պահպանել կասկածալից շրջանակներում։ Ամերիկյան ղեկավարների հիշողության մեջ դեռ թաքն էր այն, որ «չափավորները», որոնց շահերի արտահայտիչն էր Բազարգանը, Վաշինգտոնի հետ մերձեցումը իրական երաշխիք էին դիտում Իրանի անկախության ապահովման համար, ինչպես և իշխանության հասնելու կարևոր մոխապայման՝ դեռևս մախքան շահի վարչակարգի տապալումը։

ԱՄՆ-ի ղեկավար շրջանները գրեթե վստահ էին, որ Իրանի նոր իշխանությունները ուշ թե շուտ չքրվելու էին դեպի ԱՄՆ-ը։ Իրանից տարանմուծ աներիկյան դիվանագետներից մեկը, որ լավատեղյակ էր Իրանի մերթին իրադրությունը, այն համոզվածությունն էր հայտնում, որ Իրանի ղեկավարներն ընտրություն չունեն, և նրանց պարզապես ժամանակ է պետք որպեսզի կարողանան բոբափել իրենց ափսոսող և անհարկի պատվամուտությունը¹⁷։

ԱՄՆ-ին ամենից շատ հույս էր ներշնչում հեղափոխությունից հետո Իրանում առեղծված ծանր տնտեսական վիճակը։ Ամերիկյան մամուլն անընդմեջ և մի առանձին համոզյով էր արձանագրում այդ իրողությունը հաստատող քաղմաքիվ փաստերը և, հատկապես այդ մասին Իրանի ղեկավարների և քարձրաստիճան պաշտոնյաների հավաստիացումները։

1979 թ. մարտի 11-ին՝ հարցազրույցներից մեկի ժամանակ, Բազարգանն անբարոյց մտահոգություն էր հայտնում երկրում տիրող ծանր վիճակի կասպակցությանը և խտատվանում էր, որ իրենք դեռ բոլորովին պատրաստ չեն այն հարթահարել¹⁸։ Երկրի ճգնաժամային վիճակի հանդեպ իր անհանգստությունն էր արտահայտում մաև Խոմեյնին։ Իրանի քանվորներին եղած մի ուղերձում մա կու էր անում համբերության և նրանցից պահանջում էր կատավարությանը ժամանակ տալ դժվարություններին դուրս գալու նք գտնելու համար¹⁹։

Վերջիններիս տազմապն, ամշուշտ, չտիագանցված չէր, այլ միանգամայն հասկանալի և բնականոն, եթե նկատի առնենք այն կարևոր հանգամանքը, որ միլիոնավոր իրանցիները մեր իշխամություններից ակնկալում էին իրենց վիճակի արմատական բարելավում, և նրանց հիասթափությունը կարող էր վճռորոշ լինել դեռևս չամբասպնդված իշխամությունների համար:

Ստեղծված իրադրության պայմաններում ԱՄՆ-ի ղեկավար շքբաններին հասկնալիս ոգևորում էին Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հաճախ արվող ակնարկները, երբեմն մաս բացահայտ արտահայտությունները ԱՄՆ-ի և, ընդհանրապես, Արևմտացի հետ կապերը շարունակելու անխուսափելիության մասին, ընդ որում ոչ միայն տնտեսական, այլև ռազմական բնագավառներում: Իրանում ԱՄՆ-ի դեսպան Սալիվենի վկայությամբ՝ դեռևս մեր իշխամության եկած Բազարգանը մի առիթով նրան անկեղծորեն ասել էր, որ իրենք հույս ունեն շարունակել ԱՄՆ-ի հետ ռազմական համագործակցությունը և անվտանգության հետ կապված հարցերի կարգավորումը²⁰:

ԱՄՆ-ը Բազարգանի վարչապետ դառնալը մարտականաբար էր գտնում մաս այն առումով, որ վերջինս նշանակված էր Խոմեյնու կողմից և վայելում էր նրա վստահությունն ու հովանավորությունը: Եվ որքան էլ իրականում, Խոմեյնին էր դրության տերը, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի ղեկավարները հույս չունեին անհրաժեշտության դեպքում նրա միջոցով ազդել Խոմեյնու վրա: Միացյալ Նահանգներն ակնկալում էր հմտորեն օգտագործել մաս Բազարգանի և Խոմեյնու հայացքների, նպատակների, մաս գործելակերպի միջև առկա հակասությունները՝ ապավինելով այդ ասպարեզում իր ձեռք բերած հաբոտտ փորձին:

ԱՄՆ-ի համար, իհարկե, առանձնակի կարևորություն էր ներկայացնում Խոմեյնու հետ հարաբերությունների կարգավորումը: Մասնավաճ, որ ԱՄՆ-ի նկատմամբ վերջինիս դիտորոշումն այդ պահին չնայած չափազանց զգուշակոր էր, սակայն ոչ միանգամայն աննստաձայնողական ու անզիջում:

Եթե դեռևս 1978 թ. ղեկտեմբերին Քարտերը առանց վարանկու հանդիմանում էր Խոմեյնուն և հրապարակայնորեն հայտարարում, որ որևէ ցանկություն չունի նպաստել նրա ազգայնական համախոհների իշխամության գալում և նույնիսկ չէր բացցնում իր քննաժամանքը վերջինիս հանդեպ, իսկ Խոմեյնին էլ, իր հեքթին չէր դադարում սպառնալ, որ ԱՄՆ-ը և չափին աջակցող մյուս պետությունները զրկվելու են իրանական նավթից և նրանց հետ բոլոր պայմանագրերը չեղյալ են հայտարարվելու, ապա կարճ ժամանակ անց իրադրությունը էինձուլին փոխվել էր: Այժմ արդեն Միացյալ Նահանգների ղեկավարները ջանք չէին խնա-

յում շփման նորանոր եզրեր գտնել խոմեյնու հետ և նվաճել մրա վստահությունը:

Իրանի արտաքին գործերի նախարար և միաժամանակ խոմեյնու գլխավոր օգնական Իբրահիմ Յազդին ամերիկացի լրագրողներից մեկի հետ հարցազրույցի ժամանակ նշելով, որ իրանական ժողովրդի ծամար դժվար է մոռանալ անցյալը, և որ հատկապես ԱՄՆ-ի՝ միջուկային զենքի հեծարանը լինելու մասին հիշողությունը լուրջ պրոբլեմներ է ծնում Թեհրանի և Վաշինգտոնի հարաբերությունների միջև, շտապում էր հավաստել, որ, այնուամենայնիվ, իրանցիները վատ չեն տրամադրված ամերիկացիների հանդեպ, և եթե վիճակված է Վաշինգտոնի հետ բարեկամել հարաբերությունները, ապա մախ և առաջ Միացյալ Նահանգները պետք է փոխեն իրենց դիրքորոշումը Իրանի նկատմամբ»²⁵: Յազդին այս արտահայտությունն, անկասկած, արված էր ոչ առանց խոմեյնու հավանության, և եթե անտեսենք նշմարվող ֆատալիզմի երանգը, ապա այն պարզորոշ կերպով հասկացնել էր տալիս, որ մախ, իրանցիները պատաստական են համագործակցել և մույճիսկ բարեկամել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, և ապա, որ այդ հարցի կարգավորման գործում ակնկալվում է մահ ԱՄՆ-ի փոխադարձ ակտիվությունը:

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հարցում Իրանի ղեկավար շրջանների և, մասնավորապես, խոմեյնու կեցվածքի նման ակնհայտ փոփոխությունը մախ և առաջ նպատակ ունեն ԱՄՆ-ին հույսեր ներշնչելով՝ հեռացնել Բախթիարից, զրկել վերջինիս նրա աջակցությունից, և ապա՝ կասեցնել իր մտադրությունների մինչև վերջ իրականացումը նրա կողմից խաչքնդուտելու հնարավորությունը:

Այլ բան է, որ խոմեյնին, միաժամանակ, չէր դադարում միջուկային պարտույթ և ամենախիստ արտահայտություններով յուրաքանչյուր պատեն առիթով մեղադրել ԱՄՆ-ին Իրանի ցուրդ դժվարությունների մեջ: Պատճառը, քերև, այն է, որ տեղծված իրադրության պայմաններում հարկադրված լինելով ճկունություն ցուցաբերել և որոշակի ժեստեր անել ԱՄՆ-ին, խոմեյնին, այնուամենայնիվ, չէր ուզում որևէ չափով աղարտել ամզիցում գործչի իր կերպարը և, ինչպես իրավաքնդորեն նշում են որոշ ուսումնասիրողներ, կայունության այս ցուցադրումը առավելապես «ներքին օգտագործման»²⁶, այսինքն՝ սեփական ժողովրդի համար էր:

Փոփոխված իրադրության պայմաններում Իրանի հետ հարաբերություններ զարգացնելու հնարավորության հարցում ԱՄՆ-ին լավատեսության առիթ էր տալիս մահ խոմեյնու և նրա համախոհների ընդգծված հակակոմունիզմը, և ԱՄՆ-ի ղեկավարները վստահ էին, որ քեկուզ միայն հակադրվելու և հակազդելու համար ԽՄԿԵՄ-ի ճնշումներին, Իրանի նոր ղեկավարությունը դարձյալ հակվելու է ԱՄՆ-ի կողմը: Պատահական չէ, որ 1979 թ. փետրվարի 27-ին Սպիտակ տանը մի ճաշկերույ-

քի ժամանակ Զարոնքը հայտարարեց, որ իր կարծիքով Իրանում գրեթե բոլոր պատասխանատու կամ ազդեցիկ անձիք վճռական հակակոմունիստական կողմնորոշում ունեն²⁷։ Ի դեպ, այս հանգամանքը չափազանց հաճախ և մեծ գոհունակությամբ էր արժարժվում ԱՄՆ-ի ղեկավար շքանշաններում։ 1979 թ. սեպտեմբերին Իրանի արտգործնախարար Իբրահիմ Յազդիի հետ Նյու-Յորքյան հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղար Սայրուս Վենսը, անցյալառնալով երկու երկրների միջև հարաբերությունների զարգացմանն ու հետագա ամրապնդմանը մայատող հանգամանքներին, հատկապես նշում էր, որ Միացյալ Նահանգները և Իրանը արդեն իսկ քնական դաշնակիցներ են խորհրդային Միության հանդեպ ունեցած իրենց ընդհանուր վախի քերումով²⁸։

Այստեղանդեք, ԱՄՆ-ի և Իրանի միջև մերժված ման և հարաբերությունների քարելավման գործընթացն սպասվածի պես հարթ չէր ընթանում և, ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա զարգացումը, ԱՄՆ-ի ռազմաբարձությունը վատարժում էր։ Մասնավորաբար, ԱՄՆ-ի համար ծագել էին մի շարք մտահոգիչ պահեր, որոնք չնկատել, առավել ևս հաշվի չառնել հնարավոր չէր։ 1979 թ. ապրիլի սկզբներին արդեն Բազարգանը մի ասուլիսի ժամանակ, դարձյալ նախատեսեցնելով, որ Իրանի անտեսության համար անհրաժեշտ օտարերկրյա (նախ և առաջ ամերիկյան) օգնությամբ շարունակվելու է առկա ծրագրերի գործարկումը, և դրանցում ընդգրկված օտարերկրյա մասնագետները օգտվելու են լիակատար անվտանգությունից ու Իրանի կառավարության պաշտպանությունից, միաժամանակ ընդգծում էր, որ Իրանն այլևս Պարսից ծոցում և և Հնդկական օվկիանոսում չի խաղալու ժամերսմի իր նախկին դերը և դադարեցնելու է այդ դերի հետ կապված բոլոր նախագծերի իրականացումը²⁹։

ԱՄՆ-ի ղեկավար շքանշաններին լրջորեն անհանգստացնում էր նաև Խոմեյնի և Բազարգանի միջև ոչ վաղ անցյալում իրենց քաղաքականության իրականացման համար այնքան նպատակալիկ քվեացող հակասությունների արագ և չափից ավելի խորացումը, հանգամանք, որն ի վերջո կարող էր հանգեցնել Իրանում իրադրության նոր, կարուկ փոփոխության՝ ԱՄՆ-ի համար անկանխատեսելի հետևանքներով։

1979 թ. նոյեմբերի 5-ին լիբերալ-բուրժուական ճանաչված գործիչ Մեհդի Բազարգանին ժամանակավոր կառավարության վարչապետ նշանակելուց որոշ ժամանակ անց՝ արդեն մարտի սկզբներին, Խոմեյնին փաստորեն առաջին անգամ խնդրեց քննադատության ենթարկեց նրա կառավարությանը՝ մեղադրելով թուլության, շքեղության ձգտելու և Արևմուտքի առջև խոնարհվելու, իսկ անձամբ Բազարգանին՝ նաև իշխանության արևմտյան մոդելը գերադասելու մեջ՝ համարելով այն Իրանի համար խնդր վտանգավոր³⁰։ Խոմեյնին, անշուշտ, նոր չէր, որ հայտ-

նաքերի էր իր և Բազարգահի քաղաքական հայացքների և նպատակների կոնցեպտուալ տարբերությունը, երբեմն նաև կատարյալ հակադրությունը: Մակայն մա որոշ ժամանակ դեռ վաղ էր համարում այդ համագամները մղել առաջին պլան, քանի որ Բազարգահի կառավարությունը շարունակում էր իրականացնել իրադրության վրա հակադրություն սահմանելու, Իսլամական հանրապետություն հաստատելու համար ներքին և արտաքին նպատակներ պայմաններ ապահովելու և այն նախապատրաստելու հոմեյնու նախաճշած ծրագրերը և դեռ անելիքներ ունեյր ապագայում:

Ստեղծված իրադրության պայմաններում, հասկանալիորեն, Բազարգահի մոտ ևս, որը շատ լուրջ էր մտռնում իր ազըս դրված խնդիրների կատարմանը, օրեցօր ավելի էր սաստկանում անհարժարափետության զգացումը: Նա այլևս չէր բացցնում իր ծայրահեղ դժգոհությունն այն առիթով, որ հոմեյնու ստեղծած հեղափոխական կոմիտեներն ու զինված հեղափոխական խորհուրդները անընդհատ միջամտում են կառավարության գործերին՝ սահմանափակելով վերջինիս ազատ և լիարժեք գործելու հնարավորությունը և անհաջողության մատնելով կառավարության կարևոր նախաձեռնություններն ու միջոցառումները:

Խորացող ճգնաժամի ակնհայտ արտահայտություններից էր սպրիլին Բազարգահի կառավարության արտաքին գործերի նախարար Քարին Մանգարիի երաժարականը, որը նրա կողմից պատճառարանվում էր վերը հիշված համագամներով և այդ պարագայում գործնական որևէ քայլ ձեռնարկելու անհնարինությանը: Նույն պատրվակով հեռացան նաև կառավարության մի շարք այլ անդամներ, այդ թվում նաև ներքին գործերի նախարար Ահմադ Մադանին:

Բազարգահը ևս վաղուց ի վեր պատրաստ էր թողնել վարչապետի պաշտոնը, սակայն երաժարականի նրա բազմաթիվ փորձերը հոմեյնու կողմից մնում էին անարձագանք: Խոմեյնին Բազարգահին ընտրել էր այնքան ժամանակի համար, որքան իրեն պետք էր, և երբ պետք վրա հասավ, նրանից ազատվելու պատրվակն, անշուշտ, հեշտությամբ գտնվեց: Իսկ մինչ այդ հոմեյնին շարունակում էր ցուցադրաբար և հրապարակայնորեն դատապարտել Բազարգահի թույր իրական և հնարավոր թերություններն ու բացթողումները, իր ընկալմամբ՝ նրա քաղաքականության արատավոր և իրանական հեղափոխության համար վնասակար ասպեկտները, որի միակ նպատակը նրան վարկաբեկելն ու մեծացնելն էր՝ նրա մոտալուտ պաշտոնանկությունը հասարակության աչքում քնակամոն և արդարացված ներկայացնելու համար:

Երկրի ներսում իրադարձությունների զարգացման այսպիսի ընթացքն իր անխուսափելի ազդեցությունն ունեցավ նաև Միացյալ Նահանգների հետ Իրանի հարաբերությունների վրա՝ ավելի ընդգծելով

նրանց մեջ նկատվող հետադիմության միտումները և անորոշ դարձնելով այդ հարստերությունների թեկուզ ոչ մախկին որակով վերականգնվելու հետևանքաբար: Այս իրողությունը հաստատող փաստերից մեկը, թերևս, 1979 թ. նոյեմբերին Իրանի իշխանությունների արտահայտած մտադրությունն էր իրանա-ամերիկյան պայմանագրերը չեղյալ հայտարարելու մասին²⁷, ինչը առիթ տվեց պաշտոնական ԱՄՆ-ի դժգոհությանը: Խոնհյնու և Բազարգամի քաղաքային, անընդհատ խորացող առևակատույնը ասաջին փոքր հաջողությունից ռզևորված ամերիկյան դիվալար շրջանների համար ակնհայտ էին դարձնում իրենց սպասելիքների իրականացման անհնարինությունը, նոր քաղաքություններ ստեղծում վերջիններիս համար և մղում համարժեք գործողությունների: Պաշտոնական Վաշինգտոնն, օրինակ, այդպես էլ չկարողացավ զսպել կուտակված քաղաքական զգացումներն ու անտարբեր մնալ Իրանում մտրուտ իրավունքների ռոմանայրման քաղաքային կամպանիային, երբ շահի քաղմաթիվ կողմնակիցները կարճ ժամանակում դատապարտվեցին և մահապատժի ենթարկվեցին: 1979 թ. ապրիլի 12-ին Միացյալ Նահանգները Իրանի նախկին վարչապետ Ամիր Աբրահ Լոպեյրայի մահապատժի վաստը որակեց որպես արդարադատության միջազգային նորմերի կոպիտ խախտում²⁸: Իրանում շահի համախոհների զանգվածային մահապատժի հանգամանքը, ինչպես նաև հեղափոխական դատարանների գործունեությունն ընդհանրապես, դատապարտվում էին նաև Միացյալ Նահանգների Սենատի մայիսի 17-ի քանաձևում²⁹, որը զայրույթով ընդունվեց Խոնհյնու և նրա շրջապատի կողմից: Ի պատասխան՝ պաշտոնական Թեհրանը մույմիակ պահանջեց, որ Իրանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Սալիվենին փոխարինելու պատրաստվող Վ. Քաթլերը հետաձգի իր ժամանումը Թեհրան³⁰: Դա, փաստորեն, Իրանի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հավանական խզման ասաջին շուրջ նախանշանն էր:

Ամեն ինչ վկայում էր, որ անդառնալիորեն անցել էին այն ժամանակները, երբ Խոնհյնին, լավագույն կերպով գիտակցելով ԱՄՆ-ի դեկալար շրջանների դիրքորոշման կարևորությունը հոգևոր ընդդիմության հետևակարմերի առումով, պատրաստակամություն էր հայտնում նոր էջ քացել ԱՄՆ-ի հետ իր հարաբերություններում: Այժմ Խոնհյնին ԱՄՆ-ի քաղաքականությունը նվաճելու կարիքը չուներ, ավելին, քաղաքայնորեն պատեհ առիթ էր փնտրում նրա հետ վաղեմի կոնֆլիկտը սրելու համար: Ամմիջապես այդ նպատակն էր հետապնդում իրադարձությունների զարգացման որոշակի փուլում Խոնհյնու և նրա շրջապատի նախաձեռնությամբ՝ զանընկեց արված և Իրանից արտաքսված շահին Միացյալ Նահանգներ ընդունելու կամ չընդունելու հարցը Իրանի նկատմամբ

ԱՄՆ-ի քաղաքականության շափանիչ և վերջինիս դեմ նոր կրքեր բորբոքելու առիթ դարձնելը:

Հայտնի է, որ շահի ԱՄՆ մուտքի շուրջ խոսակցությունները նորություն չէին: Արդեն փետրվարի վերջերին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ներկայացուցիչը տեղեկացնում էր շահի ցանկության դեպքում նրան ընդունելու ԱՄՆ-ի ղեկավարության պատրաստակամությունը³¹: Առանձնապես կարևոր նշանակություն չվերագրելով այս հանգամանքին՝ նա միաժամանակ հավաստիացնում էր Իրանի Ժամանակավոր կառավարության նետ հարսերություններն ընդլայնելու ԱՄՆ-ի կայուն մտադրության մասին³²:

1979 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի կառավարությունը թնկերամուտ իր գործերի հավատարմատարի միջոցով տեղեկացրել էր Բազարգանին և արագորժնախարար Յազդինին, որ շահը ԱՄՆ մուտքի թույլտվություն է խնդրել՝ բուժման նպատակով³³: Արտահայտելով այն տեսակետը, որ Իրանի ժողովուրդը, հասկանալիորեն, չի կարողանա քաղաքականություն ցուցաբերել նման այցելության թույլտվության հանդեպ, Իրանի իշխանությունները, միաժամանակ, երաշխավորում էին Իրանում ամերիկյան դեսպանության և ամերիկյան հաստատությունների անվտանգությունը³⁴: Ավելորդ չէ հիշեցնել, որ դեռևս հունվարի սկզբներին, անդրադառնալով Իրանից շահի նեոսմալու հնարավոր նեոսնկարին, Խոմեյնին հայտարարել էր, որ ինքը որևէ թշնամանք չի տաժի այն պետությունների նկատմամբ, որոնք շահին քաղաքական ապաստան կտրամադրեն, չմոռանալով նաև ավելացնել, որ Իրանը մտադիր է նետապնդել շահին իրավական ճանապարհով³⁵:

Սակայն այժմ վիճակը փոխվել էր և այս պատեհ առիթը հաջողությամբ կարելի էր օգտագործել ԱՄՆ-ի դեմ: Այդ նպատակին էր ուղղված Յազդինի այն արտահայտությունը, որ եթե ԱՄՆ-ը ընդունի շահին, ապա դա կլինի ևս մի վկայություն այն բանի, որ Միացյալ Նահանգները չի ուզում և պատրաստ չէ անկեղծորեն փոխել իր քաղաքականությունն Իրանի նկատմամբ³⁶:

Երբ հոկտեմբերի 22-ին շահն, այնուամենայնիվ, Մեքսիկայից թռավ Նյու-Յորք, արագորժնախարար Յազդին շտապեց բողոք ներկայացնել Իրանում ԱՄՆ-ի գործերի հավատարմատարին³⁷: Եվ որքան էլ ԱՄՆ-ի ղեկավարությունը փորձում էր պնդել, որ շահի մուտքի թույլտվությունը դրդված է միմիայն մարդասիրական մղումներով³⁸, պաշտոնական Իրանն անդրադալել էր:

1979 թ. նոյեմբերի 1-ին Ալժիրի անկախության տարեդարձին նվիրված հանդիսություններին մասնակցելու առիթով այնտեղ գտնվող Բազարգանն ու Յազդին առանց Խոմեյնու գիտության հանդիպում ունեցան Ֆարուքի՝ անվտանգության հարցերով խորհրդակալան Զ. Բժեզինս-

կու հետ³⁹: Նրանց միջև կայացան պաշտոնական բանակցություններ, որոնք, ինչ-որ առումով կարելի էր գնահատել որպես «նաչափելու քաղաքականությունը» որդակլիություն հաջողորդ ակա: Երբ այդ բանակցությունների մասին լուրերը հայտնվեցին մամուլում, Ալժիրից մեք վերադարձած Բազարգանը, այս ամբամ արդեն Խոմեյնու դեղմամբ, մոյեմբերի 6-ին հրաժարական տվեց⁴⁰: Ընդամենը երկու օր ավելի վաղ՝ մոյեմբերի 4-ին, իրենց «իմամի կուրսի հետևորդ ուսանող – մանծեղականներ» անվանող մի խամբ երիտասարդներ, ի պատասխան շահի նկատմամբ ԱՄՆ-ի՝ Իրանի ժողովրդի համար անհանդուրժելի կեցվածքի, Խոմեյնու երահրմամբ գրոհեցին Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատոնը և պատանդ վերցրին նրա ողջ աշխատակազմին⁴¹: Չքարցնելով իր գոհունակությունը՝ Խոմեյնին կատարվածը գնահատեց որպես Լա մի հեղափոխություն⁴²:

Իրանա-ամերիկյան դիվանագիտական հարաբերություններն քնդհաավեցին:

Անկաակած, միջազգային արձագանք գտած այս արտատոց թվացող միջադեպն ողղակի հետևանք էր Իրանում քաղաքական բառն զարգացումների և ստեղծված մեք իրադրությանը համապատասխան Խոմեյնու և նրա շրջապատի մարտավարության անխուսափելի փոխոխության, ինչը և մի շարք այլ համգամամբների հետ միասին կանխորոշեց Իրանում Միացյալ Նահանգների քաղաքականության՝ որոնումներով ու հույսերով, ոգևորություններով ու հիասթափություններով լի այս փուլի վերջնական անհաջողությունը:

ANUSH STAMBOLCYAN

THE POLICY OF THE USA TOWARDS IRAN DURING MEHDI BAZARGAN

After the departure of Shah Mohammed Reza Pehlevi in January 16, 1979, due to the absolutely new situation in Iran, the main concern of the USA became to keep its former positions and influence here.

The author studies the circumstances of the process of the development of the USA policy towards Iran during the rulership of Mehdi Bazargan, peculiarities of its forms and methods, as well as those important factors which, in spite of continuous efforts of the USA, finally led to the failure of this policy.

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. The United States and Iran. A Documentary History, Maryland, 1980, p. 466.
2. "The New York Times", 17. I. 1979.

3. Սասնաձորարար, Ազգային անվտանգության գծով Զ. Քարտերի խորհրդական Զ. Բեզինսկին և նրա համախոհները կողմնակից էին չափի ընդդիմության նկատմամբ կոշտ գործողությունների, մինչդեռ պետքարտուղար Ս. Վենսն առաջարկում էր փոխզիջումների տարրերակց:
4. Stempel J., Inside the Iranian Revolution, Bloomington, 1981, p. 159.
5. The United States and Iran. A Documentary History, նշվ. աշխ., էջ 476:
6. Hoveyda F., The Fall of the Shah, L., 1980, p. 202.
7. Նույն տեղում, էջ 203:
8. Ուշագրավ է, որ խոմեյնու հետ համաձայնության գալու նպատակով նրա շրջապատի և հատկապես Բազարգանի հետ կապեր որոնելու զաղափարն առաջինը մտափոխեց էր Իրանում ԱՄՆ-ի դեսպան Վ. Սալլիվանը և արդեն իսկ, առանց դեռևս Վաշինգտոնի հետ համաձայնեցնելու, աշխատանքներ էր սկսել այդ ուղղությամբ: Սալլիվանի այդ ակտիվությունը չնվազեց նաև Բազարգանի կատավարման ողջ շրջանում:
9. "The New York Times", 11. I. 1979.
10. "The New York Times", 13. II. 1979.
11. Stempel J., նշվ. աշխ., էջ 183:
12. Sullivan W., Mission in Iran, N. Y., L., 1981, p. 257:
13. "Известия", 2. III. 1979.
14. "The New York Times", 13. II. 1979.
15. Stempel J., նշվ. աշխ., էջ 167:
16. Նույն տեղում, էջ 188:
17. "Wall Street Journal", 26. II. 1979.
18. «Երբեվա՛ր», 7. III. 1979 (պարսկ.):
19. «Քեյհան», 21. III. 1979 (պարսկ.):
20. Sullivan W., նշվ. աշխ., էջ 237:
21. "The New York Times", 7. V. 1979.
22. Иранская революция 1978—1979. Причины и уроки, М., 1989, с. 122.
23. "Washington Post", 27. II. 1979.
24. Heikal M., The Return of the Ayatollah: The Iranian Revolution from Mossadeg to Khomeini, L., 1981, p. 18. Ավելորդ չէ նշել, որ խորհրդային Միությունն էլ, իր հերթին, ելնելով Իրանում հետապնդած նպատակներից, այդ շրջանում ըստ ամենայնի զուլարանում էր խոմեյնուն նրա հակահմայերիախտական հայացքների համար և որոշակի հույսեր տածելով՝ չհապաղեց պաշտոնապես ճանաչել Իրանի նոր կառավարությանը:
25. «Երբեվա՛ր», 3. IV. 1979 (պարսկ.):
26. «Քեյհան», 7. III. 1979 (պարսկ.):
27. «Քեյհան», 10. X. 1979 (պարսկ.):
28. Grayson B., United State - Iranian Relations, W., 1981, p. 164.
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում:
31. "Известия", 23. II. 1979.

32. "Известия", 23. II. 1979.
33. Zaring L., Iran, Turkey, and Afghanistan. A Political Chronology, N. Y., 1981, p. 179.
34. Լույն տեղում:
35. "The New York Times", 9. I. 1979.
36. The New York Times", 3. V. 1979.
37. Heikal M., մշվ. աշխ., էջ 19:
38. Լույն տեղում:
39. Նեջաբի Ղ., Թարիխ-ե սիասի-ե բիսթ օ փանջ սալե-ե Իրան, Թեհրան, 1992, էջ 434 (սաբաթակ.):
40. Լույն տեղում:
41. Լույն տեղում, էջ 435:
42. Zabih S., Iran Since the Revolution, L., 1982, p. 54.

ԱԶԱՏ ԲՈՂՈՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԹՈՂՈՒԿՈՍՄԱՐԱՆԻ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (մախամոնղոլական շրջան)

Հայոց եկեղեցին մինչև ԺԲ դարը չափազանց կարճ ժամանակահատված էր կարողացել համազործակցել ազգային պետականության հետ: Եթե անդրադարձ կատարենք դեպի մեր ժողովրդի պատմության խորքերը, ապա կտեսնենք, որ Հայոց պետականությունն ուղեկցել է մեր եկեղեցուն ընդամենը երեք-չորս հարյուրամյակ: Միջնադարում նման ժամանակահատվածներից առաջինը Արշակունյաց տիրապետության դարաշրջանն էր (301-428), երկրորդը՝ Բագրատունիների իշխանության շրջանը (886-1045), երրորդը՝ Կիլիկիայի հայոց թագավորության կառավարման դարաշրջանը (1198-1375): Անկախության կորստյան տարիներին եկեղեցին մեծ ճիգերի գնով փորձել էր պահպանել ազգային կառույցների ամբողջականությունը, տեղական կառավարման համակարգի օղակների ամրապնդման մեջ տեսնելով ազգային նոր զարթոնքի առևանդության: Միաժամանակ, Հայոց եկեղեցին միշտ, երբ կործանված է եղել ազգային պետականությունը, փոխհարաբերությունների մեջ է մտել օտար տիրապետությունների՝ Բյուզանդական կայսրության, Սասանյան Պարսկաստանի, Արաբական խալիֆայի, սելջուկ-թյուրքերի պետական մեքենայի, եկեղեցական ու հոգևոր կառույցների հետ:

Հարկ է մշել, որ պետության և եկեղեցու փոխհարաբերությունները երբեք մասնագիտորեն չեն հետազոտվել հայ պատմագրության կողմից, այդ իսկ պատճառով նպատակ ենք դրել անդրադառնալ մեզ հետաքրքրող խնդրի սահմաններում պատմական որոշ օրինաչափությունների քննադատմանը և համակնություն չունենք սպառնչ կերպով լուսաբանել քարոզարկված հարցը իր ամբողջության մեջ: Հայոց եկեղեցու պատմության կիլիկյան շրջանի պատմությունը գրավիչ է նրանով, որ երկիրը գտնվելով միջերկրածովյան առևտրի և քաղաքական փոխհարաբերությունների ոլորտում, իրենից ներկայացնում էր մի քանի ասպարեզ, ուր վաղուց ի վեր գործունեություն էին ծավալել քյուզանդական¹,

հայկական և ասորական եկեղեցիները, լատին եկեղեցին տարածաշրջանում իր գործունեությունը սկսեց ծավալել Խաչակրաց աստօին ոսգմարչավներից հետո, ժԲ դարում²։ Այդքան բազմակողմանի և եկեղեցաբարդաբական իմաստով քեզուն գործունեություն Հայոց եկեղեցին իր պատմության որևէ շրջանում չի ծավալել։ Մի կողմից Բյուզանդական կայսրության ակտիվ միջամտությանը քայքայվում էր մինչև Բագրատունյաց բազմկողմության անկման ժամանակաշրջանը պահպանված Մեծ Հայքի քաղաքական կառուցվածքը, մյուս կողմից այդ տարածքներից դուրս՝ Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ձևավորվում էին հայկական քաղաքական նոր միավորումներ, որոնք փորձում էին իրենց տեղն ապահովել տարածաշրջանի քարտեզի վրա։

Բագրատունյաց Հայաստանի կործանմանով և Մելգուկ բյուրքերի Փոքր Ասիա ներխուժումով խախտվեց հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում։ ԺԱ դարի Բ կեսից Մեծ Հայքի կաթողիկոսարանը Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության շնորհիվ հայտնվեց Մեծ Հայքի ասիմաններից դուրս։ Բյուզանդական կայսրությունը չկայտղացավ պահպանել Փոքր Ասիան և Հայոց կաթողիկոսարանը գրեթե չար դար թունից ղեկերումների ճանապարհը։ Կաթողիկոսական արեզը սկզբում հայտնվեց Փոքր Հայքում, Կապադովկիայում, ապա՝ Կիլիկիային մերձակա Հյուսիսային Ասորիքում³։ Մելգուկյան ոսգմարչավներից հետո քաղաքական կյանքի անքարեմպատտ պայմաններ ստեղծվեցին նաև Մեծ Հայքի նախարարական տների և ոսգմական ուժերի պահպանման համար։ Հայկական բանակի հիմնական զինական օրկատները, որոնց ղեկա Բյուզանդական կայսրության վարած մվանդական արտաքին քաղաքականության հետևանքով հայտնվել էին Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում, Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո փորձեցին վերադասավորել իրենց ուժերը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում։

ԺԱ դարի 70-ական թթ., Փոքր Ասիայի արևելյան շրջաններից Բյուզանդական կայսրության հեռանալուց հետո, առանձին հայկական իշխանություններ հայտարարեցին իրենց անկախության մասին։ Այդ պետություններից ամենահզորը Փիլարտոս Վարաժժունու ստեղծած իշխանապետությունն էր։ Մյս համակարգի և եկեղեցու վոխաարարությունները քավական սուր պայքարի տեսք ստացան Փիլարտոսի կատավարման տարիներին։ Մանավանդ, որ Հայաստանի մեծագույն մասը այս դարաշրջանում գտնվում էր սելջուկ բյուրքերի իշխանության ներքո։ Ժամանակի իշխանություններից ամենահզորը՝ Փիլարտոս Վարաժժունու ստեղծած պետությունն ամեն կերպ պայքարում էր սելիական իշխանության տարածքում ունենալ Հայոց կաթողիկոսարանը։ Մյաժամանակ Փիլարտոսը բեպետ «ժայռնեծոց և մայրնեծոց հայ էջ» և «ի տղայու-

քեանն կացեալ առ հօրեղբայր իւր ի վանքն՝ որ կոչի Ջօրվրի-Կոզեռն՝ ի Հարան-Մարտ գառաօինն», սակայն «զի էր սա անհաւատ քրիստոնայ, ոչ Հայ գիտելով զնա և ոչ Հոռոմ՝ վարքն և կրօնքն զՀոռոմոցն ունէր»⁴։ Իշխանապետութեանը ամբասանդելու մտահոգութեամբ Փիլարտոսը դաժանորեն էր վարվում շրջակայքի հայկական իշխանութեանների հետ⁵։ Հայոց եկեղեցին կանգնել էր երկրամասերի առջև. մի կողմից հալածված էր Բյուզանդական կայսրության կողմից, մյուս կողմից՝ եկեղեցին չէր կարող համոզուիլ իր ենթակայությունը որևէ առանձին՝ տեղական հայկական իշխանության, որը դեռևս ձեռք չէր քերել համահայկական նշանակություն։ Նման քայլը կարող էր ջլատել ազգային միասնությունը։ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը երկարատև ընդդիմությունից հետո, զիջում կատարեց Փիլարտոս Վարաժնունուն և թույլ տվեց Հոնիուս կաթողիկոս ձեռնադրել⁶։ Առաջին զիջումն իր ետևից դուռ բացեց նորանոր զիջումների համար⁷։ Իր իշխանութեանը այս ճանապարհով ամբասանդելու Փիլարտոսի ցանցերը ապարդյուն անցան։ Հայոց ՇԱԽԷ՝ (~1086/7 թ.⁸ 1088/9) քվակաճին սեփական տիրույթները փրկելու վերջին փորձը կատարեց Փիլարտոսը, մեկ անգամ արդեն դավանանքը փոխած (ուճադավանություն ընդունած) բռնապետը ներկայանալով Մոլիք Շահ սուլթանին, ընդունեց մահմադականություն։ Ուրացությունը, սակայն, ոչնչով քարելավեց մյս վիճակը, իսկ պատմությունը մյուսյն նախատինք խախտեց նրա ճակատին⁹։

Արդեն ԺԱ դարի վերջին Մ. Օրմանյանը հայկական օյլումենում¹⁰ առանձնացնում է վեց կաթողիկոսական աթոռ (Ամենայն Հայոց կաթողիկոսարանը Կարմիր վանքում, աթոռակից Բարսեղ Ա-ը՝ Անիում, Թեոդորոսը՝ Հոնիում, Պեղոսը՝ Մաշաշում, Գեորգը՝ Տարսնում, Գրիգորիս-Վահրամը՝ Եզնիստում)¹¹։ Եթե այս ամուններին ավելացնենք նաև Աղվանից կաթողիկոսությունը, կունենանք Հայոց եկեղեցու մվիթապետական բարձրագույն աթոռների լիակատար ցանկը ԺԱ դարի վերջին¹²։ Պիտի նշենք, որ նրանցից յուրաքանչյուրը գտնվում էր առանձին, երբեմն միմյանց հակամետ քաղաքական միավորման տարածքում։

Կաթողիկոսական իշխանության այս մասնատումը չէր կարող բավարարել Հայոց եկեղեցու պաշտոնեությանը և Մերձավոր Արևելքի տարբեր անկյուններում հաստատված ազգային կառույցներին ու իշխանություններին, քանի որ հիշատակված կաթողիկոսական աթոռների մեծ մասը քաղաքական վայրիվերումների հետևանքով կորցնելով հեղինակությունը, դարձել էին ինքնանպատակ կառույցներ և չէին կարողանում իրենց իշխանության սահմաններում ծառայել ոչ տեղական ազգաբնակչության խնդիրների լուծման, ոչ էլ համազգային շահերի պաշտպանության գործին։ Հարբատում աթոռակից կաթողիկոս ընտրված Բարսեղ Անեցին, իր ողջ հեղինակությունն ուղղեց հայկական տարբեր

իշխանությունների կազմում գործունեություն ծավալած, սակայն արդեն հեղինակազդեկված կաթողիկոսական արժանների իշխանության դադարեցմանը: Նկատելի էր, որ տարբեր արժանների բաժանումը պատակաբար էր առանց այն էլ քաղաքական հողի վրա միմյանց թշնամի դարձած հայկական իշխանությունների ազգաբնակչությանը, բարեմայատ սբայմաններ էր ստեղծում երկփեղկելու ժողովրդի միասնականությունը: Գործընթաց, որը չէր կարող վրիպել ժամանակի հողեր և քաղաքական գործիչների ուշադրությունից: Սուաջին իսկ հայացքից տեսանելի էր, որ տարածաշրջանի ամենահզոր ուժը, որի տիրապետության տակ էր ժԱ դարի Բ կեսին հայկական իշխանությունների մեծամասնությունը, Մեծ Մեղրուկների իշխանությունն էր Մելիք Ծառի գլխավորությամբ: Բարսեղ Ա-նեցին կարողացավ հմուտ դիվանագիտության շնորհիվ 1090/1 թ. (—ՇԼԾ) հրավարտակ ստանալ Մելիք Ծառից, որով. «ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայսն և զքանանայսն. առեալ զիր ազատութեան, և երովարտակօք և մեծարանօք արձակեաց զհայրապետն Հայոց»¹²: Այդ վավերագրով Բարսեղ արժանից կաթողիկոսը կարողացավ արգելել Հոմիի կաթողիկոսարանի գործունեությունը¹³:

Այս գործադրությունները քարճրացրեցին Բարսեղ Ա-ի հեղինակությունը, որի որդեգրած քաղաքականությունը աչքս անընդունելի էր համարում որևէ առանձին հայկական իշխանության հովանավորությունը Հայոց կաթողիկոսարանի վրա և փորձում էր մի գաղափարի շուրջ միավորել հայկական մասնատված իշխանությունները, քարճրացնել Մայր Աթոռի հեղինակությունը: Այս քաղաքականությունն իր իմնական գծերով ժառանգեցին Գրիգոր Գ և Ներսես Դ կաթողիկոսները, որոնք ավելի հեռու գնացին, Հայոց կաթողիկոսական արժանի հաստատելով մուսուլմանական պետությանը ենթակա տարածքում¹⁴:

Եվրասյան գավառի ամառիկ ամրոց Հոմեկայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը ժԲ դարի 50-ական թվականներից Հաղխի արարելությանը ստորակա առանձին քաղաքական միավոր էր, տիրում էր կաթողիկոսանիստ քեդրաքաղաքին ու նրա շրջակայքին: Երբեմն, Շոթրմաի կաթողիկոսը զան էր բարձրանում իր գերակա Հաղխի արարելության միջնորդությամբ¹⁵, որը հզորագույնն էր ժամանակի սելջուկյան պետությունների մեջ: Այս համագամայրը չէր խանգարում, որ ժԲ դարի 60–70-ական թթ. Հայոց եկեղեցին փորձեր մտնել եկեղեցական հարաբերությունների միջազգային ոլորտ: Նման կեցվածքը, բայց էր տալիս Հայոց կաթողիկոսարանին իր շուրջն համախմբել տարբեր պետական միավորներին ստորակա հայկական իշխանությունները և քնօրրանից դուրս հաստատված, դեռևս ազգային կառույցներ չստեղծած եկեղեցական համայնքները:

Չնայած ժամանակի միջազգային քաղաքական կյանքում ստորակայական իր կարգավիճակին, Հայոց կաթողիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր, այն փաստորեն պետություն էր պետականութունը կորցրած ժողովրդի համար: Նրա իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ այն տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա. «...որը յարևելս՝ ի սեփական կողմանող սահնալը մշտնափութամբ, և որք ի Միջերկրայս...»¹⁶: Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում, Մեծ Հայքում և աղուր իշխանության հասած բոլոր հայկական իշխանական տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում, միմյանց դեմ կռվող հայ իշխանների միջև բորբոքված, երկպառակտչական պատերազմները դադարեցնելու մտահոգությամբ: Հռոմկլայի իշխան Հայոց կաթողիկոսը գերագան դիրք ուներ բոլոր հայկական իշխանությունների նկատմամբ: ԺԲ դարի Բ կեսին Հայոց կաթողիկոսարանն այնքան հզոր էր իրեն զգում տարածաշրջանում, որ հայ եզերակառնության մի թևը, որին առաջնորդում էր Ներսես Լամբրոնացին առաջարկում էր Բյուզանդական կայսրությանը ճանաչել իրեն իբրև Ամախոթի պատրիարքություն և Հայոց եկեղեցուն հանձնել այդ Տիեզերական աթոռի իրավասությունները¹⁷: Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանը Ամախոթի պատրիարքություն վերանվանելու այս ծրագրային դրույթը, որը ԺԲ դարի սկզբին ստացավ նաև քաղաքական երանգավորում, ԺԳ դարում ևս մի քանի անգամ վերաբծարժվեց վավերագրելու¹⁸, սակայն Կիլիկիայի հայկական պետության կործանումից հետո ամբողջովին դուրս մղվեց շրջանառությունից:

Կաթողիկոսական իշխանության գերագահության դրույթը Հայոց եկեղեցու գործիչներին թույլ էր տալիս համոզես զալ ողջ ժողովրդի անունից, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի ինքնուրույն, մշակութային և քաղաքական ճգնաժամները:

Այս վիճակը սակայն երկար չէր կարող ձգվել, քանի որ Կիլիկիայում հետզհետե հզորանում էր Ռուրիմյան հայկական իշխանությունը, որն էլ իր հերթին էր փայլաբայում Հայոց պետականությունը վերականգնելու և ժողովրդին սեփական դրոշի տակ միավորելու երազները: Ստացվեց այնպես, որ Լևոն Ա Ռուրիմյանի¹⁹ իշխանապետության և ապա քաղաքության տարիներին, Կիլիկիայի հայկական պետությունը փորձեց կաթողիկոսարանին պարտադրել իր իշխանությունը: Այդ պայքարը քավական երկար տևեց, ունեցավ հաճախ սուր դրսևորումներ: Երե նկատի ունենանք Սմբատ պատմիչի և ասորի սրատնագիր Միքայել Ասորի պատրիարքի տեղեկությունները, այդ պայքարի առաջին զոհ պիտի նամարել Գրիգոր Դ Տղային²⁰: Շուտով քանտում սպանվեց նաև Գրիգոր Ե

Քարավեժը²¹: Կաթողիկոսարանի և Ռուսիայի պետության միջև հաջորդ ամմիջակամ բախումը տեղի ունեցավ 1203 թ., Լևոն այբայի թեկնածու, հեթոմյան իշխանական տան ներկայացուցիչ Հովհաննես Չ կաթողիկոսի գահակալության սկզբում: Մյուս թեկնածուն՝ Սեբաստիայի եպիսկոպոս Անանիան, կարողացել էր իր կողմը գրավել Հռոմկլայի եղևուրակամությանն ու պահակազորը: Այս ընտրության մասին Սեբաստի պատմության համառոտ տարբերակն ասում է. «...ժողովեաց թագաւորն Լեւոն շատ եպիսկոպոս, եւ եղիք կաթողիկոս զտէր Յովհաննէս՝ Մոյ եպիսկոպոսն»²²: Կիբակոս Գամձակեցիի քաղական մանրամասներ է պատմում իրավիճակի մասին, գրելով. «...սկսան մախտոյն Գրիգորիսի (Չ Ապիլատ-Ա. Բ.) զմիմեանքք ելանել, թէ ո՞նց տեսի յարտն հայրապետական...», սակայն Հովհաննես Սեպեցիի հարցում է այդ պայքարում և քազմում կաթողիկոսական գահի վրա. «գի ընտանի էր թագաւորին Լեւոնի, բոնացաւ եւ կարաւ» արտը²³: Անանիա Սեբաստացու հավակնությունները դրանից հետո արտահայտվեցին կաթողիկոսական իշխանությանը մասնատելու քայլով²⁴: Ընդատարելով Իկոնիայի սուլթանության տիրակալ Ռալկն աղ-Դին Մուլեյման Բ-ի (1197-1204/5 թ.) ձգտումներին, Անանիան. «...չոգաւ առ սուլտանն՝ զոր Հռոմոց կոչեն, և ետ սնա կաշառս...»²⁵, Սեբաստիայի Ս. Նշան վանքում 1202/3-1203/4 թ. հիմնադրելով հակաթոռ կաթողիկոսություն: Իհարկե այս քայլն աստիճանագրեց հայկական կղերի դեմադրությունը, որը շրջանցելով Իկոնիայի սուլթաններն իրենց տարածքում հովանավորեցին նոր կաթողիկոսական աթոռի հիմնադրումը, Անանիա կաթողիկոսի գլխավորությամբ: Մ. Օրմանյանը արդարև նկատել է այդ քայլի քաղաքական նոնախույզը. «...սուլտանին նայատակ Հայերը, Հայոց թագաւորի ազդեցութենէն կը հեռացուէին»²⁶: Բարձրախտարար այս ընթացքը, որով Հայոց եկեղեցին քաժանվել էր չորս աթոռների, զարգացում չապրեց և 1228 թ., Անանիայի մահից հետո, այս հակաթոռ կաթողիկոսությունը վերացավ²⁷:

Հետաքրքիր է նաև, որ Սեբաստիայի կաթողիկոսության եռյակման տալում սրվում են փոխհարաբեղությունները Կիլիկիայի հայկական թագավորության և Հռոմկլայի կաթողիկոսարանի միջև²⁸, կատարվում է մի ինքնատիպ պալատական հեղաշրջում, թագավորը ձերբակալում է բյուզանդամետ հետևյալ իշխաններին. «...զՍեբաստան Հեռի որդւովքն, և գիւումարտիւսն զԳեօշիմն և զՊալտիմն...»²⁹: Լևոն Ա-ը Հովհաննես Չ-ին երկու տարով հեռացրեց կաթողիկոսական իշխանությունից, մրա տեղը դնելով Դավիթ Արքակաղնեցուն³⁰: Կիլիկիայի պատմիչը այս առիթով գրում է. «Եւ Հեռի Ռոքրեղի և Կոմատիասի տերը-Ա. Բ.) փեռայ էր Յոհաննիս կաթողիկոսին Հայոց. և յայտնամէ եղև խառվութիւն ընդ թագաւորն Հայոց և ընդ կաթողիկոսն տէր Յոհաննէս, և այնքան մեծացաւ ատելութիւնն ի մէջ նոցա՝ մինչ զի ի քաց մերժեաց զմա թագա-

տրն և առաջնորդն և իշխանքն Կիլիկեացոց, և եղին հսկատակ մնա զարքեսպիսկութուն Մսայ և առաջնորդ Արքակաղնոյն զսէր Դատիք կաթողիկոս Հայոց...»³¹:

Լոն թագավորի իշխանութեան վերջին տարիներին կիլիկեան պետության մեջ Հայոց կաթողիկոսարանի դիրքի մասին հետաքրքիր վկայություններ է պահպանել Վիլհելմոս Օլդենբուրգցին, որն իր ճանապարհորդության մեջ մկարագրում է 1212 թ. հունվարի 6-ի տոնակատարությունը, հաղորդելով, որ այդ արարողությանը մասնակցում էին Կիլիկիայի տարածքում գտնվող բոլոր քաղաքները և նկղեցիների առաջնորդները, որոնց առջևից ընթանում էր Հայոց կաթողիկոսը³²:

Մոնղոլական ռազմարշավներից հետո Հայոց կաթողիկոսարանը հայտնվեց Կիլիկիայի պետական տարածքներում և ավելի հիմնավոր դարձավ Կիլիկիայի իշխողների «Հայոց թագավոր» տիտղոսը: Կիլիկիայի Հայոց թագավորները Հռոմկլայի կաթողիկոսարանի դեմ պայքարում կաթողագան օգտագործել թաթարական տիրապետության հաստատումը տարածաշրջանում և իրենց իշխանության տակ առան Հայոց եկեղեցու բարձրագույն իշխանությունը:

AZAT BOZOYAN

LES RELATIONS ENTRE L'ÉTAT ET LE CATHOLICOSAT EN ARMÉNIE CILICIENNE (Période pré-mongol)

Les relations entre l'église et l'état n'ont jamais été spécialement étudiés par l'historiographie arménienne. L'auteur suit pas à pas l'histoire de l'église arménienne de XIe à XIIIe siècles et montre le rôle de l'état dans ces relations.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կիլիկիայի տարածքը իր թեմական կառուցվածքով հնուց ի վեր մտել է Անտիոքի պատրիարքական արքեպիսկոպոստի սահմանների մեջ:
2. Կաթոլիկ եկեղեցու դերը Հյուսիսային Ասորիքում տարածաշրջանում և հատկապես Անտիոքի տարածաշրջանում լատին եկեղեցու խաղացած դերը ԺԱ-ԺԳ դդ. վերլուծության է ենթարկել Կ. Կահենը (Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté Franque d'Antioche*, Paris 1940, p. 308-326, 660-687): Արևելքում լատին միսսիոներության ստանձնած դերը քննարկում է Ժամ Ռեչարը (J. Rechart, *La papauté et les missions d'Orient au Moyen Age (XIIIe-XVe siècle)*, Rome 1998, p. 1-61):
3. Հայոց կաթողիկոսարանը Պետրոս Ա Գետադարձի իշխանության տարիներին հայտնվեց Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայում (տե՛ս Մ. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, սյուն 1245), իսկ հետագայում սկսեց դեգրեիվ Կապադոկիայի, Կիլիկիայի, Հյուսիսային Ասորիքի

- տարբեր քննակալացիքում (տե՛ս Մ. Օրճանեան, նշվ. աշխ., հտ Ա, սյուն 1263, 1278, 1296, 1311, 1326, 1355, 1374):
4. Մատթնու Ուռնայեցի, Ժամանակագրորին, Վարդաբապատ, 1898, էջ 206 (այստեղից՝ Մատթնու):
 5. ՀՆԱ-ՀՆԲ (1072-1074) քվականների ընթացքում Փիլարտոսը հաշվեհարդար տեսով Գրիգոր Բ Պահլավունու փեսայի՝ Մատթնի իշխան Թունիկ Մամիկոնյանի (ոմնու. Մատթնու, էջ 206-209), 1075/6 թ.՝ Անտիոքի դուքս Վասակ Պանդալունու (Մատթնու, էջ 213-214), 1082/3 թ. Եղեռնայի իշխաններ Սմբատի, Իշխանի, Արցունի և Թոթորիկի (Մատթնու, էջ 222-224), 1086/7 թ. Ուռնայի հունադավան իշխան Պատակամանոսի հետ (Մատթնու, էջ 233): Պատակամանոսի ինքնուրույնը պարզված չէ: Կարելի է ենթադրել, որ Ուռնայեցին ավանդել է այդ իշխանի բյուզանդական կայսրության կողմից տրված պարսկեմոմենս (սենեկապետ) պաշտոնի անունը (ոմնու. Մատթնու Ուռնայեցի, Ժամանակագրություն, Երևան 1973, էջ 333, ծան. 135):
 6. Ինչպես պատճառ է Մատթնու Ուռնայեցին, զիջումը կատարվել է Թունիկ Մամիկոնյանի սպանությունից անմիջապես հետո, հալանարար 1073/4 թ. այդ ժամանակվա կաթողիկոսական նստավայր Հոնիում (Ջահան գավառ) հայրապետական գահին բազմեց Պետրոս Գեոսապարծի քրոջ որդի Տեր Սարգիսը (Մատթնու, էջ 210): Սակայն այս իրադարձությունից հետո Գրիգոր Վկայատեղը կատարում է պատասխան քայլ և, զենքով Անի ժայռաքարաք, նպիսկայրս է ձեռնադրում սեփական քրոջ դուրս՝ Թարսիդին, Վասակ Ապիրատյանի տղային (Մատթնու, էջ 211), որը քիչ անց, Ստեփանու Աղոսանից կաթողիկոսի կողմից ստանում է նաև կաթողիկոսական ձեռնադրություն (Մատթնու, էջ 221): Այս ցնորությունը թույլ է տալիս ենթադրել, որ հայկական իշխանական տները պատկանում էին տարբեր խմբավորումների: Նրանցից մեկը Փիլարտոս Վարաժնունու ղեկավարությամբ, Հայոց պետականության ապագան տեսնում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս, մյուսը՝ Պահլավունի իշխանագոմնների գլխավորությամբ դեռևս իրեն հզոր էր զգում Անիում և փորձում էր հայոց աշխարհիկ և եղևոր իշխանության կենտրոնները վերադարձնել Բագրատունիների նախկին ժայռաքարաք: Գրիգոր Բ Վկայատեղ Պահլավունին նրկորդ խմբավորման կողմնակից էր, սակայն քաղաքական պայմանները թույլ չափեցին կաթողիկոսարանի տեղափոխությունը Անի: Այս գաղափարը ԺԲ դարի ստաթին կեսին փայփայում էր նաև Գրիգոր Գ կաթողիկոսը (Մամուկ բախանայի Անեցու Հատարմունց ի գրոջ պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ յառաջադամով համեմատությամբ, յակնատմով եւ ժամօթութիւններով Աղբակ Տեր-Միքելեանի, Վարդաբապատ 1893, էջ 127):
 7. Հայոց ՀԼԳ (-1085/6) թ. «ամ Պօլջուտան» ամիրս Ջահանի գավառը խնց Փիլարտոսից: Այս իրադարձությունից հետո Հոնիում նստող Թեոդորոս կաթողիկոսը, որը փոխարինել էր Տ. Սարգսին, հայտնվեց բյուզ-սիլքուկյան տիրապետության մերքո: Փիլարտոսը փորձեց կաթողիկոսական աթոռը կրկին վերադարձնել իրեն պատկանող տարածք, սակայն՝ ապարդյուն: Այս իրադարձությունից դուրս գալու լավագույն նպ համարելով նոր կաթողիկո-

- սի ձեռնադրությունը, Մարաշում հրավիրվեց նախկապուսական ժողով, որն այդ քաղաքի համար հայրապետ ջնտրեց Վարազի Մ. Նշան վանքի վանահայր Պողոսին (Մատթեոս, էջ 228): Բարեբախտաբար, վերջինս շտառվ էրաժառոցեց կաթողիկոսական գահից, սակայն ըստ պատմիչի վկայության շարունակում էր ձեռնադրել նախկապուսակներ, օրինել սրբալույս մեռն (Մատթեոս, էջ 229-230):
8. Մատթեոս, էջ 234:
 9. Հայկական օշկոմենն ենք կոչում հայերով քնակեցված բոլոր այն տարածքները, ուր կային քաղաքական իշխանություններ կամ առեղծվել էին եկեղեցուն ենթակա ազգային ենթակառույցներ:
 10. Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ. սյուն 1311-1313:
 11. ԺԲ դարի սկզբին (1113 թ.) Ամննայն Հայոց կաթողիկոսարանից անջատվեց մահ Աղթամարի արտոլ (ՅՈՒՄ. Մ. Օրմանեան, նշվ. աշխ., սյուն 1351-1355):
 12. Մատթեոս, էջ 240:
 13. Մատթեոս, էջ 240:
 14. Տե՛ս Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 219-220:
 15. Հայնախ արարեկությանը ստորակա լինելու փաստը արձանագրված է 1165-1178 թթ. եկեղեցական բանակցություններում, երբ 1178 թ. Հռոմկլայի Ա ժողովի համար զբված փաստաթղթում Բյուզանդական կայսրության պահանջը կենսազործելու անհնարինության մասին ասված է. «...ծուսայ զոլով այլ ազգաց ըստ մեղաց մեր, և ընդ իշխանութեամբ մեզին քնակեալ զհա՞րդ հնար է ձգտել առ քազատք հոռոմոց, և առաջարկութուն կարօւղիկոսի պահանջել, Երամի՛, երբ էր հնարք (տե՛ս Պալմեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս ևս միտրեան մեցա ընդ հոռոմեական եկեղեցոյ ի Փղորմեսեան սիմեոնոսի, Վիեննա, էջ 266): Նշված դարաշրջանում Հայոց կաթողիկոսարանի ենթակայությունը ժուստրմանական տերությանը արձանագրում են մահ ԺԲ դարավերջի հակոբիկ ասորիների պատրիարք Միքայիլ Ասորիին (*Chronique de Michel le Syrien patriarche Jacobite d'Antioche (1166-1199) / Éditée par la première fois et traduite en français par J. -B. Chabot, t. III, p. 353-354* [այսուհետև՝ *M. S., t. III*]; հմտ. Միխայիլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 471-472; Երուսղէմ, 1871, էջ 472 [այսուհետև՝ *Մ. Ա.]*) և ԺԳ դարի սկզբի արար պատմիչ Յակոստ ալ-Համալին (տե՛ս Արարական արդյունքները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 100):
 16. Ընդհանրական բոլորը Մքթոյն Ներսիսի Ընդհանրայն, Երուսաղէմ, 1871, էջ 1:
 17. Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երևան, 1995, էջ 202-205:
 18. Օրմանեան, հո. Ա, սյուն 1554-1555, 1585-1587, 1590-1591, հո. Բ, սյուն 1614-1616:
 19. Ռորինյան իշխան Ասոմ Բ-ը 1198 թ. ձեռնադրվելով Հայոց քազալոր, փոխեց իր կարգավիճակը: Այդ է պատմառը, որ այդ իրադարձությունից հետո,

քն՝ միջնադարյան ժամանակագրություններում, քն՝ միտոյա պատմագրական երկերում նրան անվանում են Լևոն Ա: Այն մասնագետները, որոնք բազաղությունից ենուտ էլ շարունակում են նրան կոչել Լևոն Բ, հաշվի չեն առնում կարգավիճակի այս փոփոխությունը:

20. Պետի ենթադրել, որ Գրիգոր Դ-ի կաթողիկոսության շրջանում փոխաձայնագրածկերայան մրնողրու է տիրել Ռուբինյան իշխանապետության և Լուովյայի Հայոց կաթողիկոսության միջև: Հռոմկամչական, որ 1189 թ. Լևոնը Սասունից Կիլիկիա էր քերել Գրիգոր Դ-ի քրոջ և Չղտավանի Մանիկոնյանի որդիներ Հեթումին ու Ըահնյահին, ամուսնացնելով նրանց իր երբայր Ռուբենի ավագ դստրեցի ենու է ի կաուսվարություն համմնելով մեկին Մեխ, մյուսին՝ Սելևկիա քերայքադաքմերը: Այս ամուսնությունները հավանարար փոխադրում էին Անտիոքի իշխանապետեր հեու Լևոն Ռուբինյանի ամուսնության, որը տեղի էր ունեցել հենց ոույն թվականին (ոմմու. Տարեգիրք արարնալ Սմբատայ Սպարապետի Հայոց, Փարիզ, 1859, էջ 105-106): Ըսու Սմբատի համաուու տարքերակի այս իրադաքմություններից երեք ամիս անց, մայիսի 16-ին Գրիգոր Դ Տղամ մահացել է և թաղվել Դրազարեում: Պատմիչն ապա ավելացնում է. «Մուսան ու մեծ իշխանքմ՝ քոյրերդիքմ կաթողիկոսին, պաքում Հերում և պաքում Ըահնյահն, ի տեղ ամիս՝ քեռնն ու քոյրերդիքմ: Եր գոր լուար վասն մատուան չկարեն սաու գրել զի տեհն թէ պարոն Լուոն եղև պատմաու. այլ ճշմարիտու Աուուուս գիտե» (Սմբատ, նշվ. երաու., էջ 106): Իմազիկն Սմբատի թնագրում պիտի անիրաժեշու ուղղում կատարել, երեք ամիսը պետք է սրթագրել երեք տարի թաուսկապակցությանը: Պատմագրանի այքից չպետք է վրիպի մակ այն հանգամանքը, որ Գրիգոր Տղամ թաղվել է Լուովյայից ենու՝ Դրազարեում: Այս հանգամանքը թույլ է կալիս ենթադրել, որ Գրիգոր Դ Տղամ իր կյանքի մայրամուտին եղել է Լևոն իշխանի պաուսուողը: Թավական ենուարքիր է մակ այն փասուղը, որ դիմասուրիական ամուսնություններին մեծ նշանակություն տվող Լևոն Ռուբինյանը Հերումի այքում ամուսնացնում է Բոհենուող եր Անտիոքացու որդի Ռայմունդի հեու: Այս ամուսնությունից է ծնվում Ռուբին-Ռայմունդը, որն ըսու պայմամավորվածության պիտի ժաուսակեք Ամուիորի և Կիլիկիայի միացյալ պետության գաեք (Օրմամեան, հռ. Ա, սյ ոմ 1500):
21. Գրիգոր Քաքայեմիմն սպանելու մեղադրանք Լևոն Ա-ին ներկայացնում է Ներսես Լուովյանցին, «աու Լևոն քոքում»:
22. Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ 1859, էջ 114:
23. Հմմու. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխ. Կ. Ա. Մեկիք-Օհանջանյանի, եր. 1961, էջ 148-149: Հմմու. Մ. Օրմամեան, Ազգապաուում, Կ. Պոլիս, 1912, հռ. Ա, էջ 1555:
24. Հայ պատմիչները վկայում են, որ Անանյան սերում էր Պետրոս Ա Գնուսդարձի տեհնից, որն ի դեպ 1058 թ. մահացել էր. Սեբասուիայում: Համնույն դեպս այդ հանգամանքը չեղաուում են և՛ Կիլիկիաց (էջ 149), և՛ Սմբաողը (Վենետիկ, էջ 70): Դա վկայում է այն մասին, թէ ինչյան էին կարևորում ժամանակակիցները ազգակցական կաղեքը: Կարևոր էր մակ այն հանգամանքը, որ ժՄ դարում, Փոքր Հայքի այս մայրաքաղաքում էին պաուսպարել մակ Արծրունի պայազաուները (ոմմու. H. Berberian, Le patriarchat

Arménien du sultanat de Roum. L'anti-catholicoz Anania. — dans Revue des Études Arméniennes, n. s., t. III, p. 236):

25. Կիրակոս, էջ 149, հմմտ. Մ. Օրմանեան, Ազգապատմմ, հտ. Ա, էջ 1563, H. Berbérian, p. 233–243:
26. Մ. Օրմանեան, Ազգապատմմ, հտ. Ա, էջ 1563:
27. H. Berbérian, Le patriarcat Arménien du sultanat de Roum, REA, n. s., t. III, p. 236–239.
28. Մ. Օրմանյանը, հետևելով Դ. Ալիչանին, հակամարտության պատճառ է համարում հիշատակված իշխաններին ազատելու կաթողիկոսի միջնորդությունը, քանի որ ձերբակալվածները հայրապետի քրոջ անույնի ու որդիներն էին (հմմտ. Մ. Օրմանեան, էջ 1567–8):
29. Ըստ Միգայի Ասորու, ԼԼժճ 1193 թ. գրեթե նույն վաղբազիծը զրուտնց, քաղաքական ասպարեզից հեռացնելով Գրիգոր Դ Տղային և նրա ազգականներին (տե՛ս վերևում):
30. Մ. Օրմանյանը այս կաթողիկոսին չի հիշատակում Գրիգոր Լուսավորչի օրինական գահակալների ցամախում (հմմտ. հտ. Ա, էջ 1568–70):
31. Սմբատ, 1956, էջ 215:
32. P. Halfter, Die Beschreibung des armenischen Königreiches Kilikien durch den hildescheimer Domherren Wilbrand von Oldenburg. —Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, էջ. 2000, էջ 406:

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ՈՒՍՈՒՇԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԸ

(պատմա-համեմատական վերլուծություն)

Ուրարտական պետության ուսումնա-քաղաքական պատմության կարևորագույն դրվագներից է ուրարտա-ասորեստանյան հակամարտության բարձրակետ դիտվող, ասորեստանյան արքա Սարգոն II-ի կողմից մ. թ. ա. 714 թ. ձեռնարկված արշավանքը դեպի Ուրարտու: Պատմագրության մեջ այն հայտնի է Սարգոնի «VIII տարվա արշավանք» անվամբ: Դրա մանրամասն նկարագրությունը մեզ է հասել Աշշուր աստծուն առղված զեկույցի տեսքով՝ արքունի մեծ դպիր Նարուշալիմ-շուռուի հեղինակությամբ¹:

Արշավանքի կարևորագույն դրվագներից է հակառակորդ բանակների բախտորոշ հանդիպումը յուրահատուկ մարտավայրի վերածված Ուսուշ լեռան փեղեբին: Ուսուշի ճակատամարտը հայտնի է իր շքադարձային նշանակությամբ՝ ինչպես արշավանքի հետագա ընթացքի, այնպես էլ երկու տերությունների համար, այն մեծապես պայմանավորեց մյուսը անցմելիք պատմության հետագա ուղին:

Ասորեստանյան արքայը պահպանել է ճակատամարտի դրվագների սուղ նկարագրություն՝ շարախված ասորեստանյան արքայի, մյուս տերության և աստվածների հզորությունը փատարանող զանազան պատկերավոր արտահայտություններով: Այնուամենայնիվ, դա բավարար է համարվել առաջարկելու ճակատամարտի մի քանի վերակազմություններ: Նման փորձ են կատարել Հ. Ու. Ֆ. Մագրը, Կ. Լ. Հովհաննիսյանը, ճակատամարտի ընթացքի երկու վերակազմություն է առաջարկել Ջ. Բ. Սմիթը²:

Ուսուշը, մեր համոզմամբ, չի պատկանում ճակատամարտերի այն շարքին, որոնց ելքը վճռում էր այս կամ այն կողմի քվական գերազանցությունը, ուսումնական առավել կազմակերպվածությունը, զինվածությունն ու զինվորների քաջությունը: Մարտի ելքը վճռել է այն վարելու հմտությունը, պարտադրված տեղանքը հակառակորդի դեմ օգտագործելու կարողությունը: Այս առումով Ուսուշը հանդիսանում է ասորեստանցիների փայլուն իրագործած ուսումնական գործողություն:

Ասորեստանյան բանակը.

Մասնագիտական զբաղանքայան մեջ որդակիորեն լուսարան-ված են ասորեստանյան բանակին, նրա զինատեսակներին, կազմավորմանը, զինվածությանը, սեպագիր աղբյուրներից նայանի ռազմական տերմինների տառագրամությանն ու մասնատեպ հարցերի վերաբերող ոլորտներ⁷: Մեր խնդիրը չէ դրանց վերաբերածումը, ուստի և հարցին անդրադառնում ենք ըստ անհրաժեշտության՝ փորձելով հատակեցնել մեր պատկերացումները Ուսուչում ասորեստանյան բանակի զորատեսակների, էթնիկ կազմի, ենաբազոր քվաքամակի, զինվածության մասին ևն:

Ուսուչի ճակատամարտը մղած ասորեստանյան բանակի զորատեսակներին վերաբերող տվյալները քիչ չեն: «Լուվրի աղյուսակի» աարքեր հաստիածներում հիշատակվում են մարտակազմեր (^{ՈՒՅ}GIGIR^{ՈՒՅ} = narkabu)⁸, ասորեստանյան հեծելազորը (PIT.HALLU^{ՈՒՅ}) = ^{ԼՈ}pehallu⁷, բուն ասորեստանյան հետևակը (^{ԼՈ}kallab/ru)⁹, ոչ-ասորեստանցիներից կազմված հետևակը (^{ԼՈ}zaku CIR¹⁰ = ՏՅԵ ՏԵՔԵ, zik šepe)⁵, որոնց քվում՝ մետաձիգներ (ՏՅԵ ^{ՈՒՅ}BAN = ՏՅԵ ^{ՈՒՅ}qasiti)¹⁰, տեղավորներ կամ նիզակակիներ (ռՏՏ ^{ՈՒՅ}asmarē)¹¹, որոնք երբեմն նույնացվում են փահանակիներին հետ (ՏՅԵ ^{ՈՒՅ}arū), և պարսատիկավորներ (ռՏՏ ^{ՈՒՅ}kabābi)¹²: «Լուվրի աղյուսակում» աշխարհագրում աբուսահայտվել է ՏՅԵ իսի/բն¹³, առաջապահ զինվորները՝ sagbē տերմինով¹⁴: Ընդհանրական նշանակությամբ են կիրառվել «տազմի զինվորներ» (ՏՅԵ takāzi), «տազմիկներ»¹⁵ (^{ԼՈ}qarādu) քառերը¹⁴: Ասորեստանյան բանակն ունեցել է սակրավորների և զուսակավորների միավորումներ, առանձին խումբ են կազմել հետախույզները, տարրերակվել է աքքայի քիկմապահ զուսը ևն: Արշավանքին մասնակից ասորեստանյան զինվորների պատկերները կարելի է տեսնել Մուծածիլի նվաճումն ու կողոպտող պատկերող քարձրաքանդակներում¹⁷:

Մարզումյան դարաշրջանում ասորեստանյան բանակի հիմնական միավորն էր զուսը (kiṣru)՝ զնդապետի (reb kiṣri) հրամանատարությամբ: Հիշատակվում են նաև խմբապետ (նեք) ի (reb arāni), հազարապետ (նեք) ի (reb 1. lim), հարյուրապետ (նեք) ի (reb 1. me'at), հիսնապետ (նեք) ի (reb hašēšē), տասնապետ (նեք) ի (reb eširti) գլխավորած միավորումներ¹⁸: Kiṣru-զնդի ճշգրիտ թվակազմը, սակայն, անհայտ է: Ասորեստանյան բանակի անձնակազմին վերաբերող ցուցակներից մեկի համաձայն առանձին զորահրամանատարների գլխավորած միավորումները կարող էին ունենալ 300-ից մինչև 4.100 զինվոր: Միավորումների հիմնական ժառուց նրանց քիվը տատանվել է 1.100-ից 1.500-ի սահմաններում (ցուցակում նշված զինվորների ընդհանուր թվաքանակը

կազմում է մոտ 34.000, ընդ որում, տեքստը պակասավոր է)¹⁹: Աղբյուրը չի նշում առանձին միավորումների անվանումները: Ուստի և դժվար է ա-
սել՝ այդտե՞ք գրքն ռմեմք կիսա-գնդերի հետ, թե ոչ²⁰: Համեմայն դեպս,
զինվորների՝ մեզ հայտնի առավելագույն քանակը, որն ընդգրկվել է
կիսա-ի կազմ, հասնում էր 1.119 մարդու²¹:

Ասորեստանյան զորամիավորումներից նշատակվում է նաև
բիրտ-ն: «Լուվրի արյուսակի» վկայությամբ մեզան միավոր է առաջնորդել
Ուսուչի մակառամարտում Սարգոնի խորք իրայր (սխա տևուս) և «մեծ
մախարայս» (SUKKAL.MAH = sukkaletahhu) Սին-ախ-ուծուրը²²:

Սարգոնյան ժամանակաշրջանի աղբյուրների համաձայն,
sukkaletu տխտղոսը կրող անձինք իրականացրել են զինվորական-կրա-
մանատարական զորմատույքներ՝ առաջնորդելով ասորեստանյան տե-
րության տարբեր մահանգներից հավաքված զորքերի²³: Դրանք, ըստ
Կալիտից հայտնաբերված «Ձիերի ցուցակի», տարբերակվել են այն
զորքերից, որոնք հավաքագրվել էին բուն ասորեստանյան տարածքնե-
րից²⁴: Այսպես կոչված «մահանգային զորքերը», որոնք ներկայացնում
էին Ասորեստանին ենթակա և նրա կազմի նրբեմնի անկախ էթնո-քա-
ղաքական միավորների (Կարքեմիշ, Դամասկոս, Սամարիա, արամեա-
կան, քաղղեական ցեղեր ևն), խիստ մարտունակ ուժեր էին՝ գրեթե ամ-
բողջությամբ ոչ-ասորեստանցիներ: Ասորեստանյան իշխանությունները
տեղության արևմտյան տարածքների ուզումուսկ, տեղաբնիկ կամ կի-
սաղովոր ցեղերի այս զինվորներին օգտագործում էին այլ ճակատնե-
րում՝ տեղափոխելով նրանց, օրինակ, արևելյան սահմաններ: Չամուայի
մահանգապետի հրամանատարած զորախմբում ոչ-ասորեստանցիները
(800 հոգի՝ իբր՝ ա և քուրաս²⁵ ցեղերից) գերակշռել են ասորեստանցինե-
րին (630 հոգի): Պատկերը նույնն էր քանակի այլ միավորումներում ևս:
Նման կազմ է ունեցել, օրինակ, Չամուային սահմանակից Աբզուխիմա
մահանգի զորախումբը, որի մասնակցությունը Սարգոնի «VIII տարվա
արչալմանքին» կարելի է ենթադրել: Մեզ հասած զեկուցագրի համաձայն
(նրանում պահանջվում էր արագագանել զորքերի հավաքը), այն ռմեցել է
կատամարտիկներ (ERIM.MEŠ ևa GIS.GIGIR), ասորեստանցի հետևա-
կայիններ՝ kallāru-զորքեր (²⁶kallāru) ևն, ինչպես նաև քուրասայի
(²⁷qurāyu) և իբու՝այի (²⁸ibuʾayu) զինվորներ²⁹: Հայտնի է ասորեստան-
յան տեղության արևելյան մահանգներում տեղաբնաշխված զորքերի
շարքում քարաշինների անկախության մասին³⁰: Ասորեստանյան զորահ-
րամանատարներից մեկը՝ Շարբու-եմուրանին, որը, մեր կարծիքով,
Սարգոնի «VIII տարվա արչալմանքի» կազակցությամբ նրեք անգամ
հանդես է գալիս ասորեստանյան աղբյուրներում (տես սուտը), հրամա-

նատարն էր «նահանգային զորքեր» ընդգրկող բավական նշանակալի միավորման²⁷:

Այս փաստերը նկատի ունենալով, միանգամայն հնարավոր է բլում Ռուսչի ճակատամարտին մասնակից ասորեստանյան բանակում տեսնել ոչ-ասորեստանցիներից կազմված զորքեր: Թերևս, նման կազմ են ունեցել քիրս-միավորումները²⁸: Վերջիններս, ի լրումն լուս ասորեստանյան ուժերի, կազմում էին «սարքայի զորքը»՝ թեև ձարի-ճ²⁹:

Մին-ախ-ուժուրի նրանմատարած քիրս-ճ, որն Ռուսչի ճակատամարտի հիմնական դերակատարներից էր, կազմված էր, ամենայն հավանականությամբ, հեռուսկայաններից³⁰: Ոչ-ասորեստանցիները, սվյալ դեպքում իրությանի և քուրբայցի զինվորները, ընդգրկվել են գերագահացապետ հեռուսկային միավորումներում³¹, մինչ օտար ծագման մարտակառքերն ու հեծելազորը, ինչը շեշտվում է աղբյուրներում, ներառվում էին արքայական զնդ(եր)ի՝ կիսի ձարուժի կազմ³²:

Նման փաստի հետ զորք ունենց նաև «Լուլլիի աղյուսակում» Մուծածիլը նվաճելու համար բանակի հիմնական զանգվածից առանձնացված զորակազմում Սարգոնի ասագնորդած հեծելազորից բացի ընդգրկվել են նաև հեռուսկ զինվորներ, քերևս՝ նույն Մին-ախ-ուժուրի քիրս-միավորումը:

Ի դեպ, ասորեստանյան աղբյուրները ուրարտական բանակի կազմավորումների բլում հիշատակում են և կիսր-ճ³³, և քիրս-ճ³⁴: Քանի որ քիրս-ճ, ինչպես բլում է, կազմվել է էթնո-ասորածքային սկզբունքով՝ ոչ-ասորեստանցիներից, ապա ուրարտական բանակի նախապատասխան միավորները, քերևս, ներկայացրել են տեղությանը հնրակա կամ նրա կազմում զանվող «երկրների» ուժերը:

Ինչ վերաբերում է Ռուսչում ասորեստանյան բանակի քվաքանակին, ապա այդ մասին ուղղակի տվյալներ չկան: Միայն ԼԱ, տող 320-ում նշվում է Սարգոնի գլխավորությամբ Մուծածիլ շարժվող զորակազմում 1.000 հեծյալներ ընդգրկող միավորման ասկայության մասին: Ուղեկից հեռուսկայաններին վերաբերող քվական տվյալներ աղբյուրը չի պարունակում: Հստակ չեն նաև տեղեկությունները աղբյուրների մասնակից ասորեստանյան նահանգապետների մասին, թեև նրանց ներկայացված են աղբյուրում³⁵:

Մեզ կարող ենք ենթադրել, հիմնվելով արքունիք ուղարկված երեք զննուցագրերի վրա, որ ասորեստանյան զորաբանակի կազմում են զանվել, առնվազն, Արրասիխա, Արգուխիմա, Չամուա նահանգների գործադրություններն ու վերածիյալ Ծարբու-Նմուրաննիի գունդը³⁶: Հետաքրքիր է, որ, զննուցագրերից մեկի համաձայն, Ծարբու-Նմուրաննի շարժվել է դեպի Մումբի³⁷, երկիր, որ «VIII տարվա արշավանքի» սկզբնամասում զորահանդես է անցկացրել Սարգոնը³⁸: Մումբին, ըստ

երևույթին, ընտրվել էր որպես զորքերի հավաքատեղի: Ամենայն հավանականությամբ, այս ուղղությամբ է շարժվել, ըստ երկրորդ զեկուցագրի, Արքայախայի մահանգապետը: Չար զեռն անցնելուց հետո մարտակազմա, որի ամուսն չի հիշվում, մա պետք է հասներ երեք օրում⁴⁰: Սուրբիի տեղադրությունը⁴¹, ինչպես մաև այլ մկատառումներ միանգամայն հնարավոր են դարձնում մեզան մտեցումը: Ըստ այսմ, հիշված զեկուցագրերը կարելի է թվագրել Մարզոնի «VIII տարվա արչավանքի» սկզբնական շրջանով (մ. թ. ա. 714 թ. հունիս):

Հետևաբար, կարող ենք խոսել արչավանքին նվազագույնը երեք մահանգային զեղերի մասնակցության մասին: Մտաբանոր աղբյուրները թվական տվյալներ են պահպանել դրանցից մեկի մասին: Ըստ աղբյուրի, Ջամուա մահանգի համահավաք զորախումբն ունեցել է ամնվազմ 1.500 զինվոր⁴²: Ջորախումբն ընդգրկում էր հեծյալ զուկառ և մարտակառքերի խումբ՝ նվազագույնը 10 միավոր⁴³: Այս տվյալները, սակայն, չեն կարող հիմք ծառայել եզրահանգումների համար, քանի որ նույն աղբյուրում նշվում է, որ դա Ջամուայի մահանգապետի հրամանատարության տակ գտնվող ուժերի վերջնական թիվը չէ:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ ասորեստանյան մահանգի վերածված Կումեոխում Մարզոնը մահանգապետին է հանձնել թավակամ նշանակալի ուժեր՝ 150 մարտակառք, 1.500 հեծյալ, 20.000 նոտածիզ և 1.000 պարսատիկավոր ու միզակակիր զինվոր⁴⁴: Հիմք ընդունելով այս տվյալները, Վ. Մանիթիթառը ենթադրել է մեզան թվաքանակներ ասորեստանյան բոլոր մահանգների համար⁴⁵: Նահանգային զորքերի քանակը, անշուշտ, կախված էր տվյալ մահանգի ունեցած ռազմավարական նշանակությունից: Այս առումով Ջամուան, որի զորքերի մասնակցությունը արչավանքին կարելի է համարել կասկածից դուրս, գտնվում էր ռազմական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող մահանգների շարքում⁴⁶:

Այս ամենով հանդերձ հնարավոր չէ հստակեցնել ասորեստանյան զորարանակի թվակազմը: Պարզապես պետք է փաստենք, որ զորք ունենք թավակամ նշանակալի խմբավորման հետ, եթե վերոհիշյալ մահանգների զորախմբերին հավելենք «արքայական զուկառ», Մարզոնի քիկնազան զորախումբը, Մին-ախ-ուժուրի քուր-միտվորում (ճեղ) ը, Եարրու-Նմուրաննիի զուկառ, ինչպես մաև ասորեստանցիներին դաշնակից մամայական և ալլարքիական զորքերը:

Ի դեպ, ասորեստանյան քանակի առավելագույն թվաքանակը, որը հայտնի է տարբեր արչավանքների նկարագրություններ պահպանած սեպագիր աղբյուրներից, հասնում է 120.000 զինվորի՝ ներառյալ դաշնակիցներին⁴⁷:

Ուրարտական քանակը.

Մակառամարտի նկարագրությունը պահպանած «Լուվրի աշյուտակը» ընդհանուր բնույթի արտահայտություններից զատ չի պարունակում կոնկրետ տվյալներ ուրարտացիների և նրանց դաշնակից քանակների թվաքանակի մասին: Մեզ ազդիր աղբյուրներում պահպանված սուղ նյութերը, այնուամենայնիվ, թույլատրում են անել խիստ ընդհանուր դիտարկումներ:

Ժամանակաշրջանի ասորեստանյան հետախուզական աղբյուրներից հայտնի է, որ կիմմերների դեմ ձեռնարկված արշավանքին ուղարտական տեղությունը կենտրոնացրել էր գործերի մեծ քանակ՝ ուրարտական քանակի գլխավոր զորահրամանատար (¹⁰uršū) Կակկադաանուի, ափսոսանքով 13 մարզպետների զորամասերն⁴⁷ ու, հաստատապես, արքայական զույգը: Հայտնի է նման մեկ գնդի թվակազմը՝ մոտ 3000 զինվոր⁴⁸: Հեռուարս, կարելի է նշել, որ կիմմերների դեմ գործող ուրարտական քանակի զինվորների թիվն անցել է մի քանի տասնյակ հազարից⁴⁹: Այս կարգի թվաքանակները կարող են ընդունելի լինել նաև Ուատչի ճակատամարտի պարագայում. ասորեստանյան տվյալների համաձայն, արքայական գնդից բացի քանակի կազմ են մեքաթավվել «ուրարտական մեծամեծների»՝ բերև մարզպետների զորամասերը, ինչպես նաև դաշնակից «նարևան արքաների» ուժերը:

Թեև ասորեստանյան աղբյուրները չեն պահպանել Ուատչի ճակատամարտին մասնակից մարզպետների կամ մարզային զորամասերի թիվը (L-U-ը հիշատակում է միայն ուրարտական զերեկաբլած մարզպետների⁵⁰), այնուամենայնիվ, կարելի է ենթադրել նրանց գլխավորած առնվազն յոթ-ութ գնդերի մասնակցություն: Որպես հիմնավորում հարկ է նշել, որ ուրարտա-ասորեստանյան լարված, սակայն ոչ պատերազմական իրավիճակում ուրարտական պետությունը Ուայախ մարզում կենտրոնացրել էր հինգ⁵¹, իսկ Պուլուա և Դ-անիբանի քաղաքներում (Տիգրիսի վերին հոսանքի շրջան)՝ վեց մարզպետների գնդեր⁵²:

Ինչ վերաբերում է ուրարտական քանակի զորատեսակներին, ապա դրանք եապես չեն տարբերվել ժամանակաշրջանի այլ քանակների համամասն ուժերից: Բանակն ունեցել է մարտակառքեր⁵³, հեծելազոր⁵⁴, որն իր թվաքանակով, կարծում ենք, գրեթե չի զիջել հետևազորին, հետևակ՝ իր զորատեսակներով (տվյալ պարագայում «Լուվրի աշյուտակը» հիշատակում է նետածիգների⁵⁵, պարսատիկավորների⁵⁶, տեղավորների⁵⁷ և զբանավորված ռազմիկների /quršidšu ša taḫlupti/)՝⁵⁸, սակայն վորներից կազմված զորամասեր, ինչպես նաև օժանդակ ուժեր և զույգակ: Նույն աղբյուրում ռազմիկ (¹¹masdāḫša) քառը, որը հանդես է գալիս երկու անգամ, արտահայտել է ուրարտական քանակի նետածիգ և տեղավոր զինվորների. ¹²mas-dāḫ-ši-ša tu-ku-ṭi un-ma-ni-šu na-aš

⁶⁰BAN as-ma-re-e... «Տրա ռազմիկները՝ նրա քանակի հույսը, որոնք կրում էին աղեղներ և տեղեր...»⁶¹: Ուսուչում ուրաքուրացիների գլխավոր դաշնակից զինվորական քանակն ունեցել է հեծելազորը, որն աղբյուրում, ինչպես ուրաքուրական հեծելազորը, արտահայտվել է «ձիեր» տերմինով⁶², և հետխում «ազգի զինվորներ» (սեմ տեճեւ)⁶³:

Քանակի զինվածությանը վերաբերող մեր հիմնական աղբյուրը հնագլխական քակական հարուստ նյութերն են⁶⁴: Ուրաչի պատկերացում են ապիս մակ սեպագիր աղբյուրների և մասնավորապես՝ «Լուվրի աղյուսակի» այն տվյալները, որոնք վերաբերում են Մուծածիրից տարված ռազմավարին:

Դաշնակիցների քանակները.

Ուսուչի ճակատամարտում քե մեկ, քե մյուս կողմի ճամբարներում են գտնվել դաշնակից զորքեր: Ընդ որում, եթե աղբյուրն ուղղակի նշում է ուրաքուրացիների դաշնակիցների՝ «հարևան արքաների» մասին, ապա ասորեստանյան ճամբարում դաշնակից զորքերի առկայությունը սուկ ենթադրվում է:

Ուրաքուրացիների հիմնական դաշնակիցը, ինչպես նշվեց, զինվորական քանակն էր, արքայի՝ Մետատտիի անմիջական հրամանատարությամբ: Դաշնակիցների շարքում են գտնվել Խուրուչկիայի զորքերը, որի արքա Յանգուն այս շրջանում հակվել էր դեպի Ուրաքուր: Խուրուչկիական ուժերի առկայությունն է հավաստում ասորեստանյան զեկուցագրերից մեկը: Դրա համաձայն, Ուսուչին մախարբող շրջանում Ռուսա I-ի զորախումբը խուրուչկացիների ուղեկցությամբ շարժվել է ասորեստանյան զորքերին ընդառաջ, մինչ վերջիններս զբաղված էին զինվորացիների դեմ պատերազմելով⁶⁵: Ընդ որում, հիմքեր կան պնդելու, որ Ուսուչում խուրուչկացիները դիմել են դավաճանության՝ անցնելով հակաասորեստանյան կամ հակամամայական ճամբարում՝ Ջիկերուտի հետ միասին:

Ինչ վերաբերում է «հարևան արքաներին», ապա աղբյուրները չեն պարտադրում որևէ տվյալ, որը հնարավոր կդարձներ հատակեցմելու նրանց անունները: Կարելի է սուկ ենթադրել դաշնակիցների շարքում անդիացիների առկայության մասին: Մերձուրյան մշամակալի պետական կազմավորումներից Անդիան, ըստ համաժամանակյա աղբյուրների, այս շրջանում դաշնակցել է Ուրաքուրին, մեծավ մասամբ հանդես գալով հակաասորեստանյան կամ հակամամայական ճամբարում՝ Ջիկերուտի հետ միասին:

Ասորեստանյան տերության հիմնական դաշնակիցն արևելքում, մակ «VIII տարվա արշավանքի» ժամանակ, Մամայի քաղաքավորությունն էր: «Լուվրի աղյուսակի» վկայությամբ, արշավանքի սկզբնահատվածում տեղի են ունեցել երկու երկրների տիրակալներ Սարգանի և Ուլլուսումուտի համընդունմանը մախ՝ Մինիխիմի և ապա՝ Սիբոակկա մամայական ամ-

րոցներում: Չեղբ բերված պայմանավորվածությունների մեջ էին ասորեստանյան քամակի մատակարարումը, որն իրականացնելու էր մամայական պետությունը, ինչպես նաև օժանդակ ուժերի տրամադրումը: Մամայական զորքերին առաջնորդելու էր Ուլլեստունուի ավագ զորին, որին աղբյուրը չի հիշում համվանն⁶⁴: Նշվածով հանդերձ մամայական պետության խաղաղամտ դերակատարման մասին ասորեստանյան սույն աղբյուրից հնարավոր չէ կազմել լիակատար պատկերացում: Փաստ է, որ մամացիների նրկիքը «չար թշնամիներից» (Ուրարտու, Զիկերտու, Անդիա ևն) պաշտպանելու դրույթներով իրականացվող արշավանքին մամայական պետությունը չէր կարող շունչեմալ էական մասնակցություն:

Նրբ նշյա է SAA, V, No. 199-ի համար մեր կողմից առաջարկվող քվազումը Մարզոնի «VIII տարվա արշավանքի» սկզբնական շրջանով, ապա կարող ենք նշել, որ ասորեստանյան քամակին ուղեկցել են ոչ միայն մամայական, այլև նրան սահմանակից պետական կազմավորումներից Ալլաթրիայի ուժերը: Վերջիններին առաջնորդելու էր ալլաթրիական արքայազանը⁶⁵:

Ինչ վերաբերում է կիմմերների մասնակցությանը Ուատշի ճակատամարտին և ընդհանրապես՝ «VIII տարվա արշավանքին»՝ որպես դաշնակից կամ վարձկան ուժեր, ապա նման հնարավորությունը չի կասելի բացառել, քեև մեր տրամադրության տակ ուղղակի փաստեր չկան: Պարզապես, խիստ վիճելի է որոշ մամագետների մտածելովն այն մասին, որ գրեթե նույնացվում են կիմմերների դեմ ուրարտացիների մղած ճակատամարտը Ուատշի հետ⁶⁶: Այս հարցին ամոքադադանայի կնշանակեր անդրադարձ՝ մ. թ. ա. 715–714 թթ. ուրարտա-ասորեստանյան հակամարտությանն ընդհանրապես, ինչն այլ ուսումնասիրության թեմա է:

Ուատշի ճակատամարտն ըստ «Մովրի աղյուսակի».

«Մովրի աղյուսակը» հեղինակած Նաբու-շալիմ-շումուն հիմնական տեղը հատկացրել է Մարզոնին և ասորեստանյան հզորությունը փաստաբանող տարրեր պատկերավոր արտահայտությունների, այնինչ ճակատամարտի բուն ճկարագրությունը տալիս է հակիրճ՝ որպես Մարզոնի զործած սխրագործությունների նմբատեքստ: Ուատշին վերաբերող 70 տողերից (ԼԱ, տող 91–161) ճակատամարտի դրվագներն են արտացոլում սակ 21-ը: Գրանց են.

I. ԼԱ, տող 110–111.

«...Նրա սիրող զանկացավ ինձ հետ քաջ ճակատամարտ տալ...: Այդ լեռան կիրճում շարից նա զորքերը: Զորքերի մտածելման և մարտակարգ ընդունելու մասին իմ սուրբամուղակը ինձ հայտնեց»:

II. ԼԱ, տող 127–146.

II-ա «...Աշուր աստու տանգված զինվորները, որոնք երկար ճանապարհ էին անցել, հոգնած էին և ուժասպառ, ... ես բույ լտվեցի նրանց հանգատանալ, ... իմ գունդը չհավաքեցի... իմ անձնական մարտակառքով և ճիներով, Միս-ախ-ուժուրի գորախմբով, ինչպես զայրացած տեգ, նրա սրտին հարվածեցի և նրան պարտության մատնեցի, կանխեցի նրա գոռը...»:

II-բ «...մեծ կտորած կազմակերպեցի, նրա ռազմիկներին, ... նրա նետահիզներին նրա առքի առաջ գամների մնամ մորթեցի, արքայական ընտանիքի 260 անդամներին իմ ճեղքով բռնեցի...»:

II-գ «...նրա ճակատը կազմալուծեցի, ... նրան ճամբարի քազմության մեջ փակեցի ... իր կյանքը փրկելու համար (նա) իր մարտակառքը քեց և մատակ ձի մատած իր զորքի աջակից ճողալեց»:

II-դ «Ջիկերտացի Մեռատտիին՝ հարևան արքաներով – ես նրանց զորքը խոնարհեցրի, նրանց զունդը ցարսուցրիլ արի, ... Ուրարտու երկրի զորքը և նրա դաշնակիցներին պարտության մատնեցի վեց «բերու» տարածություն՝ Ուսուշ լեռից մինչև Ջիմուր լեռը ... հետապնդեցի նրանց...: Մյուսներին, որոնք իրենց կյանքը փրկելու համար փախուստի դիմեցին, արձակեցի (նրանց) Աշուրի՝ տիրոջս հաղթանակը փառաբանելու համար»:

Ճակատամարտի իրողությունը պահպանած սարգոմյան մյուս աղբյուրները՝ արքայի տարեգրությունը, «Հանդիսավոր արձամագրությունն» ու Կիսրտում գտնված կոթող-արձամագրությունը չեն պարունակում լրացուցիչ տվյալներ:

Ճակատամարտի ընթացքը.

Հետազոտողներ Հ. Մազսի, այնուհետ Ջ. Մմիթի դիտարկումները հանգում են հետևյալին. Սարգոմի հրամանատարած հեծյալ ուժերի զրոհ մեկ կամ երկու շարքով մարտակարգ ընդունած ռաբարտացիների ճակատային գծի վրա (հետևակային կամ իստոր գորամրավորումներ), ճակատային գծի ճեղքում, հարված Ռոսայի առաջնորդած հեծելազորին, հեծելազորի շրջապատում, Ռոսայի և ռաբարտական զորքերի փախուստ, կտորած, հարված դաշնակից զորքերին և նրանց փախուստ ու կտորած (գուգահեռ է անցկացվում Մարասոնի ճակատամարտի հետ) ⁶⁷:

Կ. Հովհաննիսյանի վերակազմությունը հշվածից տարբերվում է նրանով, որ նմաբարվում է ռաբարտական գլխավոր ուժերի շրջապատում՝ ներառյալ հետևակն ու հեծելազորը (գուգահեռ է անցկացվում Կամանի ճակատամարտի հետ) ⁶⁸:

Դժվար չէ նկատել, որ բոլոր եզրահանգումների հիմքում ընկած է հանդիպակաջ մարտը՝ ռաբարտացիների ճակատային գծի ճեղքման և

քամակի հեծեղազորին կամ «սպայակույտին» հարվածելու հիմնական գաղափարով⁶⁶։

Մակատանաբառի նկարագրության վերլուծությունը, սակայն, հմարավորություն է ընձեռում առաջարկելու դրա ընթացքի այլ պատկերներ։ Հետախույզներից տեղեկամատյով Ռուսոչի կիրճերում ուրարտական և դաշնակից զորքերի ամրամատյու և մարտակարգ ընդունելու մասին, ասորեստանյան հրամանատարությունը, կարծում ենք, վճռել է խուսափել հանդիպակաց մարտից։ Նրա համար կային մի շարք պատճառներ։ Նախ, աննպատու էր տեղանքը, ուրարտական քամակը զբաղեցրել էր քարծուները, ուր ձգվող մեղ կիրճը մտնելու դեպքում զորքերը, լնասնելով մերձամարտի, կհայտնվեին անվտանգ տարածության վրա գտնվող ուրարտացիների հարվածների տակ։ Բացի այդ, ասորեստանյան քամակը կզրկվեր ազատ տեղաշարժվելու, զինվորական ուժն առավելագույնս օգտագործելու հմարավորությունից⁶⁷։ Ռուսոչի, ասորեստանյան հրամանատարությունը, ըստ երևույթին, ընտրել է այլ մարտավարություն՝ փորձել հակառակորդի դեմ օգտագործել նրա իսկ պարտադրամ տեղանքը։

Բարձունքները զբաղեցրած ուրարտական քամակը, քիչուցում ունենալով ամմատյելի լեռներ, թվում էր անխոցելի։ Ուրարտական հրամանատարությանը խիստ հարմար թվացող տեղանքը, մյուս կողմից, ուներ էական քաց։ Ուրարտացիներին այն չէր մղում մտածելու քիչուցքի ապահովության մասին. ըստ այդմ, հիմնական ուժերը կենտրոնացրել էին առաջին գծում՝ մեծ խորությամբ, սակայն սահմանափակ, տեղանքի ուրվագծած ճակատով։ Իսկ դա նշանակում է, որ ուրարտացիները կորցնում էին ևս մեկ առավելություն՝ ենթադրվող թվական գերազանցությունը։ Ընդ որում, սահմանափակ տարածության պատճառով, ուրարտացիներին դաշնակից ուժերն անգամ չէին ընդգրկվել առաջին գծում։ Նրանք քամակել էին առանձին, ճակատային գծից հեռու։ Բանակը զրկվել էր մաև նպատակային, ազատ տեղաշարժելի հմարավորությունից։ Փաստորեն, ուրարտական հրամանատարությունը, փորձելով կաշկանդել ասորեստանյան ուժերին, ինքն էր հայտնվել միայն վիճակում⁶⁸։

Ասորեստանյան հրամանատարությունը, որին, թվում է, ծանոթ էր ուրարտական ճամբարում տիրող անցողաբժը, ընտրել է հակառակորդին անակնկալ հարված հասցնելու ճանապարհը՝ ուրարտացիների քիչուցքում գտնվող այդ նույն ամմատյելի լեռներից։ Այս նպատակով, կարծում ենք, ասորեստանցիները որոշել են դիմել շրջանցիկ զորաշարժի՝ նպատակ ունենալով դուրս գալ հակառակորդի քիչուցքը՝ ուրարտական ճամբարին հմարավորինս մոտ։ Այս նպատակով քամակի կազմից առանձնացվեցին ընտրյալ ուժեր՝ «արքայական գունդը» (kisir karum), որին զլխավորում էր Մարզոնն անձամբ, նրա քիչնապահ զբախտամբն

ու արքայի խորք եղբոր՝ Մին-ախ-աժարի բիրտ-միավորումը՝ 2-ից 3.000 զինվորներով:

Երբանցիկ զորաշարժն իրականացվել է այն ժամանակ, երբ ասորեստանյան զորաքառակնի հիմնական ուժերը գտնվել են երբի մեջ, այսինքն՝ մինչև հակառակորդ բանակների մերձեցումը:

Լեռնային դժվարամատչ տեղանքով ընթացած զորաշարժը ասորեստանցիներին պահանջել է մեծ ճիգեր: Դրա պատկերավոր նկարագրությամբ տալիս է «Լուվրի աղյուսակը».

«(LII, հատված II-a) Աշշուր աստծու տանջված զինվորները, որոնց երկար ճամապարհ էին կտրել, հոգմած էին և ուժասարս, անցել էին անհամար բարձր լեռներ, որոնց վերելքն ու վայրէջքը դժվարին էր՝ եւ բույլ չտվի նրանց համզատման, ծարավս հագեցնելու համար ջուր չընկնելի, հանգստավայր չտեսողների, ճամբար չտարբեցի...»:

Ուրարտացիներն ու նրանց դաշնակիցները, ամտելյակ լինելով Սարգոնի հեռանալուն, այս շրջանում չեն սպասել հարձակման: Մինչև ասորեստանյան հիմնական ուժերը կմոտենային բարձունքները զբաղեցրած հակառակորդին, Սարգոնի աստօջմորդյան զորակազմին ուրարտացիներին քիչուցեում զբաղեցրել է հարմար դիրքեր՝ բանակի կենտրոնականին հնարավորինս մոտ: Այստեղ էլ արքան տեղեկացվել է հիմնական ուժերի մտանալու և ռազմակարգ ընդունելու մասին (LII, հատված I):

Սարգոնը որպես քիրախ ընտրել էր ուրարտական բանակի հրամանատարությամբ՝ արքային՝ իր մերձավորներով, և արքայական գունդը «...ինչպես զայրացած տեղ նրա սրտին հարվածեցի...» - հայտնում է «Լուվրի աղյուսակը»:

Հարձակումը ճամբարի վրա, ամենայն հավանականությամբ, ձեռնարկվել է ճակատային ընդհարումը սկսվելուց առաջ (հմտ. «Ելան-խեցի նրա գրոհը» արտահայտությամբ), հավանաբար՝ վաղ արևածագին: Ասորեստանյան արքայուհիներից հայտնի են մեծ քանակությամբ զրկագներ: Մարտը սկսել են Մին-ախ-ուժուրի նետաձիգները՝ քիչոխ ընտրելով Ռուսայի հեծյալներին: Անակնկալ նետաձգությամբ ուրարտացիներին պատճառել է ոչ միայն կորուստներ, այլև խտոմաչփոք առեղծել նրանց ճամբարում: Իրարանցումից օգտվելով ճամբարն է գրոհել Սարգոնի հեծելազորը, իսկ նետաձգությամբ շարունակվել է մինչև մերձամարտ: Նետաձիգների և հեծելազորի փոխգործակցությամբ ձեռնարկված գրոհի մասին կարելի է դատել այն փաստից, ըստ որի ասորեստանցիները գործել են նետերով և տեղերով (ins assi ruitnulli)⁷²: Առաջին զինատեսակը մերձամարտի համար հարմար չէ, իսկ տեղը, ինչպես հայտնի է, ասորեստանյան հեծյալի հիմնական զենքն էր:

Ասորեստանցիները լիովին օգտագործել են ամապասելության գործունը՝ անակնկալ հարձակման ընձեռած ատավելությանը պատսխի

գործողությունների դատաստանված ուրարտացիներին սեղմելով իրենց իսկ ճամբարին: Հարձակման փրախ Ռուսան, արքունի զինվորներով, հայտնվել է շրջափակման մեջ: Ընդ որում, դրա հետևանքով ուրարտական բանակի հրամանատարական կազմը մեկուսացվել է զորքերի հիմնական զանգվածից, ինչը խիստ բացասաբար է անդադարձել անհաջող սկսված մարտի հետագա ընթացքի վրա: Փաստորեն, ասորեստանցիների նպատակային գործողությունների արդյունքում, կորվել է կապը հրամանատարության և զորքերի միջև, բանակի հիմնական ուժերը մատնվել են անգործության: Եարքերում տիրել է խառնաշփոթը. ըստ էության մեծ էր մաս հարձակման գործած հոգեբանական ազդեցությունը ուրարտական զինվորների վրա:

Մինչ մարտերն ընթանում էին ուրարտական ճամբարի մատույցներում, ասորեստանյան հիմնական ուժերը սկսել են գրոհել իսկառաջադի ճակատային զիծը: Չարգացումների մեծ ընթացքից անակնկալի եկած ուրարտական հիմնական ուժերը, զրկված լինելով գլխավոր հրամանատարական կազմից, անգամ չեն փորձել դիմակայել ասորեստանցիներին՝ դիմելով միայն անկառն մահացի դեպի ճամբար, իսկ այնուհետև՝ համատարած վախուստի: ԼԱ-ի տվյալները չեն վկայում համդիպակաց մարտի փոքր-ինչ երկարատև տարրերակի օգտին՝ փաստը՝ հաղորդելով իմիջիայրոց, մեկ արտահայտությամբ՝ «Տրա ճակատը կազմալուծեցի»:

Ուրարտացիների հետապնդումը վերածվել է անխնա կուտրածի՝ պաշարված ճամբարում դեռևս դիմադրող արքունի զինվորների այլի առաջ: Այս պայմաններում ուրարտական զինվորներին այլ ելք չեր մնում արքայի կյանքը փրկելուց զատ: Դա հաջողվել է մեծ դժվարությամբ, ծանր կորուստների գնով: Արքունի արձանագրություններին քննող ռճով զրկված ասորեստանյան տեղադր մասրամասում է.

«...Մեծ կուտրած կազմակերպեցի, Տրա ռազմիկներին, մրա մետաձիգներին, տեզակիրներին՝ Տրա ոտքի առաջ՝ գատան մեծան մորքեցի, արքայական ջնտանիքի 260 անդամներին իմ ձեռքով բռնեցի: Իր կյանքը փրկելու համար (մա) իր մարտակառքը լքեց, մատեց մատակ ձի և իր զորքի առջևից փախավ» (հատված II-ք / II-զ):

Ուրարտական բանակի կազմալուծմանն ու Ռուսայի փախուստին հաջորդեց արքունի զնդի և կենտրոնակայանի քախախտումը. ուրարտական դիրքեր մերիտուծած ասորեստանցիների ձեռքն ընկան բանակի հրամանատարական կազմը, արքայական ջնտանիքի մեծ թվով անդամներ և ողջ մնացած արքունի հեծյալները: Այս նույն շրջանում, կարճում ենք, դավաճանության են դիմել ուրարտացիներին դաշնակից խորշակիական զորքերը՝ լքելով դաշնակից ուժերի ճամբարը: Դա կարող էր լինել և որոշակի պայմանավորվածությունների արդյունք՝ վաղո-

բոց ձևոք բերված աստրեստանցիներին հետ, և իրապարծությունների նկարագրված զարգացումներին: Հատկանշական է, որ, «Լուվրի աղյուսակի» վկայությամբ, Մաբոնն Ռաաշում ազատ է արձակել և իր մոտ բռնել թշնամու ինչ-որ մարդկանց. «մնացած մարդկանց, որոնք իրենց կյանքը փրկելու համար փախան, արձակեցի (մրանց) Աշշուրի՝ տիրոջս հաղթանակը փառարանելու համար»: Ամենայն հավանականությամբ, աբրուսի գրիչն այստեղ նկատի է առել խաբուշկիսացիներին: Վերջիններս (անբառում՝ UN.MEŠ KUR Ni'iri Նա'իրի երկրի մարդիկ) աղոթն հիշատակվում են «Լուվրի աղյուսակի» 259-րդ տողում, մանացիների հետ միասին, մի ենթատեքստում, որը նկարագրում է ուրարտական ամբողջների ավեր և քաղան⁷³:

Ուրարտական ճամբարի ցայտալիծմանն ու քանակի քայքայմանն ակամատես դաշնակիցների զորքերը, որոնք քանակել էին ստանձին, խաբուշկիսացիների հետամալուց հետո անկախող գտնվեցին կասեցնելու աստրեստանցիների նոր զրոնդ: Նրանց հիմնական հարվածն ուղղված էր առավել մարտունակ ուժի՝ զինվորական քանակի դեմ: Ճակատամարտի այս հատվածի նկարագրությունը խիստ լակոնիկ է. նշվում է միայն Մտասատի զինվորացու և «հարևան արքաների» զորքը խոնարհեցնելու, նրանց գունդը ցարցրելի անելու մասին (հատված II-դ): Ըստ էության, այստեղ ևս քացակայել է կազմակերպված դիմադրությունը: Տեքստը չարտմակում է.

«...Ուրարտու երկրի՝ լար թշնամու զորքը և նրա դաշնակիցներին պարտություն հասցրի, Ռաաշ լնուսն վրա նրանց փախուստի մատնեցի նրանք, ինչպես մթջյունները վտանգեմ, թունեցին դժվարին ճանապարհները...» (հատված II-դ):

Աստրեստանյան հեծելազորը, ըստ նույն աղբյուրի, «արևածաղից մինչև մայրամուտ» հետապնդել է նրանց՝ Ռաաշից մինչև Ջիմուր լեռը՝ 6 "ծերս" ճանապարհի (նվազագույն հաշվումներով՝ մոտ 35 կմ)⁷⁴:

Այսպիսով, կարելի է սահմանափակվել փաստելով, որ հանդիպական ճակատամարտ, որպես այդպիսին և հակառակ պնդումների՝ չի եղել. դրա փոխարեն տեղի է ունեցել ուրարտական քանակի թիկունք ներքափանցած աստրեստանցիների անսպասելի հարձակում քանակի կենտրոնակայանի վրա, զորքերի կատավարման կազմալուծում, ուրարտական դիքքերը պատած համատարած խոտմաշվոք, դաշնակից ուժերի մի մասի դավաճանություն, քանակի հիմնական զանգվածի կողմից լուրջ դիմադրության քացակայություն՝ դրան հետևած տրամաբանական շարունակությամբ՝ ուրարտական և դաշնակից ուժերի փախուստ ու կոտորած: Այս առումով Ռաաշը ընդհանուր գծերով հիշեցնում է հայկական և հռոմեական զորքերի միջև մ. թ. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած Տիգրանակերտի ճակատամարտը⁷⁵:

Ուրարտացիները կրեցին մեծ կորուստներ: Բավական է նշել, որ Ռուսայի տոնակեցիների թիվը, որոնք գերվել էին ասորեստանցիների կողմից, հասնում էր 260-ի¹⁶: Գերիների մեջ էին, քացի այդ, արքունականներ՝ ներքինիներ (¹⁶EN-SAG^{MES}), խորհրդականներ (¹⁶malici), մարզպետներ (¹⁶EN.NAM^{MES}) և հեծյալներ (¹⁶PIT.HAL.LU^{MES}): Նշանց զգալի թիվը պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջիններս, գտնվելով արքայի կողքին՝ ճամբարում, հենց սկզբից նայտնվել են մարտերի կենտրոնում՝ իրենց վրա ընդունելով հիմնական հարվածը:

Ուսուչից հետո ուրարտա-ասորեստանյան նոր մարտեր, թվում է, տեղի չունեցան: Արդյուրի վկայությամբ, ուրարտական ամմատչելի ամբողջների կայսզորներն անգամ լքում էին դիրքերը՝ խուսափելով ասորեստանցիների հետ բախումներից: Փաստը պատճառաբանվում է ուրարտական բանակը պահպանելու Ռուսայի ցանկությամբ. քանի դեռ կար բանակը, կշիներ և հաղթանակի հույսը...

Ուսուչի ճակատամարտին հաջորդեց ասորեստանցիների հաղթարշավը ուրարտական յոթ մարզերով՝ դրա վերջում նվաճելով և ավերելով պետական նշանակալի կազմավորում, ուրարտացիների հոգևոր կենտրոն Մուծածիրը: Արշավանքի արդյունքում ուրարտական տեղաբնույթ կորցրեց մերձօրմյան մի շարք տիրույթներ:

YERVAND GREKYAN

THE BATTLE OF UAUSH
(A historic-comparative analysis)

One of the most famous events from the history of the Ancient Near East was the "Eight Year's Campaign" of Sargon II of Assyria to Urartu (c. 714 B. C.). It was the culmination of confrontation between these powerful empires. The key battle took place on Mt. Uaush (modern Sahand). The paper deals with the Battle based on analysis of the text "Letter to Aššur" – an Assyrian cuneiform source and concludes a new possible reconstruction of it.

The author puts down a hypothesis, according to which no oncoming battle took place on Mt. Uaush as was suggested by the scholars to this date. He thinks that Sargon's victory was achieved by an unexpected attack of Assyrian elite group of troops led personally by the king on headquarters of Russ – king of Urartu and his cavalry units, which led up to losing of connections between the headquarters and the army units. It also made psychological effect: the soldiers were demoralized, the troops have come asunder, they didn't try to defend and escaped. The Urartian army was fated to suffer a terrible defeat.

The author compares Uaush with the Battle of Tigranakert between the Roman and Armenia armies in October 6, 69 B. C.

The paper also examines the possible size of both armies, their ethnic and military structure etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս աղշավանքը և դրա հետ կապված մի շարք հարցեր մասնագետների ուշադրությանն են արժանացել սկսած անցյալ դարասկզբից: Օճայած նեոազդոտի սեղանին են դրվել առանձնակ աշխատանքներ, այնուամենայնիվ, խնդիրը չի կարելի համարել լուծված լուրջագրված: Նրան վերաբերող զրականության հղումները հնարավոր է գտնել Ն. Հարությունյանի "Биваиник" (Ереван, 1970, с. 292-311), Փ. Ջիմանսկու "Ancient Ararat: A Handbook of Urartian Studies" գրքերում (թ. 45-51, Deimar, New York, 1998):
2. F. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon (714 av. J. -C.), Textes cuneiformes, Tome III, Musée du Louvre, Paris, 1912 (TCL III), pp. 2-67 (XXX Pl) ; D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia (ARAB), vol. II, 1927, No. 139-178; И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, 3, 4 (АВВИУ), 49; W. Mayer, Sargons Feldzug gegen Urartu-714 v. Chr.: Text und Übersetzung, MDOG, Heft 115, 1983, S. 65-132: Մասնագիտական զրականության մեջ աղբյուրը հայտնի է «Լուվրի աղյուսակ» անվամբ (այսուհետև՝ LU):
3. Մասնագիտական զրականության մեջ առկա են տարակարծություններ՝ Ուսաշ լեռան տեղորոշման խնդրում: Չորրանալով մանրամասների մեջ հարկ է նշել, որ չբաժանվող կարծիքներից առանձիլ բնութանիմ Ուսաշ - մեկային Սահանդ համադրությունն է (F. Thureau-Dangin, TCL, III, p. VII): Ուսաշին «Լուվրի աղյուսակի» սկսած բնութագրումները առավել ըսմ բնարդ են Սահանդ լեռանը (3710մ):
4. H. W. F. Saggs, Assyrian Warfare in the Sargonid Period, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, pp. 145-154, sp. 151-154; К. Л. Оганесян, Ассиро-урартское сражение на горе Уауш (714 г. до н. э.), ИФЖ, 1966, № 3, с. 107-118; он же: Ассирийский поход в Урарту в 714 г. до н. э., ВОН, 1985, № 11, с. 69-80, сн. 71-74; J. B. Smith, A Tactical Re-Interpretation of the Battle of Uaush: Assyria and Urartu at War 714 BC, in "Anatolian Iron Ages 3", eds. A. Çilingiroğlu, D. H. French, British Institute of Archaeology Monograph No. 16, 1994, pp. 229-239.
5. W. Maniatis, Das stehende Heer der Assyrerkönige und seine Organisation, ZA, Bd. XXV, 1910, S. 97-149, 185-224; F. Malbran-Labat, L'armée et l'organisation militaire de l'Assyrie, Geneva-Paris, 1982; E. N. Cooper, The Organization of the Neo-Assyrian Army: The Presence of Aramean Soldiers in the Assyrian Forces, Cambridge, 1988; D. Noble, Assyrian Chariotry and Cavalry, SAAB, vol. 4, 1990, pp. 61-68; W. Mayer, Politik und Kriegskunst der Assyrer, Abhandlungen zur Literatur Alt-Syrien-Palästinas und Mesopotamiens, 9, Münster, 1995 և այլուր:

6. LU, տող 12, 22, 25, 132, 313, 320, 331, 426:
7. LU, տող 25, 320, 426: Արքայունմ 'եհծյալ, էհծեյազար» իմաստով արտահայտվել է նաև ANSE.KUR.RA ^{025b} «ծի(եր)» բառով (LU 12, 22, 132, 313):
8. LU, տող 26, 258 426: Տեղմինի՝ նման իմաստով ցվլալունց տես J. N. Postgate, *The Assyrian Army in Zattu*, "Iraq", vol. LXII, 2000, pp. 89–108, pp. 104–105: Հմմտ. И. М. Дьяконова, *АВНИУ*, 49 (233) и прим. 62; *The Assyrian Dictionary (CAD)*, K, Chicago, 1971, "Kaillabu", pp. 77–78; F. Malbran-Labat, *op. cit.*, s. 82–83; S. Dalley, *Foreign Chariotry and Cavalry in the Armies of Tiglath-Pileser III and Sargon II*, "Iraq", vol. XLVII, 1985, p. 37 և այլուր:
9. LU, տող 22, 325, 330:
10. LU, տող 258, 320:
11. LU, տող 258, 320:
12. LU, տող 320:
13. LU, տող 26, 258:
14. LU, տող 24:
15. LU, տող 25, 85 և այլուր:
16. LU, տող 123, 130, 289, 302, 321 և այլուր:
17. E. Botta et F. Flandin, *Monuments de Ninive*, Paris, 1849–1850, II, pl. 142–143. Ասորեստամյան բանակին վերաբերող դիտարկումներն ըստ բարձրացանդակների տես J. E. Reade, *The Neo-Assyrian Court and Army: Evidence from the Sculptures*, "Iraq", vol. XXXIV, pt. 2, 1972, pp. 87–112, pp. 101–107, pls XXXIII–XI.
18. Ասորեստամյան բանակի հրամլազմի մասին առավել մանրամասն տես F. Malbran-Labat, *op. cit.*, s. 113–163.
19. F. M. Fales, J. N. Postgate, *Imperial Administrative Records, Part II: Provincial and Military Administration*, SAA, XI, Helsinki, 1995, No. 126.
20. Արձամագրության հրատարակիչները հակված են կիրս անվան տակ տեսնել կամոմալդրապես 100 զինվորներից բաղկացած զորակները (cohorta)՝ դրանից բխող ենուտություններով: Տես F. M. Fales, J. N. Postgate, SAA, XI, p. XXVII.
21. L. Waterman, *Royal Correspondence of the Assyrian Empire (RCAE)*, vols. 1–4, Ann Arbor, 1930–1936, No. 304; S. Parpola, *The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West*, SAA, I, Helsinki, 1987, No. 11.
22. LU, տող 132:
23. F. Malbran-Labat, *op. cit.*, s. 156–158. Հայրունի եմ տեքստեր, որոնցում խոսվում է սոկալե-ին ենթակա զնդապետների մասին: Տես, օրինակ, ⁵⁰⁰րեծ կիր ⁵⁰³ և ⁵⁰⁴ սոկալե նախարարի(ն ենթակա) զնդապետները (L. Waterman, RCAE, No. 505).
24. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, pp. 31–32.
25. G. B. Lanfranchi, S. Parpola, *The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces*, SAA, V, Helsinki, 1990, No.

277. Յեղևս նաև SAA, V, No. 201-ը, որի խթան եղծված տեքստում հիշատակվում են Շարքու-Նմրուսների և Արգուիմայի մահանգապետը:
26. A. Fuchs, S. Parpola, *The Correspondence of Sargon II, Part III: Letters from Babylonia and the Eastern Provinces*, SAA, XV, 2001, No. 48.
27. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 32; A. K. Grayson, *Assyrian Rule of Conquered Territory in Ancient Western Asia*, in "Civilizations of the Ancient Near East" (Editor-in-Chief J. M. Sasson), vol. II, 1995, p. 960. Ցավոք, այս, ինչպես նաև ասորեստանյան բանակի միավորումներին վերաբերող մի քանի աղբյուրներ (S. M. Dalley, J. N. Postgate, *The Tablets from Fort Shalmaneser, "Cuneiform Texts from Nimrud 3"*, Oxford, 1984) մնացին մեզ անհասկելի: Դրանց սվլավները հայտնի են մասնավորապես զրականության մեջ առկա հղումներից:
28. Ասորգոնյան դարաշրջանում բարդական թծիք են տեղադրվել Ասորեստանի մայրաքաղաքներից Կալիտի մերձակողությամբ (S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 32): Ասորեստանյան զինուցակներից մեկում հիշատակվում են այս և նմանակազմ զորքերը՝ մայրաքաղաքների բուր-միավորումների տեսքով (3 pir-ra-ni և *Kal-ki և *Ni-ma-a և *Dur-Sharra-ukin): Shu L. Waterman, RCAE, No. 440.
29. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, pp. 106-107.
30. Հմմտ. Н. М. Дьяконова, АВИИУ, 49, грэм. 38.
31. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, p. 101.
32. S. Dalley, "Iraq", vol. XLVII, 1985, p. 38f (աղբյուրների հղումներով).
33. Ուղարտական բանակի «աջգայական գնդի» երկակի հիշատակում է պանծպանել «Լալրի աղյուսակը» (LU, տող 171, 191): «Գնդապետ» (ռեժ կիր) աստիճանով որարտական զինվորական է հայտնի ասորեստանցի Աշշուր-քիծուայի զինուցակից (L. Waterman, RCAE, No. 144; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 91).
34. SAA, V, No. 87-ում (տող 13), մասնավորապես, հիշատակվում են որարտական բանակի բուր-միավորումների երեք կրճատատարներ (3 LU. EN pir-ri):
35. LU, տող 333, որ նշվում է ասորեստանյան մահանգազուտուներին և նրանց գնդերին ուղղված Ասորգոնի ինչ-որ կամանքի մասին:
36. Չի բացառվում նաև Պարտուայի և Բիթ-Խամբանի զորքերի մասնակցությունը արշավանքին: Երկու մահանգներն էլ հիշատակվում են մեր նշած աղբյուրներում (SAA, V, No. 199, ln. 12; No. 200, ln. 17), թեև աղբյուրի մասնակցության մասին չի նշվում:
37. L. Waterman, RCAE, No. 312; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 200.
38. LU, տող 11-12:
39. L. Waterman, RCAE, No. 311; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 199. Այս ժամանակաշրջանը ներկայացնող երրորդ զինուցակից, որի ներխուժը հայտնի չէ, վերաբերում է Արգուիմայի զորքերին: Shu G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 277.
40. Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 172-173.

41. Զամուայի նահանգապետ Ադադ-իսիյայի՝ Սարգոնին տղրած զեկուզագրում հշկում է հրա հրամանատարության տակ գտնվող առկա ստեփի թվաքանակը՝ 1430՝ ներառյալ ապասարկող անձնակազմը (G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 215. Առաջիկա մանրամասն տես ն համեմատող J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, pp. 89-90):
42. J. N. Postgate, "Iraq", vol. LXII, 2000, p. 90, lns. 6-7. Հմմտ. G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 215 (lms. 6-7).
43. A. Fuchs, Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Cuvillier, Verlag, Göttingen, 1994, S. 224, Z. 116-117 (S. 349).
44. W. Manitius, ZA, Bd. XXIV, 1910, S. 129.
45. G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, p. XXVII
46. A. K. Grayson, Assyrian Rulers of the Early First Millennium BC, (858-745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto, 1996, p. 39 (ln. 25) ; p. 53 (lms. 15-16).
47. Կիմմերական արչազանցին ժամակից մարզպետների թիվը տրվում է ըստ A. Н. Иванни, Книжечный и Урарту накануне восьмого похода Саргона II, ВДМ, 1990, №. 3, с. 3-19 առանմասիւթարյան (էջ 5):
48. Այս թիվը պահպանվել է արքունիք տղրված ասորեստանցի Աշշուր-իիշուայի զեկուզագրում: Խոսքը վերաբերում է ուրարտական մարզպետ Սեթիմաի գորչակցին, որում ընդգրկված էին 3.000 հեռակալայիններ (¹²ERIM.MES GIL2.MES)՝ իրենց (¹²GAR-ս) և, այսպես կոչված կախարհ գործերի հրամանատարներով (¹²GAL. ka-lab.MES): Stu L. Waterman, RCAE, No. 380; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 88.
49. Ասորեստանյան զեկուզագրերից մեկում, որը վերաբերում է կիմմերա-ուրարտական ընդհարմանը հաջողյած ժամանակահատվածին, խիստ վնասված նախածումն հիշատակվում են ուրարտական բանակի 8.000 զենվորներ (SAA, V, No. 92, rev., ln. 3): Ուրարտական արքայրների համանայն, Բաբելոն արչապետ բանակի թվազանը (հեծյալ և հեռակալ) նաև է, ըստ տարրեր հրատարակչիների, 12.078 ¹³ զենվորից (Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (KYKH), Ерван, 2001, 35, лнц. стор., текст I, стк. 14-15) մինչև 31.878 ¹⁴ (F. W. Koenig, Handbuch der chaldischen Inschriften, I-II, 1955-1957, Graz, Nr. 7, Tafel 7) և անգամ 61.978 ¹⁵ զենվորի՝ 106 մարտակառքով (P. E. Zimansky, Ecology and Empire: The Structure of the Urartian State, SAOC, No. 41, 1985, Chicago, p. 56f. /Table 6, nt. B/): Վիտեբուխի, Լուչա և Կատարգա ցեղասպիտոթյունների դեմ տղրված արչազանցում ուրարտական բանակն ընկնել է 66 մարտակառք, 15.760 հեռակալային և նվազագույնը 1.460 ¹⁶ հեծյալ (KYKH, 32, стк. 13-14; 33, стк. 15-17): Զակոբ, և մեկ, և մյուս դեպքում վնասվածքն ունեն եական վնասվածքներ, ինչը բույլ չի տալիս հստակ հշիլ արչապետ բանակի թվազանը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ նշված թվերը վերաբերում են Իշգուխիի և Մեմուայի համատեղ կառավարման ժամանակաշրջանին, այսինքն՝ ուրարտական պետության վերջերի սկզբնական փուլին: Պետության հզորության շրջանում ուրարտական բանակը պետք է որ ունենար թվազանի եական ան՝ սեփական և այլ սեռազանցների հաշվին (ներակա կրկնների գործեր, վարձկան ռեժե նմ):

50. LII, տող 138:
51. L. Waterman, RCAE, No. 444; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 87.
52. L. Waterman, RCAE, No. 506; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 21.
53. LII, տող 140:
54. LII, տող 105, 138, 139^Շ
55. LII, տող 136:
56. LII, տող 289:
57. LII, տող 289:
58. LII, տող 131:
59. LII, տող 136, թերևս նաև տող 104-ը, որն ունի վնասված հասցիաները:
60. LII, տող 85, 131^Շ
61. LII, տող 85:
62. E. Özgen, Urartian Chariot Reconsidered: I. Representational Evidence, 9th – 7th Centuries B. C., "Anatolica", vol. 10, 1983, pp. 111–131; II. Archaeological Evidence, 9th – 7th Centuries B. C., "Anatolica", vol. 11, 1984, pp. 91–154; R. Merhav (ed.), Urartu. A Metalworking Center in the First Millennium B. C. E., Jerusalem, 1991; U. Seidl, Urartu as a Bronzeworking Centre, in J. Curtis (ed.), Bronzeworking Centres of Western Asia c. 1000–539 B. C., L. –N. Y., 1988, pp. 169–175; P. E. Zimansky, Ancient Ararat: A Handbook of Urartian Studies, pp. 210–214 (նշված զբաղմունքայինը) և այլուր:
63. L. Waterman, RCAE, No. 515; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, No. 164. Արարյուքի նշան տեղիկությունները ժամանակագրորեն համապատասխանում են LII-ի 79–90-թղ տողերում նկարագրված անցքերին:
64. LII, տող 51–54:
65. Տեքստում նշվում է. «Արքային՝ տիրոջս, քս ստրուկ Շարթու-Ննուրաննի) ...քանի որ արքան՝ իմ տերը, ասել էր, – «Բեկ-խոյնի՞ն որդին թող գա թեզ հետ», – թող գա նա զորքերով...»: Ըստ երատարակիչների, խոսքը ֆրանչանակ վերաբերում է Ալյաբրիայի արքայիկ Բեկ-սպար-խոյնի որդուն: Մեկ այլ տեքստում Շարթու-Ննուրաննին Սարգանին դժգոհություն է հայտնում Բեկ-խոյնի որդու կապակցությամբ, որն աստիստանյան ճանաչաբ էր ուղարկել անիտրձ երիտասարդների՝ երկրում պահելով լավագույն զինվորներին (SAA, V, No. 200):
66. A. K. G. Kristensen, Who were the Cimmerians and where did they come from? (translated from the Danish by J. Laessoe), Copenhagen, 1988, p. 42ff. ; G. B. Lanfranchi, S. Parpola, SAA, V, p. XX և այլուր:
67. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232.
68. К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 115 сл. ; он же: ВОН, 1985, № 11, с. 71 сл.
69. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153.
70. Տես նաև H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, pp. 151–152.
71. Տես նաև C. von Clausewitz, On War, Princeton, 1976, pp. 245–246.
72. LII, տող 139: Հմմտ. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 152; К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 115–116, рис. 2; он же: ВОН, 1985,

- № 11, с. 72–73, схема 1; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232, figs. 22. 1 – 22. 2. 1, 22. 4. 2 – 22. 5. 1.
73. Հմմտ. H. W. F. Saggs, "Iraq", vol. XXV, pt. 2, 1963, p. 153; К. Л. Оганесян, ИФЖ, 1966, № 3, с. 116–117, рис. 2; он же: ВОН, 1985, № 11, с. 72–74, схема 1; J. B. Smith, AIA 3, 1994, pp. 231–232, figs. 22. 4. 1, 22. 5. 2 – 22. 6. 1.
74. ԱԱ, տող 125–147:
75. Մանրամասները տես Ռ. Լ. Մանուկյան, Տիգրան Մեծ. Հայաստանի պաշտոնը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987, էջ 150–157:
76. ԱԱ, տող 137–138:

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԿԱԹՈՒԻԿԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայությանը շրջանում կաթոլիկական քարոզչությունը սկսվել էր դեռևս Կիլիկյան քաղաքապետության և խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանից՝ համդես գալով որպես «ունիթոսական» շարժում¹: Իրանում այն սկսվում է մոմղոլական Հուլայան պետության ժամանակաշրջանից՝ XIII դարի երկրորդ կեսից²: Իրանում առաջին միախոններն էր, որոնք կաթոլիկ դոմինիկյաններ ու ֆրանցիսկյաններ էին, քմակություն են հաստատում Թավրիզում: 1318 թ. Հոմի պապի կոմիսիոնով ստեղծվում է արևելյան գավառների արքեպիսկոպոսությունը, որի կենտրոնն էր Իրանի Մուլթանի թաղաքը³: 1320–1329 թթ. կաթոլիկական եպիսկոպոսանիստ թաղաքներ են դառնում Մարաղան, Թավրիզն ու Թիֆլիսը: Մարաղայի եպիսկոպոս Բարթոլոմեոսը համոզյալանում էր հայ ունիթոսների առաջնորդը⁴: Կաթոլիկ քարոզիչներին հաջողվում է հաստատվել նաև Լախիջևանի գավառի Ջահուկ, Երմզակ ու այլ շրջաններում: 1330 թ. Քոնստյանը հավաքված 12 վարդապետներ՝ մեծ մասամբ Հովհաննես Քոնկեու աղակերտներից, որոշում են կայացնում ոչ միայն անձամբ այլև իրենց ենթակա եպիստոպոսալ ժողովրդով հնազանդվել Հոմի Պապին և ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքը⁵: 1350 թ. Լախիջևանը ևս դառնում է կաթոլիկական եպիսկոպոսության մտավայր, որտեղ էլ մեկ ընդ անց Սալթանիեի անկումից հետո տեղափոխվում է եպիսկոպոսության կենտրոնը⁶: XVI դարի վերջերից, Եվրոպայի հետ քաղաքական ու առևտրատնտեսական կապերի ընդլայնման հետ Իրանում ու նրան ենթակա Արևելյան Հայաստանում ակտիվանում է եվրոպացի կաթոլիկ միախոնների գործունեությունը: Ըստական արքունիքը ինքնուրույն թր քաղաքական ու տնտեսական շահերից, չէր արգելում նրանց մուտքը Իրան:

Արևմտյան Եվրոպայի երկրների Ասիա ներթափանցման հարցում կարևոր դեր էր խաղում Վատիկանը և կաթոլիկ հոգևորականությունը: Հոմի միախոններն էր գալով Ասիայի երկրները և մասնավորապես նաև Իրան, ինֆորմացիա էին ծառայեցնում Արևմտեղին այլ երկրների վերաբերյալ ու հող մախապատրաստում նրանց հետագա գաղութացման համար: Կաթոլիկ եկեղեցին զանազան էր Արևելքի տիրակալներից

ձեռք բերել հատուկ արտոնություններ իր գործունեության արդյունավետությամբ ապահովելու համար: Ընդհանուր առմամբ Հոռմեական եկեղեցին Իրանում ձեռք է բերում հետևյալ իրավունքներն ու արտոնությունները.

- 1) մասնավոր սեփականություն ունենալու իրավունքը,
- 2) արքունիքին ու պետական պաշտոնյաներին վճարվող հարկերից ու տուրքերից ազատվածություն,
- 3) ազատ առևտրի իրավունք,
- 4) սրկլում շրջելու, այնտեղ ժամանակավորապես կամ մշտապես բնակվելու իրավունք,
- 5) քաղաքական ինտեֆախետ,
- 6) պետական պաշտոնյաների հատուկ հարգանքը վայելելու իրավունք,
- 7) ցանկացած ժամանակ շահի մոտ ընդունելություն ունենալու իրավունք,
- 8) քրիստոնեական հավատը պաշտելու ազատություն,
- 9) կաթոլիկական հոգևոր, կրթական ու այլ հաստատություններ քաղելու իրավունք,
- 10) Իրանում բնակվող բոլոր քրիստոնյաների հետ ազատ շփվելու իրավունք,

11) Իրանում բնակվող Հոռմի պապին ենթակա հոգևոր անձանց քացառիկ իրավական անձեռնմխելիության իրավունք⁷:

Կաթոլիկական եկեղեցիներ ու մատուցներ կային կառուցված Սպահանում, Շիրազում, Բեհդեք-Արասում, Թավրիզում, Շիրազում և այլուր⁸:

Համընդհանուր մահմեդականների կաթոլիկացման հարցում հոգևորականության ու շահական կառավարության անկտրում ղեմադրությանը և մպատակ ունենալով ընդլայնել Հոռմի ազդեցության շրջանակները՝ պապական քարոզչությունը կենտրոնանում էր հիմնականում հայ ազգաբնակչության վրա⁹:

Մեծ նշանակություն տալով հայերի կաթոլիկացմանը՝ նվրապացի միսիոներները անգամ որոշ մեթոդներ էին մշակել հայերի շրջանում արդյունավետ գործունեություն ծավալելու համար¹⁰: Ընտրելով շահական արքունիքից ձեռք բերած արտոնությունների կարողանում էին ազատ քարոզչություն ծավալել, որի հետևանքով հետևողների խմբեր ունեին Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքներում:

Մի շարք հանգամանքներ մպաստում էին Հայաստանի ու հարևան երկրների հայության շրջանում կաթոլիկության տարածմանը: Նախ այն, որ հայ ժողովուրդը գուրկ էր պետականությունից, հետևաբար մեկ պետության կողմից կրոնի պաշտպանությունից: Կաթոլիկ միսիո-

ներմերը օգտվում էին մի կողմից Հռոմի պատի հեղինակությունից, նրա նյութական ու կազմակերպչական լայն հնարավորություններից, մյուս կողմից՝ Իրանի քաղաքական իշխանությունների օժանդակությունից¹¹։ Այսպես, չափ Արաս Ա-ն շահագրգռված լինելով Իսպանիայի հետ առևտրական ու քաղաքական սերտ կապերի հաստատման մեջ՝ ընդառաջ է գնում իսպանացի միախոններին և նրանց Իրանի հայերի շրջանում «զորոծելու ազատություն» է տալիս¹²։ Կաթոլիկ միախոնների դրոշմաձևը և հայ եկեղեցին Հռոմին ենթարկելու նպատակով՝ նա անգամ Էջմիածնի վանքը քանդելու ու նրա քարերով Սպահանում նոր կաթոլիկական եկեղեցի կառուցելու հրաման է արձակում, որը քարեքայտաբար չի իրագործվում¹³։

Հայ բնակչության համակրանքը շահելու համար միախոններն ընդգրկողներն էին անում. ամվճար բուժօգնություն ու առանձին դեպքերում նյութական օժանդակություն ցուցաբերում, երկխոններին կրթում և այլն¹⁴։ Իրանի շահի բույրավորությամբ ու եվրոպացի միախոններն ընդգրկող դպրոցներ են բացվում Ելրազում ու Սպահանում¹⁵, Սյունիքի Ապարաններ, Ջահուկ և այլ հայաբնակ գյուղերում¹⁶ հայ երկխոններին ու պատանիներին կաթոլիկական ոգով դաստիարակելու համար։ Կաթոլիկ միախոնները զանազան միջոցներով փորձում էին դավաճանախոս անել հայ քարճոյաստիճան հոգևորականներին, կաթոլիկոսներին, առաջ քաշել իրենց հաջմար քեկնածուներին և այս հարցում երբեմն կարճատև հաջողություն էին ունենում¹⁷։ Օգտվելով հայ եկեղեցու ներքին երկպառակություններից և աջակցելով միմյանց դեմ պայքարող կողմերից մերթմեկն, մերթ մյուսին՝ կաթոլիկները հույս ունեին հաղթող կտրվի միջոցով իրականացնել հայ եկեղեցու միավորումը հռոմեականի հետ։ Սակայն օգտվելով միախոնների օժանդակությունից՝ հաղթողը այնտեղնայնիվ հուսախաբ էր անում նրանց, որովհետև չէր կարող հակառակ գնալ հայ ժողովրդի ու եկեղեցականների ճնշող մեծամասնության կամքին¹⁸։

Եվրոպացի միախոններն իր ժողովրդի ու հոգևորականության առաջ այն պատրասնքն էին ստեղծում, թե Հռոմի եկեղեցու դավաճանքն ընդունելու դեպքում հայ ժողովրդի ազատագրումը եվրոպական երկրների օգնությամբ հնարավոր կլինի¹⁹։

XVI դարից հայ հոգևորականության կողմից փորձեր էին արվում ներկայացուցիչներ ուղարկել Արևմտյան Եվրոպա ու Ռուսաստան օգնություն խնդրելու։ XVII դարի 70-ական թվականների վերջերին Հակոբ Ջուղայեցի կաթոլիկոսն անգամ մտադրություն ունենալով գնալ Եվրոպա՝ Հռոմի պատի ու Ֆրանսիայի կայսրի հովանավորությունը հայցելու, Էջմիածնում գաղտնի խորհրդածրոջով է գումարում ու պատվիրակություն կազմում, սակայն ինչ-ինչ պատճառներով իր այդ մտադրությունը չի իրագործում և մնում է Կոստանդուպոլսում մինչև իր մահը²⁰։ Այսպի-

սով XVII դարի երկրորդ կեսում, երբ հայ եկեղեցու ղեկավարները արևմտա-եվրոպական երկրներից օգնություն էին ակնկալում հայ ժողովրդին պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրելու համար, կաթոլիկական քարոզչությունը բախանցել էր անգամ հայոց հոգևոր կենտրոն Եջմիածնի կաթոլիկոսարան²¹:

XVII դարի սկզբին Նախիջևանի, Երմջուկի ու Ջառուկի շրջաններում կաթոլիկական քարոզչության հետևանքով դավանափոխ եղած հայերի թիվը հասնում է 19 հազարի, որոնք տեղավորված էին 3 քաղաքներում ու 12 գյուղերում²²: Այստեղի կաթոլիկական հայ համայնքը ուներ տասը գործող եկեղեցի: Կաթոլիկական դավանանքն ընդունած հայկական համայնքները մշտապես գտնվում էին Հոռնի ու եվրոպական միապետների ուշադրության կենտրոնում և վայելում նրանց հովանավորությունը: Նրանք միջնորդում էին շահի առաջ որպեսզի թեթևացնեն հայ կաթոլիկների հարկերն ու բարեկարգեն տնտեսական վիճակը, և լուսավորչական հայերին ակնհայտ դառնա կաթոլիկության ընդունման շահալիցությունը²³: Եվրոպական իշխանավորների միջնորդագրերի շնորհիվ նրանք արտոնություններ ունեին Իրանի տիրապետության տակ գտնվող տարածքներում²⁴: Նախիջևանի հայ կաթոլիկների մի շարք բնակավայրեր, որոնք «խաս» էին հայտարարվել, անցել շահի «անձնական խնամակալության ու հովանավորության տակ» և անմիջապես նրան էին վճարում հարկերը²⁵: Իհարկե, XVII դարի կեսերից սկսված Իրանի շահերի իշխանության քուլացման, պետական պաշտոնյաների յաքաշահումների ու անօրինակամությունների աճի պայմաններում մնան հողերի գյուղացիության դրոշյունը խիստ վատթարանում է, որի հետևանքով Նախիջևանի կաթոլիկ հայերի համայնքը սկսում է քայքայվել: Ըստերը մանեղականություն են ընդունում, մյուսները վերադառնում են իրենց նախկին հավատին կամ արտագաղթում²⁶:

XVII դարի վերջին կաթոլիկական միսիոներների գործունեության կենտրոն էր դարձել նաև Երևանի նահանգը: Կաթոլիկությունը տարածում էր գտել նաև Խաչենի ու Ղարաբաղի մելիքություններում, Գամձակի, Շամախու, Շիրվանի, Բաքվի, Դերբենտի, Նոյսու²⁷, նաև Թավրիզի, Շիրվազի²⁸ ու Սպահանի հայության շրջանում: XVII դարի վերջին կաթոլիկ քարոզիչները հազածանքներ են սկսում Թավրիզի հայ քահանաների ու ժողովրդի դեմ. տեղի հայոց թաղին կից կաթոլիկական եկեղեցի են կառուցում, քացում են դպրոց հայ մանուկներին կաթոլիկական ոգով կրթելու նպատակով²⁹:

Կաթոլիկ միսիոներները իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին Նոր Ջառայի՝ հայկական առևտրական կապիտալի կենտրոնի վրա՝ իրենց կողմը հակելով ատավել խաչոբ ու ազդեցիկ վաճառականներին և կարողանալով նրանց փողերն օգտագործել իրենց գործունեության հա-

ժայռ³⁰։ Միայն Մարահանում կային յոթ կաթոլիկական եկեղեցիներ, որոնցից յոթը գտնվում էին Նոր Ջուղայում³¹։ Եվ այնուամենայնիվ Նոր Ջուղան տեղի հայ հոգևորականության գլխավորությամբ եամուտ պայքար էր մղում կաթոլիկ միախոնրների դեմ, «սպասմունք մրանց և թույլ չէր տալիս քնակչությանը նրեխասներին մրանց մուտ ուղարկել սոլորելու»³²։ Այդ պայքարը հատկապես սրվում է շահ Սուլեյմանի իշխանության տարիներին։ Այսպես, Նոր Ջուղայի քեմակյան առաջնորդ Ստեփաննոս Եպիսկոպոսի քանքերի շնորհիվ շահ Սուլեյմանի հրամանով եզուխ միախոնրները դուրս են քշվում Մարահանից և քանդվում է կաթոլիկաների վանքը³³։ Կաթոլիկների դեմ իրենց պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով հայ հոգևորականությունը Նոր Ջուղայում 1640 թ. կիրճված տպարանում սկսում է տպագրել կաթոլիկական գաղափարները հեքթոր և հայ լուսավորչական եկեղեցու սկզբունքները պաշտպանող գրքեր, քանգվում են դպրոցներ ու գրադարաններ³⁴։

Լյուդովիկոս XIV կայսեր օրոք (1643–1715) Իրանում ակտիվացել էր ֆրանսիական միախոնրների գործունեությունը։ XVII դարի վերջին ֆրանսիացի կաթոլիկ միախոնրների քանքերով շահ Սուլեյման Հուսեյնը վերահաստատում է նրանց արտոնությունները, սակայն Նոր Ջուղայի հայոց եկեղեցին Հոռնի պապին ենթարկելու հարցում նրանց հաջողություն չեն ունենում³⁵։ Ֆրանսիական արքունիքը և հոգևորականությունը կաթոլիկական քարոզչությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով 1700 թ. Փարիզում քանգում են «Լյուդովիկոս Մեծի քոլեջը», որտեղ ուսանելու էին տարվում Արևելքից եայ և հայն պատանիներ³⁶։ XVIII դարի սկզբին Իրանում գտնվող Ֆրանսիայի դեսպան Միլեղը զբաղված էր ֆրանսիական վաճառականների ձեռք բերած կին արտոնագրերի վերանորոգմամբ ու Իրանա-ֆրանսիական առևտրական կապերի կարգավորմամբ։ Նրա քանքերով 1708 թ. Ֆրանսիայի և Իրանի միջև կնքված պայմանագրի համաձայն ֆրանսահայատակներին տրվում էին այն քոլոր արտոնություններն ու առավելությունները որպեսին վայելում էին այստեղ Անգլիայի ու Հոլանդիայի նպատակները³⁷։ Այդ պայմանագրի 27-րդ կետով ֆրանսիացի հոգևորականներին ու մյուս միախոնրներին իրավունք էր տրվում ազատ կերպով իրենց հավատի արարողություններն ու ծեսերը կատարել։ Ոչ ոք չպետք է նրանց նեղեր, այն պայմանով, որ քրիստոնյաները իրենց աներից ու եկեղեցիներից դուրս շին հավատին հակասակ արարքներ չգործեն։ Պայմանագրի նույն կետով Կովկասի քաղաքներում, Մարահանում, Քավրիզում ու Իրանի մյուս վայրերում քնակչող կաթոլիկ, եզուխ, դոմինիկյան ու օգոստինյան քահանաներին միանշանակ կերպով տրվում էր գործունեության ազատություն³⁸։ Միլեղը միջամտում է մահ միախոնրների և իրանահայ եկեղեցականների քախումներին։ 1708 թ. նա ձեռք է բերում շահա-

կան հրամանագրեր «մխտմերմերին նեղացնողներին պատժելու համար» հասցեանգրված մեկը Վրաստանի Վախթանգ թագավորին, մյուսը՝ Թավրիզի բեկլաքբեկին: Այդ հրամանագրերով հրահանգվում էր մխտմերմերին չնեղել ու չարգելել հայերին կաթոլիկական եկեղեցին հաճախել³⁹:

Թերևս նման հրամանագիրն է հինք տվել Թավրիզի բեկլաքբեկին տեղի հայերից 25 եռգուց, որոնք թույլ չէին տալիս մյուս հայերին հաճախել կաթոլիկ մխտմերմերի տներն ու եկեղեցին, որպես տուգանք 50-ական բունան գանձել⁴⁰: Եվ որպես շահական երկդիմի քաղաքակառույցում վատ ապացույց, կարելի է քերել Մատենադարանի կաթոլիկոսական դիվանի 1գ 247 վավերագիրը, որը իրենից ներկայացնում է պարսից շահ Մուլթան Հուսեյնի 1712 թ. հրովարտակը, որով շահը խիստ սահմանափակելով հայուքյան շրջանում կաթոլիկական քարոզչության շրջանակները՝ պահանջում է նաև նա վերադարձնել վերը նշված տուգանքները:

Մուլթի միջամտությամբ շահը իր նամակով Շամսխու խանից պահանջում է պաշտպանել մխտմերմերին ու կաթոլիկ հայերին «հայ վարդապետներից և ուրիշ հայերից»⁴¹: Հետագայում այստեղ կաթոլիկ մխտմերմերի դրոթյանը բավական լավ էր և, ինչպես նշում է Եղիա Կարմեցին 1722 թ. իր մի նամակում, «Շամսխու պատրիքն չաղ են»⁴²:

XVIII դարի սկզբին, երբ հայ ազատագրական շարժումը իր կողմնորոշման մեջ շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան, հայոց եկեղեցու դեկավարությունը փոխում է իր դիրքորոշումը կաթոլիկական քարոզչության հանդեպ և սկսում ջանքեր թափել մխտմերմերի ակտիվ գործունեությունը հայ բնակչության շրջանում սանձահարկելու ուղղությամբ: Այս ուղղությամբ լուրջ քայլեր է ձեռնարկում Էջմիածնի Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթոլիկոսը:

Ըստ Մ. Օրմանյանի Ալեքսանդր Ջուղայեցին Ամենայն Հայոց կաթոլիկոս էր ընտրվել 1706 թ. սեպտեմբերին⁴³, սակայն հավանաբար նրա ընտրությունը կատարվել էր ափելի վաղ, քանի որ Շահ Մուլթան Հուսեյնի նույն տարվա օգոստոսի հրամանագիրը հաստատում է նրա կաթոլիկոսական իրավունքները⁴⁴: Վերջինս դեռ մինչև Էջմիածնի կաթոլիկոս դառնալը հանդես էր եկել որպես «բունան պաշտպան հայադասան ուղղափառության», որի մասին վկայում են նրա գրած «Գիրք տոնանական, որ ասի վիճարանական»-ը (տպագրվել է 1687 թ.) և «Աղօթամատույց»-ը (տպագրվել է 1790 թ.)⁴⁵: Որոշ տվյալներով 1706 թ. հուլիսին արդեն Ալեքսանդր կաթոլիկոսը Նոր Ջուղայի Մովսես վարդապետի միջոցով ջանում է արքայական հրովարտակ ձեռք բերել կաթոլիկ քարոզչիների գործունեության դեմ⁴⁶, սակայն հայտնի չէ քե արդյոք այդ նրան հաջողվել է, քե՞ ոչ:

Կաթոլիկական քարոզչությունը իր քայքայիչ ազդեցությունն էր ունեցել ոչ միայն իրանահայտակ, այլև բուլղարահայտակ հայության շրջանում՝ XVIII դարի սկզբին խառնակ դրություն ստեղծելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում: 1707 թ. սեպտեմբերի 27-ին Կ. Պոլսի պատրիարք է դառնում Հովհաննես Ջմյունիացին, որի «պատրիարքութեան անցնիլը ծախտուած մըն էր կաթոլիկամիտ Հայերան համար»⁴⁷: Ալեքսանդր կաթոլիկոսը 1709 թ. փետրվարին մի նամակ է հղում Հոռմի պասլին՝ առաջարկելով նրան կասեցնել միախնդրների քարոզչությունը հայության շրջանում⁴⁸: Այս նամակը, սակայն, որևէ կերպ չի փոխել եկրպագի միախնդրների գործունեության ղմբազրը:

Հայության պայքարը կաթոլիկական քարոզչության դեմ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Ալեքսանդր կաթոլիկոսը ձեռք է բերում շահական հրովարտակներ, սահմանափակելու համար Իդունին հպատակ հայ բնակչության շրջանում կաթոլիկ միախնդրների գործունեության իրավունքները⁴⁹: Այնուհետև, ինչպես Հ. Հովհաննյանցն է նկատագրում, «հալածական վարքաց գնուսա [միախնդրներին]՝ ի Պարսկաստանայ հասուցանելով զբազում խաչուանգանս ժողովրդեանն դարձկոց ՚ի պասպականութիսն»⁵⁰: Հակոբ Վեղորի վկայությամբ Ալեքսանդր կաթոլիկոսը, փակել է տալիս կապույինների վանքը Թավրիզում և «տակնուվիս անում» Թավրիզը, Շամախին, Գանձակը և Թիֆլիզը⁵¹: Արդյունքում Թավրիզում քայքայվում է կաթոլիկների միաբանությունը, վանքը քանդվում է XVIII դարի կեսերին կաթոլիկության որևէ հետք չի մնում այնտեղ⁵²:

Հայտնի է, որ Իրանի Մեֆյան պետությունը XVIII դարի սկզբին լինելով բավական թույլ, ի վիճակի չէր վերահսկելու քաղաքական դրությունը իր երկրի ներսում, այնպես որ հետագայում կարիք է զգացվում դրանք վերահաստատել Իրանի նույն շահ Մուլթան Հուսեյնի օրոք 1718 թ.⁵³: Ինչպես տեսնում ենք, Իրանի շահական կառավարությունը վարում էր երկզնն քաղաքականություն՝ մի կողմից հովանավորելով կաթոլիկ միախնդրների, մյուս կողմից լցանկանալով կորցնել իր իշխանությունը հայերի նկատմամբ: Եվ այդ քաղաքականության վառ ապացույցները շահական հրովարտակներն են, որոնց մի մասը պաշտպանում էին կաթոլիկ քարոզիչների շահերն ու նրանց ազատ գործունեությունը, իսկ մյուս մասը՝ սահմանափակում նրանց գործունեությունը հայության շրջանում: Բացի վերը հիշատակված հրովարտակներից հայտնի են նաև շահ Աբաս Ա-ի 1610 թ. հրովարտակը, որով նա կարգադրում է Երևանի բնկյարրեկ Ամիր Գուրախանին հետաքննություն կատարել կաթոլիկ հայերի կողմից Հոխիսխեի մատուրների համալսակման հարցի շուրջ⁵⁴, շահ Աբաս Բ-ի 1653 թ. հրովարտակը, որ արգելում է կաթոլիկներին Նոր Զուղայում եկեղեցի կառուցել⁵⁵, շահ Մուլթան Հուսեյնի 1710 թ. հայերի հետ

կարծիքների ու բողոքականների ամուսնություններին²⁶, 1711 թ. միսիոներների քարոզչությանը, 1712 թ. և շահ Աշրաֆի 1726 թ. հայերի ու կաթողիկոսների միջև կրոնական վիճարանություններին վերաբերող հրովարտականները²⁷: Քանի որ կաթողիկ միսիոներների գործունեությունը հետագայում ևս չի դադարում, ուստի հայ լուսավորչականների պայքարը նրանց դեմ նույնպես կանգ չի առնում: Վերջիններս կաթողիկական քարոզչության դեմ հրովարտակ են ձեռք բերում մասնա շահ Նաղիդից²⁸: Այսպիսի պայմաններում հայ եկեղեցուն հաջողվում է պաշտպանել իր անկախությունը Հռոմի պապի իշխանությունից և հայ ժողովրդին խորը պատակտումից ու հետագա կաթողիկացումից:

Ստորև ներկայացնում ենք Մատենադարանի վերը նշված երկու հրովարտակները իրենց քարզմանությամբ՝ ձեռնպահ մնալով նրանց բովանդակության մանրամասն վերլուծությունից, որոնց բնագրերը ծանոթ են եղել մասնա Շ. Հ. Հակոբյանին²⁹:

Թարգմանություն

ՍՍ, Կարողիկոսական դիվան, քղթ. 1գ, վավ. 268

Մեծ. 74, 5x30սմ, գիր՝ նասրա՛լիղ

[Շահ Սուրան Հուսեյնի կնիքը]

Թարգմազույն հրաման եղալ, որ արժանապատիւ *վալիներմ*³⁰ ու *թեկլարքեկերմ*³¹, մեծառօղի *ամիրներմ*³² ու խորամխտ *խարիմներմ*³³, *դիվանի*³⁴ գործերի պատասխանատու քանի՞նսց *ամիրներմ*³⁵ ու քազավորական գործերի *մուրասարդեմներմ*³⁶ խմաման, որ օրերս քրիստոնյաների գլխավոր, Էջմիածնի Ալեքսանդր *խալիֆան*³⁷ տեղեկացրեց, որ ներկայումս *պատրիմներմ* ու *ֆարանգիմներմ*³⁸ նայ բնակչությանը իրենց դավամանքն են ուսուցանում, նրանց մուրեցնելու նպատակով նրանց շրջանում քնակություն են հաստատում, նրանց կամանց կնության են առնում և նման հարաբերությունների պատճառով հայերը դավանափոխ են լինում՝ ընդունելով *ֆարանգիմնեյի* հավատը: Այս դավանանքների միջև քազմաթիւ տարբերություններ ու հակասություններ կան, որոնց հետևանքով [նրանց հետևողների] երկու խմբերի միջև անհաշտ թշնամություն է ծագել, որը համզեցնում է մեծ անհանգստությունների:

Յրանսխաչի վեհապահն թազավորի գերապատիւ դեսպան Միքայելի (Միշել) ³⁹ խնդրանքով անբիծ *չար՝ի*⁴⁰ հսկողությամբ հաստատված արքայական պայմանագրում համար մեր արդար նպատակը նրա կատարյալ համապատասխանությունն է եղել պայծառ *չարիաթի*⁴¹ օրենքներին: Եվ այդ պայմանագրի կետերով *ֆարանգի պատրիմներին* տրված թույլտվությունը հայերին ուսուցանելու, իրենց բնակավայրերում հայերին բնակեցնելու ու նրանց հետ ամուսնական կապեր հաստատելու հարցերում, այնպես է ձևակերպված որպեսզի լուսաշող *չար՝ի*ն հակա-

ուակ արարքներ չգործվեն: Եվ ցամի որ վերոհիշյալ համայնքը խաբանի
 հպատակ է ու իր նավատի համար մշտապես ջիջրա⁷⁷ է վնասում, իսկ
 այդ հարցում համայնքի համաձայնությունը, որ *խաչիֆան*ի ու քահանա-
 ների հեմարամն է, քրիստոնեական հավատի անհրաժեշտ պայմաննե-
 րից է, ուստի *Ֆարանցիներ*ի վերջ նշված գործելակերպը այս առումով
 հակառակ է պայծառ *չարիար*իմ և նրա արգելումը չի նակատում վերո-
 հիշյալ պայմանագրի բովանդակությանը:

Անհրաժեշտ է, որ աշխարհաստատ խտուազույն հրամանի բովան-
 դակությամբ ծանոթանալուց հետո ամենուրեք շահական տիրապետու-
 յան տակ գտնվող տարածքներում, հատկապես քաղաքներում Սպա-
 հանում, Վրաստանում, Թալիզում, Համադանում, Գանձակում, Ղարա-
 բաղում ու Չուխուր Սաադում բնակվող *պատրիկներն* ու *Ֆարանցիներ*ը ե-
 քի նման արարքներ գործեն և դրանց մասին քրիստոնյաների վերոհիշ-
 յալ հոգևոր առաջնորդ, քաղաքներում Սպահանում գտնվող Ջուղա-
 յի Մովսես *խաչիֆան*, նյուս *խաչիֆաններն* ու քահանաները, վանական-
 ներն ու հայոց *քաղաքարժեք*ը⁷⁸ տեղեկացնեն, արգելեն ու թույլ չտան
 նրանց խառնվելու հայերի ու նյուս քրիստոնյաների հավատքի գործե-
 րին ու սովորալքներին՝ նրանց երեխաներին ու պատանիներին իրենց
 դպրոցներն ու եկեղեցիները տանեն, նրանցից պահանջեն դավանափոխ
 լինել, նրանց կանանց հետ ամուսնանան, նրանց բնակավայրերում եկե-
 ղեցիներ կառուցեն, տուն ու *մուր*ը⁷⁹ գնեն և այնպես վարվեն, որպեսզի
 հայերը *Ֆարանցիներ*ի հավատն ընդունելու ցանկություն ունենան: Ինչ-
 պես նաև եքի նման արարքների պատճառով հայերը ցանկանան իրենց
 բնակավայրերում գտնվող նրանց տներն ու *մուրքեր*ը նրանց համաձայ-
 նությամբ գնել, իր ժամանակի արժեքով ու գործիմաց անձանց խնացու-
 յամբ գումարը վերցնեն: *Պատրիկներն* ու *Ֆարանցիներ*ը թող գրվածը
 վճռված համարեն և վերոհիշյալ պայմանագրի ձևերը, որանց համա-
 պատասխանությունը ճշմարիտ *չար*՝ի օրենքներին մեր նպատակն է,
 այլ կերպ չմեկնաբանեն ու այս հարցում նրանց վրա չիմենվեն: Եվ վերո-
 հիշյալ *խաչիֆան*, Մովսես *խաչիֆան* ու նյուս *խաչիֆաններ*ը, քահանա-
 ներն ու *քաղաքարժեք*ը հրամանին համապատասխան գործելով, այն-
 պես անեն, որ հայերից որևէ մեկը *Ֆարանցիներ*ի հավատը չընդունի: Եվ
 թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն ու պատասխանատու
 լինեն:

Գրվեց 1122 թ. ուրի-օլ-ախար ամսին⁷⁵:

ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, փավ. 247
 մեծ. 59x25. 5 սմ, գիր մասբա՝ լիո/շիքասթե
 [Շահ Սուլթան Հուսեյնի կնիքը]

Այխարհասաստ երաման եղավ այն առթիվ, որ օրերս քրիստոնյաների գլխավոր Էջմիածնի Ալեքսանդր *խաչիֆաս* տեղեկացրեց, որ սրանից առաջ նրա խնդրագրի հիման վրա 1122 թ. ռաթի-օլ-սամի ամսին արքայական *փարվանչե*⁷⁷ էր արձակվել, որ թագավորության *ամիր-նեղը*, *հաքիմները*, *վեզիրները*⁷⁸ ու *ամիլները* այտուհետև թույլ չտան *ֆարամզիներից* ու *պատրիսներից* որևէ մեկին խտանվել հայերի հավատի գործերին ու սովորույթներին, խրախուսել նրանց կողմից իրենց դավամանքի ընդունումը, նրանց երեխաներին ու պատանիներին իրենց դպրոցներն ու եկեղեցիները տանել ու իրենց հավատով կրթել, նրանց կամանց հետ ամուսնանալ, նրանց բնակության վայրում եկեղեցի կառուցել, տուն ու *մուր* գնել, նեղել նրանց ու այնպես վարվել, որ հայերը դավամափոխ լինեն: Թագավորամիտ Թավրիզում բնակվող *պատրիսները* 1124 թ. *ռաթի-օլ-ավվալ* ամսին⁷⁹ *ռադամ*⁸⁰ են ձեռք բերել այն նշատակով, որ հայերի հետ մախկնի պես վարվել: Այնուհետև Նոթին Են-ծուքյան ծառա վերոհիշյալ *օլթայի*⁸¹ *թեկլարթեկին* ղեկնելով՝ 25 հայերից 50-ական բունան *չրեզար*⁸² են գանձել այն քանի համար, որ արգելել են հայերին *պատրիսներ* տներն ու եկեղեցիները գնալ: Այս դեպքը հայերի մեջ իրարանցում է առաջ բերել, և քանի որ այն հակառակ է արքայական հրովարտակին, [կարողիկոսը] խնդրեց վերջինս վերահաստատել, որպեսզի վերոհիշյալ պատրիսները արքայական *փարվանչեին* համապատասխան գործելով՝ նրա խնատից ու բովանդակությունից չշեղվեն, նման արարքներ չգործեն, հայերին չնեղեն ու բռնազանձած *չրեզարմենք* ետ վերադարձնեն:

Համապատասխանաբար, քանի որ *ֆարամզիների* վերոհիշյալ պահանջները հայերից պայծառ *չարիարթին* հակառակ են, ուստի կարգադրում ենք, որ թագավորության *վաչիները*, *թեկլարթեկերը*, մեծ *ամիր-նեղը*, *հաքիմները*, *վեզիրները*, *դարուդաները*⁸³, *ամիլները*, *դիվանի* գործերին *մուքասադդիներն* ու *մուքաշիրները*⁸⁴ այս առթիվ արձակված նախկին արքայական *փարվանչեի* բովանդակությունը անբերի կերպով կատարեն, նրա խնատից չշեղվեն և ամեն հարցում նրան համապատասխան գործելով՝ որևէ մեկի նրան հակառակվելու հնարավորություն չտան: Այտուհետև թույլ թույլ չտան, որ *պատրիսներից* ու *ֆարամզիներից* որևէ մեկը, անբիծ *չարի* ի՞նչ հակառակ, հայերին նեղի, նրանց երեխաներին ու պատանիներին մալթրեցնի կամ բռնի հավատափոխ անի կամ նրանց կամանց հետ բռնությամբ ամուսնանա: Եվ եթե թագավորության տարածքում, հատկապես թագավորամիտ Սպանումում, Թավրիզում, Վրաստանում, Գանձակում, Ղաբաթադում, Եիրվանում, Զուխտը Սաադում, Համադանում բնակվող *պատրիսներն* ու *ֆարամզիները* նման արարքներ գործեն և քրիստոնյաների վերոհիշյալ գլխավորը, Մուսես *խաչիֆաս*, մյուս *խաչիֆասներն* ու քահանաները այդ մասին տեղեկացնեն,

ապա բոլ արգելեն ո թուլ շտան *Ֆարամցիմնդի* որևէ կերպ խառնվել հայերի հովատի գործերին ո սովորություններին, մրանց երեխաներին ո պատանիներին գայրակղել կամ ստիպել, որ ընդունեն *Ֆարամցիմնդի* հավատը, այլ բողմեն որպեսզի հայերը ամեն հարցում իրենց հավատին ո սովորություններին համապատասխան շարժվեն և որևէ մեկը չխաղընդդուի դրան: Եվ այս հարցում պետք է ամեն կերպ օժանդակել հայերին ո թուլ շտա, որպեսզի մրամցից այն մի քանիսը, որ մեղկայունս *Ֆարամցի* են դարձել, *պատրիմնդի* եկեղեցիները աղոթքի զնամ ո մրանց հետ շփվին: Եթե որևէ մեկ այս հրամանին հակառակ գործի, ապա բոլ պատժեն, և այս ընդունելով որպես խիստ կարգալուրջություն, մրա կատարման հարցում ջանք չխնայեն ո յթերաման:

Գրվեց 1124 տորմած շավալ ամսին⁸⁴:

KRISTINE KOSTIKYAN

CATHOLIC PROPAGATION IN IRAN AND THE ARMENIAN REALITY

The dissemination of Catholicism among Armenian people, outlined from 15th century was a dangerous phenomenon for a nation devoid of state. In consequence of the intensified missionary activities in Safavid Iran in sixteenth-seventeenth centuries and some other suspicious conditions the number of Catholic Armenians became more and more, bringing a split in the Armenian population.

The majority of Armenian Gregorian clergy, especially in New Jugha, carried on tireless struggle against Catholic propaganda.

Safavid shahs carried out two-faced policy in respect of the existing antagonism between catholic missionaries and the Armenian Gregorian Church. They retained the rights and privileges of Catholic missionaries in order to keep their friendly relations with European countries in safe. But being interested in keeping up their supremacy over the Armenians, they curbed the rising influence of Catholics. This policy may be easily traced in their edicts. A group of these edicts, gotten by the missionaries, protected their rights to carry out free activities in the territory of Safavid Iran. Another group issued by the request of the Armenian Gregorian church and clergy, restricted their rights with respect to the Armenian population of Safavid Iran. Three edicts of this group, issued by Shah Sultan Huseyn according to the request of Alexander and Astvatsatur Etchmiadsin Catholicoses, are kept in Yerevan Matenadaran.

These edicts were issued in the decline period of Safavid Iran, when shah was unable to keep order in his state. Nevertheless most likely these edicts had given Alexander Catholicos of Etchmiadsin the power to cause damage to the activities of Catholic missions among the Armenian population.

1. Բ. Նդիսյան, Հայ հարանվանությունը քաժանումը, Անթրիպա, 1971, էջ 95:
2. А. У. Мартиросян, Армянские поселения на территории Ирана в XI—XV вв., Ереван, 1990, с. 135.
3. Ա. Վ. Բայրության, Արևելյան Հայաստանում միսիոներների գերմանությունից պատմությունից, ՊԺՀ, 1989, No 2, էջ 148:
4. Հովհաննես Առնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977, էջ 22:
5. Նույն տեղում, էջ 24:
6. تاریخ ایران دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج] تهران ۱۳۸۰. ص ۱۸۲
7. М. Г. Г. Панахиян, О режиме капитуляции в Иране (1568—1715), Автореферат диссертации, Москва, 1962, с. 15.
8. دکتر مریم میراحمدی دین و دولت از عصر صفوی. تهران ۱۳۹۰. ص ۱۰۴
9. А. У. Мартиросян, ук. соч., с. 135—136. В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке. Ереван, 1969, с. 124.
10. Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII—XVIII դարերում), Արևելագիտական ժողովածու, Երևան, 1960, էջ 267:
11. Տ. Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 268:
12. В. А. Байбуртян, ук. соч., с. 127.
13. Նույն տեղում, с. 129.
14. В. А. Байбуртян, ук. соч., с. 126.
15. Л. А. Семенова, Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и средний Восток. Сборник статей, Москва, 1962, с. 99.
16. Բ. Նդիսյան, նշվ. աշխ., էջ 96:
17. Л. А. Семенова, Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и средний Восток. Сборник статей, Москва, 1962, с. 98.
18. Աշ. Հովհաննիսյան, Դժվագներ հայ ազատագրական մարտի պատմության, գիրք 2—րդ, Երևան, 1959, էջ 304:
19. Նույն տեղում, էջ 175:
20. Նույն տեղում, էջ 206—219:
21. Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 122:
22. Տ. Հ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (XVII—XVIII դարերում), Արևելագիտական ժողովածու, Երևան 1960, էջ 267:
23. Ա. Վ. Բայրության, նշվ. աշխ., էջ 149:
24. Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 176—177:
25. Ա. Վ. Բայրության, նշվ. աշխ., էջ 150:
26. Ա. Վ. Բայրության, նշվ. աշխ., էջ 150—151:
27. Ա. Վ. Բայրության, նշվ. աշխ., էջ 155:
28. Л. А. Семенова, ук. соч., с. 99.
29. Հ. Առնեյան, Պատմական Քավոնիզի հիմ հայությունը, Դիվան Արդարատականի հայոց պատմության, հատոր Ա, Պեյրոս, 1980, էջ 73:

30. В. А. Бейбуртян, ук. соч., с. 135.
31. Հ Հովհաննյանց, Պատմություն Նոր Ջողայր որ յԱսարահան, հ. 2, Նոր Ջողա, 1881, էջ 265:
32. Л. А. Семенова, ук. соч., с. 100.
33. Հ Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 266-267:
34. В. А. Бейбуртян, ук. соч., с. 143.
35. تاریخ ایران دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج] تهران ۱۳۸۰ ص ۱۱۲
36. Բ. Նիդիայան, նշվ. աշխ., էջ 97:
37. М. Г. Г. Панаконян, О режиме капитуляций в Иране, с. 13.
38. میدانسین نوائی اروپاے سیاسی ایران و اروپا در عصر صفوی، تهران ۱۳۷۲، ص ۱۳۳.
39. Հ Աճնյան, նշվ. աշխ., էջ 74:
40. Ըստ ստորև ներկայացվող ՄՄ, կարողիկոսական ղեկանի 1գ, 247 փաստաթղթի, այդ ղեպցերը տեղի են ունենել կարողիկ միսիոներների ջանքերով 1124հ. ք տարի-օր-ավվալ (1712 թ. ապրիլ) ամապրվով հրապարակված հրամանագրի հիման վրա:
41. Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 581-582:
42. Նիդա Կարենցու ղեկանց. Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Արախանյանի, Երևան 1968, էջ 172:
43. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջմիածին 2001, էջ 3183:
44. ՄՄ, Կարողիկոսական ղեկան, քրթ. 1ք, վավ. 224:
45. Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 3184-3185:
46. Հ Աճնյան, նշվ. աշխ., էջ 75:
47. Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 3188:
48. Նույն տեղում, էջ 3205:
49. ՄՄ, կարողիկոսական ղեկան, քրթ. 1գ, վավ. 268, 247: Այդ հրավարտակների հակիրճ բովանդակությունը տես Միմեոն Երևանցի, Ջանրո, Վաղարշապատ 1873, էջ 220:
50. Հ Հովհաննյանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 268:
51. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 3207:
52. Հ Աճնյան, նշվ. աշխ., էջ 78:
53. ՄՄ, կարողիկոսական ղեկան, քրթ. 1գ, վավ. 272:
54. Հ Դ. Փախազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2, էջ 90-91:
55. Լ. Գ. Միմապյան, Դիվան Մ. Ամենափրկիչ վանքի 1606-1960, Նոր Ջողա 1983, էջ 111:
56. Նույն տեղում, էջ 115:
57. Նույն տեղում, էջ 116:
58. ՄՄ, կարողիկոսական ղեկան, քրթ. 1գ, 375ա:
59. Տ. Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 276-282:
60. Վալի —Իրանի ծայրամասային 4 վիլայեթներից (Արաքիտան, Լուրիստան, Վրաստան և Ջոլդան) մեկի կառավարիչն է: Վալիները պատկանում էին տվյալ վիլայեթի տիրակալների տոհմին և ունեին ինքնավարության իրավունք: Համարվում էր, որ աջակցի վիլայեթի նկատմամբ չէր մտնում Իրանի պետական գանձարան: Վալին պարտավոր էր կառավար

րությանը ցուցաբերել ռազմական աջակցություն և շահին ռոտարկել բառաբանն: Վրաստանի վաղին Իրանից որպես ռոնիկ տոսնում էր այնտեղ հավաքվող հարկերից: Այդպիսով ենթադրվում էր, որ վրաց վաղին Իրանի պաշտոնյա էր:

61. «Ինկլյարբեկ»- Մեխյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կոսակալություններում իշխող յամներն ու ամիրները կոչվում էին «թեկլարբեկեր»: Մատենադարանի պարսկերեն վավերագրերը հրատարակվեց, պրակ Ա, կազմեց Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1956, էջ 106:
62. «Ամիր - Բարձրաստիճան գերահրամանատար, քոչվորական ռազմական միավորումների առաջնորդ», Նույն տեղում, էջ 104:
63. «Հաքեմ - Գավառապետ, քաղաքացիական դատավոր», նույն տեղում, էջ 111:
64. «Դիվան - Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի ինստուտ», նույն տեղում, էջ 108:
65. «Ամլը - «ամալ» (գործ) քառի ենթակայական ձևն է, որ նշանակում է «գործ կատարող», «գործադրող»: Հոգնակի ձևն է «ամմալ»: Դրանց այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկվում քոլոր հարկատու օրյեկտները չափում ցանքերն ու այգիները, ցուցակագրում քոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օրյեկտից որքան հարկ պետք է գանձվի...», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, էջ 104:
66. «Մտքասաղդի - Վերակացու: Այսպես էին կոչվում հատկապես ղեկամական հարկային գործերի վերակացուները՝ «մտքասաղդիան-ն ումուր -ն ղիվանի», նույն տեղում, էջ 114:
67. Խալիֆա քառը, որ նշանակում է մարզարեի փոխանորդ, մանեղրականների առաջնորդ, կիրառվում էր նաև հայերի առնչությամբ՝ ընդհանուր «հոգևոր առաջնորդ» իմաստով: Այդպես էին մեծարվում ինչպես էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսները, այնպես էլ եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները:
68. Տեքստում այդպես են նշվում եվրոպացի կաթողիկե միսիոներները:
69. Նուրը Ճրքամայի վերոհիշյալ դեպպանի ու նրա ցանքերով կնքված պայմանագրի մասին է:
70. «Շար'ը»- Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, էջ 117:
71. «Շարիաթ» - Մուսուլմանական կրոնական օրենքներ: Այսպես էր կոչվում նաև հոգևորականների խորհուրդը՝ շար'ը», նույն տեղում:
72. «Ճիզա» - Ոչ մուսուլման ուսուցանողից գանձվող գլխահարկ, որ կամիսիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս աշխատունակ տղամարդուց: Ցուրաքանչյուր գյուղից գանձվող ջիզան հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մատչաններում գրանցված՝ տվյալ գյուղի համայնքի անունով: Բացի այդ ընդհանուր գումարից մի քանի տարիս մի

անգամ, որը տուկոս էր բարելուում այդ որոշյալ գումարի վրա, որը գանձվում էր առանձին և կոչվում էր «թախավաթ-է քիչյա», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, 118:

73. **Քարամբաջ** – քաղաքագլուխ, մաս զեղջավագ: Տվյալ դիպուտն նկատի ունի Նոր Ջողայի հայկական համայնքի գլխավորին:
74. **«Մուշ»** – Մեծականություն, տիրույթ, ժառանգաբար կամ դրամով գնամ ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, 115:
75. 1710 թ. մայիս:
76. **«Փարլամեն»** – Պաշտոնական գրություն, կրամամագիր, կրոնաբուսակ», նույն տեղում:
77. **«Ավեր»** – Մեջբանների օրոք այսպես էին կոչվում այն բարձրաստիճան Ֆինանսական պաշտոնյաները, որոնք մուսուլմանների հետ միասին հսկում էին պետության, արքունիքի և բանակի ֆինանսներին և զինվորականությանը տրվող տնտեսական ծախսերի: Նրանք անմեղապես պատասխանատու էին կրոնադ-ուղ-գուլիի առաջ և փաստորեն հանդեսանում էին վերջինիս ազնվամեծը ֆինանսական գործերի կատարելություններում՝ սարքաբարություններում» Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, երևան 1959, էջ 232:
78. 1712 թ. ապրիլ:
79. **«Նազամ»** – Պաշտոնական գրություն, քաղաքական եղևկարուսակ», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, էջ 119:
80. **Օրցա** – Բառացի նշանակում է «երկիր»: Այն սեփականության մի ձև էր, որի ժամանակ հողը որպես ավատ տրվում էին քուլտը գեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Օրցա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված զինքում որոշյալ քանակությամբ զոռք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օրցայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր կրքերի ու զոռաչարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել:
81. **Էքեզամ** – իրի, կրաչխիք վճարվող գումար, տուգանք:
82. **«Դարտուս»** – Գլխավոր ոստիկանապետ և հարկահան», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, էջ 108:
83. **«Մուցաչիք»** – Հարկահավաք, վերակառու, ծեծնավոր: Այսպես էին կոչվում հատկապես այն պաշտոնյաները, որոնք չափում էին կախիլում կտուսկված բերքը և առանձնացնում էին կաշվածասեղջոզն ու պետությանը տրվող տնտա-հարկը: Համանիլ՝ «թանձրագր», Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ Ա, էջ 114:
84. 1712 թ. նոյեմբեր:

Կարտիկոսական դիվան, 1գ 268

[مهر شاه سلطان حسین]


فرمان عالی شد آنکه والیان چهلان قشان و بیگلربیگیان و امراء مقام و حکام کرام و وزراء در آیت کیش و عمال کفایت اندیش متکفلان امور دیوانی و

متصدیان لشغال و مهام سلطانی بدانند که درین ایام عمدةالمسیحیه
 الکسندر خلیفة اربع کلیسیا پهرش رسانید که درین اوقات پادریان و فرنگیان
 جماعت ارامنه را بطریقه و مذهب خود درس و تعلیم میدهند و در میان
 جماعت مزبوره جهة لغو آن طایفه سکنی و زنان ایشانرا خواستگاری و
 نکاح مینمایند و اینگونه اختلاط و آمیزش طوایف مزبوره با ارامنه موجب
 تبدیل مذهب ارامنه بمذهب فرنگیان میشود که با یکدیگر ثباین و اختلاف
 زیاد دارد بدینجهت که فیما بین این دو طایفه باعتبار اختلاف مذهب معانته
 و معادات مستحکم است منجر بمفاسد عظیمه میگردد و بنا بر پاسداری شرح
 اطهر در عهدنامه همایون که حسب الاستعداد زیدالاشباه میگاشیل ایلچی
 پادشاه و الاجاء فرستاده صادر شده در هر باب مطابقت قوانین شریعت خرا
 منظور نظر حقایق منظر فرموده ایم و قید رخصت تعلیم ارامنه از پادریان
 فرنگی و سکناى ارامنه در اماکن ایشان و مواسلت با آنجماعت که در
 عهدنامه مزبوره شده در صورتی است که امور مخالف شرح اتور بطور
 نرسد و چون جماعت مزبوره مطیع اسلام و قبول جزیه جهة بقا برطریقه
 و دین خود نموده اند و تعلق رضای آنجماعت بنای خلیفه و کشیشان ایشان
 درین قسم امور از لوازم دین مسیح است بنابراین تکالیف مزبورۀ فرنگیان
 درین ابواب مخالف شریعت خراست و ممانعت ایشان درین موارد مطابقت با
 مضامین عهدنامه مزبوره ندارد میباشد که چون بر مضمون حکم جهاتصناع
 لازم الاتباع شرف اطلاع حاصل نمایند من بعد هر گاه پادریان و فرنگیان که
 در قلمرو همایون خصوصاً دارالسلطنة استهبان و گرجستانات و تبریز و
 همدان و گنجه و قراباغ و چورسعد سکنی دارند مرتکب امور مزبوره
 میشده باشند و عمدةالمسیحیه مزبوره و خلیفه موسس خلیفه بزرگ
 جولاہ دارالسلطنة استهبان و سایر خلیفگان و کشیشان و رهبانان و
 کلاتران ارامنه معالک محروسه ایشان اعلام نمایند معانته نموده
 نگذارند که بهروجه من الوجوه دخل در دین و آئین ارامنه و سایر مسیحیه
 نموده اطفال و جهال ایشانرا بکلیسیا و مکتبخانه خود برند و آنجماعت
 تکلیف تبدیل مذهب خود بدین فرنگی نمایند و بازنان طایفه مزبوره
 مواسلت و در اماکن سکناى ایشان کلیسیا ساخته خانه و ملک خریداری و
 پنحوی سلوک نمایند که موجب میل ارامنه بمذهب فرنگیان شود و چنانچه
 در خانهائی که بالفعل در محال ارامنه دارند بوضع مزبور سلوک مینمونه
 باشند هر گاه ارامنه خواهند که خانه و ملک ایشانرا بر رضای آنجماعت
 خریداری کنند بان جماعت بقدیمت وقت و وقوف اهل خبرت مبیع و قیمت را
 از ایشان بازبافت نمایند و پادریان و فرنگیان حسبالمسطور مقرر دانند و
 قیود عهدنامه مزبوره را که در هر باب موافقت قوانین شرح مبین را منظور
 نظر خورشید قرین داشته ایم حمل بوضع دیگر ننمونه درین خصوص
 مستند بان نگرددند و خلیفه مزبوره و خلیفه موسس و سایر خلیفگان و
 کشیشان و کلاتران مزبوره بر توج فرموده عمل نموده نوعی نمایند که
 احدی از ارامنه اختیار مذهب فرنگی ننماید و درین ابواب قفسن دانسته در
 مهده شناسند.

تحریر فی شهر ربیع الآخر سنة ۱۱۷۲



حکم جهاننطاق شد آنکه چون درینوقت عمدتالمسیحیه فکسندر خلیفه
اوج کلیسیا عرض رسانید که قبل ازین بر طبق مرض مشارقبه پروانچه
اشرف بتاریخ شهر ربیع الثانی سنه ۱۱۲۲ شرف صدور یافته که امرای و
حکام و وزراء و عمال ممالک محروسه من بعد نگذارند که احدی از فرنگیان و
پادریان دخل در دین و مذهب ایشان نموده جماعت ارامنه را بمذهب خود
ترغیب نمایند و اطفال و جهال ایشانرا بکلیسیا و مکتبخانه خود برند و
بطریقه خود درس و تعلیم دهند و با زنان ایشان مواصلاست نمایند و در اماکن
ایشان کلیسیا ساخته ملک و خانه خریداری نمایند و نحوی سلوک کنند که
باعث تبذیر مذهب ارامنه بفرنگی شود و مزاحمت بممال ایشان رسانند و
درینوقت پادریان سکنه دارالمسلطنه تبریز رقص بتاریخ شهر ربیع الاول سنه
۱۱۲۴ صادر نموده اند که باز بطریقی که قبل ازین با ارامنه سلوک مینموده
اند سلوک نمایند و بنایب عالیجاه بگنزیبگی الکا. مزبور عرض و بیعت و
پنچنفر از ارامنه را گرفته از هر یک مبلغ پنجاه تومان التزام بازداشت نموده
اند که مانع نترند ارامنه بخانهها و کلیسیاهای پادریان نشوند و امر مزبور
باعث تفرنگی ارامنه و خلاف فرمان مطاع است و استدعا. رقم ناکاید دراین
ابواب نموده که پادریان مزبوره بتحصوی که پروانچه اشرف صادر شده عمل
نموده از مضمون و مدلول آن تخطف نورزند و مرتکب امور مذکوره نشده
مزاحمت بممال ایشان نرسانند و التزاماتی که بشرح فوق از ارامنه
گرفته شده بایشان پس داده شود بتأخیرین چون تکلیف مزبوره
فرنگیان بارامنه خلاف شریعت غرامت مقرر فرمودیم که ولات و
بیرگزیبگیان و امرای عظام و حکام و وزراء و داروغگان و عمال گرام و
مستبدیان و مباشرین امور دیوانی ممالک محروسه در هر باب مضمون
پروانچه مطاعه را که قبل ازین درین ابواب صادر شده اجری نموده از
مضمون و مدلول آن عدول و انحراف نورزند و در هر باب از انقرار بعمل آورند
و احدی را نیز مجال تمرد و تخطف از مضمون پروانچه مطاعه مزبوره ندهند
و نگذارند که من بعد بخلافشرح اظهر احدی از پادریان و فرنگیان مزاحم
اعمال ارامنه مذکوره شده اطفال ایشانرا اتقوی و تکلیف بمذهب فرنگی یا
بجبر و عدم رضای ارامنه تزویج زنان ارامنه نمایند و هر گاه پادریان و فرنگیان
که در ممالک محروسه بتخصیص بر در دارالمسلطنه استغهان و تبریز و
گرچستان و گنجه و قراباغ و شیروان و چخورسعد و همدان سکنی دارند
مرتکب امور مزبوره میشده باشند و عمدتالمسیحیه مشارقبه و خلیفه -
مومس و سایر خلیفگان و کشیشان ارامنه ممالک محروسه بایشان اعلام
نمایند ممانعت نموده نگذارند که بهیچوجه من التوجه دخل در دین و آئین
ارامنه نموده اطفال و جهال ایشانرا افواد و تکلیف مذهب فرنگی نمایند و
نگذارند که ایشان در هر باب موافق دین و آئین خود عمل نمایند و احدی
ایشانرا مانع از طریقه خود نشود و درین ابواب ابعاد و اعانت حساسی در باره
ارامنه بتقدیم رسانند و نگذارند که چند نفری از ارامنه که درینوقت فرنگی
شدند بتماز و کلیسیای پادریها روند و با ایشان آمیزش نمایند و هر گاه
احدی بخلاف امر مزبور عمل نماید او را تنبیه نمایند و درین ابواب قدغن و
اهتمام تمام لازم دانسته مسامحه و اعمال نورزند.



ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՅԱՆԻՍԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԵՊԱԳՐՈՒՄ

Այանիսի (սեպագրի Ռուսախիմիչի նոր քաղաքի՝ Վանա լճի արևելյան ափին) հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված Ռուսա II-ի ծավալուն արձանագրությունը իր քաղում և քազմարնույթ նորություններով զգալի հետաքրքրություն է ներկայացնում Ռուսարտի պատմության և քանասիրության ուսումնասիրության համար:

Այդ արձանագրությունը հնարավորություն է ընձեռում անդրադասմալու ուրարտերեն նոր բառերի մեկնաբանությանը, անցյալում հայտնի բառերի ժամանակակից գրականության մեջ վերագրված բարձրամտությունների վերանայմանը, ուրարտերեն բառերի և նրանց շումերական համապատասխանությունների քաջահայտմանը, պաշտամունքային բնույթի խրթին տեքստերի համազօլի իմաստավորմանը, հրատարակված արձանագրությունների կազմած հարուցող ընթերցումնելի ճշգրտմանը և եղծված ու պակասավոր հատվածների վերականգնմանը, տեղանունների մատուցված նոր տարբերակների կանխորոշմանը և այլն:

Հետևաբար, հաշվի առնելով, որ ցննարկման ենթակա հարցերի շրջանակը բավական ծավալուն և խայտաբղետ է, ծրագրել ենք նախօրոք առանձին հոդվածաշար, իսկ հետագայում մակ հատուկ մեմագրություն նվիրել դրանց ուսումնասիրությանը: Ելնելով ասվածից, սույն հոդվածում առայժմ քաղաքարվում ենք սուկ երեք անհայտ բառերի ստուգաբանությանը:

ԹԵՐԻՆԻ և ԵՏԻՆՈՒ ԲԱՅՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այանիսի նոր արձանագրության փաստական նյութի հիման վրա վերջերս ստույգ պարզվել է, որ ԹԵՐԻՆԻ բառը առաջին անգամ հիշատակվել է դեռևս XIX դարի 80-ական թվականներին հրատարակված Մեմուսայի մի արձանագրության մեջ, որը ծագում է Յոլակեքտից (Մեծ Արա-

բառի հյուսիսային լանջին)¹: Մակայն աննշան չափով եղծված լինելու պատճառով (տուժած է այդ բառի սոսկ առաջին i վանկը) երկար ժամանակ հարկադրաբար անտեսվել է այն մասնագիտական գրականության մեջ:

Թվում էր, թե XX դարի 60-ական թվականների սկզբին Կարմիր-բլրում հայտնաբերված Ռոսա II-ի ծավալուն արձանագրությունը կառող էր վերջակետ դնել Թեբինո-ի ուղղագրության առթիվ եղած անտեղյակությանը: Մակայն այս անգամ էլ, փաստական նյութի տակափոխում պատճառով, հիշյալ բառի սկզբի հիանալի պահպանված i վանկը մասնագետների կողմից անզուշաբար վերագրվել է նրան նախորդող LUGAL-տիմո «աքքայական» քառակարգությանը և, այդպիսով, կարծեցյալ *թեբինո-ն սխալմամբ անուշվել թերի հայտնի բառի հետ²:

Մեզ հետաքրքրող Թեբինո-ն, ի վերջո, կրկնակի հիշատակվում է նաև Ռոսա II-ի Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրության մեջ, որի հիման վրա վերջնականապես ճշգրտվում է այդ բառի ուղղագրությունը³: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ Թեբինո-ն այստեղ հանդիպում է տողակզբին⁴՝ հիանալի պահպանված վիճակում, ուստի նրա քնթերցման հավաստիությունը բացարձակապես ոչ մի կասկած չի հարուցում:

Համատուակի այս ներածականից հետո, կարծում ենք, ժամանակագրական կարգով արժե անդրադառնալ Մննուայի և Ռոսա II-ի վերոհիշյալ արձանագրությունների կոնկրետ փաստական նյութին և հարկ եղած չափով պարզել, թե ինչ կարելի է ասել նրանց և ուրարտական այլ խցենտիկ տեքստերի հիման վրա Թեբինո բառի մասին:

Ահա Մննուայի⁵ Յոթակնխում հայտնաբերված արձանագրության մեջ հետաքրքրող հատվածը.

1. [H]al-di-ni-ni uš-ta-še-n[i]
2. [i]-ú Me-nu-a-še Er-ku-a-ḫ[i]
3. [KUR-n]i i-ú^{URU} Lu-ḫi-ú-ni-ni KUR-ni
4. [i]-še-er-ḫi-ni i-ni e-si
5. [Me]-nu-a-še e-še-ni-ni du-ni
6. [še-d]i-i-š-tó-a-li H]al-di-ni-li KÁ
7. [É. GAL. ba-du-[s]i-i-e⁶

Ի դեպ արժե առայժմ ձեռնպահ մնալ սոսկ այս արձանագրության փաստական նյութի հիման վրա անմիջապես միակողմանի դիմելու Թեբինո բառիմաստի բացահայտմանը: Նման հապճեպությունը, կարծում ենք, ինչ-որ պարագայում կարող է կասկածներ հարուցել: Ռուտի գտնում ենք ավելի մպատակահարմար դրան անդրադառնալու խցենտիկ բոլոր արձանագրությունների մատուցած տվյալների քննարկումից և

ամփոփումից հետո: Սակայն, մյուս կողմից, զգացվում է հրառակ անհրաժեշտություն այստեղ հպանցիկ կանգ առնելու մաս Յուզակերտի արձանագրության թեև սուղ, բայց մեզ հետաքրքրող հարցի լուծման համար արտակարգ հետաքրքրություն ներկայացնող որոշ այլ փաստերի վրա:

Նախ, այդի է զարմում այն փաստը, որ Յուզակերտի արձանագրության բերված հատվածի սկզբնամասում, զրազրի ամփոփության պատճառով, բացակայում է նախադասության հասո «մվաճեց» ստորոգյալը (բայր): Խոսքը այստեղ Էրիկուախի երկրի և նրա Լուխիունի կենտրոնի նվաճման մասին է: Սակայն դրա փոխարեն, չգիտես ինչու, տեքստում համիրավի կրկնակի մատուցված է իս «եբր» բառը՝ և Էրիկուախի երկրի, և Լուխիունի քաղաքի կապակցությամբ:

Ի դեպ, չնայած հասո «մվաճեց» անցողիկ բայի անտեսմանը և իս «եբր» ստորադասական շաղկապի անհարկի կրկնությանը, մյուս կողմից, արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության մեզ հետաքրքրող մեթինո բառին հաջորդող հատվածը, որ սակած է իս esi ⁹Menuaše ešinini duni šidištuali ¹⁰Halđinili KÁ É. GAL badušie: Նշենք, որ այստեղ բերված հատվածի հիմնական թվանդակությունը փաստորեն արդեն հայտնի է գիտությանը: Տվյալ դեպքում ընդհանուր առմամբ խոսքը վերաբերում է Մեմուայի կողմից տվյալ վայրը (իս esi) ešinini duni (ešinini դարձնելու) մասին, որը պայմանավորված է եղել Խալդյան դոմենի (¹¹Halđinili KÁ), այսինքն՝ տաճարի և ամբողջի (É. GAL) հոյակապ (badušie) կառուցմամբ (šidištuali):

Հետևաբար, Մեմուայի Յուզակերտի արձանագրության վերոհիշյալ հատվածում առայժմ ըստ էության անհայտ է մնում սուկ ešinini բառիմաստը, քանի որ ešinini duni բառակապակցության մեջ ևս հայտնի է duni «դարձրեց» բայիմաստը, որը ուրարտական սեպագրում հաճախ համդես է գալիս ճ(u) «ամել», «դարձնել» նշանակությամբ և ինքնուրույն, և abili-ճ(u), uedia-ճ(u), ueli-ճ(u) քարդված ձևերով: Ինչ վերաբերում է ešinini բառին, սպա փաստական նյութի ծայր աստիճան տրության պատճառով, առայժմ այն շարունակում է մնալ ուրարտերենի բառապաշարի ուսումնասիրության ենթակա ոչ սակավ պրոբլեմատիկ հարցերի շարքում. նրան կրթք չեն անդրաշարժել ոչ ուրարտական արձանագրությունների հայտնի դիվաններում, ոչ էլ այլ հետազոտություններում: Ըստ որում ešinini բառիմաստի բացահայտումը, ինքնին հասկանալի է, կոչված է ըստ ամենայնի ամբողջացնելու Յուզակերտի KYKH, 48 արձանագրության վերոհիշյալ հատվածի թվանդակությունը: Դեռ տվելին, այն կարող է վերջնական լույս տիտել այդ բառը հիշատակող նորահայտ արձանագրությունների համապատասխան հատվածների վրա և, աքլալիսով, կայուն տեղ զրավել ուրարտերենի բառարաններում:

Այնուհետև, հատկանշական է, որ բացի խնդր առարկա Յուզկերտի արձանագրությունից *esini(ni)* –ն հանդես է գալիս մեկ Մեմուայի մի պահասավոր արձանագրության մեջ: Ընչու է այն ծագում է այլ վայրից՝ Գյուզակից (այժմյան Կարաբավուք) Վանա լճի հյուսիս–արևելյան ափին, սակայն Յուզկերտի արձանագրության հետ ունի անվիճելի ընդհանրություններ: Գյուզակի արձանագրության մեջ ևս հիշատակվում է Էրփկուախի երկրի կենտրոն Լուխիումին: Այստեղ առկա է մեկ ուրարտերեն *patari* «քաղաք» բառը, որը ըստ Լուրյան փոխարինում է Յուզկերտի արձանագրության *E.GAL*–ին, այսինքն՝ ամբողջին⁷:

Ի լրումն ասվածի, Գյուզակից ծագող խնամտիկ, նույնպես պահասավոր մի արձանագրության մեջ ևս դարձյալ հիշատակվում է նույն Լուխիումին, ինչպես մեկ *Haldinili KA*⁸ *hadasi*–ն, այսինքն՝ հույսկապ տաճարի հիմնադրումը⁹: Եվ, վերջապես, մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ զգալի հետաքրքրություն է ներկայացնում դարձյալ ուրարտական նույն թագավորի Վանի թանգարանում պահպանվող մի այլ արձանագրություն, որը նույնպես հիշատակում է Էրփկուախի երկրում հիմնադրված տաճարի (*Haldinili KA*) և ամբողջի (*E.GAL*–ու) մասին, ըստ որում վերջինիս տակ ենթադրվում է հենց Մեմուախիմիլին¹⁰:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը, ակներևաբար, վկայում են, որ Մեմուայի քվարկված բոլոր արձանագրությունները պատմում են ուրարտական այդ թագավորի շինարարական միևնույն ձեռնարկումների մասին Արարատյան դաշտավայրում՝ Արաքսի ձախափնյա հատվածում: Հետևաբար, *esinini* բառը (կամ *esinini* ժամ արտահայտությունը), ըստ երևույթին, Յուզկերտի *KYKH*, 48 և Գյուզակի *KYKH*, 50 արձանագրությունների մեջ, առկա է եղել (կամ ենթադրվում է) մեկ վերոհիշյալ բոլոր արձանագրություններում: Ի դեպ շնայած Վանի թանգարանի համարյա անթերի պահպանված *KYKH*, 101 արձանագրությունը չի հիշատակում *esinini* ժամ արտահայտությունը, սակայն նկատի ունենալով, որ այն փաստորեն կրկնում է Յուզկերտի *KYKH*, 48 արձանագրության մեջ մատուցվող իրողությունը՝ Արարատյան դաշտավայրի Էրփկուախի երկրում հույսկապ ամբողջի՝ Մեմուախիմիլի և Խաղյան տաճարի հիմնադրման մասին, կարծում ենք, տվյալ դեպքում մեզ հետաքրքրող *esinini* ժամ–ն այնտեղ ևս ինքնին ենթադրվում է:

Մի խոսքով, ելնելով վերոհիշյալ ամբողջ շարադրանքից, մենք հակված ենք Յուզկերտի և Գյուզակի արձանագրությունների *esinini* բառի համար առաջարկել «քնակելի», իսկ *esinini* ժամ արտահայտության՝ «քնակելի դարձրեց» մեկնաբանությունը: Ըստ երևույթին, բոլոր դեպքերում ակնարկվում է մախկնում անմարդարանակ, ամայի տաքածքները (որոնց մասին հաճախ նշում են ուրարտական արձանագրությունները) քնակելի դարձնելու մասին՝ նրանցում ինչպես ոռոգման

լայն ցամփ ստեղծելու և երկրագործական ու այգեգործական-խաղողագործական ձեռնարկումների, այնպես էլ քաղաք-ամրոցների և տաճարների հիմնադրման շնորհիվ:

Վերևում մեծք հայանցիկ կանգ առանք եփնոնի-ի մեկնարամման վրա, նկատի ունենալով, որ Տուրակերտի KYKH, 48 արձանագրության մեջ սոսկ այդ քառյակաան է փերիոն հետ միասին, կարոտ քաջահայտմամ: Ուստի եփնոնի-ն կոչված է ըստ անենայնի ամրոցացնելու ոչ միայն հիշյալ արձանագրության, այլև ուրարտական խյնտիկ այլ մանավանդ Գյուրակի տեքստի նման պակասավոր, արձանագրությունների, համանման հատվածների իմաստավորումը:

Իսկ այժմ վերստին անդրադառնանք հողվածի այս քաժնի հիմնական հարցին՝ փերիոն քառի մեկնարամությանը, մեր ուշադրությունը, քննականաբար, սկեռելով Ռուսա II-ի Կարմիր-քլուրում հայտնաբերված KYKH, 424 արձանագրության վրա, որի 3-4-րդ տողերում ասված է.

i-ó-me Գhal-ó-še LUGÁL-tú-ji a-ru-ni na-ša <di¹⁰ AD-si-ni> e-si-i LUGÁL-tó-ji-mi i-še-er-ji-ni i-mi-li Գhal-ó-ni-li K[A 8]-ó-ó-ó-tó-ó-li ba-du-si-e

«Երբ-ինձ Խաղի աստվածը թագավորություն պարզեց (և) քազմեցի (ես) հայրական, արքայական գահին, փերիոն այս Խաղյան դոմեքը (տաճարը) կառուցեցի իշակապ»:

Եվ, այսպես, Մեմուայի Տուրակերտի և Ռուսա II-ի Կարմիր-քլուրի արձանագրությունների վերը մատուցված հատվածների փաստական նյութի համալրությունից այքի է գարնում այն փաստը, որ նրանցում երկու դեպքում էլ, ակնհերևաբար, մատնացույց է արվում ուրարտական հիշյալ թագավորների կողմից տարրեր վայրերում համանման շինարարական աշխատանքների ձեռնարկման ժամանակի մասին: Այլ կերպ ասած, մի դեպքում Մեմուան Արարատյան դաշտավայրի Արաքսի աջափնյա հատվածը՝ այժմյան Տուրակերտի տարածքը քննակել է դարձրել և այնտեղ կառուցել իշակապ Խաղյան դոմեք (տաճար) և ամրոց այն ժամանակ, երբ նրա կողմից Խաղի աստծու զորությամբ նվաճվել է Էրիկուախի երկիրը՝ Լուխիունի կենտրոնով հանդերձ, իսկ մյուս դեպքում Ռուսա II-ը Կարմիր-քլուրում իշակապ Խաղյան դոմեք (տաճար) է կառուցել այն ժամանակ, երբ զերագույն աստված Խաղիին պարզեց է նրան արքայական գահը: Ի դեպ, KYKH, 424 արձանագրությունը, կարծես, միաժամանակ վկայում է, որ ոչ միայն Թեյշերախիի տաճարի, այլ հենց իր՝ Թեյշերախիի քաղաք-ամրոցի հիմնադրումը ընդհանրապես հանդնկել է Ռուսա II-ի կողմից արքայական գահը ստանձնելու պահին:

Ինչ վերաբերում է ուրարտական թագավորի՝ Ռուսա II-ի Այանի-սից ծագող խյնտիկ նոր արձանագրությանը, ապա նրանում փերիոն քառը հիշատակվում է կրկնակի, ըստ որում տարրեր կարգի կոմտեքստ-

ներում: Մի դեպքում, կարելի է ասել, այն լիակից համընկնում է Կարմիր-բլուրի վերոնիշյալ KYKH, 424 արձանագրության տեքստին՝ սակ այն աննշան տարբերակով, որ երբ –me «ինձ» անձնական դեղանունը այնտեղ կցված է իս «երբ» բառին (is-me «երբ-ինձ»), ապա Այանիսի արձանագրության մեջ me-ն կցված է Նաղիի դիցանվանը (*Haldin-me «Նաղի-ին-ինձ»): Հետևաբար, դա նշանակում է, որ այստեղ ևս, նույն Ռուսա II-ի Կարմիր-բլուրի արձանագրության նման, մեզ հետաքրքրող ֆերիոն-ն ակնարկում է, որ Նաղիյան դոմերի (տաճարի) հոյակապ կառուցումը (ֆերիոն իոնի *Haldinili KÁ šidštali badasie) ժամանակագրորեն անմիջապես հետևել է Նաղիի աստծո կողմից ուրարտական արքային զան պարգևելուն (is-me *Haldise LUGÁL-tšēti arumi nahadi ¹¹AD-sini esi LUGÁL-tšihini) ⁸:

Իսկ քանի որ Ռուսա II-ի Այանիսի արձանագրության մեջ խնդրոս առարկա ֆերիոն բառի մյուս հիշատակությունը հանդես է գալիս արդեն այլ կարգի, ըստ որում քափական ծավալում և անհասկանալի քառասյաչարով համեմված կոմտեքստում, ապա փաստական մյուսը հնարավորին տեսանելի դարձնելու համար նարատակահարձար ենք գտնում մատուցել այն այստեղ հատվածաբար.

... aše TAG qutumenaue tanuši MÁŠ.TUR *Haldie nipsidulini UDU *Haldie TAG UDU *IM-a UDU *UTU-nie UDU *Arubainie UDU *Haldinaue BELI UDU *Haldinaue KÁ UDU *Ua UDU DINGIR¹⁰²³-ue ... *Haldina KÁ ֆերիոնի իսկուսի սիլատին... ⁹

Բերված հատվածը, զուցե, առաջին հայացքից հապճեպ տարվորություն թողնի, քե իբր այն քաջարձակապես ընդհանուր ոչինչ չունի ֆերիոն բառը հիշատակող մեզ հայտնի Տուրակերտի KYKH, 48, Կարմիր-բլուրի KYKH, 424 և Այանիսի նոր արձանագրությունների վերոնիշյալ հատվածների հետ: Սակայն սույն տեքստի մանրագծին ընթացկամ դեպքում ըստ ամենայնի քաջահայտվում է, որ այստեղ սակ փաստական մյուսն է տարբեր, այն դեպքում, երբ նրա մատուցման ձևը մնում է նույնը: Իսկ ֆերիոն բառիմաստի քաջահայտման համար, ինչպես դա կպարզվի ներքևում, կարևորը հենց մյուսի մատուցման ձևն է: Դրանում համոզվելու համար արժե թերված հատվածի աճ և մեզ հետաքրքրող ֆերիոն բառերի մատուցման ձևը համադրել Տուրակերտի, Կարմիր-բլուրի և Այանիսի (տես սողեր 4-5) արձանագրությունների իս և ֆերիոն տարբերակների հետ: Այդ դեպքում այլի է զարմում այն փաստը, որ սույն աճ «երբ» տարբերակին համապատասխանում է վերոնիշյալ տեքստերի իս «երբ» նույնիմաստ բառը: Այլ կեպ ասած, մի դեպքում առկա են միևնույն «երբ» իմաստն արտահայտող աճ և իս բառերը, իսկ մյուս դեպքում՝ երկու տարբերակներում էլ միևնույն ֆերիոն բառը:

Այժմ տեսնենք, թե առաջարկված մտահղացումը որքանով է աղթաբազմում իրեն Այամիսի նոր արձանագրության տեքստի այն երկրորդ տարբերակում, ուր ասված է. Երբ գոհարելվել են ուլ Խաղդիին, ոչխար՝ Խաղդիին, ոչխար՝ Թեյշերային, ոչխար՝ Շիլիմիին, ոչխար՝ Վարուսնիին, ոչխար՝ Խաղդյան զենքին, ոչխար՝ Խաղդյան դոմերին (տաճար), ոչխար՝ Ուային, ոչխար՝ (այլ) աստվածներին Խաղդյան դոմերում, այսինքն՝ տաճարում, ապա պաշտամունքային այդ արարողության ժամանակ տեղի է ունեցել նաև խաղողի մատուցում (իֆերիու իալու սիլատու):

Հետևաբար, *iu*-ի և *իֆերիու*-ի անկախության դեպքում, երբ (*iu*) ուրարտական թագավորները ստանձնում են արքայական գահը, ապա այն ժամանակ էլ (*իֆերիու*) նրանց կողմից ձեռնարկվում են տաճարների և ամրոցների շինարարություն, ինչպես նաև տվյալ վայրի քնակեցում (*im es esinini duni*), իսկ *ase*-ի և *իֆերիու*-ի դեպքում, երբ (*ase*) տաճարում ձեռնարկվում են կենդանիների գոհարելություններ ի պատիվ ուրարտական աստվածների, Խաղդյան զենքերի և այլնի, ապա այն ժամանակ էլ (*իֆերիու*) պաշտամունքային արարողություններում տեղի է ունենում նաև խաղողի մատուցում (*իալու սիլատու*): Այի խոսքով, որ կողմից էլ դիտարկելու լինենք մեզ հետաքրքրող ուրարտական արձանագրությունների համապատասխան հատվածները, ապա բոլոր դեպքերում *իֆերիու* բառը նրանցում, ակներևաբար, արտահայտում է ժամանակի հասկացություն: Ի վերջո *իֆերիու* բառիմաստը բացահայտելու համար, կարծում ենք, առանցքային նշանակություն ունի Սարգուրի II-ի Կարաբաշի KYKH, 274 արձանագրությունը, ուր ասված է.

^{ms}Sarduriše ^mArgištišiniše ašie iu ^šHaldis-me LUGÁL-tuši aruni nahadi ^lAD-sini esí LUGÁL-tušini ikakani MU terubi É.GAL badusie ^{ms}Sarduriei URU tini

Սարգուրին, Արգիշտիի որդին, ասում է. Երբ Խաղդի աստվածներին թագավորություն պարգևեց (և) թագնեցի (ես) իսրայական գահին արքայական, նույն տարում հիմնեցի ամրոց իոյակապ՝ «Սարգուրիի քաղաք» անվամբ:

Այս կապակցությամբ, բնականաբար, առաջին հայացքից կարող է հարց ծագել, թե ի՞նչ գործ ունի այստեղ Սարգուրի II-ի վերոհիշյալ արձանագրությունը *իֆերիու* բառիմաստի բացահայտման համար, քանի որ այդ բառը այնտեղ նույնիսկ չի հշատակվում: Սակայն դրա կողքին ակամայից այքի է զարնում այն արտակարգ կարևոր փաստը, որ այստեղ ըստ էության մենք գործ ունենք *իֆերիու*-ն հիշատակող տեքստի կրկնագրի (դուպլիկատի) հետ: Հասկանալի է, որ երևու դեպքում էլ այդ տեքստերում կրկնվում են միևնույն փաստերը, այսինքն՝ նոր տաճարների և ամրոցների շինարարությունը, որը տեղի է ունեցել թագավորների

կողմից արքայական զահը ստանձնելուց հետո՝ «այն ժամանակ» (իերիմ) կամ նույն տարում (ikukani MU):

Ի դեպ, վերոհիշյալ փաստերից միաժամանակ աչքի է զարնում այն հանգամանքը, որ *իերիմ*-ն և *ikukani MU*-ն որսարտական սեպագիր տեքստերում սովորաբար համդես են գալիս այն դեպքերում, երբ սվյալ տեքստը արտահայտվում է *iu* «երբ» բառով: Ըստ որում այդ կարգի կոնտեքստների հնուագուտությունը բացահայտում է, որ նրանցում *իերիմ* բառը կամ *ikukani MU* բառակապակցությունը, ճիշտ է, միշտ չէ, փաստացի արտահայտվում են տեքստերում, սակայն դրանց իմաստները, այնուամենայնիվ, ինքնին ենթադրվում են: Առաջարկվող հետևարյան մեջ համազվելու իսմար բազմաթիվ մեծան կոնտեքստներից ստորև բերենք սոսկ երեք պատասխիկ.

1) ...¹⁰Menuaše ¹⁰İspuiniehe *iu* ¹⁰ateimi esi nahubi ^{KLRS}Šatiruni durbaie manu¹⁰

...Մեմուան, Իշպուինիի որդին, երբ հայրական տեղը (զահը) քարձբացավ, Շատիրունի (երկիրը) ապտամբել էր...

2) ¹⁰Menuaše ¹⁰İspuiniehe ... *iu* ⁶Haldinili KÁ Sidištuali É.GAL Sidištuni badusie teruni ⁶Haldi patari tiri ini ^{GS}uldi teruni ^{GS}šarie...¹¹

Մեմուան, Իշպուինիի որդին, ... երբ Խաղյան դռներ (տաճար) կառուցեց, ամբողջ կառուցեց հոյակապ, հիմնեց Խաղի անվամբ քաղաք, այս խաղողի այգին հիմնեց, պտղատու այգին...

3) ¹⁰Sarduriše ¹⁰Argištiniehe alie *iu* ^{KLRS}Šhimeali haubi biduaše ikukani KASKAL haubi ^{URU}Maqaltuni...¹²

...Սարդուրին, Արգիշտիի որդին ասում է. երբ Ուխիմեալի երկիրը նվաճեցի, վերադարձին նույն ճանապարհին նվաճեցի (Մակ) Մակալտունի քաղաքը...

Հետևաբար, դժվար չէ նկատել, որ որսարտական արձանագրությունների ցիտված հատվածներից առաջինում *իերիմ*-ն կամ *ikukani MU*-ն, չնայած առանց կոնկրետ հիշատակության, այնուամենայնիվ ինքնին ենթադրվում է *nahabe* բայի և ^{KLRS}Šatiruni երկրամիակ, երկարդում՝ *badusie* մակբայի և *teruni* բայի, իսկ երրորդում՝ *haubi* բայի և *biduaše* գոյականի միջև:

Այստեղ մեզ մնում է սոսկ ավելացնել, որ Այամիսի նոր արձանագրության հրատարակիչ Միրյո Մալվինին տեքստի բարձրանության մեջ *իերիմ* բառի կողքին (փակագծում) իրավացիորեն ենթադրում է նրա *adverb*, այսինքն՝ մակբայ լինելու հնարավորությունը¹³: Եվ, իսկապես, նյութի հանգամանակի ուսումնասիրությունը, ինչպես երևում է, հաստատում է խտրացի ակամավոր արևելագետի կռակումը, քանի որ որսարտերեն հիշյալ բառի իսմար մեր առաջարկած «այն ժամանակ» (*tor da*)

թարգմանության համաձայն, *isērbini*-ն իսկապես մակրայ է, այն էլ ժամանակի մակրայ:

Քիճու թառի ստուգաբանությունը

Այս քառը ուրարտական սեպագիր արդյունքներում համընդհանուր է ստեղծ երկու անգամ: *Դ*-բանցից մեկը գիտությանը հայտնի է վաղուց՝ դեռևս Արգիշտի I-ի *Խորխորյան տարեգրության* կրկնագրերի (դուպլիկատների) առաջին երատարակություններից¹⁴, իսկ մյուսը՝ Այանիսի հնագիտական պեղումներում վերջերս մատուցված Ռուսա II-ի ծավալուն արձանագրությունից¹⁵:

Ի դեպ, *Քիճու* թառի ոչ միայն մեկնաբանությունը, այլև նույնիսկ ընթերցումը մասնագիտական գրականության մեջ ի սկզբանե տեղիք է տվել զգալի տարակարծությունների: Ուրարտական արձանագրությունների դիվանի եռլինակ Գ. Ա. Մելիքիշվիլին, օրինակ, *Քի-Քի-ու* MU-ի փոխարենն առաջարկել է *ՏԻՏԻԸՄ MU* (?) գաղտնիարագրերի կոմբինացիան, որից, սակայն, հարցականի տակ թարգմանել է ստեղծ MU-ն՝ «տարին»¹⁶: Ինչ վերաբերում է *Քի-Քի-ու* ընթերցմանը, ապա այն եաստատվել է Ա. Գյոցեի ջանքերի շնորհիվ՝ բացատելով, այնինչ, այդ թառի մեկնաբանությունը¹⁷:

Հետագայում Ա. Գյոցեի բացահայտած *Քիճու* ընթերցումը ուրարտական արձանագրությունների իր դիվանում ընդունել է Ֆ. Վ. Բյունիզը՝ անտեսելով նույնպես այդ թառիմաստի քննարկումը¹⁸: Իսկ ավելի ուշ այդ թառի մեկնաբանությանը առաջինը անդրադարձել է ստեղծ Բ. Մ. Դյակոնովը՝ կապելով այն առայժմ արձանագրություններում չվկայված **Քիճ*-ի հետ, որի տակ նա ենթադրել է հայտնի III-Ֆե-ն, ուստի ընկալել որպես «երեք»¹⁹:

Երկար ժամանակ հուսալի փաստական նյութի բացակայության պայմաններում Բ. Մ. Դյակոնովի կարծիքը ստիպված է եղել կրկնելու տողերիս եռլինակը՝ վերջերս երատարակված ուրարտական արձանագրությունների իր դիվանում²⁰: Իսկ Միդլո Սալվինին Այանիսի նորահայտ արձանագրության իր երատարակության մեջ հակված է *Քիճու*-ն մեկնաբանելու երկրորդ անգամ (*second time*)՝ մկառի ումնաբանով, որ պաշտամունքային արարատությունների ժամանակ Ինուա (նի) դիցուհուն միևնույն տեքստում երկու անգամ է մատուցվում ոչխարի զոհաբերություն՝ UDU ⁴Inuanie ... UDU ⁴Inuanie *Քիճու*²¹:

Սակայն մերկայաժն առկա թեև սող, բայց ըստ ամենայնի արժեքավոր փաստական նյութի հանգամանակի քննարկումը վկայում է, որ *Քիճու*-ի համար առաջարկված «երեք» և «երկրորդ անգամ» թարգմանությունները հավասարապես արդարացում չեն գտնում ոչ *Խորխորյան*

տարեգրության կրկնագրում, ոչ էլ Այանիսի նորահայտ արձանագրության մեջ: Ուստի այդ քառի ընթերցման և մեկնաբանության մախապարանությունը հատկացված վերոհիշյալ հակիրճ մախարանից հետո, կարծում ենք, արժե վերստին անդրադառնալ մեզ հետաքրքրող ուրարտական տեքստերի հոգատար հետազոտությանը:

Եվ, այսպես, հի՛նո քառը եչառական խորհարդան տարեգրության կրկնագրերից մեկում ասված է.

[^oA]r-gi-iš-ti-še a-li-e a-li-e-li LUGÁL^{MEŠ} [a]r-cu-i-a-li "Di-a-ú-ti-ni-e ši-ši-ni MU [ja]-ú-bi^{KUR} Lu-šá-e KUR-ni-e^{KUR} Ka-tar-za-e KUR-ni-e^{MEŠ} E-ri-a-ji KUR-ni-e^{KUR} Gu-lu-ta-ji...²²

Այս տեքստը ակամայից հիշեցնում է ուրարտական տարեգրությունների այն հատվածները, որոնցում տվյալ տարվա հերթական աշխատանքների ժամանակ օտար երկրների նվաճումը ներկայացվում են ikukani MU իսուի «նույն տարում նվաճեցի», ikukani MU šišini (կամ šišuhani, tarani) իսուի «նույն տարվա հի՛նո-ին (կամ հի՛սհանի-ին, tarani-ին) նվաճեցի» մախարաններով: Գլխության մեջ, ինարկե, առայժմ համոզիչ մեկնաբանություն չունեն հի՛նո, հի՛սհանի, և tarani քառիմաստները, մասնագիտական գրականության մեջ դրանց տակ տակ փորձել են ենթադրել տարվա նշանակների անվանումները կամ տվյալ տարում ձեռնարկված աշխատանքների հերթականությունը: Սակայն խնդրո առարկա հի՛նո քառի այս կամ այն չափով համոզիչ մեկնաբանության համար դա չէ կարևորը. շատ ավելի կարևորն այն է, որ վաղուց ի վեր ըստ ամենայնի հաստատված է ikukani MU (ի՛կու) «նույն տարում» քառականակցությունը, որի տարբերակն է, ամենայն հավանականությամբ, մեզ հետաքրքրող հի՛նո MU-ն:

Հետևաբար, ելնելով վերը արժարժված փաստական նյութից և նրա առթիվ արված խորհրդածություններից, մենք հակված ենք ուրարտերենի առայժմ անհայտ հի՛նո-ն համարելու վաղուց հայտնի ikukani-ի հոմանիշը, ուստի հի՛նո MU-ի համար առաջարկելու «հիշյալ տարում» քարգմանությունը: Կարծում ենք, որ դա լավին արդարացնում է իրեն խորհարդան տարեգրության կրկնագրի մեզ հետաքրքրող վերոհիշյալ հատվածում, որը քարգմանաբար բերում ենք ստորև.

«Արգիշտին ասում է. (այն) թագավորները, որոնք օգնության հասան Դիաուիսիին, հիշյալ տարում նվաճեցի Լուչա երկիրը, Կառարգա երկիրը, Էրիալի երկիրը, Գուլուտալիսին...»:

Այստեղ մեզ մնում է ավելացնել, որ Արգիշտի I-ի տվյալ տարվա ելմանական ձեռնարկումը, ըստ երևույթին, ուղղված է եղել Էրիուսյան ցեղային միության դեմ, որի հալառակեցումը, ասկայն, հիշատակվում է տակ վերնագրային տեքստում²³: Ինչ վերաբերում է աշխատանքի նկարագրության մեջ Դիաուիսի ցեղային միությանը օգնության հասն

երկրների միաճմամբ, որը նույնպես տեղի է ունեցել «եփշյալ տարում» (Ešino MU), ասքա նքանք երևի եղել են էփիուսի ցեղային միության կամ հպատակները, կամ էլ դաշնակիցները:

Իսկ այժմ տեսնենք, թե Խորխորյան տարեգրության կրկնագրի Ešino բառի համար մեր առաջարկած «եփշյալ» քարգճամաբյունը ինչպես է արդարացնում իրեն Այամիսի նորահայտ արձանագրության միանգամայն այլ բնույթի տեքստում, ուր այն առնչվում է Ինուսանի դիցանվան հետ:

... UDU ⁶E-i-du-ru UDU ⁶Ba-ba-a UDU ⁴A-di-a UDU ⁶Sar-di-e UDU ⁴I-no-a-ni-i-e UDU ⁶A-ia-a UDU ⁴I-u-ú-ru-ni-a UDU ⁴I-no-a-ni-e և E-É-ni-e...²⁴

Ինչպես ակնհայտ է այս ցիտված տեքստից, Խաղդյան դոմեթում (⁶Ešalnilu KÁ-li), այսինքն՝ տաճարում ձեռնարկված պաշտամունքային արարողությունների ժամանակ նախատեսված կենդանիների զոհաբերություններում Ինուսանի դիցուհուն հատկացված է յուրահատուկ տեղ՝ ոչխարի կրկնակի մատուցում: Ըստ որում այդ մատուցումը տեղի է ունենում ոչ թե միանգամից, այսինքն՝ «երկու ոչխար Ինուսանիին», այլ աստիճանաբար՝ «ոչխար Ինուսանիին», «ոչխար Ինուսանի Ešino-ին»: Եվ դա այն դեպքում, երբ թվարկված դիցուհիների շարքում Ինուսանին հանդես է գալիս մերթ հինգերորդ, մերթ էլ վերջին՝ ութերորդ տեղում:

Մյուս կողմից, հատկանշական է, որ ի տարբերություն շարքային դիցուհի Ինուսանիի, նույնիսկ գերազույն աստված Խաղդիի կնոջ՝ գերագույն դիցուհի Վարուբանիի պատվին նախատեսված է եղել ընդամենը մեկ կովի զոհաբերություն: Իսկ երկուսն էլ ոչխարների զոհաբերություն պետք է իբրևկանազաններ ասկ մնացած ըլլող, այսինքն՝ անվանապես յեփշատակված, աստվածների (DINGIR^{MS}) և դիցուհիների (⁴NIN^{MS}) պատվին (տեղ 13):

Ի դեպ Ինուսանիի համար նախատեսված երկու ոչխարների զոհաբերության մեծաշնորհը, ի տարբերություն նրա հետ հիշատակված մյուս դիցուհիների, որոնց պատվին պետք է զոհաբերվեին ասկ մեկական ոչխար, հետազոտության առարկա կարող է դառնալ հետազայում համապատասխան փաստական նյութի առկայության դեպքում: Սակայն Ešino բառիմաստի մեկնաբանության համար այդ քաջը, քարեխալտաբար, քաջարձակապես ոչ մի խոչընդոտ չի կարող հարուցել: Դեռ ավելին, քաջի մնացած հանգամանքներից, Ešino-ն միաժամանակ նպաստում է, որպեսզի հետազոտողները ամտեղի մտադրամբ չհասցեսագրեն ուրարտական գրագրին, թե իբր նրա անփութությամբ Ինուսանի դիցուհուն վերաբերող միևնույն զոհաբերությունը երևի սխալմամբ արձանագրվել է կրկնակի:

Հատկամշակամ է, որ սեպագիր տեքստը հստակ տարբերակում է միմյանցից Ինուանի դիցուհուն նվիրված երկու զոհաբերությունները, ընդ որում որոշակի ընդմիջումով՝ մեքք Ինուանիին, մեքք էլ Ինուանի ճինու-ին: Ուստի այս ամենը ինքնին վկայում է, որ Խորխաղյան տարեգրության կրկնագրում այդ բառին տրված «հիշյալ» բարզամտությամբ նույնքան համոզել է նաև Այանիսի արձամագրության համար: Մի յուսքով, մի դեպքում ասկա է ճինու MU իստի «հիշյալ տաքում նվանցի» (հմմտ. ikukani MU իստի «նույն տաքում նվանցի»), իսկ մյուս դեպքում՝ UDU Գուանի ճինու «ոչխար՝ Ինուանի հիշյալին» (կարդա «հիշյալ Ինուանիին»):

Այստեղ, գուցե, ասածին հայացքից առարկություն կարող է ծագել սոսկ որոշիչ և որոշյալի շարահյուսական անհամապատասխանության վերաբերյալ՝ ճինու MU «հիշյալ տաքում», քայք Գուանի ճինու «Ինուանի հիշյալին»: Սակայն այդ անհամապատասխանությունը ևս լիարժեք հիմնավորում է գտնում ուրարտերենի շարահյուսական կանոնների բազմազանությամբ, եթե, օրինակ, համեմատենք masini ^{GR} և ար զենցը» և ^{GR} անի ևսի «խաղողի այգի նոր», ini ^{GR} barzadibiduni «այս barzadibiduni տունը» և ^{GR} barzadibiduni ini «barzadibiduni տունը այս»:

Այսպիսով, նվերով վերջ մատուցված փաստական նյութի քննարկումից, ստորև առաջարկում ենք Այանիսի արձամագրության մեզ հետաքրքրող վերահիշյալ հատվածի բարզամտությունը.

«...ոչխար՝ Լուդուրու դիցուհուն, ոչխար՝ Բարա դիցուհուն, ոչխար՝ Աղիա դիցուհուն, ոչխար՝ Սարդի դիցուհուն, ոչխար՝ Ինուանի դիցուհուն, ոչխար՝ Այա դիցուհուն, ոչխար՝ Տուշսունիս դիցուհուն, ոչխար՝ Ինուանի դիցուհի հիշյալին»:

Վերջում մեզ մնում է ավելացնել, որ ինքը՝ Գուանի-ն խոսում անում է և նշանակում է հենց «դիցուհի», որից սերող Գուանու-ն հոգնակի տրակամով հայտնի է վաղուց՝ դեռևս Մեծի դոսան պաշտամունքային և Չելքի-բարդի շինարարական արձամագրություններից²³: Իսկ այժմ դոսա գաղափարագիր համապատասխանությունը համընկնում է Այանիսի նորահայտ սեպագրում՝ NIN^{ME2}-սե ձևով²⁴: Սակայն այդ հարցը արդեն այլ հետազոտության առարկա է:

NEW READINGS AND INTERPRETATIONS
IN THE URARTIAN AYANIS INSCRIPTION1. New Urartian word *išerhini*

The *Tzolaker* inscription of Menuas (KUKN, 48) and the *Karmir dšar* inscription of Rusa II (KUKN, 424) shows that here the word *išerhini*, probably, indicates on the time of some actions conducted by the Urartian kings; in the first case – after the conquest of Erikuahi, and the second – after Rusa's accession. The *Ayanis* inscription also, like *Karmir dšar*, tells about the erection of cultic objects after the accession of the king, and in the second case – the offering of vine for the gods during the sacrifices in the temple. In all cases the word *išerhini* indicates the idea of the time.

On the other side, for the clearing of the exact meaning of *išerhini* the *Karatesh* inscription of Sarduri II (KUKN, 274) offers a decisive argument; here this word is replaced by *šrakani MU* „in the same year“. Certainly, *išerhini* „in that time“ actually is a homonymous word to *šrakani MU* „in that year“.

Indeed, the editor of the *Ayanis* inscription M. Salvini is correct when regards *išerhini* as an adverb. This word actually is an adverb of time.

2. New etymology of the word *širini*

The lines 33–35 of the *Khorkhor Annals* (duplicate = KUKN, 174B1) contains the next statement:

¹¹Argištiše ¹²Menušiniše alie ... širini MU ḫabi ^{K118}Lulac KUR-nie
^{K118}Katarzac KUR-nie ^{K118}Eriahi KUR-nie

This passage reminds one those of Urartian annals where the conquest of hostile countries which had taken place in the given year, is introduced by *šrakani MU ḫabi* „I conquered in the same year“. Probably, *šrakani MU* is a variant of *širini MU*, the latter to be translated as „in the aforementioned year“. This is the case in the next passage from the *Khorkhor* inscription:

„Argišti, the son of Menuas, says ... in the aforementioned year I conquered the country of Lusa, the country of Qatarza, the country of Eriahi ...“.

How the word *širini* could be translated in the *Ayanis* inscription where it is used in a different context:

... UDU ⁴Ešduru UDU ⁴Baba UDU ⁴Adia UDU ⁴Sardie UDU ⁴Inuanie UDU
⁴Aia UDU ⁴Tušpunia UDU ⁴Inuanie širinie ...

It is worth to note that the text distinguishes between two different deities bearing the same name *Inuanie*. The translation „a ship for the aforementioned *Inuanie*“ (UDU ⁴Inuanie širinie) should not look puzzling.

The translation of the whole passage from the *Ayanis* inscription: „... a ship for Ešduru, a ship for Baba, a ship for Adia, a ship for Sardie, a ship for Inuanie, a ship for Aia, a ship for Tušpunia, a ship for the aforementioned *Inuanie*“.

1. Մերոյր Մըրանեօն, «Միրան», Վարդաշատ, 1886, մտրթր В 500–501 էթրթի մթրլ: D. H. Müller, Drei neue Inschriften von Van, II. Inschriften von Zoakert, "Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes", Wien, 1887, I Band, 3 Heft, էր 216–219:
2. Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир–блур, Ереван, 1966, էր 38, տրթր I, տղ 4: Г. А. Меликшвили, "Вестник древней истории", 1971, № 4, էր 267, տղ 4: Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (աշտիտիսի՝ КУКН), Ереван, 2001, էր 348, № 424, տղ 4 և ծաւր. 5:
3. M. Salvini, *Ayazis*, I, Roma, 2001, էր 254, (I, 5), 258 (V, 55):
4. Н. В. Арутюнян, КУКН, 48, տղթր 1–7:
5. Նտյն տնդրմ, 50, տղթր 2–4:
6. Նտյն տնդրմ, 49, տղթր 1–3:
7. Նտյն տնդրմ, 101, րրիս կոթմ, տղթր 5–8, 21–25:
8. M. Salvini, *Ayazis*, I, էր 254, (I, տղթր 4–6):
9. Նտյն տնդրմ, էր 257–258 (V, տղթր 5–11):
10. Н. В. Арутюнян, КУКН, 148, տղթր 6–8:
11. Նտյն տնդրմ, 49, տղթր 1–3:
12. Նտյն տնդրմ, 248, տղթր 2–6:
13. M. Salvini, *Ayazis*, I, էր 259, (I, 5):
14. A. H. Sayce, "Journal of the Royal Asiatic Society", XIV, London, 1882, տրծաւօրթրթրմի № 20:
15. M. Salvini, *Ayazis*, I, էր 254, (II, 2):
16. Г. А. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960, 128В1, տղ 34 և ծաւր. 13:
17. A. Grotze, "Revue Hittite et Asiatique", 24, Paris, 1936, էր 282:
18. F. W. König, *Handbuch der chaldäischen Inschriften*, II, Graz, 1957, № 82, Զ., տղ 34:
19. И. М. Дьяконов, Урартские письма и документы, М. –Л., 1963, էր 76 (և ծաւր. 122), 91:
20. Н. В. Арутюнян, КУКН, 174В1, տղ 34 և ծաւր. 14, ինչոսի սաւ էր 464:
21. M. Salvini, *Ayazis*, I, էր 259, (II, 2):
22. Н. В. Арутюнян, КУКН, 174В1, տղթր 33–36:
23. Նտյն տնդրմ, 174В1, տղթր 27–29:
24. M. Salvini, *Ayazis*, I, էր 259, (II, 1–2):
25. Н. В. Арутюнян, КУКН, էր 449:
26. M. Salvini, *Ayazis*, I, էր 254, (II, 2):

ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՓՐԿԱԳՈՐԾԱԿԱՆ
ԻԴԵԱՆՆ ԸՍՏ «Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
ԵՎ Ս. ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՍԱՅՈՒ «ԿՈՉՈՒՄՆ
ԸՆԾԱՅՈՒԹՅԱՆ» ԵՐԿԻ

«Ս. Գրիգորի վարդապետությունը», որ Ազարանգեղոսի ներկա խմբագրության մասն է կազմում, Հայ առաքելական եկեղեցու վարդապետության կարևորագույն աղբյուրներից է: Թեև այն ավանդաբար վերագրվում է Գրիգոր Լուսավորչին, սակայն հայագիտության մեջ վաղուց ընդունված է այն տեսակետը, որ նա չէր կարող լինել այս հուշարձանի հեղինակը: Ըստ Բ. Սարգիսյանի, Ն. Բյուզանդացու և Ռ. Թոմասնի, «Վարդապետության» առավել հավանական հեղինակը Ս. Մեսրոպ Մաշտոցն է: Ուստի «Վարդապետությունը» պիտի դիտել որպես մեծարժեք մի հուշարձան, քանզի այն մեզ հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու 5-րդ դարի սկզբում, այսինքն՝ հայ առավածարանական ավանդույթի սկզբնավորման փուլում Հայ եկեղեցու որդեգրած դավանական սկզբունքների մասին:

Իր քննությով «Ս. Գրիգորի վարդապետությունը» ընծայակրություն է (catechisen) խմա՝ նորադարձ քրիստոնյաների համար նախատեսված քրիստոնեական վարդապետության հիմնական դրույթների շարադրանք: Հայրաբանական գրականության մեջ կան այս կարգի մի շարք երկեր, որոնց թվում իր բարձր արժանիքներով աչքի է ընկնում Ս. Կյուրեղ Երուսաղեմացու գրչին պատկանող «Կոչումն ընծայության» երկը: Ս. Կյուրեղ Երուսաղեմացին ծնվել է մոտավորապես 315 թ: 348–351 թթ. դարձել է Երուսաղեմի եպիսկոպոս: Հետագայում նա զանգվածներով և հետագայով նախ Անտիոք, իսկ հետո Տաքսոն: Այստեղ նա հարում է արևմտականներին և որպես նրանց կողմնակից, 359 թ. մասնակցում է Սելևկիայի եկեղեցական ժողովին: Ժողովը վերականգնում է նրա եպիսկոպոսական լիազորությունները, սակայն մեկ տարի անց նա դարձյալ արտաքսվում է Երուսաղեմից, վերադառնալով միայն 362 թ. Հուլիանոս կայսեր օրոք: 367 թ. վերադառնալով հարկադրաբար հեռանում է Երուսաղեմից

մինչև 378 ք. 381 ք. նա մասնակցում է 2-րդ տիեզերական ժողովին և վախճանվում է 387 ք:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացու երկը հայերեն է թարգմանվել դեռ Մաչուռցի կենդանության օրոք, և ամուսնականի է, որ այն հայացվել է նույն հոգևոր և գրական միջավայրում, որում ստեղծվել է մահ «Ս. Գրիգորի վարդապետությունը»: Ուստի այս երկերի համեմատական վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ և բյուզանդական վաղմիջնադարյան աստվածաբանական մտքի բաղդատական ուսումնասիրման տեսակետից:

«Վարդապետության» մեջ Քրիստոսի մարդկության Եությունը նկարագրվում է հետևյալ կերպ. «Որ նա ինքն է յուրեանն, որպես և էն իսկ. սակայն յորժամ կանեցա՝ առ զմարդկան կերպարանս, և զզեցա մարմին, և էջ ի մեր մասնութին. այն որ անբան էր և աննաս յաննայն լրաթեան Աստուածութեանն՝ և վասն մեր էջ ի չափադրութիւն, և ամիփեցա ի մարմին. բովանդակեցա ճշմարտութեամբ ի մարմնին, և ճշմարիտ մարդ եղ, և էջ յանարգութիւն, զի մեզ բարձրացուցէ: Սակայն իւրով Աստուածութեամբն յերկինս է և յերկրի՝ առ Հօր և ընդ Հօր. և աննայն արարածք արամանս նորա շարժին ըստ իրարանչիւր կարգածոցն կազմածոց՝:՝ Սույն պարբերության մեջ հեղինակը շեշտում է նախ և առաջ Աստու Որդու է լինելը, դրանով իսկ հռչակելով Հօր և Որդու համագոյությունը, քանզի քրիստոնյաների կողմից Հայր-Աստու հետ նույնացված հիմկտակարանային Եհովայի անվան հայերեն թարգմանությունը է-Ն է: Որդին, լինելով բացարձակ զոյ, մարդկային կերպարանք առավ և զզեցավ մարմին: Այտեղ անհրաժեշտ է նշել, որ Աստվածայնչի լեզվում մարմին բառը նշանակում էր ոչ միայն մարդկային օրգանիզմի նյութական կազմը, այլև ամբողջական մարդկային քնությունն իր բոլոր հոգեկան ու մտավոր դրսևորումներով իսկողնով: Ուստի հեղինակը հաստատում է Քրիստոսի մարդկության լրաթեքությունը, Նրա ճշմարիտ մարդ լինելը, տեղ չբողնելով որևէ երևութականության համար: Դրանով նա, փաստորեն, մերժում է 4-րդ դարի երկու հիմնական քրիստոսաբանական հերձվածները՝ արիտակամությունն ու ապոլիմարականությունը, որոնցից առաջինը ժխտում էր Հօր և Որդու համագոյությունը, իսկ երկրորդը բացատրում էր մարդկային քնության ամբողջականությունն ի Քրիստոս: Այս համգամանքը փաստում է, որ Գրիգոր Լուսավորիկը չէր կարող լինել Մ. Գրիգորի վարդապետության՝ հեղինակը, քանզի նրա մեջ տեղ զուտ ուղղափառ քրիստոսաբանական բանաձևումները հաստատվել են Երկրորդ Տիեզերական ժողովի կողմից (381 ք):

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին Քրիստոսի մարդկությունը բացատրում է հետևյալ կերպ. «Այլ հաստատ դու, թէ սա միածին Որդիս Աստուծոյ վասն մերոց մեղատրաց յերկնից էջ յերկիր՝ գեռասարակից մարդ-

կուրծեանս մերոյ յանձն իւր առեալ զչարչարանս. և ծնալ ի սուրբ Կոստն, ի Հօգոյն Սրբոյ, ոչ իբրև ցնորք ինչ և առ այս երևելով զմարմին զզեցեալ, ալ ճշմարտի: Եւ ոչ իբրև ընդ փող ինչ անցեալ ընդ Կոյսն, ալ մարմին զզեցեալ ճշմարիտ անդառին ի մնացէ: Եւ եկեք իբրև զմեզ ճշմարիտ, և կաթնասուն եղև իբրև զմեզ ճշմարիտ: Զի եթէ իբրև ցնորք առ աչօք էր ծնունդն, ապա և առ աչօք էին փրկութիւնն»⁴:

Ընդհանուր առմամբ, այս երկու տեսակետների միջև առկա է մեծ ընդհանրություն: Երկուստեք շեշտվում է Քրիստոսի մարդկության լիարժեքությունը, սակայն առկա է տրամաբանական շեշտադրումների որոշակի տարբերություն: «Վարդապետության» հեղինակը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Աստու Որդու մարմնացման հակօրինակական (անտիմոմիկ) բնույթի վրա, քանզի իջնելով երկնքից և մարդ դառնալով, նա միաժամանակ իր Աստվածությանը մնում էր երկնքում Հոր հետ: Իսկ Կյուրեղ Երուսաղեմացին ընդգծում է Քրիստոսի ճշմարիտ, ալ ոչ թե երևակայական մարդկային մարմին առնելու փաստը, քանզի միայն իսկական մարմին ունենալու դեպքում Նա կարող էր իսկապես փրկել մարդկությունը: Այստեղ, անշուշտ, առկա է գնատիկների և մանիքեականների քրիստոսաբանական հայացքների սցողված քննադատություն, քանզի նրանք համոզված էին, որ Քրիստոսի մարմինը սրբազան պի պատրաստ էր ու ցնորք, և Աստու Որդին ոչ թե ճշմարտապես մարդացավ, ալ լոկ մարդկային կերպարանք ընդունեց: Այս երկու մտտեցումների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ «Վարդապետության» հեղինակը հիմնականում գտնվում էր Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի ազդեցության մեղքը, իսկ այս դպրոցը միշտ առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Ս. Երրորդության միասնության և աստվածային Անձների համագոյության վրա: Ս. Կյուրեղ Երուսաղեմացին, ընդհակառակը, Ամոնոնյան աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ էր, և շարունակելով այս դպրոցի ավանդույթները, հիմնականում իր ուշադրությունը կենտրոնացնում էր Քրիստոսի մարդկային բնության վրա, Նրա ճշմարտապես մարմնանալու իրողությունը համարելով մարդկության փրկության գրավական:

«Ս. Գրիգորի վարդապետության» հեղինակը հանգամանորեն պարզաբանում է Քրիստոսի փրկագործության խորհուրդը: «Արդ՝ աստքեաց Աստուած զՈրդին իւր յաշխարհ, որ եկն և եղև ի կնոջէ. և ի մարդկեղեն մարմինս պատեցաւ. մարմնովն իրով զամենայն մարմին կենդանացոյց: Որով և յաղթեաց իսկ Արարիչն աշխարհի, զի նորոգեացէ զարդարսն և զերծուցէ ի մեղացածին ծննդոց և հրիշտակակեբապս արասցէ և աստուածորդիս կոչեացէ. և մահկանացոս անմահացուցէ անմահ Հոգւովն, պատուեացէ աստուածեղեն փառօքն: Վայելույ լուսովն զարդարին, և յերկրատրութենէս յերկնատրութիւն անցաննն, ի մահկանացուէս յան-

մահ կենդանութիւնն, զամանց յոյսն զգնեմն և զամապական զեղ կերպարանացն»³ : Այս պարբերության մեջ խոսվում է քրիստոնեական հայտնության զաղափարական առանցքի՝ մարդու փրկության և աստվածացման մասին: Քրիստոսի մարմինն է զոչտ է կենդանացնելու յոչոր այլ մարմինները, քանզի այն հաղորդության խորհրդի ժամանակ ընթաշխմվում է հավատացյալներին կողմից, աստվածացնելով և ամապական դարձնելով նրանց: Այս խորհուրդը միավորում է մարդկային քնությունը Քրիստոսի հետ, և յոչոր քրիստոնեաներին՝ միմյանց հետ, ու հենց դրա համար Եկեղեցին Քրիստոսի մարմին է անվանվում: Սակայն մեր մարդկային քնության Քրիստոսի աստվածային քնության հետ միավորվելը հաղորդության խորհրդի միջոցով բավարար չէ մարդու կատարյալ աստվածացման համար: Բացի քնությունից պետի աստվածամաս մաս անձը, և դրա համար անհրաժեշտ է իր ամձի մեջ ներընդունել Ս. Հոգու շնորհը: Այսպիսով, ըստ «Կարգապետության» հեղինակի, եզրույթ կլանքն է Քրիստոս քաղկացած է երկու մասից՝ մարդկային քնության աստվածացումից Քրիստոսի ամապական մարմնի հետ հաղորդակցվելու միջոցով, և մարդկային անձերի աստվածացումից Ս. Հոգու շնորհի ներընդունման շնորհիվ:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացին նույնպես արժեքավորում է Ս. Հոգու շնորհի ընդունման կարևորությունը քրիստոնյայի եզրույթ առաջընթացի համար: «Այլ նույն ինքն ամենեցուն Աստուած, որ խոսեցաւ ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի քերան մարգարեիցն, որ առաքեացն յաւարն պնդելկոստեից. աստ նոյն ինքն և առ ծեղ աստքեցէ, առ հասարակ ամենեցուն տայցէ զբարեկարգութիւն յւր: Զի ամենայն ժամանակի զպտուղ Հոգւոյն սրբոյ մեր մատուցանիցենք, զտէր և խաղաղութիւն, և զերկայնամտութիւն, և քաղցրութիւն, և զբարեբարութիւն, և զհաստառ, զհեզութիւն, զխնայութիւն ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր. որով և նովառ Հոգւովն սրբով փառք Հօր այժմ և յախտեանս յախտենից. ամեն»⁴:

Եթե համեմատելու լինենք այս երկու հուշարձաններում անկա փրկագործական խղճումները, հարկադրված կլինենք նշելու նրանց միջև անկա ակնհայտ զաղափարական ընդհանրությունները: Եվ «Ս. Գրիգորի վարդապետությունը», և Ս. Կյուրեղ Երուսաղեմացու երկը ծավալաբար պատկերում են արևելյան հայրաբանական ավանդույթին, ինչով և պայմանավորված են նրանց միջև եղած նմանությունները: Սակայն դրա հետ մեկտեղ կան մաս Եական տարբերություններ: Եթե Ս. Կյուրեղ Երուսաղեմացին կիմնականում ուշադրություն է դարձնում Քրիստոսի առաքելության փրկագործական կողմի վրա, ապա «Կարգապետության» հեղինակը Քրիստոսի առաքելության էությունը տեսնում է մարդու աստվածացման մեջ: Հոգու փրկությունը և մարդու աստվածացումը միանգամայն տարբեր կրոնական խղճումներ են: Փրկությունն այն

հոգևոր կարգավիճակի վերականգնումն է, որ ունեւր Ադամն իր անկումից
 առաջ: Քրիստոսով փրկված մարդու հոգին վերադառնում է դրախտ, ի-
 մա՝ գերզգայական, սակայն եղական մի աշխարհ, որտեղ արդարենքի
 հոգիները մահվանից հետո երկնային երանություն են վայելում: Մինչդեռ
 աստվածացումը վերաբերում է ոչ միայն հոգուն, այլև մարդու ամբողջա-
 կան անձին: Աստվածացումը նշանակում է ֆիզիկական մարմնի ոգևոր-
 անացում և պայծառակերպում, ինչի հետևանքով մարդը, մնալով արա-
 քած, միաժամանակ աստվածային շնորհի միջոցով ձեռք է բերում անեղ
 քնություն, հաղորդակից դառնալով Ս. Երրորդության մշտնջենավոր կե-
 ցությանը: Փրկությունը ոչ այլ ինչ է քան Ադամի մահամահալ հոգևոր կա-
 տարելության վերականգնում, որ մարդուն եղեմ վերադառնալու հնա-
 րավորություն է քննեռում: Հոգու փրկությունը չի փոխում անձի գոյարա-
 նական ինքնությունը: Նա շարունակում է մնալ մի արարած, ու պարզա-
 պես վերստանում է այն եղական կատարելությունը, որով Աստված օժ-
 տել էր մարդուն, արարելով նրան ըստ Իր պատկերի և նմանության:
 Աստվածացումը ոչ միայն վերականգնում է նախաստեղծ մարդու կա-
 տարյալ կացությունը, այլև արմատապես փոխում է նրա գոյարանական
 կարգավիճակը, միավորելով նրա եղական քնությունն Աստծու անեղ
 քնության հետ: Նրա հոգին ու մարմինն Ս. Հոգու անեղ լույսի անմիջա-
 կան ներգործության հետևանքով արմատապես փոխակերպվում են,
 ձեռք բերելով նավերծություն և ամապակառնություն, և նմանվելով Քրիս-
 տոսի մարդկային քնությանը, որ ի սկզբանե անապական էր Նրա աստ-
 վածային քնության հետ միավորված լինելու պատճառով: Անշուշտ, այս
 աստվածացումը չի նշանակում, որ մարդը դառնում է նոր, Ս. Երրորդու-
 յան Անձերին գոյարանորեն էակից մի աստված: Պարզապես նրա եղա-
 կան քնությունը, պահպանելով իր էարանական կարգավիճակը, նե-
 րատնվում է աստվածային Գոյի մեջ, և մնալով արարած, միաժամանակ
 ստանում է Արարչին քնորոշ հատկություններ: Աստվածացման կատար-
 յալ օրինակ են ծառայում սրբերը: Ըստ "Վարդապետության հեղինակի.
 «Եւ որպէս ինքն խոնարհեցաւ ի քարձրութեանց անտի՛ այնպէս քարձ-
 րացոյց զորս եզխան արժանատոքս իբրում Աստուածութեանն. և արար
 զնոսա զանձանակս սիրոյ իրոց կամացն, և տաճար բնակութեան Հոգ-
 ւոյն սրբոյ. զի լիցին նոցա ընկղմեալ յԱստուածութիւնն»²: Այս սրբե-
 րության խնամող ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է վերհիշել, քն
 ինչ է սրբությունը, և որն է դրա հոգևոր էությունն ըստ քրիստոնեական
 վարդապետության: Սրբության բուն իմաստը մարդու և Աստծու, արա-
 քածի և Արարչի գոյարանական վերամիավորումն է մարդու հոգևոր
 ճգնաճիւղի և Ս. Հոգու շնորհի համաստեղ ներգործության միջոցով:
 Սրբությունը լապես տարբերվում է արդարությունից, քանի որ վերջինս
 Աստծու կողմից տրված կրոնական և քաղաքական օրենքի անփերի կա-

տարման արգասիք է, ինչն ասպետվում է քրիստոնյայի հոգու փրկությունը մահվանից հետո: Սակայն այս փրկությունը բնավ չի նշանակում մարդու և Աստուծո վերամիավորում, քանզի արդար հոգին տեղափոխվում է երկնային Արքայություն և բնակվում այնտեղ երեչտակների հետ, այսինքն՝ դուք չի գալիս եղական գոյի տաճաններից: Դրան հակառակ, սրբությունը, ձեռք բերվելով Ս. Հոգու աստվածային ներգործության ներդրումնա՞ն շնորհիվ, արժատապես փոխում է մարդու գոյարանական կարգավիճակը, նրան հարորդակից դարձնելով Ս. Երրորդության անդ կեցությանը: Հայ աստվածաբանց որդակիտքեն հակված է ընդունելու աստվածացման գաղափարը, ինչի մասին վկայում է նրա համազումըը, որ Արարիչը մարդկանց արտովելու է աստվածային փառքով: Ինչ վերաբերում է Ս. Կյուրեղ Երուսաղեմացուն, ապա նա, բնավ չժխտելով մարդկային բնության ավագա նորոգումն ու մաքրմանի հարություն, այնուամենայնիվ չի խոսում մարդու աստվածացման մասին: «Այդ յստեմեք մեք զլախոնեմականն ամենեքեան զգեցեալ զմարմին. այլ ոչ եթ աննկերեան միմեանց նման յստեմեք: Այլ եթ իցէ որ արար: զգնու նա զմարմին զերկնաւորն, զի կարող լիցի նա ընդ երեչտակս արժամապէս շրջել: Ապա իցէ որ մեղաւոր, զգնու նա զմարմին յախոնեմական համբերող պատուհասից տանջանաց, զի միշտ ի հոռ արեցեալ, երբէք մի սպասեսցի»⁶: Այսինքն, նույնիսկ հաշտություն առնելուց ձևոտ մարդու զերազույն հոգևոր նվաճումը երեչտակների հետ շրջելն է լինելու, ու քանի որ երեչտակները եղական էակներ են, մարդու աստվածացման, իմա՝ աստվածային անեղ բնությանը հարորդակից դառնալու մասին խոսք լինել չի կարող:

Եվ «Ս. Գրիգորի վարդապետության» ինչնակը, և Կյուրեղ Երուսաղեմացին հավասարապես հիմնվում են ներկտակարամային Հայտնության վրա, ձգտելով ի հայտ բերել քրիստոնեական աշխարհայացքի էական առանձնահատկությունները: Քրիստոնեությունը իր Լույսամբ մաքրակենտրոն կրոն է, քանի որ նրա գաղափարական առանցքն են կազմում մարդը, նրա բնությունը, ճակատագիրը և փրկությունն ի Քրիստոս: Սակայն Լոռ Կտակարանում առկա մարդարանական գաղափարների հայրարանական ըմբռումը մեծապես արյանաավորված է տվյալ դառաչրջանում իշխող իմաստասիրական ընկալումներով: Դասական քրիստոնեական հայրարանությունը կազմավորվում էր մի այնպիսի ժամանակաշրջանում և մի այնպիսի աշխարհագրական միջավայրում, որտեղ լիովին տիրում էր անտիկ փիլիսոփայությունը, և ավելի կոնկրետ՝ նորադատոնականությունը, որ անտիկ իմաստասիրության ամենաբարձր նվաճումն է եղել:

Լորպատոնական մարդարանությունը, ինչպես և առեսարակ գոյարանությունը, ունի ընդգծված դուալիստական բնույթ: Մարդն այս-

տեղ երկփեղկված է, կազմված լինելով երկու մասից՝ ամմահ, ամապական և աստվածամասն հոգուց և մահկանացու, ապականացու և կենդանանման մարմնից: Հոգին և մարմինը գոյարամորեն տարասեռ են, և ըստ այդմ՝ միմյանց համար օտար: Երկիրը հոգու համար մի օտար եզերք է, արտաքսման և արքառի մի վայր, քանի որ նրա հայրենիքը գերզգայական, իմանալի աշխարհում է գտնվում: Ուստի մարդը սնտի փախչի այս արքառավայրից և վերադառնա հայրենիք, իսկ դրա համար անհրաժեշտ է ճգնել և մեղցնել մարմինը, քանի որ այն, ըստ Պլատոնի, հոգու գերեզմանն է:

Քրիստոնեական մարդաբանությունը հիմնված է միանգամայն այլ սկզբունքների վրա: Եթե նորապատմականությունը հոգին դիտում էր որպես աստվածային մի էություն, որի միջոցով մարդը կարող է ամենթականորեն հաղորդակցվել հոգևոր աշխարհի հետ, ապա քրիստոնեությունը, մարդուն համարելով արարած, բնավ չի ընդունում հոգու անեղ, իմա՝ աստվածային կարգավիճակը: Քրիստոնեական մարդաբանությունը մոնիստական է, այսինքն՝ դիտում է մարդուն որպես միասնական մի էակ, որի մարմնական և հոգևոր կողմերը մի անբաժանելի ամբողջություն են կազմում:

Այս երկու մարդաբանական հայեցակարգերից թխում են երկու տարրեր փրկագործական իդեալներ: Նրանցից առաջինը, որի կողմնակիցն է Ս. Կյուրել Երուսաղեմացին, մարդու փրկությունը նույնացնում է նրա հոգու փրկության հետ: Աստվածաբանական այս ուղղությունը, շարունակելով նորապատմական դուստիստական մարդաբանության ավանդույթը, մարդու էությունը նույնացնում է նրա հոգու հետ, իսկ Քրիստոսի փրկագործության իմաստը տեսնում է Ադամի մեղսագործության հետևանքների վերացման մեջ: Սույն հայեցակարգի համաձայն, Ադամն իր մեղանյութից առաջ զուտ հոգևոր մի էակ էր, որ բնակվում էր երկնային Արքայության մեջ: Ուստի Քրիստոսի խաչելությունն ու Ադամի մեղքի քավությունը մարդկանց հնարավորություն ընձեռեց վերականգնելու իրենց հոգիների մախնական գոյարամական կարգավիճակը: Ադամն իր էությանը համամարդկային հոգևոր օրգանիզմ էր, որի բջիջներն էին առանձին մարդկանց հոգիները: Իր մեղսագործության հետևանքով Ադամն օտարվեց Աստծուց և գահավիժեց երկնային Արքայությունից, ինչը հանգեցրեց միասնական հոգևոր օրգանիզմի քայքայմանն ու տրոհմանը: Եթե Ադամը եղել է հոգևոր էակ, և ըստ այդմ օժտված է եղել հոգևոր աշխարհի գերզգայական հայեցողության կարողությամբ, ապա ամեն մի առանձին հոգի անկումից հետո սերտորեն կապված է ֆիզիկական մարմնի հետ և ի գորտ չէ հայելու գերզգայական աշխարհները, քանզի նրա ճանաչողական կարողությունները լիովին կախված են զգայական ընկալումներից: Ադամական մեղքից ու նրա ծանր հետևանքներից

րից կարելի է ձեռքագտնել առ Ֆրիառոս հավատքի ու մկրտության խորհրդի շնորհիվ: Դրանք, գուցարդվելով մաքրոս բարոյական և ճգնաժողովական ջանքերի հետ, մաքրագործում են նրա հոգին, վերջինիս փրկության հնարավորություն ընձեռնելով. իսկ այդ փրկությունը ոչ այլ ինչ է քան Ադամի դրսիստային նրանության վերստացում: Այսպիսով, փրկագործական սույն իղեպն ոճի գուտ հոգևոր բնույթ, և վաստորեն անտեսում է քրիստոնեության համար էինմակազմ նշանակություն ունեցող մարմնի նարության գաղափարը:

Երկրորդ հայեցակարգից քիտղ փրկագործական իղեպն էապես այլ էր: Դրա գաղափարական ակումքը ոչ թե նորալատոնական իմաստասիրությունն էր, այլ լոսն քրիստոնեական Հայտնությունը: Մարդն այստեղ դիտվում էր սրպես անբողբական էակ, որի հոգին ու մարմինը հավասարապես պնտի սրբագործվեն ու փրկվեն: Հոգու փրկությունն այստեղ թեև չի մերժվում, սակայն ունի լոկ երկրորդական նշանակություն: Դգմանքն ու բարոյական մաքրագործումը թեև անկասժեշտ են համարվում, շեն կարող աստվածացնել մարդուն, այսինքն՝ նրա եղական բնությունը հաղորդակից դարձնել Աստծո ամեղ բնությանը: Այս նպատակին կարելի է հասնել միայն Ս. Հոգու շնորհի ներքնդոմման միջոցով: Ընդդրում, աստվածացմանը ենթակա են և մաքրոս մարմինը, և հոգին, այնպես որ այս հայեցակարգի տեսակետից պնտի փրկվի ոչ թե մաքրոս հոգին, այլ նրա անբողբական ամեղ:

Փրկագործական այս երկու իղեպները հատակորեն երկու մասի են քաժանում տիեզերական եկեղեցին: Առաջին հայեցակարգը բնդոմվեց արևմտյան եկեղեցու կողմից, մինչդեռ երկրորդը որպեզեցին արևելյան եկեղեցիները: Հայ միջնադարյան աստվածաբանական հուշարժանների վերլուծությունը վկայում է, որ Հայոց եկեղեցին կողմ էր այն փրկագործական իղեպի, որը վառ դրսևորում է ստացել "Ս. Գրիգորի վարդապետության" մեջ:

ARTHUR MATEVOSYAN

THE CHRISTOLOGY AND SOTERIOLOGICAL IDEAL ACCORDING
TO "ST. GREGORY'S DOCTRINE" AND "THE BAPTISMAL
CATECHISM" BY ST. CYRIL OF JERUSALEM

"St. Gregory's doctrine", probably written by St. Mesrop Mashtots; and "The baptismal catechesis" by St. Cyril of Jerusalem are very important theological treatises. They are manuals of christian creed for neophytes, and therefore they expound the main dogmata of faith. Both authors treat problems relating to the christian doctrine of salvation due to the fundamental connection between christology and soteriology. The comparative analysis reveals essential difference of opinion between these treatises. The "St. Gregory's doctrine" is founded on the christian

Revelation, and its soteriology is based upon the idea of man's deification by means of grace of the Holy Spirit. The man for its author is an integral personality, which consists of soul and body. As opposed to this, St. Cyril of Jerusalem continues the tradition of neoplatonic anthropology, and so he considers the person as a dual entity consisting of two heterogeneous substances. He identifies the human person with soul, so that he equates the salvation of man with the salvation of soul. The man has to be saved by means of faith and baptism, as well as asceticism and moral purification. It will give him a chance to overcome the sequels of original sin and to regain the bliss of paradise that was lost in consequence of the Fall. This difference divides christian Church into two parts. The soteriological ideal of the western Church is the salvation of soul, whereas the eastern Churches mainly pay attention to the salvation of integral human personality. The analysis of the Armenian medieval treatises on theology shows, that the Armenian Church on this problem adhered to the point of view, that is peculiar to all Churches of the East.

ԾԱՆՈԹԱԳՐՈՅԻՆՈՒՆԵՐ

1. Ազարանզեղոս, Հայոց պատմություն, Երևան 1983 էջ 208-210:
2. Կիրիլ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832 էջ 52:
3. Ազարանզեղոս, Հայոց պատմություն ... էջ 202:
4. Կիրիլ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան... էջ 395:
5. Ազարանզեղոս, Հայոց պատմություն... էջ 332:
6. Կիրիլ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան... էջ 414:

ԱՐՏԱԿ ՄՈՎՄԻՍՅԱՆ

ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՂՆՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայագիտության մերկայիս կարևորագույն խնդիրներից մեկն, անշուշտ, Հայաստանի տարածքից հայնաբերված քոլոր գրավոր հուշարձանների համահավաքի հրատարակումն է: Այդ ոլորտում հատկապես անմխիթար է մախամաչողոցյան Հայաստանի գրավոր մշակույթի վիճակը, չնայած այն հանգամանքին, որ կոտակվել է հսկայական քանակությամբ նյութ:

Նախամաչողոցյան Հայաստանից հայտնաբերված, քաղմահագար գրակիր հուշարձանները, ըստ ծագման և պատկանելության, բաժանվում են չորս խմբի.

ա) Հայաստանում ստեղծված և մեղ մախմինների կողմից կիրառված պատկերագրային համակարգերով ստեղծված հուշարձաններ,

բ) արձանագրություններ, որոնք զբված են օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի քնիկների կողմից կիրառված գրերով,

գ) Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված քնագրեր,

դ) ստեղծվածային ծագումով և անհայտ մշամակությամբ մշամագիր հուշարձաններ:

Իմքերից յուրաքանչյուրին կարելի է մվիրել քաղմահատոր ուսումնասիրություններ: Այս հրատարակումով նպատակ ունենք անդրադառնալու միայն երգող խմբի հուշարձաններին, որոնք (ոլորան էլ տարօրինակ է) ի մի չեն քերվել ու համակարգվել մինչ օրս:

Հայկական լեռնաշխարհում Զ. ա. 3-րդ հազարամյակից սկսած հանդիպում են օտար գրերով և լեզուներով գրատված զանազան իրեր և հուշարձաններ, որոնց հեղինակները տեղացիները չեն: Սրանք, հասկանալիորեն, չեն կազմում հայաստանյան դարության քաղկացուցիչ մասը, սակայն մախամաչողոցյան Հայաստանի սրատմության կարևոր և անգնահատելի սկզբնաղբյուրներ են, մամավանդ այն դեպքերում, երբ չու-

նենք տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղացիների թողած վկայագրեր: Ստորև կնեղկայացնենք ինչպես եզակի օրինակներով համդիպող բնագրերը, այնպես էլ միևնույն գրերով և լեզուներով կանգնեցված արձանագրությունների խմբերը՝ համատեղակի կանգ առնելով դրանց պատմական նշանակության խնդրին:

Նարամ-Սուենի կտորը Դիարբեքիի շրջանում: Օտարների կողմից Հայկական լեռնաշխարհում թողած հնագույն արձանագրությունը վերաբերում է Հայաստանի Զ. ա. XXIII դարի պատմության կարևոր մի իրադարձության՝ Աքադի տիրակալ Նարամ-Սուենի (Նարամ-Սինի) դեպի Հայկական լեռնաշխարհի կատարած արշավանքներից մեկին: Միջագետքից և Փոքր Ասիայից հայտնաբերված մի շարք բնագրեր վկայում են Արման(խում) երկրի դեմ նրա ձեռնարկած պատերազմի մասին¹, և Նարամ-Սուենի արձանագրությամբ Դիարբեքիի մոտակա Փիր Հուսին հնավայրից գտնված ու Ստամբուլի Հին Արևելքի Բանգադան տեղակայված քարակտորը, միանգամայն իրավացիորեն, համարվում է վերջինիս իրեղեն ապացույցը: Արձանագրության ոչ լիովին պահպանված չորս պունակներում ընթերցվում է.

«I. Աստված(ային) Նարամ Սուենը, Հզորը ...

II. Էնկի (Հայա) աստվածը չորս կողմերում: Ով որ շրջի կտրծքը (առջևը) ...

III. տեղադրի և հիմքը ծածկի (ոչնչացնի), ով այս արձանագրությունը փոխի (եղծանի), Ինաննա (Իշխար) դիցուհին թո՛ղ ...

IV. պատատուտի և նրա ընտանիքը վերացնի, նրա ժառանգները և անունները ...»²:

Թիշարիի (Թիշարալի)³ արձանագրությունն Ուրքիշից: Մինչ օրս հայտնի հնագույն խտուխերեն արձանագրությունը՝ գրված արադական սեպագրով (կանգնեցված Զ. ա. XXIII–XXI դարերի միջև) կապվում է Ուրքիշ քաղաքի հետ, որը գտնվել է Մասիտա/Մասիոն լեռների հարավային լանջերին, ներկայիս թուրք-սիրիական սահմանի մոտ, Մարդին քաղաքից հարավ (Թեյ Ամուդա հնավայր)⁴: Այն վերաբերում է անդրաշխարհի Ներգալ աստծո պաշտամունքին նվիրված տաճարի կառուցմանը և, ինչպես համանման այլ արձանագրությունները, ավարտվում է կատույցը ոչնչացնողներին ուղղված, աստվածներից ակնկալվող անեղծի քանաձևով. «*Թիշարին էնդամե՞՛ է Ուրքիշի: Տաճարը Ներգալի (մա) կառուցեց, տաճարն այդ Լուրադագան թո՛ղ պահպանի: Նա, ով այն իրոք ոչնչացնի, նրան Լուրադագան թո՛ղ ոչնչացնի, Անը թո՛ղ չլսի աղոթքը նրա, ով այն իրոք ոչնչացնի, նրան թո՛ղ*»⁵ NIN.NA.GAR⁶, Եխիզե և Թեշար աստվածները անթիվ–անհամար անգամ նզովեն⁶:

Արձանագրությունը Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից ունի կրկնակի կարևորություն: Նախ այն կարևոր

վկայագիր է Զ. ա. III հազարամյակի վերջին դարերում մեր երկրի հարավ-արևմտյան շրջանների հոգևոր-պաշտամունքային իրավիճակի մասին, ապա, քստ Դ. Մ. Դյակոնովի, «այս արձանագրության լեզուն մույնքան մուռ է որարտերենին, որքան խուռիերենին, և, քստ Էռքյան, կարող է դիտարկվել ոչ միայն որպես հին խուռիերեն, այլ մաս՝ հին որարտերեն»⁷:

Աստվերծ գրությանը թուրք Դիարբեքիցը: Դիարբեքի շրջանից գտնվել և ներկայումս Եվրոպայի մասնավոր հավաքածուներից մեկում պահվում է I, 09 մետր երկարությամբ քրոնզե թուր, որի կենտրոնում առկա է Զ. ա. XIX–XVIII դդ. թվագրվող հին աստվերծ սեպագիր արձանագրություն. «ժուրշալունի՝ տիրակալին. նրա տեր Լուլուանունը՝ որդին Ազիզունի, իր կյանքի և իր որդու կյանքի համար 12 մինա (քաշով)՝ բաբ մվիքեց (քերեց)»⁸:

Սեպագիր արձանագրությամբ այս քրոնզե թուրը, որն իր ժամանակաշրջանի հազվագյուտ գտածո է Հայկական լեռնաշխարհից, կարող է լույս ափռել մեր երկրի (հատկապես հարավ-արևմտյան շրջանների) Զ. ա. XIX–XVIII դարերի պատմության որոշ անհայտ հարցերի վրա⁹:

Սեպագիր արձանագրությանը հինթարեղական կնիք Նախիջևանի շրջանից: Հրատարակելով 1981 թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆներով ասորիոնե զամառև կնիքի արձանագրությունը՝ Բ. Բ. Պիտտոպոսկին գիտական շրջանառության մեջ մտցրեց Նախիջևանի շրջանից գտնված հինթարեղական մի կնիք (Զ. ա. XVIII–XVII դդ.), որի լուսանկարը նրան է տրամադրել հայտնի հնագետ Ա. Ա. Իսասենը: Կնիքին պատկերված է աստվածությանը ուղ գծհարկերով մարդ, որի կողքին առկա է խիստ վնասված սեպագիր արձանագրություն¹⁰:

Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը: Զ. ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող հնագիտական իրերի մեջ առանձնապես հիշատակելի է Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը, որը կրում է Բաբելոնի քասիթական արքաների անունները: Այն պատրաստված է եղել ագաթից և սեպագրելով կրել է համատու արձանագրություն. «I սիկր. Ուլամ-Բուրիաշի՝ որդու Բուռնա-Բուրիաշի»¹¹:

Թափրական դինաստիան Բաբելոնում իշխել է Զ. ա. XVI–XII դարերում: Մինչ այդ՝ Զ. ա. XVIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններից քասիթները արշավանք էին ծնունդից դնում Բաբելոն. մի շարք փաստեր ցույց են տալիս, որ քասիթների քնորոսներ եղել է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը, որտեղից էլ ծավալվել է նրանց տիրապետությունը¹²: Թերևս դրանով են պայմանավորված Հայկական լեռնաշխարհի և քասիթական Բաբելոնի ջերմ հա-

բարեխոսությունները Բ. ա. XVI–XIII դարերում, որի առանձին դրսևորումներ գտնում ենք հնագիտական հուշարձաններում¹⁵:

Ասորեստանի արքաների՝ Հայաստանից գտնված արձանագրությունները: Օտարների կողմից մախամաչություն Հայաստանում բռնկված ընդհանրի շարքում նշանակալի տեղ են զբաղում Ասորեստանի արքաների գրավոր հուշարձանները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են Հայկական լեռնաշխարհի Բ. ա. II հազարամյակի երկրորդ և I հազարամյակի առաջին կեսերի պատմության վերաբերյալ:

Խոջալուի դամբարաններից մեկում գտնված ազաթե մի ուղունքահատիկ կրում է ասորերեն արձանագրություն՝ «Պապատ Ադադ-Նե-րարիի՝ տիեզերքի արքայի»: Ասորեստանն ունեցել է Ադադ-Նե-րարի անունով մի քանի արքաներ: Խոջալուի տվյալ դամբարանից գտնված նյութերը թվագրվում են Բ. ա. I հազարամյակի սկզբով, սակայն սեպագիր արձանագրության հնագրական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ այն Բ. ա. XIII դարի գործ է, ուստի պետք է վերագրել այդ դարում իշխած Ադադ-Նե-րարի Ա արքային: Թե երբ և ինչպես է այն հասել Արցախ, հայտնի չէ. դամբարանը, համեմայն դեպք, թվագրվում է Բ. ա. I հազարամյակի սկզբով¹⁶:

Թիզլաբարալասար Ա-ի (Բ. ա. 1115–1077 թթ.) Ասորեստանի տարածքից գտնված արձանագրությունները բազմիցս հիշատակում են նրա արչավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ¹⁷: Դրանց մասին վկայություններ են պահպանվել մեկ տեղում՝ «Տիգրիսի բունելի»¹⁸ և Մանազկեղտի շքանմանում: «Տիգրիսի բունելի» արձանագրությունը հետևյալն է.

«Աշուրի, Շամաշի և Ադադի՝ մեծ աստվածների, իմ տիրակալների օգնությամբ ես՝ Թուկուլթիասպալ-Էշարրա արքան Ասորեստանի, որդին Ասորեստանի արքա Աշուրիշիշի՝ որդու Մուրաբիլ-Նուգուտի՝ արքայի Ասորեստանի, նվաճողն Արևմուտքի Մեծ ծովից և ծովից Նաիրիի, երրորդ անգամ արչավանքի դեպի Նաիրի»¹⁹:

Մանազկեղտի մերձակայքում (Յունջալու) գտնվող արձանագրությունը ևս վերաբերում է նրա հյուսիսային արչավանքին. «Թուկուլթիասպալ-Էշարրա՝ արքա իզոր, արքա տիեզերքի, արքա Ասորեստանի, արքա աշխարհի յոթ կողմերի, նվաճողը Նաիրիի երկրների՝ Թունմիից մինչև Դայանի, նվաճողը Խարխի երկրի՝ մինչև Վերին ծովը»²⁰:

Ասորեստանյան հաջորդ արքան, որի թողած գրավոր հիշատակությունը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, Աշուրնասիրասպալ Բ-ն է (Բ. ա. 884/3–859 թթ.): Քարխից (Քուրխից) հայտնաբերված կոթողի վրա քանդակված են այդ արքայի և նրա հաջորդ Սալմանասար Գ-ի (Բ. ա. 859–824 թթ.) արձանագրությունները²¹: Աշուրնասիրասպալ Բ-ն պատմում է Բ. ա. 879 թ. դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան,

իսկ Սալմանասար Գ-ն իր իշխանության առաջին տարիներին դեպի լեռնաշխարհի հարավային շրջանները կատարած արշավանքների մասին²²։

«Տիգրիսի բունելի» մյուս չորս արձանագրությունները²³ փորագրվել են Սալմանասար Գ-ի կրամանով։ Դրանցից երկու վատ պահպանվածներում ընթերցվում են միայն արքայի նկատմամբ աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերը, նրա տիրոջասպարհը, արևելքից մինչև արևմուտք կատարած նվաճումների մասին առանձին հատվածներ։ Մյուս երկուսում (27 և 17 տողերից բաղկացած), աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերից և տիրոջասպարհից բացի, ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի ռազմա-քաղաքական իրադրության մասին²⁴։ Նկատի ունենալով դրանց կարևորությունը՝ ստորև քերտմ ենք քննադրերի Հայկական լեռնաշխարհին վերաբերող հատվածները.

«...նվաճողք երկրների՝ Նաիրիի ծովից մինչև Մեծ ծովն [Արևմտացի։ Խեթերի երկիրը՝ մինչև նրա քուր սահմանները, Մեկ[սյու] երկիրը, Դայանի, Սուխան երկիրները, Արզաշուն քաղաքը՝ արքայական քաղաքն Արամու արարտացու, Գիլգան և Խուրուշիկա երկրները՝ Տիգրիս գետի ակունքից մինչև ակունքը Երիքատ գետի, Նեղքին Զամուայի ծովից մինչև Բաղդեսկան ծովը՝» *ես խամարեցիքի լիս ասքերլին...»*²⁵։

*«...նվաճողք երկրների՝ Նաիրիի ծովից մինչև Մեծ ծովն [Արևմտացի։ Խեթերի երկիրը՝ անգամ մինչև նրա քուր սահմանները, ես հնազանդեցիքի և ...[...], Էն[զլիս] երկրի լեռնանցքը [ես մտա], երկրները Սուխան, Դայանի և Ուրարտու, անգամ մինչև նրա [Ուրարտուի] սահմանները, ես հնազանդեցիքի։ Գիլգան երկրի վրա ես գնացի, գիլգանցիների հարկը ես ստացա։ Եղբորդ անգամ գնացի Նաիրիի վրա և Տիգրիսի ակունքի մոտ գրեցի անունն իմ»*²⁷։

Հայկական լեռնաշխարհի տարածքում Սալմանասար Գ-ի ևս մեկ արձանագրություն է հայտնաբերվել Քենքից։ Այն պատմում է ասորեստանյան արքայի՝ իր թագավորության երկրորդից չորրորդ տարիներին դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին՝ պարունակելով տվյալներ, որոնք հայտնի չեն մույն արքայի այլ արձանագրություններից²⁸։

Նախամաշտոցյան Հայաստանում եղջատակություն բողած ասորեստանյան վերջին արքան Զ. ա. 705–681 թթ. իշխած Սինախերիբն (Մենքերիմն) է, որի արձանագրությունը գտնվում է Ջուդի լեռան²⁹ վրա։ Այն վերաբերում է արքայի գահակալության հիմնգրող տարում (Զ. ա. 701 թ.)³⁰։ Հաղորդման համաձայն՝ Ասորեստանի արքան արշավում է Կուտունխա (Կադմես տուն) մարզի սահմանին գտնվող Թումուրրա,

Շարին, Խաչուրյա, Կիսայա, Էզամա, Կուա և Կամա քնակավայրերը, որոնք *տարծվարնի մեամ տեղադրված են Նիբուր լեռան քարծուներն-յունե* և հետո մրա մախնի արքաների օրոք, *«եզոյ էին ու հպարտ, չէին մանաչում տարտափը տիրապետության»*: Դժվարին արշավից հետո (որն, ըստ արձանագրության, ավարտվել է ասորեստանցիների հաղթանակով) արքայի զորքն ուղղություն է վերցնում դեպի հարևան Դայան երկրի Ուկկու քնակավայրը, զրավում այն շրջակա 33 այլ քնակավայրերի հետ մյուսին, հրդեհում, ավերածությունների և քաղաքի ենթարկում դրանք: Այնուհետև նշվում է արքայի կողմից տվյալ արձանագրությունը կանգնեցնելու մասին, որն ավարտվում է այն ոչնչացնողներին ուղղված անեծքի քանակով³¹:

*Ասորեստանյան արձանագրություններ Մամայի քաղաքության տարածքից*³²: Այս խմբի չորս արձանագրություններից երեքը հայտնաբերվել են Ուրմիտ լճից հարավ-արևմուտք ընկած Հասանլու հնավայրից³³: Դրանցից մեկը 1964 թ. գտնված քարե սկավառակաձև աման է (սկիի կամ սկուտեղ), որը պարունակում է ասորերեն գրված արձանագրություն: Վերջինիս տառադարձման ու քարգմանության հարցերում մասնագետների կարծիքները տարամխտվում են: Առաջարկվել են հետևյալ ընթերցումները.

*«Քատրիի պալատը Իդի երկրի, Շամաշ-ուշիշի (Պ)»*³⁴,

*«Քատրիի՝ Իդի երկրի արքայի պալատը՝ ձոնված արևի աստված Ուշիշիին»*³⁵,

*«Պալատը Քահուրիի, Ուշի-շիի լեռնային օրևանի»*³⁶:

*«[Պատկանում է] Քատրիի՝ Իդի երկրի արքայի պալատին, ձոնված արևի աստծուն»*³⁷:

Արձանագրությունը, բոլոր դեպքերում, թվագրվում է միջինասորեստանյան դարաշրջանի սկզբից մինչև Ջ. ա. 800 թ. ընկած ժամանակահատվածով³⁸: Ուշագրավ է, որ Ջ. ա. 855 թ. Մալմանասար Գ-ն Ջարուա երկրի դեմ կատարված արշավանքի առնչությամբ հիշատակում է Իդի ամուռով երկիր և քաղաք³⁹, որի առնչությունն այս արձանագրության հետ դժվար է որոշել:

Մյուս երկու արձանագրությունները պահպանվել են քարե սկահակի և քարե մակնախի կամ գուրգի վրա, որոնցից առաջինը պարունակում է Ֆասիթական Քարեղունիայի քաղաքոր Կադաշմին-Էնլիլի (I-ի՝ Ջ. ա. 14-րդ դար, կամ II-ի՝ Ջ. ա. XIII դ. առաջին կես) անունը, իսկ երկրորդում առկա է *«Աշուր-Ուրալիթի պալատը»* արտահայտությունը⁴⁰: Խոսքն, ամենայն հավանականությամբ, վերաբերել է Ասորեստանի մուլմամուն արքային, որը կառավարել է Ջ. ա. 1365/3-1330/1328 թվականներին:

Մերձուրբյան ավագանից հայտնաբերված և ենթադրաբար Ասորեստանի Արբաիլ քաղաքից ծագող չորրորդ արձանագրությունը փոքրագրված է բրոնզե արձանիկի վրա: Տասներկու տողանոց արձանագրությունը բարենադասք է՝ ձոնված Արբաիլի Իշտար աստվածուհուն՝ հանուն ասորեստանյան Աշշուր-դան I (Ջ. ա. XII դ.) արքայի: Բնագրի հեղինակը Արբաիլ քաղաքի դպիր Շամշի-Բեզն է՝ Ներգալ-Մադին-ախսիսի որդին⁴¹:

Ինչ վերաբերում է արձանագրված այս իրերի ծագմանը, ապա դրանք (զոնե վերջին երեքը), ամենայն հավանականությամբ, ներմուծվել են դասից, ինչը կարող է վկայել Ասորեստանի և Բաբելոնիայի հետ առաժաժարյալ ունեցած ակտիվ փոխհարաբերությունների մասին:

Արմավիրից գտնված սեպագիր երեք սաղիկները: Օտարագիր արձանագրություններից են նաև 1980-ական թվականների սկզբին Արմավիրից գտնված սեպագիր սաղիկների երեք բեկորները: Դրանք կազմ ապիկների մասեր էին, որոնցից ամենամեծը և լավ պահպանվածը երկու երեսին ուներ ընդամենը 28, երկրորդը՝ 16 (նույնպես երկու երեսին), իսկ երրորդի մի կողմում պահպանվել է 9 տող: Առաջինը Ի. Մ. Դյակոնովը և Ն. Բ. Յանկովսկայան վերծանեցին որպես «Գիլգամեշ» էպոսի բառերակազմացված մի հատված՝ գրված էլամերեն լեզվով, փորձելով նույն համատեքստում դիտարկել մյուս երկու բեկորներից ընթերցված առանձին բառերը (ենթադրաբար, դրանք կարող էին պատկանել բառերակազմի անդամներին): Բնագրերը թվագրվեցին Ջ. ա. VIII դարով, իսկ «Գիլգամեշ» էպոսի մի հատվածի սցենարի առկայությունը Արգիշտիխիմիլի-Արմավիրում ենթադրաբար կապվեց էլամա-ուրարտական հակաստորեստանյան դաշինքի հետ, որը կարող էր ամրապնդված լինել Մարդուրի Բ-ի (Ջ. ա. 764-735 թթ.) և էլամի արքայադատեր ամուսնությամբ, ինչն էլ գուցադիպած լինեք արքայի գանակազման համոզեսին, որի ժամանակ էլ հնարավոր է, որ տեղի ունեցած լինեք էլամական բառերակազմի բնականացումը⁴²:

Կարճ ժամանակ անց նրանց վերծանությունը կասկածի ենթարկվեց, վերամարվեց, և առաջարկվեց արմավիրյան երեք բնագրերն ընթերցել էլամերեն, սակայն մեկնարանել որպես տնտեսական քվանդակության մանակների հատվածներ, որոնք պետք է թվագրվեն Ջ. ա. VI դարի երկրորդ կամ V դարի առաջին կեսով⁴³...

Երե վերջնականապես հաստատվի սաղիկների էլամերեն ընթերցումը, մախամաչուոցյան Հայաստանում (Քսենոսեսի արձանագրության էլամերեն բաժնի հետ միասին) կունենանք էլամերեն չորս արձանագրություններ:

Եգիպտական հիերոգլիֆներով խճառ: Հայաստանից գտնված օտարագիր առարկաների մեջ հետաքրքիր խումբ են կազմում եգիպտա-

կան մեհեմազներով իրերը: Մինչ օրս Հայաստանից հայտնաբերվել են եզիպտական հիերոգլիֆներ կտող չորս կմիքներ և երկու ուլուքահատիկներ:

Դրանցից հնագույնը 1981 թ. Մեծանորի պեղումներից հայտնաբերված եզիպտական հիերոգլիֆ արձանագրությանը աստիճան գրանաձև կմիքն է: Այն կրում էր Զ. ա. XV դարում իշխած Բաբելոնի քասիթական հարստության տիրակալ Կտրիզալզու Ա-ի անունը: Բաբելոնը քասիթական ժամանակաշրջանում կրում էր նաև «Մեծ Սանգար» անունը, որն էլ առկա է կմիքի գրության մեջ. «*Կտրիզալզու՝ Մեծ Սանգար երկրի աստվորոր*»⁴⁴:

Մյուս երեք կմիքները (գտնված Վանից, Անիից և Արմավիրից) թղթատեսք են: Վանից և Արմավիրից հայտնաբերված թղթատեսք կմիքները կրում են եզիպտոսի XVIII հարստության փարավոն Յուրմոս Գ-ի (Զ. ա. XVI-XV դդ.) գահանունը՝ «Մեհեպեբրա»: Այդ գահանունով կմիքները, որ, թերև, ունեցել են խորհրդանշական ինչ-որ իմաստ, լայն տարածում են գտել և գործածվել մինչև XXV և XXVI դիմաատիաների իշխանության ժամանակաշրջանը (Զ. ա. VIII-VI դդ.)⁴⁵: Ե՛վ թղթատեսք երեք կմիքները, և՛ երկու ուլուքահատիկները (գտնված Կարմիր բլուրից), ըստ Բ. Բ. Պիտոլովսկու, պետք է թվագրել Վանի թագավորության ժամանակաշրջանով⁴⁶:

Քսեռքսեսի ետպեզու արձանագրությունը Վանում: Արեմնյան Դարեհ Ա-ի օրդի և եսջորդ Քսեռքսես արքան հայտնի դարձավ Անուրամազդայի պաշտամունքին նվիրված կրոնական քարեխոյառումով: Իր գործունեությունը նվիրված քազմաթիվ արձանագրություններից մեկը նա քողել է Վանի ժայռի հարավային կողմում (գետնից շուրջ 18 մ քարձուրթյան վրա)՝ գրված երեք լեզուներով (պարսկերեն, քարեղերեն և էամերեն): Երեք բաժինների միջև էական տարբերություններ չկան. տարբերվում են հատուկ անունների գրությունները: Պարսկերեն, քարեղերեն և էամերեն բաժիններում, համապատասխանաբար, Անուրամազդան կոչվում է Աուրամազդա, Ախուրամազդա, Օրամազդա, Քսեռքսեսը՝ Խշայարշա, Խշի՛արշա, Իկսեռիսաս, Դարեհը՝ Դարայավասուշ, Դարեհ՛ամուշ, Դարիյավասու⁴⁷: Բերում ենք գլխավոր՝ պարսկերեն բաժնի քարզմանությունը (գլխության մեջ տարածված անվանաձևերով)⁴⁸:

«Մեծ աստված է Անուրամազդան՝ մեծագույնն աստվածներից, որ արարեց այս աշխարհը, որ արարեց այն երկինքը, որ տեղծեց մարդուն, որ՝ մարդկանց համար հաճույքներ տեղծեց, որ Քսեռքսեսին դարձրեց թագավոր՝ միակ թագավոր բաբելոն, միակ հրամանատար բաբելոն:

Ես Քսեռքսեսն եմ՝ արքա մեծ, արքա արքաների, արքա թագուն ժողովուրդների երկրների, արքա այս մեծ աշխարհի և որդին Դարեհ արքայի, Արեմնյան: Քսեռքսես արքան ասում է. - Դարեհ արքան, որն իմ

հայրն էր, շնորհիվ Անուրամագղայի բազում վայելչություններ կատարեց և այստեղ հրամայեց քանդակել, տակայն արձանագրություն գրել շտվեց. ապա ես հրամայեցի այս արձանագրությունը գրել:

Թո՛ղ Անուրամագղան (մյուս) աստվածների հետ պաշտպանի ինձ և բազավորությունն իմ և ինչ հիմնել եմ ես»⁴⁹:

Արձանագրությունը կարևոր վկայագիր է Հայաստանի Ջ. ա. VI-V դարերի պատմության վերաբերյալ. այն անուղակիորեն կարող է վկայել Անուրամագղայի պաշտամունքին միևրիված կրոնական բարեփոխման ուղիքում մաս Հայաստանի ընդգրկվելու մասին: Պատմական նշանակությունից զատ, մշինք, որ սա մախսամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված միակ նույնպես արձանագրությունն է:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները: Հայաստանի մինչմաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների շարքում կարևոր տեղ զբաղեցրել են արձանագրությունները վերաբերում են հռոմեական քանակների՝ Հայաստան կատարած արշավանքներին և կանգնեցված են բացառապես օտարների կողմից: Ուստի պետք է հրաժարվել եսայազիտության մեջ տարածում գտած այն մտեցումից, ըստ որի՝ լատինական գիրը հռոմեականի ու արամեականի կողքին համարվում է մախսամաշտոցյան Հայաստանում կիրառված այբուբեններից մեկը:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները կապվում են Հռոմեական կայսրության արևելյան քաղաքակառուցության հետ և հայտնաբերվել են հայկական երեք թագավորությունների (Մեծ Հայք, Փոքր Հայք և Կոմմագենի) տարածքներից:

Մեծ Հայքի լատիներեն արձանագրությունները հայտնաբերվել են երեք՝ Վաղարշապատի (Էջմիածնի), Արտաշատի և Խարբեղդի շրջաններից: Դրանցից առաջինը 1863 թ. հայտնաբերված Վաղարշապատի (Էջմիածնի) լատիներեն արձանագրությունն է, ինչից իմանում ենք, որ այն կանգնեցվել է 185 թվականին՝ Կոմոդոս կայսեր օրոք, հռոմեական XV Ապոլինարիս (Ապոլոնյան) լեզեոնի հրամանատարների կողմից⁵⁰:

Արձանագրությունից զննվել է Կոմոդոսի անունը: Դա, ըստ երևույթին, կապվում է 193 թվականին հռոմեական սեմատի կողմից մրտ, ողպես անաբժան կայսեր, անունը մոտացության մատնելու որոշման հետ, որի ընդունումից հետո հիշատակարաններից սկսեցին հանել, ոչնչացնել Կոմոդոսի անունը: Իսկ դա նշանակում է, որ հռոմեական լեզեոնները մինչև այդ թվականը գտնվել են Հայաստանում⁵¹:

Վաղարշապատից (Էջմիածնից) գտնված մյուս լատիներեն արձանագրությունը, որը հայտնի դարձավ 1907 թվականին, վերաբերում է Մարկոս Ավրելիոս կայսեր իշխանության ժամանակաշրջանին: Դատե-

լով արձանագրության մեջ կայսեր տիտղոսաշարից՝ այն պետք է կանգնեցված լինի 173–176 թվականների միջև, երբ Հայաստանում Հռոմի շահերն էին պաշտպանում հռոմեական զորաքամակներից երկուսը՝ XV Ապոլինարիս (Ապոլոնյան) և XII Ֆելիքսատա լեգեոնները⁵²։

1967 թ. Վաղարշապատի (Էջմիածնի) պեղումների ընթացքում բացված դամբարաններից մեկում, կարասային քաղման կալի կափարիչի վրա գտնվեց *Եղեղեմ յորորդ սկյութական* լատիներեն մակագրությունը⁵³։ Դա կապվում է մույն թվականին Արտաշատից գտնված Տրայանոս կայսեր արձանագրության հետ (տե՛ս տառը), երկու արձանագրություններն էլ վերաբերում են 114–116 թթ. պատմական իրադարձություններին։

Խաբբերդի շրջանից լատիներեն երեք արձանագրություններ են գտնվել 1879 և 1883 թվականներին. երեքն էլ՝ մույն բովանդակությամբ (սակայն բառացի չկրկնելով մեկմեկու), երեքն էլ՝ հայկական գյուղերի եկեղեցական շինությունների շարվածքում։ Առաջին երկուսը (գտնված 1879 թ.) հայտնաբերվել են Խաբբերդից 2–3 կմ հարավ–արևելք ընկած Կեզրիկ գյուղից և պահպանվել են բավականին լավ⁵⁴։ Երրորդը գտնվել է 1883 թ. Կովանք գյուղից (Կեզրիկից դեպի հարավ–արևելք), հետագա դարերում այս արձանագրության վրա փորագրվել է մեծ խաչ, որի հետևանքով լատիներեն քննազիլը մեծապես տուժել է, սակայն պահպանված հատվածները ցույց են տալիս, որ այն մախորդ երկուսի կրկնօրինակներից է։ Բնագրերի համընկնող թարգմանությունը հետևյալն է. *«Ներսն Կրպդիսու, Կեսար, Օգոստոս, Գերմանիկոս, Իմպերատոր, Գերասույն քուրս, իր տրիբունական իշխանության տասնմեկերորդ տարին, իր յորորդ կոնսուլությանը, իններորդ անգամ [նույնպիսի] իմպերատոր, հայրենիքի հայր։ Գնեսու Դոմիտիոս Կորբուլոնի՝ Օգոստոսի լեգատի, պրոպրետորի, և Տրետո Ալբրեխտ Ֆուլվոսի՝ Օգոստոսի լեգատի օրոք, III Գալլիական լեգեոն»*⁵⁵։

Արձանագրությունները կանգնեցվել են 64 թվականին։ Դրանք վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեծ Հայքի գահի համար 52 թվականից սկսված ռազմական գործողություններն ազադավեցին հռոմեական զորքերի՝ հայ–պարթևական ուժերից Հռոմեայում կրած խայտառակ պարտությանը (62 թ.), որից հետո մույն վայրում 64 թվականին կնքվեց հաշտություն, որով Արշակունյաց արքայատոհմը հաստատվեց Մեծ Հայքում։

Քարե տալերի վրա արձանագրություններն առնված են քառակուսի շրջանակների մեջ. դրանք, հավանաբար, դրվել են այն շինության (կամուրջ կամ ամրոց) սլառի մեջ, որը կառուցվել է քանակություններում Հռոմը ներկայացնող, Արևելքի զորքերի իրամամատար նշանակված Գնեսու Դոմիտիոս Կորբուլոնի կողմից⁵⁶։

Արտաշատի շրջանից ևս հայտնի են երեք լատիներեն արձանագրություններ՝ գտնված Ալեքսեո և Փոքր Վեդի գյուղերից: Ալեքսեոյից հայտնաբերվել է սպիտակ քարից պատրաստված սյան բնկոթ, որի վրա ընթերցվում են միայն «հիմպերատոր», «կեսար», «աստվածային» բառերը (ճապավումներով): Ալեքսեուն գտնվում է Հին Արտաշատի (ներկայիս հողը Վիթապի) դիմաց, Արաքսի համդիպակաց ափին, ուստի և արձանագրության բնկոթը պետք է համարել Հռոմի կայսրերից մեկի՝ հայաց մայրաքաղաքի նետ կապված ինչ-որ ձեռնարկի իրերեն վկայություն⁵⁷:

1967 թ. պատմական Արտաշատ մայրաքաղաքի հյուսիս-արևելյան տաճաններում գտնվող ներկայիս Փոքր Վեդի գյուղի հարավ-արևելյան եզրին կատարված շինարարական աշխատանքների ժամանակ 1,4 մ խորության վրա հայտնաբերվեցին երկու լատիներեն արձանագրություններ⁵⁸: Դրանցից առաջինը նուստող է, ունի շատ խոշոր չափեր (8,5 մ երկարություն և 0,8 մ բարձրություն, առաջին տողի տառերի քարձրությունը 20 սմ է, երկրորդինն ու երրորդինը՝ 16 սմ) և կրում է Հռոմի Տրայանոս կայսեր անունը, իսկ երկրորդը համեմատաբար մանր տառերով գրված զինվորականի տապանաքար է:

Բնագրերը վերաբերում են 116 թվականի երկրորդ կեսին Տրայանոս կայսեր՝ դեպի Հայաստան կատարած արշավանքին: Խոշոր արձանագրության վնասված մասերը հաջողվում է վերականգնել և ընթերցել. «*Իմպերատոր Կեսար աստվածային, Ներվայի որդի Ներվա Տրայանոս, Օպտիմոս (լավագույն), օգոստոս (կեռակատ), Գերմանիկոս (Գերմանական), Դակիկոս (Դակիական), Պարթևիկոս (Պարթևական), Գերագույն քուր, Մարսինոս (մեծագույն), տրիբունի իշխանությանը (օժտված) 20 անգամ, կայսր (նշանակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ, [հայրենիքի հայր ?]. սկյութական լեզուներ կատարեց (կանգնեցրեց)*»:

Տասանամյաքաղի տասը տողերից սխալաբանվել են առաջին չորսը, իսկ մյուսներին՝ միայն առանձին տառեր: Գրությունը հետևյալն է. «*Մտորոկերյա աստվածներին (մաներին). Կայսու Վալ(երդիու) Կրե... զինվոր իտալիկների I լեզուների գորաբոկատի, ծառայեց... հաշարձանը (?) դրվեց*»:

Ի մի քերեզվ՝ նշենք, որ Մեծ Հայքից հայտնաբերված լատիներեն ինը արձանագրությունները Հայաստանի I-II դարերի պատմության երեք շրջանների (60-ական թվեր, երբ Արշակունյաց արքայատոհմը հաստատվում էր Մեծ Հայքի գահին, 114-116 և 160-190-ական թթ.) կարևոր սկզբնադրյուններ են և լրացնում են դարաշրջանի մասին մատենագրական հատրություններից մեր առաջած գիտելիքները:

Ինչպես Մեծ Հայքից, այնպես էլ Փոքր Հայքից և Կոմմագենից հայտնաբերված լատիներեն արձանագրությունները հիմնականում վերաբերում են հռոմեական բանակների արևելյան արշավանքներին:

Ղրանցում հստակ առանձնանում է երկու խումբ՝ հոռմնական զորամասերի տեղակայման մասին վկայող արձանագրություններ, որոնցում տեղեկություններ են հաղորդվում հոռմնական կայսրերի ու զորավարների վերաբերյալ, և զինվորների տապանագրեր⁵⁹։

Օտարների բաղած հունարեն արձանագրությունները։ Հունագիր հուշարձանները Հայկական լեռնաշխարհում քաժանվում են երկու խմբի՝ տեղացիների հեղինակած և օտարների կողմից բաղնված։ Մտաքիններին այդեն անդադարձել ենք համապատասխան քաժնում, իսկ երկրորդ խմբի քնագրերը (ինչպես լատիներեն արձանագրությունները) կապվում են Հոռմի արևելյան քաղաքակառուցության հետ։

Հոռմնական զոբակամների կողմից Հայաստանում բաղնված արձանագրությունների մեջ կան մաև հունարեն տապանագրեր։ Ղրանցից մեկը հայտնաբերվել է 1914 թ. Վաղարշապատից։ Ղրանքանական արձանագրությունը կանգնեցվել է II դարի երկրորդ կեսին։ Հեղինակը զինվորական տրիբունն էր XV Ապոլոնյան լեզոռնի, որի մասին այդեն զիտենք Վաղարշապատում 173-176 և 185 քվականներին բաղնված լատիներեն արձանագրություններից։ Տապանագիրը հետևյալն է.

«Ի հիշատակ Էլիի Մաքսիմի՝ ամուսնու, որն ապրեց 35 տարի, և Էլիի Վաղենտինի՝ դստեր, որն ապրեց 13 տարի, Էլիի Վաղենտը՝ XV Ապոլոնյան լեզոռնի զինվորական տրիբունը, նրանց ամուսինն ու հայրը, մվիրեց (աստվածներին)»⁶⁰։

Մի քանի հունարեն տապանագրեր են հայտնաբերվել Քենցից (Մվիրատի արևմտյան ափին, Այնթապից (Գազիանթեպից) շուրջ 60 կմ հյուսիս-արևելք), Մալմամասար Գ-ի վերոհիշյալ արձանագրությունից ոչ հեռու⁶¹։

1978 թ. Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի մոտ կատարված ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց ոչ մեծ քարե մի զոռասեղան՝ «Էմիլիոս Վալես Մայր Երկրիմ՝ Օլտաքի աստվածուհի տիրուհուն» արձանագրությանը։ Արձանագրության առանձնահատկությունների և ժամանակաշրջանի պատմա-քաղաքական իրադարձությունների քննությունը քույլ է տալիս այն քվագրելու 163-164 քվականներով⁶²։

Եշենք, որ սրանցով շեն սահմանափակվում օտարների կողմից մախտամաշտոցյան Հայաստանում բաղնված հունարեն արձանագրությունները, մենք տեղյակ ենք մի քանի արձանագրությունների մասին (հատկապես Փոքր Հայքի և Կոմմագենի տաքածքներում), որոնց այստեղ շենք անդադարտնում ձեռքի տակ համապատասխան զոռակառույթուն շունենալու պատճառով։

Հայաստանից հայտնաբերված օտար ժագումով դրամները։ Արձանագրություններից հետո, պատկերն ամրոջացնելու մապատկով,

տառը. ժամանակագրական հերթականությամբ կենդկայացնենք նույն-
պիսի ծագում ունեցող գրակիր դրամների խմբերը:

Հայաստանից հայտնաբերված վաղագույն դրամները (Ք ա. VI-V դդ.) գրակիր չեն. դրանք, այսպես կոչված, «միջերյան» տեսակի ար-
ծաքե դրամներն են, որոնց մի կրեսին առյուծի գլուխ է պատկերված,
մյուսին՝ բուսական մախչ (կամ ոճավորված հավասարաթև խաչ): Երկու
այդպիսի դրամներ գտնվել են Էրեբունիի պալատական տաճարի ներ-
սում, մվրատություն սեղանի մոտ⁶⁷: Ք ա. VI-V դարերով են բվագր-
վում նաև Հայաստանից գտնված արեմական և արեմենյան դրամները⁶⁸:

Ք ա. IV դարում Հայաստանում տարածում են գտնում մակեդո-
նական (Ալեքսանդր Մեծի, նրա որդի Ֆիլիպ III-ի անուններով մակագր-
ված) դրամները, նույն դարավերջի հռոդոսյան դրամ է գտնվել Արմավի-
րից⁶⁹:

Ք ա. III-I դարերում օտար դրամական միավորներից Հայաստա-
նում լայնորեն կիրառվում են սելևկյան, փյունիկյան, կապադոկիական,
պարթևական (Ք ա. II-I դդ.), պոնտական (Ք ա. II-I դդ.), փոքրասիա-
կան Պերգամոն և Եփեսոս քաղաքների հունազիր դրամները⁷⁰:

Ք ա. I-ից Ք հ. III դարի կեսերին հայաստանյան դրամաշրջա-
նառության մեջ մեծ տարածում են տալիս հռոմեական լատինազիր
դրամները, որոնց կիրառությունը հետագայում նվազում է⁷¹:

Ք հ. III դարի կեսերից մինչև V դարի սկիզբը հայաստանյան
առևտրում գերակշռում են սասանյան պահլավազիր դրամները⁷²:

Սիս ալյախիսն է մախամաչտոցյան Հայաստանի դրամաշրջա-
նառության ընդհանուր պատկերը. տարածված դրամների հիմնական
խմբերը կրում են հունարեն, լատիներեն և պահլավերեն գրություններ:
Հասկանալիորեն, օտար ծագումով դրամները չի կարելի կապել տեղա-
կան դպրության հետ, սակայն այդ դրամների լայն կիրառությունը երկ-
րում կարող է ցույց տալ ժողովրդի որոշակի խավերի (թեկուզև մասնա-
կի) ծանոթությունը դրանց մակագրությունների գրերին և լեզուներին:
Բացի այդ, Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագու-
մով դրամների խմբերը մեկ անգամ ևս ընդգծում են Հայաստանի խաղա-
ցած կարևոր դերը Հին Աշխարհի քաղաքակրթության խաչմերուկներում:

Անփութելով՝ մեկ անգամ ևս նշենք, որ օտարների բոլոր գրային
հուշարձանները թեպետ չեն կազմում հայաստանյան դպրության քաղ-
կացուցիչ մասը, սակայն մախամաչտոցյան Հայաստանի պատմության
կարևոր և անզնախտելի սկզբնադրյուններ են, մասնավորապես այն դեպքե-
րում, երբ չունենք ավյալ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղացիների
բոլոր վկայագրեր...

INSCRIPTIONS MADE BY FOREIGNERS OF PRE-MASHTOTSIAN
ARMENIA AND THEIR HISTORICAL ESTIMATION

In article are considered pre-Mashtotsian inscriptions of Armenia, which were found in the territory of Armenian Highland, but were made by foreigners. In the territory of pre-Mashtotsian Armenia were found Akkadian, Hurrian, old, middle and new Assyrian, old and middle Babylonian, Persian (Achaemenid), Elamite cuneiform, Egyptian hieroglyphic, Latin and Greek alphabetic inscriptions. In article attempt to give a historical estimation of these inscriptions also is made.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժան(Չ)եամ) երկրի ճշգրիտ՝ հայաստանյան տեղագրության աստիճան էմբնավորումները տե՛ս Գաբրիելիան Է. Գ, Նարամ-Սին եւ իր թշնամիներն ըստ հատման քննարկ, «Համալս Ամսօտայ», 1929, N 5, էջ 287-288; Rigg H. A., A Note on the names Armanum and Urartu, "Journal of American Oriental Society", 1937, vol. 57, 4, էջ 416-418: Այդ ուղղությանը կատարված հետազոտ աշխատանքների մասին (զրականության հղմամբ) տե՛ս Մուխոման Ա. Ե., Արժանի-Արմի երկիրն ըստ աջադական և երջայական աղբյուրների, «Հայկազեան Հայազգիտական Հանդես», 1993, հ. ԺԳ, էջ 113-127, Մատթոսեան Վ., Մեզագիր աղբյուրները Արժան երկիրը, ՀԱ, 1994, ք. 1-12, էջ 255-268:
2. Barton G. A., The Royal Inscriptions of Sumer and Akkad, New Haven, 1929, էջ 140-141 (յնազգի աստիճան էրապարակումների հղումներով); կրտսի գտնվելու հանգամանքները և քննազգական ժամանակները տե՛ս Նաեբ J. P., Unger E., Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein (խաղկացած է երկու բաժնից՝ I. Նաեբ J. P., Die Entdeckung der Stele des Naram-Sin in Pir Hüsein; II. Unger E., Naram-Sin in Assyrien und Armenien), Istanbul Asaristika Müzeleci Nerjyati, XII, Istanbul, 1934 (տարբերակ և գերմաներեն), էջ 5-48, աղ. I-IV: Արժանագրությունն ունեցել է բազմաթիվ վերահրատարակումներ:
3. Անունը նախապես ցմբերցվում էր Թիշարի, վերջերս վերանայվեց և աստվել ընդունելի իսմարվեց «Թիշարաթ» տարբերակը (Wilhelm G., Die Inschrift des Tilatal von Urkel, "Bibliotheca Mesopotamica", 26, 1998, էջ 120-121):
4. Kammenhuber A., Historisch-geographische Nachrichten aus der althurrischen Überlieferung, dem Altelamischen und den Inschriften der Könige von Akkad für die Zeit vor dem Einfall der Gutter (ca. 2200-2136), "Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae", t. 22, 1-4, էջ 164:
5. «Էնթանը» քրժական տիտղոս է:
6. Дьяконов И. М., Язык древней Передней Азии, М., 1967, էջ 443-445; Diakonoff I. M., Hurrisch und Urartisch, München, 1971, էջ 110; Wilhelm G.,

Grundzüge der Geschichte und Kultur der Hurriter, Darmstadt, 1982, էջ 15–16; Wilhelm G. Die Inschrift..., էջ 119–120:

7. Дьяконов И. М., Языки ..., էջ 444:
8. Հնարածք է երկրանվան «Խորեշայում» ցեղերումը: Ըստ իրատարակչի՝ Խորեշայումի տիրակալը (կամ թեղ) պետք է նույնացնել Աշուրամազակի գրառարանից հայտնի Լորգալ-Խորշայի հետ, որը համարվել է անբնականորեն ստույգություն (Götterbock H. G., A Votive Sword with Old Assyrian Inscription, Studies in honour of B. Landsberger in his 75th birthday, Assyriological Studies N. 16, Chicago, 1965, էջ 197–198):
9. 12 մինան հաճախար է 6 կիլոգրամի. դարերի ընթացքում քայքայված ենթարկվելով այն ներկայումս կշռում է մոտ 5 կիլոգրամ (Götterbock H. G., նշվ. աշխ., էջ 197):
10. Götterbock H. G., նշվ. աշխ., էջ 197–198, աղ. XIII–XV:
11. Մասնավորապես, ուշագրավ ալյուրներ կարելի է ստանալ հատուկ ամուսնների վերաբերյալումից: Խորեշայում(ում) կամ Խորեշայ(ում) երկրանունը, ինչպես նույն է հրատարակիչը (Götterbock H. G., նշվ. աշխ., էջ 197), իր կազմությանը ակնհայտորեն հիշեցնում է Ապիշայ(ում) երկրանունը, որը Արման(ում) ի համարժեքն է: Ի վերջո, եթե հնարածք լինի ըսյց տալ, որ Լուրամ(ում) չ' տեղաբնակ է, արձանագրված թույլ կարելի է դասել Հայաստանի ընկնների կողմից օտար լեզուներով ու զերեզվ թողած բնակների շարքը:
12. Ханзаян Э. В., Плотровский Б. Б., Цилиндрическая печать с древнеегипетской надписью из Мецморского могильника, «Պատմա-բանասիրական հանդես» (այսպես՝ ՊԲՀ), 1984, N 4, էջ 65:
13. Ханзаян Э. В., Саркисян Г. Х., Дьяконов И. М., Вавилонская гиря XVI в. до н. э. с клинописной надписью из раскопок Мецмора, «Древний Восток», 4, Ереван, 1983, із 113–122:
14. Այդ մասին մեր մախնական դիտարկումները հայտնել ենք հանրամատչելի մամուլում (տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Փարի մի դարաշրջան ևս, «Հայ գիտվոր», 1995, NN 46 (97) – 47 (98) ; Մովսիսյան Ա. Ե., Եվ Բարեբախտիան կուլվեց... «Հայաստան», «Շրջան», 1996 (ճ), N 2):
15. ՀճճՄ. Փիլիպոսյան Ա. Ս., Հայկական լեռնաշխարհի կմիրները Հին Արևելքի կերպարներում համակարգում, Ե., 1998, էջ 101–102:
16. Melčanzin J., Weidner E. F., Votivperle mit assyrischer Königs-Inschrift aus Transkaukasien, «Archiv für Orientforschung», 1931–1932, Bd. VII, էջ 266–268; Мещанинов И. И., Загадочные знаки Причерноморья, «Известия Гос. Академии истории материальной культуры», вып. 82, Л., 1933, էջ 52–53; Кушнарева К. Х., Хаджалинской могильник, ՊԲՀ, 1970, N 3, էջ 114–115; Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, N 2–4 (այսպես՝ АВИИУ), N 36: Ապրիտտանի արձաններից ոչ մեկի արչագիտությունը լին հասել Արգախի տարածք, հետևարար գրակեր ատարկան այնուհեղ պետք է հայտնված լինի այլ նամագրիները:
17. Թիջուրազպատար Ա–ի դնալի Հայկական լեռնաշխարհ կառարած արչագիտությունի մասին տե՛ս Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Ե.,

- 1972, էջ 54-66; Пюотровский Б. Б., Ванское царство (Урарту), М., 1959, էջ 44-46; Арутюнян Н. В., Биайинли, Е., 1970, էջ 29-52:
18. Տիգրիսի վերին հոսանքի ճախակազմյալ փոակ Սուրմառը (ներկայումս՝ Ջեքինն-սու) որոշակի մի տարածք հոսում է ժայռի տարրին ճառել, որի ժայռից արևախոսելու վայրը՝ «Տիգրիսի բունելը», Մյրագիտքի հնարանկները համարում էին Տիգրիս սրբազան գետի ալեմերը, ուստի այնտեղ հասնելը միջագիտքյան հերոսների համար պաշտամունքային նշանակություն ունեցող մեծագործություն էր: «Տիգրիսի բունելը» եղի ժայռին փորագրված են ասորեստանյան արքաներ Թիզբարպարատար Ա-ի և Սալմանասար Գ-ի հինգ արձանագրություններ: Դրանցից երկու վաստ պահպանվածները սկզբնապես վերագրվել են Թուկուրի-Նիմուրթա Բ-ին և Աշորնապիրապալ Բ-ին, սակայն հետագայում ճշգրտվել է դրանց հեղինակի ինքնությունը (Schrader E., Die Keilinschriften am Eingange der Quellgrotte des Sabeneb-su, Berlin, 1885, էջ 3-31; Սամուալճևան Հ., Ասորեստանեաց և պարսիկ սեպագիր արձանագրությունը կամ քարտածք նոցին, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհի մ պատմության կը վերաբերին, Վիեննա, 1901, էջ 106-108, 131, 151-152; ճշգրտումը՝ Lehmann-Haupt C. F., Materialien zur Älteren Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-historische Klasse, Neue Folge, Band IX, No. 3, Berlin, 1907, էջ 16-18, 31-44; Lehmann-Haupt C. F., Armenien Einst und Jetzt, I, Berlin und Leipzig, 1910, էջ 430-462 (նոված աշխատանքներում Սալմանասար Գ-ն (ժամանակի զետուրյան տվյալների համաձայն) համարվում է Սալմանասար Բ); АВИАУ, NN 16, 32, 33):
19. Schrader E., նշվ. աշխ., էջ 7-8, 27; Սամուալճևան Հ., նշվ. աշխ., էջ 106-107; Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 16-18; АВИАУ, N 16:
20. Սամուալճևան Հ., նշվ. աշխ., էջ 106 (Սամագիկերտի մտասկայքում արձանագրության գտնվելու վայրն այստեղ կոչվում է «Կոճանլու», այլ տեղերում՝ Յունգալու); Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 15-16; Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 59-60; АВИАУ, N 17:
21. Քարիտը (Ջուրխ, Կուրխ) Դիարրեցիից շուրջ 30 կմ (20 անգլիական մղոն) ելալով-արևելք գտնվող վայր է Տիգրիսի աջ ափին, որը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Թուշխան երկրին (Արտյունյան Н. В., Топонимика Урарту, Е., 1985, էջ 191-192): Այնտեղից գտնված արձանագրված մեծագույնը դեռևս XIX դարում տեղավորվել է Բրիտանական թանգարան (Լոնդոն). մասնագիտական զբաղակցության մեջ այն տվորարար հանդես է գալիս «Թուշխանի կամ Քարիտի մեծագույն» անվամբ: Ունեցել է յազմաբիշվ երազարակումներ (տե՛ս օրինակ Սամուալճևան Հ., նշվ. աշխ., էջ 140-143; АВИАУ, N 26 և 27):
22. Այլ արշավանքների երթուղիների հանգամանակի վերլուծությունը տե՛ս Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 70-76; Пюотровский Б. Б., Ванское ..., էջ 52-60; Арутюнян Н. В., Биайинли, էջ 66-99:
23. Schrader E., նշվ. աշխ., էջ 9-31; Սամուալճևան Հ., նշվ. աշխ., էջ 108, 131, 151-152; ճշգրտումը՝ Lehmann-Haupt C. F., Materialien ..., էջ 31-44; Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 430-462; АВИАУ, NN 32, 33):

41. Grayson A. K., *Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods*, vol. I, Toronto, 1987, էջ 308:
42. Дяконов И. М., Янковская Н. Б., Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргистихинеле (Армэвир), ՊԵՂ, 1989, N 2, էջ 55-62; Diakonoff I. M., Janikowska N. B., An Elamite Gilgamesh Text from Argistihenele, Urartu (Armavir-blur, 8th century B. C.), "Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie" (այսնիսին՝ ZA), 1990, Bd. 80, I, էջ 102-123:
43. Koch H., Elamisches Gilgamesh-Epos oder doch Verwaltungstafelchen?, ZA, 1993, Bd. 83, II, էջ 219-236; Vallat F., La lettre élamite d'Arménie, ZA, 1995, Bd. 85:
44. Ханзадян Э. В., Пиотровский Б. Б., Աշխ. աշխ., էջ 59-65 կնիքը հայտնաբերել է է. Վ. Խանգուշյանը, արձանագրությունը Օ. Դ. Քերլի օգնությամբ քերթել է Բ. Բ. Պիտրովսկին:
45. Пиотровский Б. Б., Древнеегипетские предметы, найденные на территории Советского Союза, "Советская археология", 1958, N 1, էջ 20-22:
46. Пиотровский Б. Б., Древнеегипетские ..., էջ 20-22; Пиотровский Б. Б., Кармир-Блур, I, Ереван, 1950, էջ 84; Пиотровский Б. Б., Кармир-Блур, III, Ереван, 1955, էջ 54:
47. Երեք թղթմերով բաժնմերի համեմատական երաստարակությունը՝ համապատասխան եղանակով, տե՛ս Սամուղջյան Վ., Աշխ. աշխ., էջ 224-226 (նեղիմակի մոտ էլաներն են բաժնը կոչվում է «մարական խմբագրություն»):
48. Պարսկերեն բաժնի բարձրանությունը տալիս ենք ըստ Վ. Սամուղջյանի և Ռ. Գ. Ջեմրի (Սամուղջյան Վ., Աշխ. աշխ., էջ 224-226; Kent R. G., Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Haven, 1953, էջ 152-153):
49. Արձանագրության վերջը ընդուն ենք ըստ Ռ. Գ. Ջեմրի: Վ. Սամուղջյանի մոտ վերջում կա հավելում «... և ին՝ գրածներ»:
50. Արձանագրությունն ունեցել է բազմաթիվ երաստարակումներ: Չափազանցական տվյալները, բարձրանությունը, հնազանդական և հարակից պատմա-բանասիրական հարցերի քննությունը տե՛ս Թրեյսեր Կ. Վ., Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. - IV в. н. э.), М. - Л., 1953, էջ 267-270 (էջ 268-ի ծանոթ. 1-ում առաջին երաստարակումների եղանակը, քանդից մեկը՝ Ալիշան Դ., Արարատ, Վեմետիկ, 1880, էջ 206):
51. Թրեյսեր Կ. Վ., Աշխ. աշխ., էջ 269-270: Կա կարծիք, որ արձանագրության մեջ ինչպե՛ս կայսրը ոչ թե՛ կամողուն է, այլ նրա հայր Մարկոս Ալրինիոսը, իսկ ընթացած բառը եղել է «Հայկական» տիրուղուց, որը մատնանշել է նրա կողմից՝ Հայաստանի նվաճումը, թառի և սելևացվել է հայ հայրենասիրների կողմից (տե՛ս օր. Արրահանյան Ա. Գ., Հայ գրի և գրչության պատմություն, Ե., 1959, էջ 31-32; Արրահանյան Ա. Գ., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 38): Վերջին կարծիքը քիչ հավանական է, քանի որ, եթե դա արվեր հայ հայրենասիրների կողմից, կոչվածով

- քննական զորքերի մասին վկայող արձանագրությունն անթղթայանք, ոչ թե միան կայսեր մեկ տիրոջուց:
52. Արձանագրության չափազորության, քարզմանության, ժամանակաշրջանի պատմական իրադրության քննության և խարակից խորքերի մասին տե՛ս Ծրսթր Կ. Բ., նշվ. աշխ., էջ 262-267:
 53. Թրցույան Ռ. Մ., Կրկյաշարյան Ս. Մ., Հնագիտական նորայրմեր էջմիածնից, ՊՐՀ, 1971, N 1, էջ 287-290:
 54. Դրանցից մեկի տառակամն արված Կ. Ֆ. Լեհման-Հասպուի կողմից, տե՛ս Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 478:
 55. Lehmann-Haupt C. F., Armenien ..., I, էջ 477-478: Արձանագրությունների առաջին հրատարակումների հղումները, չափազրական ակալաները, քարզմանությունը, հնագրական և խարակից պատմա-քանախրական խորքերի քննությունը տե՛ս Ծրսթր Կ. Բ., նշվ. աշխ., էջ 212-223:
 56. Հմմտ. Ծրսթր Կ. Բ., նշվ. աշխ., էջ 222-223:
 57. Ծրսթր Կ. Բ., նշվ. աշխ., էջ 223-224 (տե՛ս նաև հղումները):
 58. Արձանագրությունների առաջին հրատարակությունը՝ լուսանկարներով, գծանկարներով, քարզմանությամբ և ժամանակաշրջանի պատմա-քաղաքական դեպքերի մանրամասն վերլուծությամբ տե՛ս Առաքելյան Բ. Ն., Լատիներեն արձանագրություններ: Արտաշատ մայրաքաղաքից, ՊՐՀ, 1964, N 4, էջ 302-311:
 59. Կոմագենիցից հայտնաքերված արձանագրություններից տե՛ս Jalabert L., Mouterde R., Inscriptions grecques et latines de la Syrie, t. I, Commagene et Cyrhestique, Paris, 1929, էջ 42-46, 59-61: Փոքր Հայքի արձանագրությունները Olshausen E. und Biller J., Historisch-geographische Aspekte der Geschichte des Pontischen und Armenischen Reiches, Teil 1, Untersuchungen zur historischen Geographie von Pontos unter Mithradatiden, Wiesbaden, 1984, էջ 101: Ամբասենները, որ նշվածներով լի սահմանակալվում Փոքր Հայքի և Կոմագենի լատիներեն արձանագրությունների ցանկը:
 60. Ժերելյով Ս. Ա., Հունարեն դարձմանական արձանագրություն գտնված Վաղարշապատում, տե՛ս Ֆարախաշ Ա., Հիմ Վաղարշապատի պեղումները, Տեր., 1935, Հաղելված 1 (Պայերեն և ռուսերեն), էջ 75-83 (Պայերեն և ռուսերեն):
 61. Тагирек О. А., նշվ. աշխ., էջ 47: Այս տապանագրերի քննազնիը մեզ հայտնի չեն: Դրանց պայմանականորեն ենք օտարների կողմից բողված, քանի որ խաղորդման մեջ հիշվում են հռոմեական դարձաբանների ենտ:
 62. Տեր-Մարտիրոսով Ֆ. Ի., Արենիի հռոմեարեն արձանագրությունը (Հայաստանի մ. ք. ա. II դարի քաղաքական իրադարձությունների շարքը), ՊՐՀ, 1989, N 1, էջ 177-189: Արձանագրության չմթերքման գրծում հեղինակին աշակեղ է Յ. Վինոկրաշովը: Հողվածագիրը հնարավոր է համարում, որ այս արձանագրության հեղինակը ևս ծառայած լինի XV Ապոլոնյան լեզենում:
 63. Իսրայելյան Մ. Ա., Էրեղումի քերդ-քաղաքի պատմություն, Ե., 1971, էջ 104-105, աղ. XI: Խ. Ա. Մուշեղյանը կարծիք է հայտնում, որ դրանք կարող են

լինել ոչ թե Միջերում հատված դրամներ, այլ «տեղական դրամագործության արգասիք, ինչպես Ռուսերում մ. թ. ա. V դարում միջերյան դրամների ընդօրինակությամբ թողարկվում էին տեղական կերտվածքի դրամներ» (Մուշեղյան հ. Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ. – մ. թ. XIV դ.), Ե., 1983, էջ 12–14):

64. Մուշեղյան հ. Ա., Դրամական ..., էջ 11–12, 14–15:
65. Մուշեղյան հ. Ա., Դրամական ..., էջ 29–30:
66. Մուշեղյան հ. Ա., Հայաստանի դրամական զանգեքը, Ե., 1973, էջ 22–27, 33–35, 63–78, 82–84; Մուշեղյան հ. Ա., Դրամական ..., էջ 31–35:
67. Մուշեղյան հ. Ա., Հայաստանի ..., էջ 35–46, 84–123; Մուշեղյան հ. Ա., Դրամական ..., էջ 35–38, 82–89, 113–114:
68. Մուշեղյան հ. Ա., Դրամական ..., էջ 110–115:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒԲԱԳՅԱՆ

ՀԱՎՈՐ ԶԱՀԱՆԱ ԿԵՍԱՐԱՅՈՒ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ» ԻԲՐԵՎ ԱՂԲՅՈՒՐ

1608 թ. սեպտեմբերի 10-ին Կ. Պոլիս կասած և շուրջ կես տարի այստեղ մնացած Միմեոն Լեհացին իր «Մուղեղոտբյան» մեջ արձանագրում է. «Եւ էր պատրիարքոյն Հայոց վարդապետ մի Կեսարացի Գրիգոր ամուսն, խորհրդակի և խտուակրօն, առաքինի և սրբասնեալ, յոյժ իմաստուն և հմուտ Հին և Նոր կտակարանաց, ճգնող և պահեցող, որ բնաւ ամենևինք չուտէր միս և զինի ոչ քմայէր, այլ յորսպաք զամենայն աուրսն իր անցուցանէր, բայց միայն ի շաքաք և ի կիթակէն լածանէր ի կիւղ և ի պամիր, ի ձուկն, ի ձեք և ի ձու եւ յաղտեացսն երկու օրն անգամ մի ճաշակէր: Առ որ կացի ես կէս տարի մի: Եւ ունէր սա Ջուղահցի աշակերտ մի քանասեր, ամուսն Մովսէս, յոյժ խոմարի և հեզ, առաքինի և սուրբ, կոյս և ընտիր... Ե պարսպէր միշտ ընթերցմամբ սուրբ Գրոց: Առ այսպիսի աստուածահաճոյ արս կացեալ»:

Ամհատակաւորայան այս նկարագիրը զուգակցում էր Գրիգոր Կեսարացի հոգևորականի, ուսուցչի, բանագնացի, գործչի և հմուտ աստվածաբանի վաստակյալ անվանն ու հեղինակությամբ: Ահիշտ է, նրա հայրենի Կեսարիա քաղաքի քնակիչները գրեթե հիմնովին օտարախոս էին, բայց ցերմնուանդ մասնակցություն էին բերում ազգային եկեղեցական կյանքին: Ինչպես երևում է, Կեսարիան ամհադորդ չէր թոմարզայում և շրջակայքում Սրապիոն Ուռեայեցու աշակերտների Հովհաննես վրդ. Հզուեցու և Աստվածատուր վրդ. Մշեցու անձնիկի գործունեությամբ ծավալված կրթական-մշակութային շարժմանը: Շատով, Կեսարիայում առացած մախնական ուսումնատությունից հետո, Ամիղ (Ուռեա) է մեկնում նաև Գրիգոր Կեսարացին և դառնում Սրապիոնի կրտսերագույն աշակերտներից մեկը: Ազգային եկեղեցու ավանդները պահպանելու և Հռոմի ուղարկված քարոզիչների գործունեությանը ընդդիմանալու նսանդուն աշխատանք կատարեցին Սրապիոն վրդ. Օձատեղցին (Բաքերդ), Կարապետ Չազ վարդապետը (Վարազ), Մարգիս Պարոնտեղը (Մաղմուսավանք), Կիրակոս քանաճամ և ուրիշներ: 1608-ին վերակազմավորվեց Տաթևի Հարանց ամապատը, որի նշանավոր գործիչներից մեկը Մովսէս Տաթևացին էր, Գրիգոր Կեսարացու երիցագույն աշակերտը, որ հետո

հայոց մշակութային-եկեղեցական վերագաղթնումի սկզբնավորող դարձավ: Նույն շրջանում «Ներսես և Ստեփանոս Մոկացի վարդապետները վանք մը հիմնեցին Լիմ կղզիին մէջ, որիւ է ճիւղաբերունցա Կառոցի անապատը, Արիստակէս վրդ, Բարկուշաւոցի՝ որ Տանձափարախի անապատին հիմնադիրը եղաւ, Դաւիթ Շամբորեցի՝ Կարամաննոց ազնուական տունէն, որ Չորեքագետի Անապատը հիմնեց և այլ ուրիշներ, որոնց Մխմնաց դպրոցին մէջ իրենց ուսածները տարածեցին»²: Պակաս նշանակալի չէր նաև Բաղեշի Ամրատուր վանքի վերստին հիմնարկող Բարսեղ վրդ. Գավառեցիին (մահ. 1615 թ.), որը «արտաքին գրոց» (յնա քերականություն, փիլիսոփայություն և այլն) հմուտ գիտակ էր և ազգային դպրության ջատագով: Եվ այնուհետևայնիս ժէ դարի առաջին կեսի առավել երևելի գործիչ է ճանաչվում Մովսես Տաթևացու և Խաչատուր Ջուղայեցու ուսուցիչ Գրիգոր Կեսարացի վարդապետը:

1595 թ. վարդապետական գավազան ստանալուց հետո նրա կարևորագույն գործը Երուսաղեմի պարտքը փակելու առաքելությանը լծվելն էր: Այդ կապակցությամբ էր, որ 1601 թ-ին նա հայտնվեց Կ. Պոլսում, հույս ունենալով հանգանակություն կազմակերպել: Հովհաննես Խուլ պատրիարքից խորապես հիասթափված և խառնակ վիճակի մատնված պրլատիաները համձին «այր գիտնական մրքից և արտաքնոց և յաղթող ախոյեան ընդդէմ մաքառողաց ճշմարտութեան»³, այսինքն Գրիգոր վարդապետի գտան իրենց մոր պատրիարքին: Կեսարացին իր պարտքը համարեց հաշտեցման փորձ կատարել Կիլիկիայի կաթողիկոսության համար պայքարող Պետրոս Կարկառեցու և Հովհաննես Այնթապցու միջև և այդ առիթով Միս գալով՝ 1602-ին այստեղ էլ նպիսկոսայտ ձևնադրվեց:

«Ամեն պարագայի մէջ, հարկ է ըսել, – գրում է Ա. Ալպոյանյանը, – թէ Գրիգոր Կեսարացի սիրած է յամախ կոչուիլ «ժպոյապետ», վասնզի այն ժամանակներու համար վարդապետութիւնը իբր շնորհի և իբր կարողութեան տխտոս առելի բարձր նկատուած էր և առանց վարդապետական ատոհման ստանալու նպիսկոսապատգովնըր բազմաթիւ էին»⁴:

Մենք ստուգապես չգիտենք, թե ինչ հիմնավոր պատճառներ կային շուրջ 1605-ին քողնելու պատրիարքությունը և վերադառնալու հայրենի Կեսարիա՝ իբրև տեղիա վերադառնալ: Բոլոր պարագաներում՝ կարևոր պետք է նկատել այս տարիներին Կ. Պոլսում կաթողիկոսներուն և ավանդապահների պայքարը, որին կարող էր գումարվել նաև ջալալիների հարստահարություններից փախած և կայսրության մայրաքաղաք ապավինած հոծ զանգվածների ու հնարանակների միջև ծայր առած անհամադրժողականությունը: Նույնիսկ չգիտենք՝ Գրիգոր Կեսարացին ինքն է հեռացել, թե՞ նրան ստիպել են այդ անել: Համենայնդեպս, 1607-

ին նրան վերստին խնդրում էին և Պոլիս դատնալ և նորից պատրիարքություն ստանձնել¹։

Վերադարձի այս տարիներին է, որ նրան տեսել և նրա մտտ իյորզմկալի է Միմուն Լևիացին (1608 թ. սեպտեմբեր)։ Սակայն բարքական իշխանությունները զանազան մյուսական շահագրգռություններով բորբոքում էին պոլսահայության մեջ եղած հակասությունները (մանավանդ փախստյամբ Պոլիս եկած քահանաների վրա նշանակված հարկերը մեծացնելով), մեկին հանում մյուսի դեմ, առաջիկա որ աշխարհական տեղակալները (վաթիվները) չարտնական էին խառնվել հոգևոր գործերին։ Գրիգոր Կեսարացին երկրորդ անգամ է թողնում պատրիարքությունը և 1609–1611 թվականներին այցելության մեկնում Եգիպտոսի անապատները, լինում Միմայում, ապա և Երուսաղեմում, ջանքեր գործադրում Երուսաղեմի պատրոքերի վճարման համար։ Նրա պատրիարքության երրորդ շրջանն սկսվում է «աղքատական հրամանով և Պոլիս» կանչվելով և տևում մինչև 1612 թ. պաշտոնը նորից թողնելը։ Մինչև 1636 թ. մահը Գրիգոր Կեսարացին դարձյալ երեք անգամ պատրիարք մտելու և նրանից հետոնալու պարտադրանք ունեցավ։ Վերջինը՝ վեցերորդը 1633–1636 թվականներին էր։ Նրա այս ելևէջներից կարելի է եզրակացնել, թե որքան անկայուն ու տագնապալից է Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայոց առօրյան, իրաբանցումների ինչպիսի ակցներ էին փոքրվում նրանց կյանքը։

Գրիգոր վրդ. Կեսարացու կեանաց պատմության հիմնական աղբյուրը նրա եղբորորդու ընդարձակ հիշատակարան–հիշատակագրությունն է, որտեղից տեղեկանում ենք, թե քացի չափածո գրական վաստակներից (տաղեր, գանձեր, ներբողականներ)², մա հեղինակել է մահ պատմագրական երկ, նրա շարադրանքը հասցնելով մինչև իր կյանքի վերջին տարիները։ Հայոց պատմագիտությանը մինչև օրս աննայտ մնացած այդ աշխատությունը եթե հայտնաբերվի՝ փաստորեն դատնալու է ուշ միջնադարի հայոց պատմությունը ներկայացնող կարևոր սկզբնաղբյուրներից մեկը։ Հակոբ քահանայի հիշատակարանը միաժամանակ ռազգրավ տեղեկություններ է հաղորդում և Պոլսում ու Կեսարիայում եղած ձեռագրական հավաքածուների պատմության վերաբերյալ։ Պակաս կարևոր չեն մահ թարգմանական երկերին, մասնավորապես «Աստուղապին» վերաբերող տեղեկությունները, ուստի այդ քննարկի գիտական նրատարակությունը հայագիտությունն ու արևելագիտությունը կենսատեսանքի մի վստահելի աղբյուրով։

Հակոբ երեցի հեղինակած Հիշատակարանը կամ «Կարգ» սկզբնապես փաստորեն երկու տարրեր ձեռագրելուց կատարված հիշատակագրությունների գումարում է՝ ըստ թվանդակության։ Այդ երկու գրչագրերն էլ, բարեբախտաբար, պահպանվել են և այժմ գտնվում են

Վիեննայի Մխիթարյան հավաքածոյում (N 574 և 593)⁷: Թիվ 593 ձեռագիրը ամփոփում է Գրիգոր Տաթևացու մեկնողական երկերը, գրված ՊԿԳ (1414) թվին «ի վանս Մոսհարայ ընդ հավանեսս սուրբ Աստուածածնիս որ Արծուարեր կոչի: Որիչ որիչ գրեցա՝ վանս այն քացառ մնաց, քառ է», այսինքն՝ առամծին-առամծին ընդօրինակելու պատճառով (գրիչները երկուսն են) ազատ էջեր են մնացել, որ և զետեղել է Հակոբ երեցն իր հիշատակագրութիւն-վարքի առաջին կեսը (էջ 326 և 328ա): Երկրորդ գրչագիրը (թիվ 574) գրված է 1601 թ., հավանաբար Կ. Պոլսում, Գրիգոր երեցի ձեռքով և պատմագրական երկերի ժողովածու է: Այտեղ էլ Հակոբ երեց Կեսարացու գրատուը կատարված է նախապես դաստարկ մնացած 331ա-332բ էջերում: Զեռագրի զխազող հիշատակարանն ավարտվում է ստացողի՝ Գրիգոր վարդապետի հիշատակությանը, որին անմիջապես հաջորդում է Գրիգոր Կեսարացուն վերաբերող հիշատակագրութիւնը:

Քանի որ վերոհիշյալ երկու գրչագրերի լրացումները կատարված են հեղինակ Հակոբ Կեսարացու ձեռքով, ուստի բնագրական համեմատություն առնելիս այդ երկուսը (թիվ 574 և 593) նշանակել ենք մեկ ցուցիչով՝ A:

Նախքան Ազգային մատենադարանի ձեռագրերից մեկում («այլ և այլ գործերու և գրութեաներու հատարածոյ մը») Թարեհն վրդ. Կյուլեսերյանը գտել ու հրատարակել է Հակոբ Կեսարացու հիշատակարանի առաջին կեսը⁸: Հրատարակչի արդարացի բնութագրմամբ այն, «Հակատակ իր աղճատ լեզուին, պատմական արժէք մ'ունի», մանավանդ որ դարձյալ ինքնագիր է: Ստորև բնագիրը հրատարակելիս այս գրչագիրը նշանակել ենք B ցուցիչով⁹: Նույն հավաքածոյում գոյություն է ունեցել և այլ, լրիվ տարբերակ, որի ամբողջական տեքստը հրատարակված է ձեռագրի նկարագրության մեջ¹⁰ (ստորև՝ ցուցիչ C): Ինչպես երևում է, Բ. Կյուլեսերյանը Երուսաղեմի ձեռագրերը քերթելիս ուշադրության է անել Սրբոց Հակոբյանց հավաքածոյի թիվ 1801 գրչագրի հավելվածական կցորդում գտնվող Հակոբ Կեսարացու հիշատակարանը և նշանակել նրա ընծեռած որաչ տարբերություններ:

Այս երկի երկու ընդօրինակություն էլ երևան նկան Մաշտոցի ամվան Մատենադարանի թիվ 1268 (էջ 297բ-299ա) և 9826 (էջ 268բ-272ա) ձեռագրերում: Մեկ այլ գրչագիր ընդօրինակություն էլ եղել է Տրդատ եղս. Պալյանի ձեռքի տակ, որից քաղել և հրատարակել է իր «Հայ աշուղներ» գրքի Բ հատորում (էջ 203-208): Յակոբ, այս վերջինը մենք չկարողացանք ունենալ, ուստի «Պատմութիւն վարաց Գրիգորի Կեսարացոյ» պատմական և մշակութային տեղեկութիւններով հարուստ երկը հրատարակում ենք ըստ վերոհիշյալ ընդօրինակութիւնների:

A 1. Վիեննա, Միսթարյան հավաքածու, ձեռ. N 574, էջ 330ա-332բ

2. Նույն հավաքածուի ձեռ. N 593, էջ 326ա-328ա

B 3. Ղալաթի Ազգային մատենադարանի ձեռ. N 108, էջ 57-64 (քերի)

C 4. Նույն հավաքածուի ձեռ. N 133, էջ 534-541

D 5. Երևանի Մատենադարան, ձեռ. N 1268, էջ 297ա-299ա

E 6. Նույն հավաքածուի ձեռ. N 9826, էջ 268բ-272ա:

Հակոբ քահանան, ինչպես տեղեկանում ենք նրա հիշատակարանից, ունեցել է քավական հարուստ ձեռագրական հավաքածու և կյանքի վերջում, ամժատանց լինելով, այն մվիրել է Կեսարիայի ս. Մարգիս վանքին (գտնվում է նույնանուն գյուղում, քաղաքից մեկ ժամ հեռու): Հավաքածուն պահպանվում էր մինչև 1915 եղեմը և ընդգրկում, ըստ երասարակված նկարագրության, 12 զրչագիր¹¹: Սակայն պիտի կարծել, որ Հակոբ քահանայի տվածները ավելին կաղող էին լինել: Հայերեն ձեռագրերի եավաքածուներ ունեին նաև Կեսարիայի ս. Աստվածածին, ս. Գևորգ, ս. Դանիել եկեղեցիները¹², ինչպես նաև Էվերեկի, Թալլասի, Թավլասոմի, Պալկասի և այլ գյուղերի եկեղեցիները (բոլորը միասին՝ 124 միավոր)¹³:

Հակոբ քահանայի գրական վաստակի ամրոցանիկ գնահատողը եղել է Հ. Ներսես Ալեկյանը, որի համոզմամբ «Ս. Մարգիս եկեղեցւոյն նուիրած ձեռագրաց կցած *Յիշատակարանս* (խոսքը ստորև երատարակվող քնագրի մասին է - Ս. Մ.) յարագոյն է կոչել Համառօտ կենսագրութիւն Գրիգոր Կեսարացոյ եւ իւր տոհմին, ուր գոնացուցիլ մանրամասնութեամբ կու տայ մեզ Գրիգորի՝ մասամբ նաև իւր կեանքն ու տոհմագրութիւնը»¹⁴: Ինչ վերաբերում է Հակոբի մնացած գրական ժառանգությանը, ապա ինքն ասում է. «... ով սիրելի, եթէ կամէս և ոչ ժանձրամաս գիտ և ընթերցիւր գողերգական և զմիսիբարակաս գիտ և զասացեալ զանձեռս և զմերչախական տաղերս՝ իւրբնածածուկ քառերովն»: Այդ գործերից մեկ նմուշ է «Գովեստ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ», որ ձեռագրական ընթերցումների քաղաղատութեամբ երատարակել է Հ. Ն. Ալեկյանը¹⁵: Դատելով Հ. Մահակյանի կազմած «նշ միջնադարի նայ քանաստեղծութեանը»¹⁶ երկհատոր զրքի ցանկերում Հակոբ քահանա Կեսարացու անվան քացակայությունից, պիտի եզրակացնել, թե այս գործի գրական ժառանգությունը կարող է ամբողջականացնան և զիտական երատարակության:

Յակոբ երեց Կեսարացի
[Կարք Գրիգորի Կեսարացոյ]

Եւ այդ՝ եւ անպտուղս ի բարեաց, մնդաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, տգէտս ի գիտնականաց, յետինս ի կարգաւորաց, անբանս իբրև¹ գրանականս, նդկելիս եւ ողորմելիս, խեղճս եւ անխտասլիս, մտօք յիմարեալս եւ հոգով գնորեալս², պարտականս քիլոց³ քանքարաց⁴, եւ յետինս ի սպասաւորաց եկեղեցոյ, սոսկ անուամբ Յակոբ երեց⁵ կոչեցելոյս⁶, ծոյս ի բարիս եւ օտարս յամենայն տեսակս առաքիմտութեան: Յոգնական՝ եւ անբուելի բազմապատկեալ քիլոյաւոր բարեաց միաժողով բաղձացօղ⁷ եւ պարտական⁸ զլեամբս⁹ զայս աստուածունակ եւ զերադրական, երանաւտ եւ երկնատր շնորհի ընդունակ եւ ունակական, ըստացեալ բազում ըղձի եւ փափաքամօք յետ վախճանի ի զրեանց սուրբ հօրս, այս ինքն հօրեղորօր: Գրեանց վաճառելոյն պատճառն այս է. որ վախճանեցաւ բարտեապետս մեր ի սեպեական վիճակն¹¹ իր ի Ստամպօղ¹². եւս եւ¹³ ունին սովորութիւն այլազգիք, որ ոչ բողոմն բաղել զմտեալս ի շինամէջս քաղաքին, այլ յանշէն¹⁴ տեղի¹⁵ եւ հետի ի քաղաքէ, զոր Շահին Չիլեպին բաղեաց ի Ղալաթիս արքունական հրամանաւ¹⁶, ի սուրբ Լուսատրիչ եկեղեցին ՌՉԵ (1085) թուին¹⁷: եւ վասն¹⁸ բաղելոյ զնշխարսն¹⁹ եւ²⁰ այլ ինչ խարճ զոր արարեալ էր եւ էառ ի մէնց ԳՌԻԵ (3047) դուրիչ. եւ մինգամայն եղև խարճ ԳՌ եւ ԷՐ (4700) դուրիչ. եւ այս եղև պատճառ վաճառելոյ զրեանց եւ այգւոյն. զոր բա-

¹ իբր B

² նդկելիս ... գնորեալս] մտօք յիմարեալս և հոգով գնորեալս, նդկելիս և ողորմելիս, խեղճս և անխտասլիս D

³ քիլոց B

⁴ մտօք յիմարեալս ... քանքարաց] C

⁵ երեց ACD

⁶ կոչեցելոյ ACDE

⁷ յորնական ACDE

⁸ բաղձածօղ A, բաղձածող B, բազմածօղ C, բազմածող D

⁹ պարտականս B

¹⁰ զրեամբս] B

¹¹ վիճակ B

¹² 12+ ՌՉԼԵ (1636) թ[իւն CDE

¹³ և եւս BE

¹⁴ անշէն B

¹⁵ տեղիս B

¹⁶ և արքունական հրամանաւ] A

¹⁷ ՌՉԷ թուին A, ՌՉԵ] BDE, եկեղեցին ՌՉԵ] եկեղեցոյ դրամն C

¹⁸ վասն] սակս մնաս B

¹⁹ + ի Ղալաթիս ACDE

²⁰ + թէ B

զում վիշտս եւ չարչարանս²¹ կրեցաք ի քազմաց վասն վախճանի սրբոյս: Այլ մեղութիւն²² մեր եւ քազում վշտի²³ պատճառ լինողք ոչ երկարեմք²⁴, այլ թողումք անաչառ²⁵ դատաստանին²⁶ Քրիստոսի²⁷, զոր ի մանկութեան²⁸ վատակոց եւ ի հալալ արդեանց ինոց տուացեալ էի²⁹ ի վայելումն անարժան անձին իմոյ³⁰. քանզի ոչ ունէի ծառանգ մարմնաւոր մխիթարութեան³¹ անցատր³² եւ ունայն կենցաղոյս վասն ամէութեան: Այլ³³ ընթեռնելոյ՝ զսուրբ գրեանքս մխիթարեալ եամդարտէր այրեցեալ³⁴ լեարդս³⁵ իմ եւ տոչարեալ սրտիկս իմ. ըստ³⁶ հանգոյն Ամմայի փոցնոյր³⁷ սրտիկս արտասուարար աչօք.

Հայիմ ի³⁸ թոյունս երկնից՝ զիտեմ³⁹ անթիս երամ է,

Դատմամ եւ⁴⁰ յիս մայիմ⁴¹ կեանքս իմ հարամ է:

Ապա ըստ իմաստնոյն քանի⁴² որ ասէ, երամի որ ունիցի զառակ ի Սիօն եւ ընտանեակք նորա յերուսաղէմ⁴³: Չի թւպետ եւ ի մարմնաւորեմ գրկեալ եմք, այլ աղօթիչք եարց եւ եղբարց հայցեմք ի Քրիստոսէ որ ի հոգեւորեմ ոչ գրկէ⁴⁴: Ըստ այսմ յուսոյ եւ երամաւետ ժայնին ետու զսուրբ գրեանքս այսօրիչ⁴⁵ ի դուռն սրբոյն Սարգսի Զօրավարին եւ որչոյն նո-

²¹ չարչարանս և վիշտս E

²² մեղութեան C

²³ վշտաց CE

²⁴ յերկարեմք ABCDE

²⁵ անաչառ] յատր CE

²⁶ դատաստանին] առնին BD, և ստեփանի տեղ առնին E

²⁷ և ստեփանի տեղ առնին Քրիստոսի C

²⁸ մանկութեան CD

²⁹ տուացեալ էի ABD

³⁰ + եւ C

³¹ մխիթարութեամք A, մխիթարութեանս B

³² աղցատր ACE

³³ + յարածամ CE

³⁴ այրեցեալ] A

³⁵ լեարդ D

³⁶ ըստ ABD

³⁷ փոցնոյր] քաղցնոյր B

³⁸ ի] A

³⁹ զիտեմ] B

⁴⁰ եւ] B

⁴¹ մայիմ] հայիմ CDE

⁴² քան B, քանի] D

⁴³ երամի որ ... յերուսաղէմ] երամի ամբողջ որ ոչ ծնան B

⁴⁴ + ըստ այնմ որ ասէ. «երամի որ ունիցի զառակ ի Սիօն» և այլն B

⁴⁵ այսօրիկ AD, որք են այսօրիկ E,

բայ Մարտիրոսին ի Կեսարիա քաղաքի ոչ թէ ի փարքսանութենէ եւ ընչաւտութենէ, այլ յաղքատութենէ եւ ի չքաւորութենէ, ի փաստ Քրիստոսի եւ յուսոյ արքայութեան նորա ի թուիս Հայոց⁴⁶ ՌՆԴ (1104) ամին ի ժամանակ⁴⁷ յարագնագգեաց հայրապետին⁴⁸ տեսան⁴⁹ Փիլիպպոսի վերադիտողի⁵⁰ սուրբ Արտոյն Էջմիածնայ եւ դիտապետութեան նահանգի Տանն Կիլիկիոյ տեսան Ներսիսի Սեբաստացոյ եւ առաջնորդութեան մայրաքաղաքիս Կեսարիոյ⁵¹, որ է Մաժաք հին, տէր Թորոս վարդապետին, որ յետոյ կարողիկոս եղև ի Միս: Այլ ըստ տեղումական քանին որ ասէ՝ «ՈՒր գէշն իցէ՝ անդր ժողովեցին⁵² եւ արժուիք»⁵³: Արժուիք են հոգևոր⁵⁴ եւ⁵⁵ աստուածաբան բարոնապետքն մեր, զի ի զալ նոցա յայսմ քաղաք⁵⁶ որոճելով եւ խրատելով փրկութիւն լիցի ամենայն⁵⁷ հաստացելոց: Այլ եւ յիշատակ փոխեցելոյն աս Քրիստոս ՌՁԵ (1085) թուին հոգևոր հորն՝ իմոյ տիեզերալոյս բարոնապետին ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ հօրնորոյն իմոյ տէր Գրիգոր աստուածաբան վարդապետին, որ էր աշակերտ տիեզերալոյս եւ յաբանագգեաց ճգնաւորին տէր Մրապիոն աստուածաբան բարոնապետին Ուրխայեցոյ եւ ամյադք փիլիսոփային, առեալ զառագան ի նմանէ⁵⁸ ի Տիգրանաշէն մայրքաղաքն Ամիդ⁵⁹ ՌԽԴ (1044) թուին: Սա գնաց ի Բիզանդիա վասն սուրբ Երուսաղէմայ պարտոցն ի ժամանակս տէր Ազարիա կարողիկոսին, զոր տեսեալ զիմաստութիւն եւ զխաշոր⁶⁰ վարուց ճգնութիւն⁶⁰ սորա⁶¹ եւ հասանեալ միաբան

*CDE ձեռագրերում այնուհետև 10 տող բաց է թողած՝ զգրքի անունները լրացնելու համար:

⁴⁶ Հայոց] մերում CE

⁴⁷ ժամանակս] C

⁴⁸ իսկապետութեան + սուրբ Էջմիածնայ CE

⁴⁹ տէր CE

⁵⁰ վերադիտողի] երկրորդ լրաստորչի CE

⁵¹ տեսան Ներսիսի (Ներսիսի B) Սեբաստիոյ և առաջնորդութեան մայրքաղաքիս Կեսարիոյ] A

⁵² գտանիցին A

⁵³ Մատք, ԽԴ, 28:

⁵⁴ հոգևոր արժուիք B

⁵⁵ եւ] B

⁵⁶ քաղաքս CE

⁵⁷ ամենայն] B

⁵⁸ Այս քառով ազարտվում է B-ն:

⁵⁹ ի նմանէ զառագան E

⁶⁰ Ամիդ DE

⁶¹ խաշոր C

⁶² ճգնութեան C

ամենեցուն՝ գրեցին առ կարողիկոսն սուրբ Էջմիածնի ձեռնադրել⁶² խրեանց առաջնորդ⁶³: Եւ եկեալ մինչեւ ի Թաղաք՝ երբալ⁶⁴ յարոն սուրբ եւ վասն յոլովորեան Ջարալուն ոչ կարաց գնալ ի սուրբ Էջմիածինն: Եւ անտի⁶⁵ դարձաւ ի Միս առ հոչակեալ կարողիկոսն⁶⁶ տէր Ովաննէս⁶⁷* ի բախն ՌՄԱ (1051)⁶⁸ եւ ձեռնադրեալ ի մեանէ եպիսկոպոս եւ առաջնորդ Իստամպոլու⁶⁹ եւ գնացեալ անդ՝ արար բազում ուղղութիւն⁷⁰ եւ նստեալ ժամանակս ինչ: Եւ ի ՌԾԸ (1058) բախն եկեալ⁷¹ ի Բիւզանդիոյ⁷² նստեալ⁷³ յԵղիպոսս⁷⁴, եկեալ ի լեռոն⁷⁵ Սիմա. ընդ իւր ունեւով զՄովսէս վարդապետն, տուեալ նմա զստազան ի Բիւզանդիա⁷⁶, որ եւ յետոյ եղի կարողիկոս ի սուրբ Էջմիածինն, եւ կատարեալ զուխոս խրեանց՝ յաստատածախոս լեռնէն դարձան անտի Ամիդ⁷⁷: Եւ արարեալ ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ⁷⁸ ղօլվարարաց եւ⁷⁹ վաճառականաց եւ ուսմեաց սակս պարտոցն Երուսաղէմայ⁸⁰: Եւսեւ եկն⁸¹ խօճայն Ամիդայ⁸², գրեցին առ⁸³ առաջնորդսն եւ առ ղօլվարարոսն Վանայ զալ առ նոսա⁸⁴ եւ ժողովեալ բազում առաջնորդաց և ղօլվարարաց⁸⁵ եկեալ յե-

⁶¹ Երուսաղէմայն օրինակում եղի է՝ «և գխոյր կացս սոցա» – ծան. Բ. Կյուլեներյանի

⁶² ձեռնադրեալ ADE

⁶³ առաջնորդ խրեանց E

⁶⁴ երբեալ ADE

⁶⁵ անտի] CE

⁶⁶ կարողիկոսի AE

⁶⁷ Ովաննէս ADE

* «Ովաննէս» անունով վերջանում է A-ի առաջին դրվագը (ձեռ. N 593)

⁶⁸ ՌՄԱ] ADE

⁶⁹ Իստամբոլու CE

⁷⁰ ուղղութիւնս CE

⁷¹ եկեալ] նստեալ CDE

⁷² ի Բիւզանդիոյ] E

⁷³ նստեալ] CD

⁷⁴ եկեալ ... յԵղիպոսս] նստեալ ի Բիւզանդիոյ յԵղիպոսոս C

⁷⁵ լեռն D

⁷⁶ ի Բիւզանդիա] CE, ի Բիւզանդիա] Իստամպոլ D

⁷⁷ Ամիդ AD, Համիթ CE

⁷⁸ + բազում C

⁷⁹ եւ] DE

⁸⁰ սակս պարտոց Երուսաղէմայ] CDE

⁸¹ եկն] եմկի DE

⁸² Ամիդայ ACDE

⁸³ առ] AC

⁸⁴ զալ առ նոսա] CE

⁸⁵ և ղօլվարարաց] DE

րուսադէմ ՌՅԹ (1059) քօիմ: Եւ էր պարտք սրբոյ Երուսաղէմայ ԿՈ (60000) դոբիչ, որ առաջնորդ էր Արդար Դաւիթ⁸⁶ եւ աստաբութեանք հզօրին Աստուծոյ վճարեալ պարտքն⁸⁷ եւ ազատեալ զայգեստանն⁸⁸ ամենայն⁸⁹ եւ եղեալ զԳրիգոր Պարոնտեր⁹⁰ առաջնորդ սրբոյ Երուսաղէմայ ի տոյն ամին⁹¹. որոց վարձատրութիւնք⁹² ի Քրիստոսէ լիցի ի ժամ դատաստանին. ամեն:

Դարձեալ ՌԿ (1060) քօիմ⁹³ տարան ի Բիզանդիայ արքունական հրամանաւ, եւ նստեալ յոլով ժամանակս եւ ճանճրացեալ ի նոցանէ⁹⁴, եկն ի Կեսարիայ: Դարձեալ կրկին անգամ տարան ի Կոստանդինուպօլիս⁹⁵ ՌՉԲ (1082) քօիմ⁹⁶ քազում քանասնայից եւ արքունակամ⁹⁷ հրամանաւ, որ յար եւ նման էր առաջին դիտապետացն մերոց՝ խտուակրօմ վարուքն եւ աստուածարան վրդապետութեանքն փայլեաց յաշխարհի⁹⁸ որպէս զարեգակն ոչ փոխելով զխաչոք վարս եւ զճգնողական ասարիմութիւնն⁹⁹, զոր ստացեալ էր ի կրանաւորութեան¹⁰⁰ իբրում. ոչ կերեալ միս եւ ոչ լմպեալ զինի ի ժամ¹⁰¹ ձեռնադրութեանն, այլ միով ժամաւ¹⁰² շատանայր¹⁰³ զատուրս¹⁰⁴ խր, քայց ի շարաքօւ եւ Կիրակէի¹⁰⁵. մանաւանդ խորզով¹⁰⁶ մագնղիման կայր զամենայն կեանս իր եւ էր վկայեալ յամենեցունց եւ յոյժ հմուտ աստուածայնոց Հին եւ Նոր կտակարանաց¹⁰⁷, մահ տեղեակք արտաքնոց հանճարաց¹⁰⁸, եւս ուստուրպա-

⁸⁶ Դաւիթն C Դաւիթն Աղղար D

⁸⁷ զպարտքն CD

⁸⁸ զայգեստանն] զսգեստն CDE

⁸⁹ ամենայն] CE

⁹⁰ Պարոնտերն CD

⁹¹ ամին] քօիմ C

⁹² վարձատրութիւնքն C

⁹³ + կրկին A

⁹⁴ + եւ հրամարեալ AD

⁹⁵ ի Բիզանդիայ CE

⁹⁶ ՌՉԲ քօիմ] AD

⁹⁷ արքունի CE

⁹⁸ աշխարհի C

⁹⁹ առաքիմութիւնն C, առաքիմութիւն D, առաքիմութիւն E

¹⁰⁰ կրօնաւորութիւն C

¹⁰¹ ժամ D

¹⁰² ժամաւ] ժամաւ A (ժան. երես. օր. է «այլ միով ժմով» - Բ. Կ.)

¹⁰³ շատացեալ A

¹⁰⁴ զատուրս] զապուրս CE

¹⁰⁵ ի կիրակէի C

¹⁰⁶ խորզովս A, խորզ CE խորզով] երես. օր. (Բ. Կ.)

¹⁰⁷ Կտակարանաց E

պին¹⁰⁸ և երկրաչափականին՝ լի և անթերի: Այլ և քառագույլ ճշմարտության օրինաց և կարգաց սուրբ հարցն, զանձն իր օրինակ տալով անհեղու: Այլ և զբարի նախանձն, զոր ունի աս Աստուած և աս մարդիկ, որ¹⁰⁹ անդադար խրատ¹¹⁰ օրինացն ուսուցանէր զանհնեան: Նաև զսխի և զգիշեր յԱստուածաշունչ զոց ընթեռնոյ ոչ պարպէր¹¹¹, մինչև ի ժամ ծերութեան¹¹² յուսուցանելոյ և ի¹¹³ խրատելոյ ոչ դադարէր և զպնոցիկն ոչ առնոյր յես¹¹⁴ վասն աշխատասէր և ժրագան կամացն և ընթեռնելոյն, և զգիշերն առանձնական աղօթիցն զանձն յանկողինն ոչ տայր: Տքնութեանք և աղճոսերգութեանք վճարեալ զառարեսայ կեանս իր ի վաստ ամենասուրբ Երզրդութեան և քաղեցաւ ի քաղաքն Ղարաթիայ՝ մերձ ի քազարուսնիստ քաղաքն Իստամբուլ ի դրան եկեղեցոյն¹¹⁵ սրբոյն Գրեգորի մեր Լուսաորդիչին, ՌՉԵ (1085) թուին, և առնէ Աստուած ի տապանէ սրբոյս քազում սրանչիկս ի հիւանդս և յախտածէսս¹¹⁶ և ի լուսնոսս և յամենայն ախտացեալս¹¹⁷ ի վաստ տերութեան իւրոյ և ի պատիւ սրբոց իւրոց, ամէն¹¹⁸:

Այլ և ժողովեաց և շարադրեաց Բ (2) գիրք՝ զմէկն թուականք և պատմութիւնք յԱղամայ մինչև ի մեր ՌՉԵ (1085) թուին, աշխատեալ մինչ ի վախճանն իր, և երկրորդ՝ թարգմանեաց գիրք մի Ուստուրապի¹²⁰ ի¹²¹ արապի լեզուէ ի մեր քաղաքսս. այլ և զունդ մի ի մեր գիր լեզու յերկնից հանգոյն աստեղագարդ շարիւ զարդարեալ: Այլ և ասաց միսի-թարական քանս¹²² վասն մահեան վարդապետին իւրոյ Տէր Սրապիլոն քոջ հոեռորին համեղ և զանազան քանիւք: Նաեւ ասաց Բ (2) զանձ և Բ (2) տաղ շարադրեալ¹²³ ի վերայ այրութենից զարմամալի¹²⁴ և յարթին

¹⁰⁸ արտացոնցն հանճարոյ CD + և D

¹⁰⁹ Ոստուրապին D

¹¹⁰ զոր C

¹¹¹ խրատոյ ACDE

¹¹² + և

¹¹³ ծերութեանն CD

¹¹⁴ ի] ADE

¹¹⁵ յեսս C

¹¹⁶ եկեղեցոյ ADE

¹¹⁷ յախտածէսս] ի ցառազարս E

¹¹⁸ հիւանդս ... ախտացեալս] ի ցառազարս և ի լուսնոսս և յամենայն ախտացեալս C, հիւանդս, ի ցառազարս և յախտածէսս ի լուսնոսս D

¹¹⁹ ամէն] D

¹²⁰ Ուստուրապի] A

¹²¹ ի] ACDE

¹²² քանս D

¹²³ շարադրեալ] զարդարեալ AD

¹²⁴ զարմամալի] համեղ A

բառից, շաքաղասեալ ողբերգական բանից եւ առաքեաց¹²⁵ ի Ամիդ¹²⁶, եւ հետեակ այս է ցրի բանից եւ ներշնչական տաղի ոգեալ, զնախադաս զիծն հանդերձ վերջադրի¹²⁷ փառաբանանց ըստ ալփափետից¹²⁸ տառից արուեստարեալ¹²⁹: Այլ եւ ներքողեալ աղօթք հոգեխառն մաղթողականք ի սուրբ պատարագին ի դէմս ամենասուրբ Երրորդութեան եւ միաստուածութեանն: Այլ եւ շինեաց կամուրջ¹³⁰ մի բազում ծախից ի տաննանս Գերմանիկոյ եւ Կեսարիոյ մերձ ի Տօմարգայ¹³¹, ՌՀ (1070) բուխ սկսեալ եւ ՌՉԱ (1081) բախն աւարտեալ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամեն:

Այլ եւ¹³² անաթման Յակոբ երէցս՝ երրորդդի տիեզեալոյս վարդապետին Գրիգորի, տգետս եւ անիմաստս զարայիս՝ զովութիւնս դրուստեցից քարունոյս¹³³ մեծի, որ զեր ի վերոյ է քան զմիւտք մարդկան. մի զայրակեղեցիս յասելս, ով սիրելի, եթէ կամիս եւ ոչ ճանճրամաս, զիտ եւ ընթերցիր զուրբերգական եւ զմխիթարական զիր եւ զասացեալ զանձերս եւ զներշնչական¹³⁴ տաղերս խրքնածածուկ քանդրովն եւ զմեղաւորս յիշեալ ի Տէր, աղայեմ: Այլ եւ յիշատակ լիցի մախնեաց իմոց¹³⁵ մեծ պապուն իմոյ Նաղուպին եւ մամուն իմոյ Վարդխաբունին, հօրն¹³⁶ իմոյ Բաղդասարին¹³⁷ եւ մօրն իմոյ Մթխալին¹³⁸, հօրեղբօրն իմոյ Նուրայալունին¹³⁹ եւ հօրքնն իմոյ Յուխտարին եւ հարագատ եղբարց իմոց ի մանկութեան եւ յերիտասարդութեան առ Քրիստոս փոխեցելոց¹⁴⁰ Նաղուպին, Կարապետին, Ոհաննիսին, Յովսէփին եւ Ոհանին. մաե զեղեցկատիւլ եւ քաղցրածայն դպիր Արքանամին խնդրողի բանիս¹⁴¹ եւ ամենայն

125 առաքեալ A
 126 Համիր AC, Ամիր DE
 127 վերջադասի CE
 128 ալփափետաց A
 129 արգասատրեալ A
 130 կամուրճ D
 131 Դօմարգայ CE
 132 եւ] եւ E
 133 քարունոյս C
 134 ներշնչողական AE
 135 իմոյ C, իմ DE
 136 հօր ADE
 137 Բաղդասարին ADE
 138 + եւ C
 139 խաղրպալին A
 140 փոխեցելոցն C
 141 բանի CDE

արևանառու մերձադրաց՝ և կենդանեաց և առ Քրիստոս փոխեցելոց¹⁴² ամեն:

Կրկին և երեքկին¹⁴³ աղայեմ յիշել ի Տը գճակոք եղևս և զկենակեցն իմ զկոչեցեալսն Խաբուն և զմայր մօր իմոյ զՄարթայն¹⁴⁴ և զԵռին¹⁴⁵ իմ զՊաղին և զորդեգրութեամբ¹⁴⁶ սնուցեալ որդին¹⁴⁷ իմ, վարժեալ քազում աշխատութեամբ գտել Միմեօն քահանայն, որ առ Աստուած փոխեցաւ¹⁴⁸, աղայեմ յիշել նաև ի Տը գտել Անտոնն և զհօրեղբորդոյն իմ զճանտեսի Յարութիմն և զճանտեսի Ուրուղուն¹⁴⁹ և զԼայսար Չլէպին¹⁵⁰ որ ի ժամ ձեռնադրութեամն քազում երկօք աշխատութիւն կրէին¹⁵¹ վասն մեր¹⁵². հաստացել նոցա Տը վարձս ցառ վաստակոց իրեանց ամեն¹⁵³:

Եւս առսել ամենայն հաւատացեալ քրիստոնէից որդոմնացի Տը¹⁵⁴ Աստուած յառքն անելին¹⁵⁵ և ինձ մեղապարտ գծողիս¹⁵⁶. ամեն: Իսկ որ շարժողն է ամենայնի և շարժ գամենայն էակս¹⁵⁷ ի բարի, և ինքն անշարժ է ամենայնի՝ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ, որ շարժեաց զշարժումն ի բարին և բոբրոքեաց սկստ և նոզի¹⁵⁸, շարժացել զճեզ, ով ընթերցող¹⁵⁹ հարց և նորայք իմ, աղայեմ զճեզ սիրովն Քրիստոսի¹⁶⁰, որք հանդիպիք սնա կաշտյալով կամ օրինակելով յիշեցէք առ¹⁶¹

¹⁴² փոխեցելոց] մնջեցելոց (այսպես է եղել Երուս. ձեռ-ում)

¹⁴³ և երեքկին] CE

¹⁴⁴ Մարթայն A

¹⁴⁵ Եռնն C

¹⁴⁶ որդեգրութեամբ A, յորդեգրութեամբ CE

¹⁴⁷ զորդին C

¹⁴⁸ + և A

¹⁴⁹ Ուրուղուն] Դարալուն A

¹⁵⁰ + վարժեալ A (ADE ձեռագրերը «վարժեալ» -ին հաջորդող ամբողջութեանը բառին ենթադրում)

¹⁵¹ կրէին DE

¹⁵² աշխատութիւն ... վասն մեր] ինձ յոյժ աշխատանք եղնի (Երուս. օր.)

¹⁵³ ամեն] CDE

¹⁵⁴ Տը] Քրիստոս D

¹⁵⁵ յանելին ADE

¹⁵⁶ մեղապարտ գծողիս] Վասի բշտաբազոյն եղկելոյս (Երուս. օր.), գծողիս + բարսիոյ D

¹⁵⁷ էակս D

¹⁵⁸ յոզի D

¹⁵⁹ ընթերցող AC

¹⁶⁰ + ով նորայք (Երուս. օր.)

¹⁶¹ առ] ADE

Տէր սրտի մտօք եւ մխոլ Հայր մեղայի մերումն խնդրեցէք վերագրելոցս¹⁶³
 եւ Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած, որ ասասն է ի տուրս բա-
 րեաց, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս առ հասարակ ողորմեսցի՝ Քրիստոս
 Աստուած¹⁶³ յաւուրն ահեղին եւ ի ժամ դատաստանին, եղիցի, ամէն, ամ-
 մէն, եղիցի¹⁶⁴։

SAMVEL MURADYAN

THE SYNODICON BY PRIEST HACOB THE CAESARIAN AS A SOURCE

The Synodicon by priest Hacob the Caesarian is the depiction of the life and activities of one of the most prominent figures of the first half of XV century, Grigor the Caesarian, who was a clergyman, a teacher, a negotiator and a public figure. At the same time, the Synodicon by priest Hacob the Caesarian provides interesting data on the history of manuscript collections existing in Constantinopolis and Caesaria. Similarly important are the evidences provided of literary works in translation. Therefore, the scientific publication of the original version of the Synodicon will enrich Armenology and Oriental studies with a reliable source.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Մինեմ Դպրի Լեծացոյ Ուղեցոտքին, տարեցոտքին և յշատակարարացն* Ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսէս Արեւմտացի Վիեննա, 1936, էջ 8-9:
2. *Ա. Արցալանյանի Գրիգոր Կեսարացի Պատրիարք և իր ժամանակը*, երիտադէմ, 1936, էջ 25:
3. *Առաջնի Դավթիճեցի Գիրք պատմութեանց*, աշխատ. Լ. Խամբարյանի երևան, 1990, էջ 60:
4. *Ա. Արցալանյանի* նշվ. աշխ., էջ 61:
5. Տես նրա բոլորը, անդ., էջ 70-71:
6. *Նրանց հավարական հրատարակչությունը տես «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)», երկու հատորով, հատոր Բ, աշխատասիրությունը Հասանի Մախալյանի, երևան, 1987, էջ 9-33:*
7. *Նրանց մկայտազոտությունը տես «Ուղեցակի հայերի մեծագույն Միսիսթրիան մասնաճյուղարանի Վիեննա», հատոր Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան Վիեննա, 1963, էջ 1-8 և 47-50:*
8. *Բարկեմ վրդ. Կիլիկիական, Կոլոսա Հովնանմես Պատրիարք, պատմազրահան և բանասիրական տաւումնասիրություն* Վիեննա, 1904, էջ 78-80:

¹⁶³ վերագրելոցս Ա, վերջ գրելոցս Շ

¹⁶⁴ Աստուած] ACE

¹⁶⁴ եղիցի ... եղիցի] ամէն և եղիցի CDE

9. Ձեռագրի նկարագրությունը տես *Քարզէ՛՛ն արտահնչից կարագիկոս, Յուզակ ձեռագրաց Դարսրիոյ Ազգային մատենադարանի Հայոց*, Անիիլիսա, 1961, էջ 705:
10. Տես նույն տեղում, էջ 835-837:
11. Նկարագրությունը տես *Տրտատ վոք Պայծամ Յուզակ հայերէն ձեռագրաց ի Քարզիա*, հատ. Ա, Կեսարիոյ վիճակ, տետր Ա, Յուզակ հայերէն ձեռագրաց սուրբ Սարգսի վանոց ի Կեսարիա, Կոստանդնուպոլիս, 1892:
12. *Տ. Պայծամ, Յուզակ հայերէն ձեռագրաց սուրբ Աստուածածնայ եկեղեցոյն Կեսարիոյ և սուրբ Գէորգ եկեղեցոյն Գրչչեհիրի, Կ. Պոլիս, 1893*: Հմմտ. *Bernard Couste, Répertoire des bibliothèques et des Catalogues de Manuscrits arméniens, Brepols-Turnout, 1992*, p. 50:
13. Տես *«Լէյա» համընթաց 1905-1906* թթ. համարներում եղած նկարագրությունները, հմմտ. նաև՝ *B. Couste, Քշվ. աշխ. էջ 51*:
14. Հ. Լ. *Անիմեան, Յակոբ եղեց Կեսարացի՝ ժէ դարոտ աադասաց.* - «Համդէս Ամսօրեայ», 1909, էջ 371-372:
15. Անդ, էջ 373-374:
16. Երևան, 1986 և 1987 թթ.:

ՊԱՎԵԼ ՉՈՔԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ ԵՎ ՀԱՅ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Հայ քաղաքական միտքը հայոց ազատագրական ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին: Հայաստանում և Վրաստանում տեղի ունեցող ռազմա-քաղաքական գործընթացները ևս մշտապես պայմանավորված են եղել ինչպես միմյանց տարածքներում, այնպես էլ իրենց շուրջ եղած քաղաքական միավորներում տիրող իրավիճակի հետ: Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարում ձևավորվում էին ինչպես Վրաստանում՝ հայ և վրաց ժողովուրդների քազմաբնույթ հարաբերությունների հենքի վրա, այնպես էլ բուն Հայաստանում և հարակից տարածաշրջանում վրաց իշխանությունների ունեցած առնչությունների ուղղությամբ: Վրաստանի քաղաքական իրադրությանը հետևելու և այն ի մտադրելու Հայաստանի ազատագրությանը օգտագործելու փորձերի մասին հայտնի են Իսխայել Օրու, Եղիա Կարնեցու, Արցախի և Սյունիքի 1720-ական թվականների ազատագրական պատերազմներում հայ և վրաց գործիչների համագործակցության և այլ փաստերից¹: Հայազգի գործիչները հաճախ ընդգրկվում էին մեծ Վրաստանի արտաքին հարաբերությունների ձևավորման ուղղու և իրականացման վրաց արքունիքի դիվանագիտական բանակցությունների վարումը շրջակա պետությունների ու երկրների հետ²:

Նշված փոխհարաբերությունները տեղի էին ունենում պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ երկու ժողովուրդները իրենց հայրենիքում, թեև կարգավիճակների որոշ տարրերությամբ, սակայն միաժամանակ գտնվում էին պարսից տիրապետության ներքո և հայ ու վրաց ժողովուրդների խնդիրները, վարած արտաքին քաղաքականությունն ու կողմնորոշումները օրյեկտիվորեն հիմնականում համընկնում էին: Այլ էր իրավիճակը Պարսկաստանում Նադիր շահի տպադրությունից անմիջապես հետո և XVIII դարի երկրորդ կեսի ընթացքում առաջացած քաղաքական նոր իրադրության պայմաններում, երբ, ի տարրերություն հայ իրականության, վրաց իշխանություններին հաջողվում է ձեռք բերել փաստացի անկախություն՝ պահպանելով իրանական պետության մեջ

մակնկնում ժամեցած «Գուրգիստանի վալի» իրենց քարծր համարումը և ներկայացնալ որպես իրանական պետության ճակատագրով «մուսուլուգ» գործիչներ: «Մահմեդական չարձայով քրիստոնեության համար պայքարի այս ճեզ»³, որ կիրառում էին վրաց քաղաքներնրդ աշուսցիմ քաղաքականության մեջ XVIII դարի 50-ական թվականներին, անհրաժեշտ փուլ էր իրենց ղեկընդուն ամրասլմդելու համար:

1740-ական թթ. վերջերին և 1750-ական թթ. սկզբներին Հայաստանի տարածքում հայազգի իշխանավորները աստիճանաբար զիջում են անգամ այդեմ իսկ իրենց ժամեցած ղեկընդուն Արցախում ստեղծվում է մահմեդական խամություն, իսկ Երևանում⁴, Նախիջևանում և Գանձակում ամրասլմդվում են մահմեդական կառավարիչների ղեկընդուն: Պարտություն են կրում Եսեկեթոնի ու Ագուլիսի ինքնապաշտպանությունները:

Վրաց Թեյմուրազ և Հերակլ քաղաքներին հաջողվում է հարկային կախվածության մեջ զցել Երևանի ու Գանձակի մահմեդական իշխողներին, իրենց ազդեցությունը մասամբ հաստատել Արցախի ու Նախիջևանի իշխողների նկատմամբ՝ ընդ որում մշտապես զգուշանալով նաև, որպեսզի իրենց պայքարը տարածաշրջանում չընկալվի որպես դավանական խտրականություն հետասլմդող քաղաքականություն: Թեթև այդ է պատճառը, որ Վրաստանի արտաքին հարաբերություններում 1750-ական թվականների սկզբին վերաբերող դավանական պատկանելության խնդրի քացառայտ դրսևորումը, ըստ Պեյտանելիի արձանագրման, մտահոգության առիթ է դարձել հարևան Օսմանյան կայսրությունում. «1751 թ. սկզբին Թեյմուրազ և Հերակլ իշխանները ախլզանների սպառամբությունից անհանգստացած, ճանապարհ են ընկնում՝ նրանց դարձյալ վերադարձնելու այն լծի տակ, որը նրանք կարողացել էին քոթափել: Հայերն էլ իրենց ներքին միանում են վրացիներին: Այս քանակի մեջ մտնող բոլոր *զինվորներն իրենց հագուստների և դրաշակների վրա խաչեր էին կրում*: Խաչակիրներին մնամվող այս մարդիկ զմում են ախլզանների դեմ և հանդիպելով նրանց Օթոուար (Odosar) քաղաքի մոտակայքում, պարտության են մատնում նրանց և շատերին կտոր-կտոր անում: Այս մարտում Հերակլը իրեն այնպես դրսևորեց, որ այդ իրադարձությունը կարելի է համեմատել հիմ ժամանակների ամենահերոսական իրադարձությունների հետ»⁵:

Նման տեսաբանը, քնականաբար, ընկալվում է ոչ որպես «սովորական» իշխանական ներքաղաքական պայքար, ֆեոդալական ինքնիշխանության համար պայքարի դրվագ: Այն անհանգստություն է առաջացնում առաջին հերթին Օսմանյան իշխանությունների մոտ, որոնք մեծան «ժամարձակության» դրդապատճառ ու հովանավոր ենթադրում են Ռուսաստանին: Տարածվում են լուրեր, թե իբր ռուսները «Աստղախանից

հետախուզական խմբեր են բերել այս վայրերը»⁶։ Նման լուրերի տարածումով Օսմանյան պետությունը փորձում է օգտվել քաղաքական անկայուն իրադրությունից։ Հերակլ II-ը կարողացավ հմտորեն կանխել նման ոչ ցանկալի ու վտանգավոր զարգացումները և, Պեյսանլիկի վկայությամբ, «նայտարարեց, որ ինքը տվյալ պարագայում գործում է որպես Dewlet-Scheriki կամ, այսպես ասած, որպես կայսրության քարեկամ։ Ենթադրեցին, որ հենց ինքը՝ Հերակլն էր համարձակվել իրեն տալ նման որակավորում, հիմնվելով մի պայմանագրի վրա, որը իբր ինքը կապել էր Եսի-Ռաիսի հետ՝ տերությունը քաժանելու համար»։

Ստեղծված նոր պայմաններում ևս, հայ քաղաքական միտքը ձևավորող գործիչները շարունակում են հայ-վրացական հարաբերությունները ընկալել ափանդակաձև ձևով՝ Վրաստանի իզոլացումը երաշխիք համարելով Հայաստանի ազատագրության համար և ոչ միայն համաձայնել, այլ և անգամ փրկություն համարել Հայաստանը Վրաց քաղաքականության կազմի մեջ տեսնելը՝ այն պատկերացնելով, սակայն որպես հայ-վրացական միասնական պետություն⁷։ Այդ տեսակետը, որ միանգամայն համահունչ էր վրաց իշխանությունների շահերին ու հավակնություններին՝ տարածելու իրենց ազդեցությունը հայոց նկատմամբ և ձեռնառու էր հայոց օժանդակությունը ստանալու առումով, նպաստավոր ձևով օգտագործվում էր վրաց պետության կողմից իր ներքին ու արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ։ Ուշագրավ վավերագիր է Հակոբ Շամախեցի կաթողիկոսի նամակը Եղիզավետա քաղուհուն՝ Թեյմուրազ Երկրորդի խնդիրներին ընդատաջելու միջնորդությամբ⁸, քանզի, ինչպես կաթողիկոսն է արձանագրում «նախ աստուծոյ և ապա ղոցա պահարանութեանքն կան այժմ»⁹։

Հայ քաղաքական միտքը ձևավորվում էր ոչ միայն բուն Հայաստանում, այլ նաև հայ գաղթօջախներում։

Հնդկահայ գաղթօջախում սկիզբ առած հայ ազատագրական շարժման գաղափարախոսության նշանավոր ներկայացուցիչ Հովսեփ Էմինը ինչպես գործնական քայլերով, այնպես էլ գրավոր-քարոզչական միջոցներով արձանագրել է իր և իր ժամանակակից որոշ գործիչների այն համոզումը, թե հայ-վրացական համագործակցությունը ոչ միայն հնարավոր, այլ և այն միջոց և երաշխիք կարող էր լինել հայ պետականության վերականգնման համար։ Հովսեփ Էմինի գործունեության վերլուծության հիման վրա նման ուղղությամբ կատարված մի փորձի անհաջողության պատճառների քննությունը հայազիտության մեջ առանձին ուսումնասիրության և գնահատության է արժանացել ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանի հայտնի աշխատությունում¹⁰։

Անշուշտ, Հովսեփ Էմինի և նրա կողմնակիցների տպավորությունն է փոխանցվել նաև Մովսես Բաղրամյանի հեղինակած «Նոր տես-

րակի» մեջ¹², թե հայոց պետականության վերականգնման առումով Արցախում իրավիճակը դեռևս անհուսալի և անդառնալի չէր. «Պարսիկները ոչ թե ինչ-որ քաջությամբ և ոչ էլ բնավ բռնությամբ մտան նրանց սահմանները, այլ (նրանք իրենց) պարսից իշխանին մտքոյին իրենց երկիրը՝ հրապուրված սրանց խորամանկ պատրասեցնելով ... քայքայ նրանց (քան՝ Արցախի մեկըները—Պ. Չ.) այն վիճակում չեն, ինչպես որոշ տեղերում մեր ազգակիցներին յմանք, որոնք բացարձակապես հայատակ են դարձել, — այլ տակալին փրկության հույս ունեն: Թեև նրանց տիրել է արիշտ, սակայն սա (իմա՝ Իրրահիմ խանը—Պ. Չ.) առանց նրանց բան չի կարող անել, որովհետև ամեն ժառայության մեր ազգի ձեռքին է, ինչ էլ կամենա՝ նրանց միջոցով է գլուխ քերած. հարկ է, թե մասք՝ նրանցից է եսնում, նրանցով է պաշտպանվում, նրանցով է պատերազմում քչամիներին հետ ու նրանցով է եսանում հաղթանակի... մինչև իսկ նրա ապարանքի մշտական պահապանները կամ հսկիչները և տեմեկաղետները հայեր են, իսկ նրա զորքի զինվորները գլխավորապես հայ ազգից են: Ուստի վերոհիշյալ այդ իշխանների եամար, *Եթե կամենանք, դժվար չէ, այլ շատ հեշտ է մեջտեղից վերացնել պարսիկ իշխանին կամ վտարել ու հալածել իրենց սահմաններից և հարկերից ազատ լինել...*»¹³:

«Նոր տեղերակը» Հայաստանի փրկության գործում տեսնում է Վրաստանի և, մասնավորապես, Հեթակի հետ դաշինքի և վերջինիս կամեցողության պարագան: Թվարկելով Բագրատունյաց տոհմի հայ քազավորներին, «Նոր տեղերակը» հեղինակը ավելացնում է «Թեև այն ժամանակ Բագրատունյաց տոհմից մեր քազավորությունը դադարեց, քայքայ ոչ իսպառ, ինչպես կարծում են արիշտերը: Չէ որ, ինչպես ասանք հաստատում են, նույն տոհմից է և վրաց քազավորությունը, մասնական որ իրենք էլ պնդում են այդ: Ի հաստատումն այդ դրույքի, նշվում է, թե «քազավորիկ ճակատամարտեր տալով նա ավելի է ընդարձակել Վրաց սահմանները, քան իր նախնիների օրոք էր: Մշտապես զանում է ամայի և անմարտարձակ վայրերը լցնել բնակիչներով, և տեղ-տեղ լցրել է...Նրա համար էլ, մահ նրա համար, որ իր ազգից մեր հայ ազգը չի տարբերում ու զամազանում, այսբանը հիշատակեցինք մեր գրքում, նրպեսզի նրա հիշատակը հավետ օրինմարանելի լինի»¹⁴:

Վրաց պատմագիտության մեջ, սակայն, տիրապետող է այն համոզումը, թե վրաց քազավորները և, մասնավորապես Հեթակ Երկրորդը, հայոց պետականության վերականգնման նպատակ իրենց առջև ոչ միայն չեն դրել ու չէին կարող դնել, այլև մշտապես ձգտել են ընդարձակելով Վրաստանի սահմանները նրա մեջ ներառել¹⁵ (կամ գեթ հարկատու դարձնել) չրջակա երկրները: Նրանք ուժի և սիրաչափունների, ընդատաջումների և պարտադրումների միջոցով փորձում էին ապակոծել իրենց իշխանությունը: Այդ առավել չափով հաջողվել է հենց XVIII դարի

երկրորդ կեսին, Նաղիբ շահի սպանությունից հետո՝ իրամական կենտրոնական պետության քայքայման և քաղաքայության պայմաններում: 1750-ական թվականներից մինչև 1795 թ. փոքր ընդմիջումներով Վրաստանից կախման մեջ էին Երևանի ու Գամձակի խամությունները, իսկ Արցախի հայ մելիքները ուժասպառ լինելով Ղարաբաղի խանի դեմ պայքարում, ստիպված էին ապաստան փնտրել Վրաստանում: Եթե հայ իրականության մեջ այդ ընկալվում էր, որպես թե, ինչպես Հովսեփ Էմինն է արձանագրել «Ներսէլ Երկրորդի մասին, Աստված է նրան նշանակել «թագավոր երկու ազգերի՝ հայերի ու վրացիների վրա»¹⁶, ապա վրաց «Ներսէլ II թագավորը պատրաստ էր անգամ 1787 թ. հայ մելիքներին կրկին համձնելու մրանց հակառակորդ Իբրահիմ խանին¹⁷, եթե վերջինս «Ներսէլին վերադարձներ Վրաստանից հեռացած»¹⁸ և Արցախում ապաստանած մահմեդական իր հարկառու հայատակներին¹⁹:

«Նդկահայ գաղթօջախի ներկայացուցիչները, սակայն ի մոտո ծանոթ չլինելով իրական փոխհարաբերություններին, ամտեսում էին Հերսէլ II-ի և Իբրահիմ խանի մտերմության ու դաշինքի փաստը, որ գոյություն ուներ մինչև 1783 թ. Գեորգիևյան պայմանագրի ստորագրումը»²⁰ և հակադիր էր Իբրահիմի դեմ պայքարի ելած հայ մելիքների դիրքորոշմանը:

1780-ական թթ. Հայաստանում զարգանում էին նոր փոխհարաբերություններ, քաղաքական շահերի նոր դրսևորումներ:

1784 թ. հունիսի 7-ին Ղանիել Ավանեսովի կողմից Պ. Ս. Պուտյանկինին տված «թագատրություններում» արդեն կանխատեսվում էր, թե կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը «ըստ լուրերի, երկար չի տևի»: Հայազգի քանազանաց-դիվանագետը մելիքներից համձնարարություն ուներ ռուսական կողմին հաղորդելու, թե իրենք պատրաստի ունեն 5000-ամոց հեծյալ և հեռակա զորք, որը կարող է ակտիվ պայքար սկսել Օսմանյան թուրքիայի այսրկովկասյան քաղաքականության հենակետի վերածվող Ղարաբաղի խանի դեմ, եթե ռուսական օժանդակությունը մերձենալու լինի գեթ մինչև Գամձակի խամության սահմանները²¹: Իբրահիմի դիրքորոշումը անհայտ չէր նաև Հերսէլին, որը 1785-1786 թթ. քաղաքացիական համաձուլել էր, որ Իբրահիմ խանը դարձել է իր հիմնական հակառակորդը²², սակայն նման պայմաններում անգամ պատրաստ էր մելիքներին Իբրահիմին համձնելու միջոցով վերջինիս հետ իր հարաբերությունները քարելավելու փորձ անել ու նա ստանալ Արցախ փոխադրված մահմեդական իր 200 ծուխ հայատակներին²³:

Խանի դեմ պայքարի ելած մելիքների ծանր դրությունը նպաստավոր առիթ էր Ռուսաստանի համար Արցախի գործերին միջամտելու համար: Ռուսաստանի կովկասյան քաղաքականության զարգացումներին ակնդետ հետևող մելիքները, ոգևորված ռուսական կողմի խոստումներ-

րից, անմիջապէս խնդրագրեր են ներկայացնում ռուսական արքունիք: Հենց միայն խնդրագրեր կազմելու փաստն ու նրանց հուսանատանական ոճը ցույց է տալիս այն վիճակը, որի մեջ նրանք հայտնվել էին: Խնդրագրերում հուզական երանգով պատմվում են այն հարածանքները, որոնց ենթարկվում են իրենք մահմեդական իշխողի կողմից, այն բնական հարատուքումները, որոնց կարող է տեղ դառնալ Ռուսաստանը Արցախ արշավելու դեպքում և շիշտում անգամ այն հանգամանքը, որ ռուսները հետևելով Մեծն Պետրոսի քաղաքականությանը, սրբաբախտ են իրականացնել նրա անկատար մնացած ծրագրերը: Այս է պատճառը, որ Պետրոս Մեծի քաղաքականությունը սկզբում է ներկայացվել որպէս քե հայերի ազատագրության համար ձեռնարկված միջոցառում: Պետրոս Առաջինի քաղաքականության մման մեկնաբանության փաստի հանդիպում ենք արդեն իսկ 1780 թ. Հ. Արդուրյանի Պետերբուրգի ս. Կատարինսկե եկեղեցու օծման արարողության ժամանակ արտասանած ճառում²⁴: Արցախի Հովհաննես կաթողիկոսի, Ադամ և Աբով մելիքների կողմից Պ. Ս. Պոռոյնկինին ուղարկած նամակում նշվում է, քե Գարրիել քանագնացը Արցախ է քերել Հովսեփ Արդուրյանի նամակը, որից իրենք տեղեկացել են, քե «երաման է ինքնակալութիւն պայծառափայլ տիրութիւնէ ձերմէ ելանել և ազատել զազգս մեր ի ձեռաց անօրինաց և զերկիրս մեր և զմեզ ի ներքոյ ինքնակալ տիրութեան ձերոյ նուաջել»: Նամակում անմիջապէս ավելացվում է, քե «որպէս երանելի և յսխեհմանական փառացն ժառանգորդ մեծ կայսրն Պետրոս ունէր ի մտի և խորհրդի առ ի ազատել զմեզ, որպէս նախնիքն մեր հրամանաւ նորին մինչև Ժ /10/ ամ կամ այլ առելի տարի ընդ անօրինաց պատերազմեցան, քե ընդ օսմանցում և քե ընդ դժբախտում, մինչև որ անշոյս լիալ, Նազր շահն եկն և նուաճնաց զմեզ»²⁵: Մելիքներն այնուհետև ավելացնում են, քե այժմ ևս «որովհետև լուաք այդ առտալի և վերկարաք լուալ, ցնծացաք ի հոգի և ի մարմինս մեր և յանձնայնի անձնէ և ի զօրութիւնէ մերմէ յօժար կանօք և սրտի մտօք քանանք և զանձինս մեր դնեմք մինչև ցնահ ի վերայ այդք առտալի լուալ»²⁶:

Հայ-վրացական «դաշնութեան» գաղափարի հայկական ընկալման քննութեանը Լ. Տախտաշվիլուն հանգեցնում է այն եզրակացութեան, քե հայ-վրացական միասնական պետութեան տեղեղծման միտքը ուշձեռդայական Կովկասի ընդհանուր քաղաքական իրաւութեան ծնունդն էր²⁷: Մինչ այդ ժամանակաշրջանը նման հարց չէր դրվել և բնականաբար գաղափարական ձևավորում այն չէր կարող ունենալ: Այն հետևանք էր հնդկահայ բուրժուազիայի սեփական հայրենիքից կտրված լինելու և այնտեղ հենարան չունենալու հանգամանքի: Ռուսական կողմնորոշումը²⁸ հայ գործիչների համար 18-րդ դարում նշանակում էր միաժամանակ կողմնորոշում դեպի Վրաստան²⁹: Ավելին, Հայաստանի ազատագ-

բության ծրագրերում, ըստ Լ. Տոխաշվիլու, Վրաստանի օգնությանը գրեթե նույնքան տեղ էր հատկացվում, որքան եվրոպական պետությունների կամ ռուսական կայսրության կողմից օգնություն ցուցաբերելու հեռանկարն էր: Դրան նպաստում էին ա) ճշված հովանավորների քաղաքականությունը՝ որոնք ևս Կովկասում հաստատվելու համար ունեին հեռանալի կարիք, այսինքն՝ եթե Ռուսաստանը կամ Անգլիան ստանձնեին հայկական պետության վերականգնման առաքելությունը, ապա իրենք ևս ոչնչի չէին հասնի առանց Քաղթ-Կախսեթի քաղաքականության մասնակցության, բ) Այս վերջինիս հզորացումը, ճիշտ է, թվացյալ, սակայն տպավորիչ էր, գ) Հերակլ Երկրորդի տնտեսական քաղաքականությունը՝ հայ առևտրական դասին տրվող գերապատվությունը: դ) Քուն Քաղթ-Կախսեթում գտնվող տեղական ուժերին հենվելու փորձերը: Հիմնական պայմանավորող դաշտը, սակայն, միանման պատմական ճակատագիրն էր, Այսրկովկասի ժամանակի իրավիճակը և ընդհանուր շահերի դրսևորումը¹⁰:

Նշված դիրքորոշումը, սակայն միակը չէր հայ-վրացական հարաբերությունների ոլորտում: Եթե այդ ուղղության ներկայացուցիչներից կարելի էր ճշել Հովսեփ Էմինի և հեղկահայոց ու ման Հովսեփ Արզուբայանի գործունեությունը, ապա այլ ուղղություն էր ճշանավորում Միմեոն Երևանցի կաթողիկոսի որդեգրած և հայ ու վրաց իրականության մեջ միարժեք գնահատության չարժանացած մրա քաղաքականությունը: Այն թեև չստացավ հետագա զարգացում, սակայն կարևոր փուլ էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ: Նման մտեցման ազգային, քաղաքական ու տնտեսական դրդապատճառների ու հետևանքների վերհանումը կարևոր է XVIII դարի երկրորդ կեսին հայ և վրաց ժողովուրդների հետագա փոխհարաբերությունների քնույթը ևս ճիշտ հասկանալու համար:

Վրաստան և ապա ման Արցախ այցելած Հովսեփ Էմինի տպավորությամբ, ազատագրական շարժման ծավալմանը դիմադրել է հայոց կաթողիկոս Միմեոն Երևանցին:

Հերակլն իր առջև ոչ միայն Հայաստանի ազատագրման նպատակ չէր դրել, այլև առաջարկում էր քննարկել անգամ հայոց և վրաց եկեղեցիները¹¹ տարանջատող «որոշ» դրույթներ վերանայելու հարցը, որը ճշանակում էր թերևս հայոց եկեղեցին վրաց եկեղեցուն միացնելու փորձ¹²: Այդ էր հիմնական դրդապատճառներից մեկը, որը Միմեոն Երևանցուն ստիպում էր վերապահությամբ մոտենալ Հերակլի վաքած «սիրալիր» քաղաքականությանը¹³ և մրան նա էր պահում Հովսեփ Էմինի լավատեսությանը սատար կանգնելուց¹⁴: Միմեոն Երևանցին առավել չափով լավատեսյակ ու իրազեկ էր Վրաստանում և, մասնավորապես,

վրաց աղբյուրներում տիրող իրադրությանն ու վրաց քաղաքների նպատակներին:

Վրաց հետազոտող Լ. Տուխաշվիլին Միմեոն Երևանցու դիցարոշումը բացատրում է ավելի լայն ընդհանրացումներով: Նրա կարծիքով «հայոց եկեղեցին հակադրվում էր վրաց կողմնորոշմանը, որովհետև ցանկանում էր գրադեցնել Վրաստանի տեղը Մերձավոր Արևելքի ժողովուրդների քաղաքական ծրագրերում, այսինքն՝ չնայած այն բանին, որ Էջմիածինը աներասժեշտ պահերին ինքը ևս մասնակցական նախաձեռնություններ էր ընդունում: Քարթլ-Կախեթի ուժեղ հովանավորությանը, միաժամանակ և համդես էր գալիս որպես հակառակորդ: Էջմիածինը վերձում էր Վրաստանի հետ հարաբերությունները հաստատել իրավահավասարության հիմունքներով և չէր բավաբարվում միայն ողջ հայության անունից հանդես գալով: Նա օգտվում էր Թուրքիայի ու Իրանի կառավարողների պաշտոնական օժանդակությունից, հայ վանատականության նկատմամբ նրանց «տովանավորությամբ» և համախա իր ազդեցությունը տարածում էր մասն աչ հայազգի լուսավորչական բնակչության վրա³⁵: Հայոց կաթողիկոսը փորձում էր Մերձավոր Արևելքի բոլոր վոյքո ժողովուրդների քաղաքական դաշինքը վրացիների հետ իրականացնել իր (յո՞ւս՝ հայոց կաթողիկոսի) միջոցով, ինչը կհանգեցնեք Էջմիածնի դերի պահպանմանը և այս վերջինիս օգտին վրաց ազդեցության չեզոքացմանը: Միմեոն Երևանցին ուշադիր հետևում էր վրացիների հետ ասորիների և եզդիների քանակություններին»:³⁶

Նման եզրակացության համար հիմք կարող է ծառայել ոչ միայն 1770 թ. օգոստոսի 15-ին Հեթանկյին ուղղած Իսայի վարդապետի նամակը³⁷, այլև Միմեոն Երևանցու նպատակասլաց ազգային-եկեղեցական քաղաքականության իրագործման ձգտումների և իրագործումների ողջ համակարգի հաշվառումը³⁸: Միմեոն Երևանցու նպատակասլաց գործունեության վերլուծությունը հիմքեր է տալիս պնդելու, որ նա հայոց քաղաքական իշխանության բացակայության և նրա շարժառիթ վերականգնման անհուսության պայմաններում փորձում էր մինչև աշխարհիկ պետականության վերականգնումի նրազանքին հասնելը, ազգի գոյատևումը ապահովելու նպատակով օգտագործել աստվածապետական իշխանություն ստեղծելու միջոցները՝ կենտրոնակայան դարձնելով ամենայն հայոց կաթողիկոսության Մայր Աթող: Միմեոն Երևանցու նման գործունեության հետ չէին կարող հաշվի չնստել շրջակա բոլոր իշխողները, քանզի շոշափվում էին նաև նրանց ուղղակի շահերը և այդ քաղաքականությունը ստնչվում էր նրանց վարած արտաքին ու ներքին քաղաքականության հետ: Բնական է, ուստի նրանց վերաբերմունքի դրսևորումների մեջ Միմեոն Երևանցու քաղաքականության նկատմամբ նաև ոչ բարե-

հան վերաբերմունքի անկայությունն ու նրա քաղաքականությունը ծախողելու ձգտումները:

Միմեռն երևանցու նշված քաղաքականության ակնհայտ դրսևորում էր նաև հայոց միջավայրում կաթոլիկ քարոզիչների գործունեությունը կասեցնելու գործողությունները: Ախալցխայում բնավորված կաթոլիկ եկրոսպացի քարոզիչներին ուղղված նամակում Միմեռն երևանցին գրում էր. «դնդէ՞ր սոռանայք զԱտուածային օրէնսն, որ պատուիք՝ մի ցանկար ամենայնի, որ ինչ ընկերին է: Քանզի անա ունիք դուք զճոխ քագաւորութիսնս և զէն աշխարհս և զանքիս քագութիսնս ժողովրդոց և զճուսս նոցին: Ընդէ՞ր ոչ քառակամանայք այնու, քան եկեալ մտանէք իբրև զգողս ի մէջ հօտից մերոց, և զողանայք զայխարս մեր և օտարացուցանէք ի մէջ և ձերացուցանէք, փեռեկտէք ի միմեանց իբրև զեափշտակօղ գայլս և զայլաղբութիսնս և զյախտեմակամ խտովութիսնս արկանէք ի մէջ սոցա: Չի՞նչ գայր ձեզ ի յԱխալցխա, հայրենի քաղաք է ձեր, եթէ ունէիք անդ գրեիկ ժառանգութիսնս և զժողովուրդս, զի այնքան երկար մնայիք անդ: Անիրաւ գողքդ մտեալ ի տուն մեր, նստէիք աներկիւղ իբրև զեպուհ տեարս և զժառանգութիսնս մեր յամղիմամ աչաց մերոց վայելէիք»³⁹, գրուր քաղաք մի շրջակայիքն իւրովք ի մէջ արստամբնցուցանել... Ասեմք զձեզ՝ թէ եղէք ի ժառանգութեմէ մերմէ, դուք գրէք ի Պօլիս առ Քրիստոսասէր էլչին ֆոանկսիզաց զանգատ զմէջ, թէ մեզ այսպէս և այնպէս արար: ...Գրեմ և ես անա սիքով, զի մի ևս նովին անիրաւութեամբ և զողութեամբ և խարբրայութեամբ շրջիցիք ի մէջ ազգիս մերոյ, ուր և համղիպեսցիք: Կամ այսպէս պարտիք վարիլ, կամ եղանկ և զնալ ի քուն երկիրն ձեր, զի երկիրքս այստրիկ ոչ են ֆոանկստուն, այլ հայոց երկիր՝ քնդ իշխանութեամբ տաճկաց: Դուք աստ ոչ ժողովուրդս ունիք, և ոչ թէմ և ժառանգութիսն...»⁴⁰:

Միմեռն երևանցու գլխավոր մտահոգությունը, սակայն, ներազգային դժվարությունները հարթահարելն ու միաձուլլ ազգային կառույց տեղեւելու գործն էր: Կազմելով «Ջամբո» կոչված ժողովածուն, Միմեռնը գրում էր. «յոսասմք, զի [աստուած] ... այց արասցէ և վերանորոգեսցէ զհնութիւն իւղճաւոյ ազգիս մերոյ և վանօրէիցս: Եւ յայնժամ եթէ զէնս ոչ, զոնէ զաւեր տեղիսմ վերից և զվիճակս իրեանց ճանաչեսցեն ի դարանյիւրքն: Քանզի ի ներկայումս, յորում գրեմ զսոցումն, երեսուն և երկու ամ է աւելութիւն երկրիս և ամայութիւն վանօրէիցս, զորս մեք և շատք վարդապետք և աշխարհականք տեսար ի շինութեան և ի շքեղութեան, որոց և ոմանց արասցնորքն ևս զոն կենդանի յԱթոռոջս ... որոց ի հարցանելն մեր զորպիտութիւն ինչ զվանից յայնցանեաց, մնային պապանճեարք, զի զճանաչարիս զհնետանցն միայն կին սերտեարք և ոչ գայլ ինչ»⁴¹: Միմեռն երևանցու կարծիքով «ցեցն ի միջոյ է և ոչ՝ արտարքուտ»⁴²:

Տաքերը վաքչա-քաղաքական միավորներում Միմեոն Երևանցու ներկայացուցչի պարտականություններն իրականացնում էին կաթողիկոսի կողմից նշանակված տեղապահ-ներկայացուցիչները (վեքիլները) և գործակալները, որոնք, ի տարրերություն մվիրակների, պետք է գտնվեին իրենց նշանակման վայրերում և ունենային շատ ավելի լայն լիազորություններ, քան միայն դրամահավաքություն իրականացնելու նպատակով առաքվող մվիրակները կամ անտեսական գործադրներ իրականացնող գործակալները: Առավել ակտիվ քնդիմություն է արձանագրվել հատկապես և. Պոլսում Միմեոն Երևանցու կողմից առաջադրված կաթողիկոսական ներկայացուցիչներ ունենալու շուրջ⁴³: Միմեոն Երևանցին մեծացրել էր թուրանկյիների (երացանակիւրներ) խումբը⁴⁴, որի նպատակը ոչ միայն վանքի պահպանությունն էր, այլև տարբեր հանձնադրառությունների և առաքումների ուղեկցումներն ու նրանց անվտանգությունն ապահովումը: Ուշագրավ է, որ անգամ Երևանի խաներն աջակցվածքներ կազմակերպելու դեպքում կամ նման պատրվակներով զինվորներ (թուրանկյիներ) էին խնդրում կաթողիկոսից, իսկ կաթողիկոսը չէր վաքանում մերժելու նրանց խնդրանքը⁴⁵: Ուշագրավ է 1786 թ. մարտին Ղուկաս կաթողիկոսի պատասխան մամակը Թիֆլիսի մեկից Ավետիքիմ, որտեղ կաթողիկոսը առաքվելով մեկից Ավետիքին նրա առաջարկության առիթով, թե լեզգիների աշխատանքի դեպքում վանքը կարող է հուսալ իր ինքնապաշտպանությանը, Ղուկասը գրում է. «Ժակ գոր գրեք, թե զզինուորս պատրաստեալ կարգեսցես ի պահպանութիւն սրբոյ Արշուայն, առ այդ իմա, սիբելիդ իմ, զի որպէս առեալ ենք զփոթմն տեղականացս ի սոցունց, թե զհագարն ևս կացուցանիցենք անդ, այնքան ահաբէկ են, որ զգտնդ ինչ ի քչնամեացն՝ իսկոյն զտուրք Արոնն քողեալ, փախչելոց են ի քերդն: Վասնորոյ մի արասցէ Տէր, եթէ դիմիցեն նոքա լիմա՝ լեզգիները» Պ. Չ.] այս կոյս, մեր օգնութիւնն յԱստուծոյ է և ի քրիստոսագօր Արքային»⁴⁶:

Վրաց պատմագիտության կողմից Միմեոն Երևանցու գործունեության մասին վերոբերյալ բնութագրման մեջ զնախատելին այն քննդրվում է, որ տրվում է հայոց կաթողիկոսի գործունեությանը: Միմեոն Երևանցին առավելապես հայտնի լինելով քաղաքական խնդիրների արժարժումների ժամանակ իր զգուշավորությամբ, քննվելու հետո չէր կանգնած իր ազգի առջև⁴⁷ ծառայած խնդիրներից և չէր սահմանափակվում միայն նկերեցական բարեփոխումների հարցերով⁴⁸: 1770 թ. Եկատերինա II կայսրուհուն գրած մամակում արձանագրելով, թե «մեք՝ օչորմելիքս, երկրաւորի աքբայութեան ևս ենք այստեղ կարոտ», խնդրում է նրան «զդոյն սէլ, խնամքդ և զորոմութիւնդ անջնջելի վճռեսցես ի մեզ, ի սրբոյ արքոյս, ի խղճալի յազգես մերմէ, զի քոյ ենք և ոչ օտար, նոյնպէս և ի գայլ ցան և ցիբ եղեալ յազգս մեր տարածեսցես զեովանի

տերութեանը... յամձնեմ ի խմանս և յողորմութիւնս երկմատր քազառ-
 րին աստուծոյ, և զխղճալի ազգս մեր և զմեզ և զսորք Արտու յես աստու-
 ծոյ ի խմանս, ի յողորմութիւն և ի սէր քոյոյ քազմատատի ողորմութեանը,
 յուսալով և ևս ընկալնուլ զապահովութիւն և զմխիթարութիւն»⁴⁹: Որ Սի-
 մեոն Երևանցոյ վերաբերյալ տողերը գուտ քաղաքապաշարական արտա-
 հայտութիւններ չէին, կարելի է համոզվել նուգրութիւնից, որտեղ նա շա-
 բունակում է և խնդրում մամբամասն տեղեկանալ Հովհաննես Լազար-
 յանից՝ «ի Յովանես ծառայէ ձերմէ կարէք զիտէ, որում գրեալ ենք ի
 կարճոյ, զի երկարասպէս և պարզօրէն գրելմ մեր զայսպիսեաց կարի և
 շատ վտանկարեր է մեզ և ազգձմ մերոյ»⁵⁰: Հովհաննես Լազարյանին
 գրած նամակում Սիմեոն Երևանցին կրկին նշում է. «Այդ զայստիկ եր-
 կուս խնդիրս, զորս գրեցի ընդ միս փոստալային, ում և կամիցես ըստ
 պատշաճառորութեան եթէ յայտնիցես, չէ այնքան հոգ: Բայց զերբորդս
 զայս, որ գրեմ ահա, ոչ է յայտնելի և յայլոց թերան ձգելի, այլ միայն քում
 խոհեմութեանդ իբր խօստովանութիւն և ի պատշաճ ժամուս յայտնիլ ա-
 տանձին, որ կամեցող է և կարող ի գլուխ թերեր»⁵¹:

Այն, որ միայն եկատերիմա կայսրուին էր լոկ, որ «կամեցող է և
 կարող ի գլուխ թերեր» խնդիրը, Սիմեոն Երևանցուն թեւադրում էր բոլոր
 մյուս հարևանների հետ քաքիտրացիութիւն պահպանելով համդերձ,
 նրանց նկատմամբ ունենալ հատուկ զգուշավորութիւն և ձեռնպահ մնալ
 ու նաև կասեցնել ազգի աղջկ ծառայած գերխնդրի քննարկումները՝ ժա-
 մանակավրեպ ու արկածախնդիր գործողութիւններով հարկածի տակ
 չդնելու համար սեփական ժողովրդի այն հատվածին, որը կրելով օտարի
 լուծմ ու ամաքզամքը, դեռևս շարունակում էր կառչած մնալ իր հողին:

Ա. Ռ. Հովհաննիսյանի ընդհանրացումով, «Հերակլը Էմինի նկատ-
 մամբ ցուցաբերում է մեծ քարեհոգութիւն, հաճույքով լսում է ազնվակա-
 նութիւնը սանձելու, կրթութիւնը քարեփոխելու և Վրաստանում եվրո-
 պական զիտելիքների տարածման մասին նրա խորհուրդները, սակայն
 ամեն անգամ խոստովում է հայկական հողերի ազատագրման կոնկրետ
 ծրագրերի քննարկումից. նա լիակատար պատրաստակամութիւն է դրս-
 ևորում օգտվելու Հովսեփ Էմինի ծառայութիւններից, սակայն լոկ իր
 կողմից գծված շրջանակներում, իսկ Էմինը ամեփոքապես ձգտում է առա-
 ջադրել իր քաղաքական ծրագրերի իրականացման հարցը»⁵²: Հ. Էմինը
 իր ծրագրերի մշակման ժամանակ նկատի չէր ունեցել, որ Հերակլը
 ձգտում էր կառուցել ոչ թե կովկասյան ժողովուրդների դաշնութիւն, այլ
 հենց վրացական պետութիւն⁵³: Վրաց արքայի իրական, ընթացիկ շա-
 հերը հակադիր էին Հ. Էմինի քաղաքական երազանքներին⁵⁴: Հերակլ
 արքայի «ընթացիկ շահերը» ակնհայտ էին անգամ Էմինիում գտնվող
 օտսական նյութատուսին, որը գրում էր արքունիք, թե «грузинский
 владетель Ираклий по вступлении в правительство Грузиию, оказав

во многих случаях по соседству и по христианству гражданам и - народу Эриванскому защите от персидских наглостей, паче же от разбойнических в том краю иногда зборищей... то сами Эриванские армяны охотно прибегают ко владетелю Ираклию, и не отказывают ему в деньгах по ево иногда требованиям»⁵⁵.

Ուշագրավ է այն իսկազմանքը, որ երբ Եմինը Հերակլի պահանջով⁵⁶ ստիպված էր բողոքելու Վրաստանի տახմանները և կանդիպելով Մուշի Առաքելոց վանքի առաջնորդ Հովման փարդասպետի կողմից ուղարկված 13 անձանց, առաջարկում է նրանց հետ միասին ուղևորվելու Մուշ, Հովմանի դեսպանագնացները ընդիմանում են և հայտադրում, թե իրենք լիազորված չեն Հովմանի կողմից և չեն կարող գործել Հերակլի կամքին հակառակ⁵⁷։ Հ. Եմինին մնում էր բռնել ոչ թե Հայաստանի, այլ Հյուսիսային Կովկասի ճամապարհը։

«Եւր տեսրակի» հրատարակության տարում դեռևս ընթանում էր ռուս-թուրքական պատերազմը։ Պատերազմի երկրորդ տարում Հայաստանի ազատագրության հույսը Ռուսաստանի և Վրաստանի հետ էր կապել մահ Մովսես Սարաֆյանը՝ 1769 թ. հատուկ նամակում արտաքին գործերի կոլեգիայի իսմար շարադրելով իր ծրագիրը⁵⁸։

Պատերազմում Օսմանյան պետությունը թեև պարտություն կրեց և Ռուսաստանը Քուչուկ Կայմարցիի պայմանագրով ձեռքերի ազատություն տալով համեմատաբար ավելի անկաշկանդ գործելու Այսրկովկասում⁵⁹, սակայն Վրաստանը, որ մի կողմից զեն. Մոլդեմի միջոցով 1775 թ. պահանջում էր պատերազմը շարունակել Իրանի դեմ, մյուս կողմից պարտադրված էր 1776 թ. Այսրկովկասյան տարածաշրջանի իրադրությանը աչաքջորեն հետևող Օսմանյան արքունիք ուղարկել դեսպանություն՝ հավաստիացումներ կատարելու Օսմանյան պետության նկատմամբ իր քաղաքականության անշրջելիության մասին և կնքելու գաղտնի պայմանագիր, որն էլ իր հերթին հարցեց նուսաստանի դժգոհությունը⁶⁰։ Դեսպանի պարտականությունները դրված էին հայագրի Գուրգեն Եմիկովսյանի⁶¹ վրա, որը կատարելով իրեն տրված առաջադրանքը, վերադարձին և. Պուլսից Վրաստան հրավիրեց մահ Հակոբ Ռայնեզին⁶² ու նշանավոր տարագրիչ Պոլոս Արարյան-Հովհաննիսյանին⁶³։

Ռուս-թուրքական հակամարտությունը 1770-ական թթ. վերջերին հասավ իսկազմալուծման իր նոր վտույն։ Քուչուկ-Կայմարցիի պայմանագրով⁶⁴ անկախ եղյակված Արևմտի խանությունը Ռուսաստանին միացնելու և հյուսիսկովկասյան տարածքների քնակեցման նպատակով իրականացվեց Արևմտի քրիստոնյա քնակչության՝ հաչոց և հունաց, դուրս բերումն ու Եր-Լախիջևանի հիմնադրումը 1778-1779 թթ.։ 1778 թ. Հերակլ II-ը մախաձեռնեց⁶⁵ և 1779 թ. իրականացրեց Երևանի խանությունը Վրաստանին միացնելու փորձ, որն ավարտվեց Արարատյան դաշ-

տի հայ քնակչությունը⁶⁶ Վրաստանի տարածք փոխադրելու և այնտեղ մարդաբաժնի որոշ վայրեր քնակեցնելու փաստով⁶⁷ :

Ի վերջո, Միմեոն Երևանցին, ամբողջ իր հեղինակությամբ ու ազդեցությամբ միջամտելով համդերձ, ի զօրու շեղավ կասեցնելու ոչ Արցախի հայ մելիքների միջև եղած գոտաբախումները⁶⁸, և ոչ էլ Հերակլի կողմից 1779 թ. կատարված Արարատյան դաշտի հայաթափությունը⁶⁹ : 1779 թ. Քերիմ խանի մահը ավելի էր սրել իրավիճակը և լուրեր էին տարածվում, թե Հերակլն այնուհետև կարող է արշավանքը շարունակել դեպի Իրանի խորքերը : Հերակլը տեսնելով Երևանի քերթի գրավման ձգձգումը, զինվորներին հրամայեց սրատրաստ լինել ձմեռելու Հայաստանում : Արշավանքը արդեն ձգվել էր երեք ամիս և դժվար էր գուշակել, թե որքան ևս կարող էր տևել, եթե ստրեանդակը Հերակլի անունով մամակ չբերեր՝ տեղեկացնելով, որ վրացական զահի հավակնություններով Արևմտյան Վրաստան է ժամանել Բաքար արքայազնի որդի Ալեքսանդրը : Հերակլը ստիպված էր Երևանում մտորավ նշանակել Մուխրանի տիրոջը՝ Հովհաննիս, ⁷⁰ և վերադառնալ նա⁷¹ : Նույն թվականի դեկտեմբերի 23-ին Կ. Պոլսից ռուսական դեսպան Ստախիևը հաղորդում էր, թե «На сих днях приехал сюда один грузинский князь с двумя дворянинами и семью служителями, которому от Порты дана квартира в одном загородном турецком доме и который предьявляется шуриным всевысочайше известного Джаныкли-Али-пашин, убегишим от грузинькаго владельца принца Гереклия, а сего Порты почитает своим подданным, добровольно ей прошлаго года поддавшимся чрез своего бывшего здесь посланца»⁷² : Ալեքսանդրի Ռուսաստանից Իրան՝ Քերիմ խանի մոտ, ժամանելու նպատակները իրազեկորեն արձանագրել է մահ Հ. Միքայել Գանյանը Բաքարյից 1772 թվականի օգոստոսի 20-ին Սևրոմեյան քարահորը գրած իր նամակում : «Ժակեմուտը պէյն, որ է իսկական ժառանգ իշխանութեան վրացոց Թիֆլիզ քաղաքի, ի քազմաց հետո՛ւ եկեալ է ի Շիրազ առ Քերիմ խանն օգնութիւն առնուլ ի նմանէ, առ ի կորզել զԹիֆլիզ և զայլ տեղիս հայրենի ժառանգութեան իւրոյ ի ձեռաց Հերակլի պատերազմաւ . և նա յասպաղեցուցանէ : Սա քազում անգամ առացեալ է, թէ նա ոչ գտի զոր քահանայ ինձ հաճոյ : Իսկ ումանք անմտածօրք առացեալ են, թէ կարես զայնպիսին գտանել ի Պասարայ՝ այս անուն : Եւ նորա զայս լուեալ՝ յորդորեալ է գրագումս, զի զոնէ բողոք մի գրեցից առ նա . և իմ լուեալ զայս՝ խորհրդով բարեկամաց՝ գրեցի առ նա բողոք մի՝ զի թելտտ քնդ իշխանաւորաց խառնիլն ոչ բոլի ինձ բարի, բայց ի հեռուստ ևս բարեկամ չունիլ զայնպիսին, ոչ նուազ բարի ես

1780 թ. Հերակլը փորձեց ավարտին հասցնել իր մտադրությունը և արշավել դեպի Երևան : Սակայն Երևանի խնդրի լուծման ճանապարհ-

հին, ըստ վրաց հետազոտողների⁷⁴, կանգնած էր Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների արման վտանգը:

Օսմանյան արքունիքը և XVIII դարի վերջին քառորդին անընդ-
մեջ մեծացնում էր Այսրկովկասում իր ազդեցությունը, սպարբերաբար
մվերներ ուղարկում այսրկովկասյան բոլոր կառավարիչներին, նրանց
հրահրում դիմակայել Ռուսաստանի առաջխաղացմանը կամ ձեռնալսի
մնալ Վրաստանի նեո դաշնակցելուց, հաճախակի արշավանքներ ձեռ-
նարկել Վրաստանի դեմ, լուրջ սպառնալիքներ առեղծել Վրաստանի
անկախության համար:

Հայ-վրացական միացյալ թագավորության առեղծման գաղափա-
քը, այսպիսով, կարող էր իրատեսական համարվել մինչև 1770-ական
թթ. վերջը, երբ Այսրկովկասում դեռևս ոչ մի այլ պետություն փոխարինե-
լու չէր եկել Վրաստանին⁷⁵: 1780 թ. հունվարի 1-ին ամակնկալ ձևով,
ըստ Հ. Արղությանի գրառած օրագրության, իրեն է այցելել ռուսական
արքունիքի բարձրաստիճանի պաշտոնյաներից Ի. Պ. Գորիչը և եայտնե-
լով, թե ռուսները մտադիր են արշավել մերձկասպյան տարածքներ՝ իրե-
նից տեղեկություններ է խնդրել Այսրկովկասի և Պարսկաստանի իրադ-
րության մասին:

Հաջորդ օրը՝ հունվարի 2-ին, Հ. Արղությանին են այցելել նաև Ա.
Սուվորովը և Հ. Լազարյանը: Ա. Սուվորովը, հուսադրելով հայ զործիյնե-
րին, թե ռուսները մտադիր են վերականգնել հայոց պետականությունը,
տեղեկություններ է հարցրել Էջմիածնի և ընդհանրապես Հայաստանում
տիրող իրավիճակի մասին: Այնուհետև Ա. Սուվորովը ճանապարհվել է
Գ. Ա. Պետրյակինի մոտ՝ զեկացելու նրան տեղի ունեցած զրույցի մասին:

Հունվարի 3-ին Գ. Ա. Պետրյակինը իր մոտ է հրավիրում Հ. Ար-
ղությանին ու Հ. Լազարյանին, որոնց նուս զրույցի ժամանակ նարցքեր է
տղդել նաև հայերի և վրաց թագավորի մասին: Գ. Պետրյակինը պահանջ-
ջել է Ռուսաստան հրավիրել նաև Հովսեփ Էմինին:

Հունվարի 13-ին Հ. Լազարյանին ու Հ. Արղությանին իր մոտ է
հրավիրում Ա. Սուվորովը և մանրամասն տեղեկություններ խնդրում Ար-
ցախի մելիքների և վրաց թագավորության մասին: Ըստ 1780 թ. հունվա-
րի 10-ով թվագրված և Հովհաննես Լազարյանին վերագրվող փավերագ-
րի⁷⁶, Հայաստանի ազատագրության ու հայ պետականության վերա-
կանգնման գործում հիմնական դերակատարում պետք է ունենային հայ
իշխաններն ու հայ ժողովուրդը, սակայն անհրաժեշտ էր, որ նրանք
ստանան Ռուսաստանի աջակցությունը և Դերբենում կենտրոնացնե-
լով իրենց բանակի կորիզը, շարժվեին դեպի Շամախի ու Գանձակ՝ ռեճե-
նալով Ռուսաստանի զինական օգնությունը: Հանդգտնոք է հայտնվում,
որ Արցախի հայ իշխանները կմիանային այդ արշավանքին և կազա-
տագրվեր նաև Երևանը: Հայ նորաստեղծ պետությունը ունենալով ռու-

սաց օժանդակությունը, իր հերքին կարող կլինեք հեմարան լինելու Ռուսաստանին և հայոց պետականության վերականգնումը կհանգեցնեք Ռուսաստանի նկատմամբ ոչ քաղաքական տրամադրված Թուրքիայի ու Իրանի զգալի թուլացմանը: Ենթադրվում էր, որ մեծապես աճ կունենար նաև ռուս-իրանական առևտուրը:

Այդ սպառնալիքներին դիմակայելու և Ռուսաստանի օժանդակությամբ տարածքային նվաճումներ ունենալու ակնկալիքով Հերակլ II-ը 1782 թվականին համաձայնեց և 1783 թ. հուլիսի 24-ին Ռուսաստանի հետ կնքեց Գեորգիևյան հայտնի պայմանագիրը⁷⁷: Պայմանագրի կնքումով Հերակլը մտադիր էր ամրապնդել իր ազդեցությունը Արևելյան Այսրկովկասում⁷⁸, սակայն իրականում ստացվեց նակատակ վիճակը: Վրաստան ժամանած Ստ. Բուրճաշևը արդեն օգոստոսի 3-ին տեղեկացնում էր Պ. Ս. Պետյոնկինին, թե Հերակլը Ախալցխայի փաշայից մամակ է ստացել, որով փաշան քարեկամական տոնով տեղեկացնում է Հերակլին Ախալցխա ժամանող լեզգիների մասին: Հերակլին այդ թվում է չարագուշակ զգուշացում, որովհետև մինչ ռուսական զորքերի Վրաստան ժամանումի մասին որոշման լուրը Ախալցխայի փաշան չէր ընդունում լեզգիներին⁷⁹: Ավելին, ըստ վաճառականների բերած լուրերի, Էրզրումի շրջակայքի գյուղերի քնակչությունը ռուսական զորքերի սարսափից իր ունեցվածքով արդեն փոխադրվում է ամրացված վայրեր⁸⁰:

Կուսակցով Օսմանյան կառավարության հնարավոր արձագանքը Գեորգիևյան պայմանագրի նկատմամբ, ռուսական արքունիքը 1783 թ. հոկտեմբերի 27-ին հատուկ հրահանգով պահանջում է Ռուսաստանի արտակարգ դեսպանի և լիազոր մինիստրի պաշտոնով Կ. Պոլսում գտնվող Բուլգակովից. «Есть ли бы по поводу сего договоре приметили вы в публике какие либо беспоконьяства, не оставите вы употребить старание ваше к опровержению могущих последовать от того неосновательных толкований; как и Порте при случае какого либо с ея стороны отзова, изясни, что как с одной стороны царь Ираклий, будучи никому не подвластным, мог зделаться вассалом нашим и с преемников престола нашего и просил нас о покровительстве нашем над царствами Карталинским и Кахетинским, собственно ему принадлежащими, так и мы, по единоверию нашему, восхотели дозволить ему оное; и что в прочем сей договор не отменяет ничего в существе дел в тех царствах, которыя на прежнем основании остаться имеют. И что, на конец, малое число войск наших, там будущих, не может подавать повод к каковым либо далновидным заключениям... Отправлен на почте 31 октября. Высочайше опробованной отдан секретарю Пряелову 9 ноября»⁸¹.

Օսմանյան պետությունը թեև ի վիճակի չէր դուռև սնփական ուժեղով⁸² կանցնելու ռուսական զորքի հնարավոր մուտքը Այսրկովկաս⁸³,

տակայն Վրաստանի դեմ ուղղեց Հարավային Կովկասի ու Ատրպատականի, Դաղստանի ու հյուսիսային Կովկասի գրեթե բոլոր իշխողներին⁸⁴։ Վրաստանին հարկի վճարումը դադարեցրին Երևանի ու Գամծակի խամեթը⁸⁵։ Հերակլին դադարեցին ենթարկվել Ղազախ-Շամշադինի քաթարները⁸⁶։ Շուտով պարզվեց, որ Հերակլ II-ը Արևելյան Այսրկովկասում ոչ միայն արդեն ի վիճակի չէր վարելու ակտիվ քաղաքականություն, այլև պետք է մտանդակեր գնթ իր ունեցած դիտքերը պահպանելու մասին⁸⁷։

Այդ իրավիճակը իր կնիքը բողեց հայ-վրացական հարաբերությունների վրա։ Հայազգի գործիչները հայոց պետականության վերականգնման հետաևարան սկսեցին կապել ուղղակիորեն Ռուսաստանի հետ՝ ավելի քիչ տեղ բողեցնելով Վրաստանին⁸⁸։ Այդ ակնհայտորեն դրսևորվեց և հայ-ռուսական դաշնագրերի մախազներում և Ալի Մուրադ խանի հետ վարվող բանակցությունների ընթացքում։

Գեորգիևյան պայմանագրից հետո տեղի տալով այն լուրերին, թե Ռուսաստանը պատրաստվում է քաջի Վրաստան առաքվող սանձամափակ զորամասից Այսրկովկաս արշավել մեծաքանակ բանակով, իրազեկ լինելով մահ Ալի Մուրադ խանի հետ ընթացող բանակցությունների փաստին, Հերակլը 1784 թ. Ռուսաստան ուղարկած մամակում թվարկում էր իր ակնկալություններն ու պահանջները այդ ձեռնարկումից, քայքայ և ստիպված էր դիվանագիտորեն գրել ռուսական աքքումիք, թե շատ հեշտ է հայոց պետականության վերականգնումը, եթե Ռուսաստանն այդ քարեհանի և եթե հայերը մեծան ցանկություն հայտենե⁸⁹։ Տվյալ դեպքում Հերակլը երկրորդն այդ քաջով փորձում էր իր ձեռքում պահել մահ Ռուսաստանի մախսածեռնությամբ հայ պետականության ստեղծման հայոց հույսը և ինչպես հարևան մնացած ժողովուրդների, այնպես էլ հայոց մուս պահպանել իր քարծր վարկահիշը, ազատաբարի առաքելության իր համբավը⁹⁰։ Չմայած այն հանգամանքին, որ հայ-ռուսական դաշնագրի մեջ Վրաստանի մասին որևէ ակնարկ իսկ չկա, և Հայաստանի ազատագրության խնդիրը պայմանավորված է միայն Ռուսաստանի ցուցաբերելիք օժանդակության հետ, հայ գործիչները, այնուամենայնիվ, ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Ռուսաստանում ամտես չէին առնում Վրաստանի գործունը։ Այդ հստակորեն դրսևորված ենք գտնում հատկապես Հովսեփ Արղուրյանի կողմից 1784 թվականին Գ. Ա. Պոտյոմկինին գրած մամակներում⁹¹։

Առավել ուշագրավ է 1786-87 թթ. ստեղծված իրադրության մեջ Հովսեփ Արղուրյանի դիրքորոշման մեջ նկատվող շրջադարձը։ Շ. Շահամիրյանին 1786 թ. սեպտեմբերի 3-ին գրած մամակում Հ. Արղուրյանը համառոտ ներկայացնելով 1783 թվականից հետո իրադարձությունների ու բանակցությունների ընթացքը, չի բացցնում իր վերավճանքը ընթացող

Գիտաժողովը իր աշխատանքներն ավարտեց ետլիսի 15-ին։ Այն հիմնականում քննարկեց քրդական գրական միասնական լեզվի խնդիրը, քրդերեն լեզվի ուղղագրության, նոր մշակված քերականություն ստեղծելու հարցերը։ Անդրադարձավ քրդերենի տեքմինաշինության ու բառակազմության, քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության խնդիրներին։ Որոշվեց քրդական միասնական լեզու ճանաչել ներկայումս Խորհրդային Հայաստանում ապրող քրդերի (կուրմանջի) բարբառը։ Միևնույն ժամանակ որոշվեց համամիութենական քրդագիտական երկրորդ գիտաժողովը հրավիրել 1935 թվականին Ադրբեջանում, իսկ Հայաստանի պետական համալսարանում հիմնել քրդագիտության ամբիոն¹⁹։

Որոշ ուշացումով, 60-ական թվականներին Հայաստանի պետական համալսարանում բացվեց քրդագիտության բաժին, որտեղը ուսանողները խորանում էին քրդերեն լեզվի, գրականության, բանահյուսու-

յան, պատմության, ազգագրության հարցերի մեջ: Իսկ համամիութենական քրոյագիտական երկրորդ գիտաժողովի հրավիրումը Աղքրեջանում ոչ միայն չկայացավ, այլև Աղքրեջանում մինչ այդ էլ ընթացող ուժացման քաղաքականությունն էլ ավելի գլուխ քարձրացրեց:

Յանկանում ենք կանգ առնել մի պատմական պարզ ու կարևոր իրողության վրա: Երե Հայաստանում 1921 թվականի մարտահամարով 8 455 քրդեր էին բնակվում, ապա 1979 թ. մարտահամարով նրանց թիվը կազմում էր մոտ 70 000, որոնց համար, ըստ էության, ստեղծված էր մշակութային ավտոնոմիա:

1926 թ. Աղքրեջանում քրդերի թիվը կազմում էր 41. 000 եւ կային մի քանի քրդական մշակութային օջախներ, իսկ 1939 թվականի մարտահամարով քրդերի թիվը Աղքրեջանում կազմում էր 6. 000, վերանում են քրդական բոլոր մշակութային օջախները, այդ թվում նաև Լաչինի քրդական մարզը: Արդեն 1959 թ. մարտահամարով ցույց է տրված 1. 5 հազար քուրդ, իսկ 1979 թվականի մարտահամարի տվյալներով Աղքրեջանի Հանրապետությունում արդեն քրդեր չկային:

Անդրադատնարով գիտաժողովի աշխատանքներին, պետք է նշենք, որ այն ընտրեց հատուկ համձնաժողով (պրոֆեսոր Ա. Խաչատրյան, Ա. Շամիլով, Հ. Ջնիշ, Ղ. Կուրդուև, Օ. Լ. Վիլյուսևի, Ի. Ի. Յեկերման, Խ. Փնկիև), որը պետք է կազմեր քրդերին լեզվի գիտական ու դպրոցական քեռականություն³⁰: Հետագայում պրոֆեսոր Հ. Ջնիշ ու Ա. Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմվեց այդ քեռականությունը: Այնուհետև որոշվեց մոտ 50 մասնով ծավալով հրատարակել քրդական բանասիրություն, հայ-քրդերին բառարան, որոնք կարճ ժամանակաընթացքում հրատարակվեցին:

Ելնելով այս ամենից, պետք է նշենք, որ գիտաժողովը համոզյալացավ ոչ միայն քուրդ ժողովրդի մշակութային կյանքում շրջադարձային մի կետ, որ ամփոփեց և ի մի բերեց Հայաստանում այն խոշորագույն հատթամակները, որոնք քուրդ համայնքը վերջին տարիներին ճեղք էր բերել մշակույթի բնագավառում, այլև այն քաղաքական մի մեծ իրադարձություն էր համայն քուրդ ժողովրդի կյանքում, որին անդրադարձան ու գնահատեցին արտերկրի բազմաթիվ գիտնականներ: Այն ուղի հարթեց քրդերին գրական լեզվի տեղծման ու առաջընթացի համար:

Գիտաժողովից հետո մեզ բառի հատրդվեց քրդական ազգային մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացմանը: Հայ քրդագիտության կենտրոն դարձավ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը, որտեղ տնօրեններ՝ ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանի, Գ. Սարգսյանի, պրոֆեսորներ Հ. Ինճիկյանի, Ն. Հովհաննիսյանի ֆանքերով օրեցօր ընդլայնվում էր և այժմ զարգանում է քրդագիտության ոլորտը:

Լեւինգրադում, Մոսկվայում ու Եվրոպական գիտական կենտրոններում թեև նույնպես զբաղվում են քրդագիտության հարցերով, սակայն հայ քրդագիտությունը իր մեջ ընդգրկում է քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումով գիտական աշխարհում այն դարձել է մի նոր ուղղություն և տվել իր գործնական քեղմնավոր պատդները ողջ քուրդ ժողովրդի մշակույթում:

KARLEN CHACHANI

FROM THE HISTORY OF THE ARMENIAN KURDISH STUDIES
(The first kurdological conference)

In the article there are discussed the role and meaning of the Armenian government and the Armenian intelligentsia in the cultural life of the Kurdish people, which brilliantly expressed at All-union Kurdish Studies conference in Yerevan (July 1934).

This conference was a historical turning point in the cultural life of the Kurdish people, it concluded and gathered the most great victories of the Kurdish community in Armenia, which it achieved during several years at the cultural sphere.

At last, the conference opened ways to the diverse discussion of the Kurdological issues and the Armenian Kurdish studies gave a new breath to the whole Kurdish studies. After the conference due to the concerns of the Armenian intelligentsia the Kurdish studies received a new thrust for its development, which has got a broad recognition in the whole scientific world.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խ. Արսլյան, երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, Երևան, 1958: Մ. Տիգրանյան, Ալի-Ֆախնեյզ Գորմանջի վա արմանի, Կ. Պոլիս 1860: Մ. Տիգրանյան, Չղտայե ըտնի Կ. Պոլիս 1866: Խրիմյան Հայրիկ, Մրազիր բարեկորգման, 1909, Կ. Պոլիս: Յ. Շահաբազյան, Քիւրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911: Լևո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1947: С. Е. Егмазаров, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1909. К. Юзбашян. И. А. Орбели. Ленинград, 1965.
2. Заря Востока, Тбилиси, 1933, No 184.
3. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 1, ց. 22, գ. 301, էջ 115-117:
4. «Ոչա բազա», 1934, No 28:
5. Նույն տեղում, No 30:
6. Նույն տեղում, No 31:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, No 32:
10. Նույն տեղում:

11. «Երկրային Հայաստան», 1934, No 155:
12. Մ. Մաշտոցի ամվան մատենադարան, Ֆ. կաթողիկոսական դիվան, քրք. 76, գ. 56:
13. «Երկրային Հայաստան», 1934, No 160:
14. ՀՀ ՆՊԿ արխիվ, Ֆ. 112, ց. 4, գ. 786, էջ 14-15:
15. «Երկրային Հայաստան», 1934, No 160:
16. Նույն տեղում, No 161:
17. Նույն տեղում, No 161:
18. «Նյա քազա», 1934, No 32:
19. «Երկրային Հայաստան», 1934, No 163:
20. Նույն տեղում, No 164:

ԱՇՈՏ ԱՏԵՓՈՒՅԱՆ

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ

Հայ մշակույթի առավել տարողունակ քննազավատներից մեկի՝ կիրառական արվեստի համակարգում, իր առանձնակի տեղն է զբաղում գորգագործությունը, որը դարեր ի վեր համդիսացել է հայկական ժողովրդական արհեստագործության առավել առաջնային ուղղություններից մեկը:

Գորգահյուս իրերի թեմատիկայի բազմազանությունը, երկրաչափական, կենդանական ու բուսական նախշաձևերի ռեալիստիկ գույն-դրամներն՝ արտահայտված պայմանաշանային համակարգով, թելամյութի որակն ու բուսակենդանական առաջնակարգ ներկանյութերով մշակումները (ճրգան կարմիր տորոն, գլխոթ, սոխի կեղև, կաղին, ինդիգո, լազվարդ և այլն), ստեղծել են հայկական գորգերի նրբագեղությունն ու անկրկնելի կոմպոզիցիոն կառուցվածքը: Գեղարվեստական ու հարդարային բազմաթիվ առանձնահատկությունների շնորհիվ արհեստի քննազավատը ստեղծել է նաև լայն հնարավորություններ օժանդակ մասնագիտությունների զարգացման համար (թել մշակողներ, ներկանյութի ու ներկարարության վարպետներ, դազգահագործներ և այլն): Այդ համակցումները, հայ արհեստավորների ստեղծագործածով վերածվել են հայկական մշակույթի պատմության մի մասնիկի և դարձել մի ամբողջ ժողովրդի պատմա-մշակութային ձեռքերում: Գորգեր ու գորգահյուս իրեր, որոնք իրենց դեկորատիվ ու գունային հնչելույթյամբ հիմնավոր մուտք կգործեն անգամ եվրոպական գեղամկարչության ոլորտը, նպաստելով իսպանական, գերմանական, իտալական ու ճիդեղամդական գեղամկարչական մեծահամրավ կտավների կովպոզիցիոն չափանիշների կազմավորմանը: Այդ են վկայում նրանց պատկերումների առատ օգտագործումը գեղմկարի հռչակավոր վարպետներ Ջուստոի (14-րդ դ.), Ե. Վան Էյկի (14-15-րդ դ.), Հ. Մեմլինգի, Մանտեննայի (15-րդ դ.), Պինտուրիկիոյի, Յակոբո Բասամոյի (16-րդ դ.), Կաբավաջոի (16-17-րդ դ.), Ռուբենսի (16-17-րդ դ.), Վան Դեյկի (17-րդ դ.), Ռեմբրանդտի, Վերմեյերի, Տեքսթրիսի (17-րդ դ.), Վիլսակեսի (17-րդ դ.), Ռ. Հոգարտի (18-րդ դ.) և այլոց կտավներում: Հայտնի էր և հայկական հայկական գորգի մի տարբերակ, որի պատկերումը գերմանացի մեծամտ գեղամկրիչ Հանս Հոլ-

քեյնի ստեղծագործություններում (16-րդ դ.) կատեղծի այդօրինակ գորգերի համար «Հոլքեյն» պայմանական անվանումը՝ մասնագիտական գրականության մեջ:

Միևնույն ժամանակ, հիմնականում լինելով գուտ արևելյան երևույթ, հայկական գորգարվեստն իր առանձնահատկություններով եղել է նույն Արևելքի համար առավել ընկալելիմ, մախրմուտվածն ու բարձրակարգ գնահատության արժանացածը, որի մասին են վկայում 10-13-րդ դդ. արաբ պատմագիրների որոշ հիշատակությունները: Այսպես օրինակ խոսելով արաբական խալիֆաթում տարածված արհեստների մասին Աս-Սա'ալիքին գրառում է. «...ինչ վերաբերվում է քրոյա գորգերին, ապա առաջին հերթին առանձնաբնու էին պարսկականը, հայկականն ու բուխարականը»: «...Փարսի նահանգում գործում էին իրոք «գեղարվեստական» բարձրակարգ չափանիշներով գորգեր, սակայն նույն ժամանակ առավել քարճր էին գնահատվում հատկապես հայկական գորգերը, այսինքն Փոքրասիականներ, որոնք Չճյուռնիայի մեր գորգերի հիմնօրինակներն էին» ճշտում է ալ-Իսբահրին²: Աբու ալ-Ֆարաջը հիշատակում է, որ «...խալիֆ ալ - Վալիդ 2-րդ-ի ապարանքի հատակն ու պատերը ծածկված էին հայկական գորգերով»³, իսկ Մասուդին մասնավորեցնում է, որ «...սա- Ռաշիդ տիրակալի կինը գահանստում էր հայկական գորգերի վրա, իսկ նաժիշտ կանայք՝ հայկական բարձրի վրա»⁴: Արիբի մոտ կարդում ենք. «...Քաղդայ թաղաքի աննանձնահարուստ ոսկերչի մոտ (912 թ.) մեծարվում էին միայն հայկական և բաբարխառանյան (մազանդարանի շրջանի-Ա. Ս.) գորգերը»⁵: Ըստ Միսթափայի, նույնն է եղել նաև տիրակալ ալ-Մուքթադիի մոտ գանձարանի հարստությունների մեջ⁶, իսկ Էլիա Մծրնեցին ճշտում է, որ մի ռեն ավատատու, որպես բարձրակարգ նվեր, խալիֆ ալ-Մուքթադիին է հանձնում 7 հայկական գորգ⁷: Նույն ալ-Իսբահրին նշում է, որ պարսկական գորգերից հատկապես գնահատվում էին նրանք, որոնք չէին զիջում հայկականներին⁸, իսկ Իբն Ռուսթան, խոսելով Սպահանի շրջանի պարսկական գորգերի մասին գրառում է, որ «...նրանք գովաբանվում էին, քանի որ առավել մուտ էին շքեղագույն հայկական գորգերին» և այլն⁹: Ընդհանրապես, արաբական խալիֆաթում հայկական գորգերը համեմատվում էին միևնույն քանակաբանք ոսկեհյուս գործվածքների հետ, որի մասին հիշատակվում է, որ «...արքայի կողմից օգտագործվող կամ նրան նվիրաբերվող գորգերը, կարպետները, քարճի երեսները և նման իրերը պետք է լինեին նույն որակի, ինչ որ հայկականները, որոնք առավել էին, քան արքայական արհեստանոցներում գործվող ոսկեհյուս գործվածքները»¹⁰: Հետաքրքրական է նաև, որ անգամ ժամանակի Եգիպտոսի մեծահամբավ առևտրական կենտրոններից մեկի՝ Դահիրեի գորգավաճառների պահեստներում առավել գովերգվում էին

հատկապես հայկական կարմրագույն գորգերը, իսկ եզիստական Աս-
թուտ քաղաքում գործվող մորեզույն գորգերի քարձրարժեքությունը քն-
ուշելու համար նրանք համեմատվել են միայն հայկական տեսակների
հետ¹¹։

Այս առումով, տեղին ենք համարում մասնավորեցնելու հայկա-
կան «մորեզույն» հատկապես կարմիր գորգերի առաջնայնության փաս-
տը, որն վերաբերվում է հատկապես որդան կարմիր ներկատեսակի օգ-
տագործմանը։

Պետք է նշել, կարմիր գույնի օգտագործումը այնքան տարածված
էր հայկական գործվածքային արհեստագործության մեջ, որ նույնիսկ
առօրյա գործածություն ունեին կարմրի ու նրա գունային երանգները
քնուրազող բազմաթիվ բառիմաստներ, ինչպես օրինակ, խրունկ (կարմ-
րի երանգը), բուռր (արևագույն կարմիրը), ծիրանի, հալազի (կետասի և
վարդագույնի միջանկյալ երանգ) և այլն։ Հայ ներկարարների մտ կի-
րառվող բուսական բույլ կարմրագույն էր՝ «կապտաշք», որից ստանում
էին մարմրագույնը, «ասպուրը» (կակժիրակ)՝ հրագույն կարմիրը, հոմի
ծառի ընձուղեններից սխտրաստվում էր տաք կարմիր երանգ ունեցող
ներկը և այլն և այլն։

Ներկարարությունը Հայաստանում տարածված հնագույն ար-
հեստներից էր և յուրաքանչյուր քնակավայրերում, առանձնակի էր հան-
դես գալիս հատկապես ներկարարների քաղամասը կամ համքարական
միավորը։ Հնուաքրքրական է այն փաստը, որ միջնադարում ձևավոր-
ված արհեստավորական այսօրինակ խմբավորումները մասնագիտաց-
ման նախահայր էին համարում Քրիստոսին, որն ըստ ավանդության, ի-
նը տարեկան հասակում աչակեղտել էր Իսրայել ներկարարին¹²։

Ներկարարությանը զբաղվող հայ արհեստավորները, տարբեր
ժամանակ ունեցել են արհեստը բնորոշող առանձնակի անվանումներ.
մարտասներկ (ներկված թելը կոչվում էր «նարուտ», որից և անվանումը),
ներկիչ¹³, բոյախյի (կտով մշակող), սիլաջի (ներկաբար) և այլն։ Ներկա-
րարի արհեստավորը համապատասխանաբար անվանվում էր «ներկա-
տուն», «ներկոց»¹⁴, «տուն ներկոց», «բոյա-խանա», «սիլաջ-խանա» և
այլն. (նշենք նաև, որ Նրևանում ևս, որոշ ժամանակ գոյություն ունեի
«սիլաջ-խանա» (սիլաջի) անունը կողո քաղամաս, որտեղ 1915 թ. Մեծ
Նդեռնից հետո քնակություն հաստատած գաղթականների զգալի մասը
հիմնականում զբաղվում էր ներկարարությամբ)։

Հայկական ներկատեսչություն գոյություն ունեի թե՛ ներկելու միա-
նական ձև, սակայն յուրաքանչյուր վարպետ-ներկարար աշխատում էր
միայն իրեն հատուկ մասնագիտական զգացողությամբ, ունենալով ներ-
կելու ավանդական որոշ գաղտնիքներ, ներկատեսակն ստեղծելու իր
հմարները։ Անգամ յուրաքանչյուր գավառում, քաղաքում, գյուղում և ըն-

տանկերում ներկում էին յարավի, գույների ամսանեմամտիակ տարբերակներով: Կարևորագույն չափանիշներից էր համարվում ներկի դիմացկունությունը, նրա փոխազդեցությունը լույսի, օդի, ջրի, փաշու հետ և այլն: Չափանիշներ, որին բավարարում էր հնագույն ժամանակներից Հայաստանում գոյություն ունեցող քուսական ծագում ունեցող ներկատեսակների քազմագամության մեջ առավել առաջնակարգ ներկամյութերից մեկը՝ «որդամ կարմիրը»:

«Որդամը» հայտնի էր նաև «Հայկական պոքսուր», «Հայկական կոչնեիլ», ինչպես և առավել տարածված «տրմիզ, դրճիզ» անուններով (քարքերեն «krmizi» – կարմիր, որը պարսկերենից փոխառնված «kerm» – որդ և «zamin» – հող քառակապակցման տարբերակն է: Հայկական որդի անվանման այսօրինակ քառածևոյքից կտեղծվի նաև ռուս. «крас» (չերվ) – «որդ» քառարմատի հիմքով «красочный» – կարմրացված, կարմիր երանգ ունեցող արտահայտությունը, որը կիրառվում էր կարմիր երանգ ունեցող ոսկու համար: Նույն հայկական բառիմաստը կլինի նաև լատ. «vermis» – որդ և նույն հիմքից «vermikulat» – կարմիրով ներկված խսկացության հիմքում¹⁵):

Այս ներկատեսակին միջրված ասոցիան հիշատակումները քերևա-հանդիպում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, որտեղ կարդում ենք. «Հիմա եկեք ու վիճարանենք, ասում է Տեղը, եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես պիտի լինին, ձիւնի պես պիտի սպիտակաման, եթե նորանք որդամ կարմիրի պես լինին, ասրի պես սպիտակ պիտի դառնան»¹⁶ իսկ Բարեխոս քաղաքի նկարագրի մեջ կարդում ենք. «Ռսկու եւ արծաթի եւ պատուական ակունքների եւ մարգարիտի եւ քիւնեզի եւ ծիլամիի եւ մետաքսի եւ որդամ կարմիրի ապրանքը...»¹⁷, իսկ քաղաքի կործանման ժամանակ, տեղի վաճառականների ափսոսանքի խոսքերն են. «Վա՛յ, վա՛յ մեծ քաղաք, որ քիւնեզ եւ ծիրամի եւ որդամ կարմիր էիր հագած, եւ ոսկով եւ ազնիվ քարերով եւ մարգարիտով զարդարուած...»¹⁸: Աստվածաշնչային այս տողերում հետաքրքրական է նաև մի յարօրինակ հանգամանք. հայերեն թարգմանող գրիչները, հունարեն բնագրի քառերի իմաստային թարգմանության ժամանակ հստակ տարբերակում են դնում «ծիրամի» և «որդամ կարմիր» գունավորումների անվանումների միջև:

Բոսորակարմրագույն «որդամ» ներկատեսակի հունքը իր ձևի մեջ եզակի հանդիսացող միջատն է, որի վերաբերյալ առաջին մասնակի հիշատակումը հանդիպում ենք 5-րդ դարից, պատմահայր Մովսես Խորենացու կողմից գրառված տողերում. «...որդն յարմատոյ սիզոյ առ ՚ի գարդ կարմրութեան գունաց»¹⁹: Նույն դարում պատմիչ Ղազար Փարպեցին, իր «Հայոց պատմության» մեջ Արարատյան դաշտին կնիվրի ընդարձակ մի նկարագիր, որտեղ մասնավորապես կգրասի. «...գարմատս

եղէզնասեր քուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբարձ
դաշտն Այրարատոյ, այլ և ի մնանէ ծնէալ որդոնս, ի գարշ կարմրատե-
սիւ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքերութիւնս:»²⁰: 7-րդ դարում,
Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյցում» կնշի. «Եւ ունի Այրարատ
լեռանս, գետս և դաշտս սչխտանիս, և երես, և հարս, և զամենայն պատ-
րաստութիւն, և զծովակն գայլատու, և որդն սիգարերեալ արմատոց առ ի
գարշ կարմրութեանս գունոյ»²¹, Այնօրինակ էր հետաքրքրությունը դե-
պի որդան կարմիրը, որ անգամ 12-րդ դ. Ներսես Շնորհալիմ կատկոծի
նրան նվիրված մի համելուկ.

«Տեսի արուեստ զարմանազան,
Ջի մշտակով զերկիր քանան,
Հանեն արիւն անտի զինչ քան
Եւ զիր գրեն կայսերական
Եկ և տես այլ սուկայի,
Ջի հատոցով երկիր բրդի,
Ելնէ կենդան ու ոչ կենդանի
Առնէ կարմիր զգոյն սպիտակի»²²:

Իսկ Քրիստոսի խաչելության տեսարանի նկարագրում կգրառի
հետևյալ տողերը.

«...Որ ըզգեցար ըզծիրանիւն,
Արկեր քղամիտ կարմիր յանձին.
Նախատամաց զոր կարծէին,
Ջինվորք Պոնտոս Պիտատոսին.
Ըզբարձ մեղաց մերկեա յինէն,
Ջյորդան կարմիր արեան գունին»²³:

Միջատը տարածված էր հատկապես Արարատյան դաշտավայ-
րում, որտեղ ամռանը, հարանյակ դառնալու ժամանակ, մինչ գետնի մեջ
մտնելը ապրում էր նույն տեղում աճող եղձի սեզի վրա: Օգտագործելով
քմության կողմից կանխորոշված այդ կարճ ժամանակահատվածը (օ-
գոստոս-հոկտեմբեր ամիսներ), տեղարմակ կամայք նրանց հավաքում
էին պղնձե հատուկ քասերի մեջ և լվացումից հետո չորացնում քոնրի
կրակով: Առավել քարշ փուլն էր ստացված չորուկի մասնիկները փռելի
դարձնելու համար, քանի որ որդանյութը ուներ շատ քարձք յուղային
քաղաղքանաս (այդ նույն յուղային խտացումը ներկին հազորդում էր
անկրկնելի փայլ): Պատրաստված նփուկը «կարմին» էր (այս տարբե-
րակով շատ ավելի հայտնի գրքային ձևավորումներին և գեղանկարին
նվիրված մասնագիտական գրականության մեջ): Ներկը ոչ միայն ամե-
նադայն տարածումն ուներ Հայաստանում, այլև զգալի քանակով ար-
տահանվում էր աշխարհի տարբեր երկրներ: Հայկական Որդան կարմրի
մասին հետաքրքրական հիշատակություններից են հատկապես 10-14-

րոյ դդ. Հայաստան այցելած նույն արար աշխարհագիրներն գրառումները, որոնք մեզ կարող են հետաքրքրել որպես ակամատեսներն ընդհանրապես Այսպես օրինակ, ըստ Իրն ալ-Ֆարսիի, հայերն ասում են, որ «...մենք ունենք կորմիզ, որից ոչ մի տեղ չկա...»²⁴: Ալ-Մուքադասին հիշատակում է, որ Էջմիածնի մտտ հանդիպել է կամանց, որոնց զբաղված էին միջատ հավաքելով, որը կոչվում էր որդամ կարմիր²⁵: Հայկական կարմիր մերկի մասին իր ընդհանրականում ալ-Մասուդին, դեռևս 943 թ. կատարում է մի գրառում. «Կարմիրը դա կնոց, երեխայի և ուրախության գույն է: Կարմիր գույնն ամենազալն է այդի համար, քանի որ այն լայնացնում է այդի բիրը, այն դեպքում, երբ սևը այն նեղացնում է»²⁶: Հատկանշական է, որ միջնադարյան հայկական խոշոր քաղաքներ Գլինում և Արտաշատում այնքան շատ են եղել ներկանյութը օգտագործող ներկատեսերը, որ արար աշխարհագիր-ճանապարհորդներ Բալագորին և Ցասկուտ ալ Համալին Արտաշատն անվանել են «Կարդաթ ալ-Քիրմիզ» (Կարմիր ավան) և «Կլիմիզի ավան»²⁷, իսկ 10-րդ դ. Գլին այցելած ալ-Իսաահրին, տեղում գործվող բոլոր քաղմագան գործվածքների հիշատակման ժամանակ կգրառի նաև, որ քաղաքում «նրանք (հայերը - Ա. Ս.) ունեն մերկ, որը կոչվում է «դրմեզ», որով ներկում են բուրդը և հայանի է, որ դա որդ է, որը բոժոժի մման ինքն իր վրա է գործում»²⁸: Գլին քաղաքի վերաբերյալ նույնօրինակ հիշատակության ենք հանդիպում նաև Իրն Հատքալի «Երկրագնդի մատյան» աշխատության մեջ, որտեղ հեղինակը առանձնացնելով այն հանգամանքը, որ գործվածքների զգալի մասը պատրաստվում են հատկապես այժի բրդից, շնչուտարում է, որ նրանք ներկվում են միայն «դրմիզի» (որդամ կարմիր) ներկով, որը օգտագործվում է նաև «...քաղմագալիսի այլ գործվածքներ ներկելու համար»²⁹: Այսօրինակ հետաքրքրությունը դեպի որդամ կարմիր ներկանյութը, հատկապես արարների կողմից (նիչենք վերը նշված օրինակները), այդքան էլ պատահական չէր, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ միջնադարում, համաշխարհային շուկայում շրջանառության մեջ էր գտնվում նաև լեռնական կարմիր ներկը, որը նույնպես որդից ստեղծված ներկանյութեր էր, սակայն իր կայունությամբ ու գույնի մաքրագույն հնչեղությամբ (մի վտրք մանուշակագույնի երանգով), առաջնակարգ համարում ունեյր հատկապես հայկականը և, որ հիմնականում այն էր առաքվում արարական խալիֆայի համադրա բոլոր երկրամասերը³⁰:

Որդամ կարմիր ներկատեսակի վերաբերյալ քաղմագիլ հիշատակություններ են մեզ ներկայանում նաև 15-18-րդ դդ. Հայաստանի տարածքով դեպի Իրան ուղևորվող եվրոպական ընկամագիտական խմբերի և անհատ ճանապարհորդների հուշագրություններից և օրագրային գրառումներից³¹ իսկ 19-րդ դ. առաջին կեսում Արարատ լեռը քարճրագող

ռուսական արշավախմբի ղեկավար, ռուսական զորքերի սպա Մարկովը, իր հաշվետվության մեջ կգրառի, որ 14. 000-15. 000 ռուսալազիկի վրա տեսել է որդան կարմիր միջատին²²:

Անվանի հայագետ-պատմաբան Ղևոնդ Ալիշանը, իր պատմագիտական ուսումնասիրություններում առանձնակի տեղ է հատկացնում որդան կարմրին: Գիտնականը ոչ միայն ճշգրտում է որդանի գոյության տարածքային սահմանները (Արարատ լեռան ստորոտ, Խոր Վիրապ և կեղեցու շրջակայք, Արաքս գետի հյուսիսային հատված՝ Արագածոտն, Կարբի, Մարդարապատ և Կոտայք ավանները), այլև հատուկ կարևորություն է տալիս տարածքի բուսական ժամկայքում հատկապես եղեգի սեզի առկայությանը, որն որդի գոյանալու և զարգանալու համար կենսական և ամենակարևոր նախապայմանն էր²³: Միջատի արուն կամ ճանճը սևաբույր է, վարդագույն գծով երիզված մարմնիկով, հատակ ընդգծված աչքերով: Ունի երկարավուն ոտքեր, և պարզ, թափանցիկ թևեր: Էզն իր յափերով ավելի խոշոր է, կարճրավուն երանգով և ունի երեք գույզ վաքր թույլ զարգացած թաթիկներ: Ղ. Ալիշանը որդան կարմրին համեմատում է մեղրանանձի և շերամի որդի հետ: Նա շատ դիպուկ բնորոշում է այս միջատին, որը «...ի շահ և ի շքեղութիւն է», և «ի զարդ պատճառանաց առանին, և ի վաճառ յօտար հրասարակա»: Գիտնականը գտնում է, որ իր որակով միայն լինական որդան կարմիրը կարող է որոշ չափով համեմատվել հայկականի հետ²⁴: 19-րդ դ. սկզբին որդան կարմիրով, որպես գլխական երևույթ, սկսեց հետաքրքրվել Էջմիածնի վանքի միաբան, ծաղկարար, գիտական պրպատուն մտքի տեր Սահակ ծաղկարարը (1780-1858. Սահակ Տեր-Գրիգորյան):

Սահակը ծնունդով Երևանցի էր, մահտեսի Տեր-Գրիգորյանի ընտանիքից: Կրթությունը ստացել էր Էջմիածնում և հասել եպիսկոպոսի աստիճանի: Բազմաշնորհ էր: Հետաքրքրվում էր տարբեր արհեստների առանձնահատկություններով, ուսումնասիրում էր բնության երևույթները, որոնց վերաբերյալ իր դիտարկումներն ու եզրահանգումները գրատել է մի քանի տետրերում²⁵: Նա գրադվում էր «լազվարդ» ներկանյութի օստումնասիրությանը (ներկերի մասին որոշ գիտելիքներ ձեռք էր բերել Էջմիածին ժամանած պաքսիկ մկարչից՝ 1810-1815 թթ), հետաքրքրվում էր պտտաշի կիրառության ու տարատեսակ քաղաղրամասեր ունեցող սոսինձների պատրաստմանը, ոսկեզօծման, արծաթապատման, մետաղամշակման և անգամ կաշենյութը վարադելու հարցերով և այլն և այլն²⁶: Ելնագում հիմնել թրքի արտադրություն՝ թրքի պատրաստման իր կողմից մշակված քաղաղրատունի հիմքով:

Այդուհանդերձ, մրա ամենաուշագրավ հետազոտություններն առնչվում են հատկապես որդան կարմիր տերկատեսակին, որի դրդապատճառը կհամդիսանա 1815 թ. Տիգրանակերտցի մի ծերունու հետ

հանդիպումը և վերջինիս կողմից առաջարկը՝ փնտրելու որդան կարմրից յարահատուկ յուր առանալու ուղիներ, որի փորձերը կատարվել են, սակայն ավարտին չի հասցվել այդ ձեռնարկումը³⁷։ Սահակի մի քանի տարի տևած հետազոտությունները պսակվում են հաջողությամբ և մա կարողանում է գտնել միջատը մշակելու իր տարրերակը, որն ապահովում էր մարագույն կարմիր մերկի առացումը (ցասցախի մշակում, կրաջրի և ծծմբանյութի օգտագործում, կալաքարի ու զինու հավելումներով ևն)։ 1820-ական թթ., իր իսկ հավաքված երեք փութ միջատներից Սահակը կարողանում է պատրաստել մերկանյութի քանակ, որով մերկված գործվածքների գունային որակի վերաբերյալ մա մերկայացնում է մամակառդերմեր էջմիածնի իռկաթ խորհրդին, Երևանի նահանգապետ Վ. Ռեյբուքովին և Կովկասի կառավարիչ բարոն Գ. Ռոզենին³⁸։ Իր քաջատրագրեցից մեկում, որը վերնագրված էր «Օրինակ կազմելոյ գկարմիր որդան կամ մետուցման նորին, թէ որով կերպի մարք է լինել», Սահակը մամրամասն նկարագրում է աշխատանքը և նշում, որ քազմաթիվ փորձերի շնորհիվ գտել է որդան կարմիրից մերկ ստանալու 13 «կերպ»³⁹։ Սահակ ծաղկարարի կողմից առաջարկված մերկատեսակի պատրաստումը դասում է Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Իսսիֆ Զ. Համելի (1788-1865) և ֆինանսների նախարար Ե. Պամկրիմի ուսումնասիրության և հաստիկ զեկուցագրի առարկան⁴⁰։ Միևնույն ժամանակ, ակադեմիկոս Ի. Համելի կողմից մերկայացվում է իտալաներեն ու գերմաներեն լեզուներով արված գրավոր նզրակացություն ու քաջատրագիր՝ նվրուպակրան մասնագետներին ևս նյութին հարողողակից դարձնելու նպատակով⁴¹։

1833 թ., Ի. Համելը, Ս. Պետերբուրգի գիտությունների ակադեմիա է ուղարկվում Սահակ ծաղկարարի կողմից առացված որդան կարմիր մերկանյութը (գործի ակտիվ միջնորդներ ու հովանավորողներ էին հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Չորագեղցին և բարոն Վ. Ռոզենը)։ 1834 թ. մայիսի 4-ին Ի. Համելը ուսումնասիրելով մերկանյութի քաղադրամասերը, իր նկատառումները մերկայացնում է գիտությունների ակադեմիայի հանձնախմբին, որտեղ պարզաբանվում էին մերկանյութի քիմիական և ֆիզիկական առանձնահատկությունները, ինչպես և արդյունաբերության մեջ այն օգտագործելու լայն հետանկարները։ Իր զեկույցում գիտնականը տալիս է մաև իր կողմից կատարված մերկի անվանման խոր, գիտական քաջատրությունը, որի համաձայն հայկական Ռորդան կարմրից են ծագում «որդ» և մի շարք այլ բառեր տարբեր լեզուներում, ինչպես մաև նրախտագիտության խոսք էր հայտնում, որ իր կատարածը գնահատվել է քարձր առլայմների կողմից և մերկին տրվել է իր անունը. «Porphyrophova Haemel»⁴² (ցավոք, մոռացության էր տրվել հեղինակը՝ Սահակ ծաղկարարը)։

Նույն 1833 թ. Պետերբուրգում քաջված մանուֆակտուրային ցուցահանդեսի առաջնային ցուցամուշնեքից էր մահ Ռոդյան կարմիրը, որի վերաբերյալ ժամանակի մի քրթակցության մեջ կարդում ենք, «Այստեղ (ցուցահանդեսում—Ա. Ս.) ամենահետաքրքիրը ոչ մեծ մի ապակե աման է ռուսական կոչեմիլով, որը ստանում են... հայկական գավառում: Ասում են, որ այն իբր որակով չի գիջում արևմտյան հնդկաստամյանին: Էրիվանի մոտ շատ ծառեր են աճում, որոնց վրա զարգանում է այս կոչեմիրը»⁴³: Երկու տարի անց, Ի. Համելի անմիջական ղեկավարությամբ, Պետերբուրգի Ակադեմիային կից Տիսնուդոզիական ինստիտուտում պատրաստված կարմիր ներկն ու նրանով ներկված բուրդը ցուցադրվում են մահ 1835 թ. Մոսկվայում քաջված Մանուֆակտուրայի Երկրորդ ցուցահանդեսում, որտեղ նյութն ու հայտնագործությունը արդեն ներկայացվում են որպես գործը ֆինանսավորող քարոն Գ. Ռոզենի սեփականությամբ⁴⁴: Հետաքրքրական է, որ այս ցուցահանդես այցելած Նիկոլայ Ա քազավորին միլիտարեթվում են Սահակ ժողկարարի կողմից որդան կարմիրով ներկված մի քանի քաշկիմակներ:

Ծնայած այն հանգամանքին, որ որդան կարմիր ներկանյութը արդյունաբերության մեջ օգտագործելու առաջարկը չիբակամացավ և մատուցեց մոռացության, այդուհանդերձ Սահակ ժողկարարի կատարածը մատամբ գնահատվեց. 1834 թ մարտի 28-ին, քարոն Գ. Ռոզենը շնորհավորական մամակ է ուղղում Սահակ ժողկարարին և նրան է ուղարկում Պետերբուրգից ստացված աղյամանդակուտ մատամին, իսկ 1839 թ., ռուսական կառավարությունը, քազմակողմանի ու միլիտար գործունեության համար Սահակ Տեր-Գրիգորյանին (Սահակ ժողկարարին) նշանակում է ցմահ թոշակ (200ռ.)⁴⁵:

Հետաքրքրության է արժանի և այն փաստը, որ Սահակ ժողկարարի աշխատանքին ծանոթ է եղել մահ հայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, գրող Միքայել Կարամազյանը, որը 1863 թ. մայիսի 1-ին, Պետերբուրգից իբր եղբորը՝ Դազարեսին գրած մամակում խնդրում է միջնորդել և Ամանիա Սուրբանշահի ուշադրությունը հրավիրել «Coccinella» ընտանիքին պատկանող որդերի ուսումնասիրության վրա, որը «...գտնվում և աճում է Հայաստանում, Արաքսի եովտում»: Գնահատելով Սահակ նյութակապուսի գործունեությունը, Մ. Կարամազյանը ցավով նշում է, որ մահ իբր հետ գեղեզման տարավ դրանք անցնելու և հավաքելու գլխությունը, և ամերասեշտ է գրուցել գործն ինացող մարդկանց հետ և «Արարատյան դաշտի նայ շինականների քարքառով մի քրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է անեցնել և ժողովել որդան կարմիրը, իսկ դահ կարևոր քան է աղքատ շինականների համար»⁴⁶:

Որդան կարմիրին մվիրված Սահակ ծաղկարարի ուսումնասիրության վերջնական և բարձր գնահատումը կատարվում է Ղ. Ալիշանի կողմից, որը ոչ միայն ուսումնասիրել է նրա օրագրերը (Սահակ ծաղկարարի խրոքս որդի, գրական և թատերական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանը օրագրերի ձևագիրը ուղարկել էր Վենետիկ, մեծանուն գիտնականին), այլև որպես երախտիքի գնահատում, Արարատ աշխարհին մվիրված իր հիմնադար հետազոտության մեջ տեղադրում է նրա վիճակը ղեկավարը⁴⁷:

20-րդ դ. 30-ական թվականներին հայկական Որդան կարմիրով կզբաղվեց Մեսկվայի Պետական համալսարանի կողմից Հայաստան գործողված արչավախմբի անդամները, քայք քանի որ նրանց համար պարզարանված չէր «Որդանի» կենսաբանությունը, ուսումնասիրությունները կավարտվեց անարդյունք⁴⁸:

Ժամանակի ու պատմության մեջ կմնան հայկական գեղեցկագույն ներկատեսակի վերաբերյալ հիշատակումներն ու նրա կիրառությանը համրավ ձեռք ընթաց հայկական հյուսածո լեռնի աշխարհույակ օրինակները:

ASHOT STEPANYAN

VORDAN KARMIR (RED WORM)

The wicker art is one of the finest sphere of the Armenian applied art and with its decorative structure, distinctive peculiarities of ornament, use of thread and paint materials has created such originality of the Armenian weave, which brought to it world fame and became a finest part of the Armenian applied art history and the historical-cultural achievement of a whole people.

Used in weave the paint materials were often one of the most important criteria of things evaluation, and the paint art was one the oldest spread in Armenia. At the base of the art spreading there was also existed in Armenia paints diversity, which was well-known since oldest times having vegetable, animal and mineral genesis. In row the paint material VORDAN KARMIR (RED WORM) was often the object of the special interest and study of travelers, geographers, historians and specialists. It was delightful with its quality and paint peculiarities, having world fame was evaluated on equal to gold, and remained in history as a mysterious phenomena with the Armenian monopoly.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տն՝ **A. Мю.** *Мусульманский Ренессанс*, М., 1973, с. 369:
2. Նայմ տեղում:
3. Նայմ տեղում:

4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. A. von Kremer, *Kulturgeschichte des Orients unter den Chalifen*, Wien, 1875, p. 302:
11. А. Меу, Նշվ. աշխ., էջ 36:
12. Թանգարան հայկական հիմ ու նոր դարերյան: Մաս Բ. Անկանոն գիրք նոր կտակարանաց: Վննետիկ, 1898, էջ 92:
13. Ծամալուրք, Փնտրվադի Ը, Կ. Պոլիս, 1730 ք.:
14. Նույն տեղում: Ներսես Ենոքիայի Թուրք Ընդհանրական, էջ 66:
15. Որդան կարմիրի մասին տես' Հ. Տաճատ Երարոցման, Որդան կարմիր «Գրքեզ» կամ հայկական կարմիր ներկ. Նիքոսի հայ գորգարտեստի պատմություն: «Տազմալիպ», No 33, Վննետիկ, 1991:
16. Աստուածաշունչ, ԵՄԱՅԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆԸ, ԳԼ Ա, 18:
17. Աստուածաշունչ, ՀՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԶԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ, ԳԼ ԺԸ, 12:
18. Աստուածաշունչ, ՀՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԶԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ, ԳԼ ԺԸ, 16:
19. Մովսես Խորենացի, Սրբոյ Հօրն Մերոյ Մովսեսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վննետիկ, 1865, Վննետիկ, 1865, էջ 611:
20. Ա. Արքահայկան, Անանիա Երրակացու Մատենագրութիւնք: Երևան, 1944, էջ 351:
21. Դազար Փարպեցոյ Պատմութիւն Խայոց եւ թաղք առ Վախան Մամիկոնեան: Աշխատութեամբ Գ. Տըր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց: Տիֆլիս, 1904, էջ 10:
22. Ներսես Ենոքիայի Բանք Չափաւ, Երևան, Մատենադարան, ձև. • 9071:
23. Ներսես Ենոքիայի, ՏՃ. Ներսեսի Ենոքիայոյ Հայոց կարողիկոսի Բանք Չափաւ, Վննետիկ, ՌՄՀԹ [1830], էջ 121:
24. Н. А. Караулов, *Сведения арабских географов IX—X веков по Р. Хр. — о Кавказе, Армении и Азербайджане*. В кн.: Сборник материалов для описания местностей и племен Кавказа: вып. XXXI, Тифлис, 1902, с. 39.
25. Там же, вып. XXVIII, Тифлис, 1908, с. 36.
26. Masoudi, *Les Prairies d'or*. Texte et traduction par C. Barbier de Meynard. T. IV, Paris, 1871, p. 102:
27. Արարական աղբյուրների Հայաստանի և Խարևան երկրների մասին: Կազմեց Հ. Թ. Նալբանդյանը: Երևան, 1965, էջ 129, 97: Արարակի մատենագիրների Հայաստանի մասին: Հավաքեց և քարգմանեց Բ. Խաչարյանը: Վիեննա, 1919, էջ 26:
28. *Vine regnorum. Descriptio dittonis mostemicae auctore*. 1967. Abu Ishak al-Parisi al-Istakhrī. Ed. M. J. de Goeje, Lugduni Batavorum, 1870 (BGA. I), p. 188.

29. Իրն Հատկապես Երկնագնդի Մատյան, Բիւրոս, 1978, էջ 294. (արտ.):
30. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей с древних времен (V в. до н. эры - XV в. нашей эры). Ер, 1954, с. 229-230.
31. Տես՝ Հ. Տանաոտ Եւրոպոսեան՝ Նշվ. աշխ., էջ 22-31:
32. «Բազմալիւր», 1890, էջ 276-277:
33. Ղ. Ալիշան, Այրարատ: Վեճնոցն, 1895, էջ 284: Որդան կարմիր ներկի մասին հարուստ տեղեկութեանն է հաղորդում հայագետ Հ. Ջյուրոյանը՝ Էջեղով անգամ միա քիմիական կառուցվածքի յափանդէլները՝ $C_{27}H_{26}O_{11}$ տես՝ Հ. Ջյուրոյան, Որոսն (կարմիր) կամ Kirmiz. «Բազմալիւր», 1932, No 2, էջ 62-68, No 4, էջ 156-163:
34. Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 284
35. Երևան, Մատենադարան, ձեռ. No 6247, Նոյն տեղում, ձեռ. No 9029, Իսահակ Ծաղկարար, Երաստը ծաղկարարութեամբ: Երևան-Եջմիածին, 1815-1840; Նոյն տեղում, ձեռ. No 6248. Գաղափար օրինակը մամուրանկայոց Սահակի ծաղկարարի: 1819-1837 թթ.: Սահակ Ծաղկարարի մասին տես նաև Ա. Փաշայան, XIX դարի քիմիան հայ քննադետների աշխատություններում: Երևան, 1990, էջ 54-59:
36. Տ. Ղազանչյան, Սահակ Ծաղկարար. - «Մանրեր Մատենադարանի», Եր., 1956, No 3, էջ 131-139:
37. Երևան, Մատենադարան, ձեռ. No 6247, էջ 16:
38. Центральный Государственный Исторический Архив Грузии, ф. 2а, инв. хр. 2571 - "О размножении Армянской кошенили и о добывании из нее краски": Սահակ Տեղ-Գրիգորյանի գրառումներից կազմված այս գրքին կցված է տեքստային բարձրամուրյունը և Հովհաննես կաթողիկոսի կնդակը ուղղված բարոն Գ. Ռոզենին: Փաստաթղթերի մեջ ներգրավված է նաև Մ. Վոսկրայնիկոսի ընդարձակ ռառամնասիրությունը որդան կարմիրի վերաբերյալ:
39. Գրքից երեք փաստաթուղթ (այդ բովան մաս Սահակ ծաղկարարի մամուլը հասցեագրված բարոն Գ. Ռոզենին), երաստարկել է Լ. Մելիքան-Բեկը. տես՝ Լ. Մելիքան-Բեկ, Հայաստանում կարմիր որդան մեղրի արտադրության պատմությունը: ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1946, NoNo 2-3, էջ 17-26:
40. Центральный Государственный Исторический Архив РФ (ЦГИА РФ), ф. 18, оп. 2, д. 827, 1833-1836 гг. Գրքի վերնագրված է "Дело по рапорту коллежского советника Калиновского об искусственном разведении и использовании для окраски тканей обнаруженной в Армении". (Վավերագրի վերաբերյալ առաջին էջշատակումները կատարում է արվեստարան Չ. Քառայանը. տես՝ Յ. Կարան, Набойка в Армении, Ереван, 1978, с. 31-32): Վավերագրում հետաքրքրական է նաև որդան կարմիրին մտացության մատնելու յորօրինակ փաստակը «Դժբախտ քաղաքական իրադարձությունները, որոնց ենթարկվել է Հայաստանը բազում դարերի ընթացքում, որդան կարմիրի գործածությունից հետամալու հիմնական պատճառներից մեկն է: Վավերագրից պարզվում է նաև, որ որդան կարմիրով առաջին հետաքրքրվողներից է եղել մահ լեզվագետ,

քննախոյզ-արեւելագետ Էրիցըիս Պարրոտը, տես՝ Parrot Friedrich, Reise zum Ararat, T. I, Berlin, 1834, p. 106-107 և նույն զրքի երկրորդ հրատարակությունը, Leipzig, 1985, p. 80-82: Որդան կարմիր մերկին վերաբերվող Ֆ. Պարրոտի գրառման բարձրագույնը տես՝ Խ. Արուսյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. VII, Երևան, 1956, էջ 267-268:

41. Über cochenille am Ararat und über wzur zalcochenille im Allgemeinen von J. Hamel. — "Memoires de L'Academie imperiale des sciences de St. Petersburg, VI^{me} serie. Sciences Mathematiques, Physiques et Naturelles" T. III, Leipzig, 1835, p. 9-65. Ուսումնասիրությանը կցված են մակ վիմագրական գծանկարներ երեզմի ու որդի ձվերի, ինչպես նաև որդի պատկերագրություններով: Նույն աշխատանքում տեղադրված է նաև ակադեմիկոսներ Ի. Համելի և Փ. Բրանտոյտի կողմից 1833 թ. սեպտեմբերի 13-ին Ռուսաստանի զննությունների ակադեմիայի միտին մերկաբացված համառեղ զննուցման տեքստը որը վերաբերվում էր հայկական և մեքսիկական որդան կարմիր մերկերի համեմատությանը (նույն տեղում, էջ, 65-68): Ի. Համելի զննուցման տեքստի համառոտագիրը հրատարակվել է նաև ռուսերեն. "Об Араратской кашенили. Извлечение из сочинения академика Гамеля, напечатанного в записках Императорской Академии Наук" — "Журнал министерства внутренних дел", Ч. XVII, М., 1835, июль, с. 192-217, ինչպես նաև. "Об Араратской кашенили. Донесение Императорской Академии Наук от г-на академика Гамеля" — "Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа". Ч. 2, Москва, 1838, с. 391-433.
42. Автобиография И. Гамеля. Ленинград, Гос. публичная библиотека им. М. Е. Салтыкова-Щедрина, отдел рукописей, ф. 129, уд. хр. 1059, с. 5.
43. [Н. Гр.] Наблюдения в отечестве. Выставка 1833 года. [Пись. — в Департ.] — "Северная пчела", СПб., 1833, 23 мая, с. 447.
44. Указатель произведений отечественной промышленности, находящихся на выставке 1835 года в Москве. М., 1835, с. 3. Отделение 1. Первообразные и полуобработанные материалы, No 382.
45. Երևան, Սևտեմադարան, մեռ. No 6247
46. Միջայել Նաչապետյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. 5, Երևան, 1984, էջ 271:
47. Դ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 484:
48. 1930-ական թթ կատարած հետազոտությունների մասին տես. А. С. Аветян, К вопросу о кошенили в Армении. — "Известия" Армянского филиала АН СССР, 1940, No 4-5, с. 231-237; Լ. Բեկ-Հովսեփյան, Արարատյան Որդան կարմիրը և նրա արդյունաբերական օգտագործման հնարավորությունները, Երևան, 1932:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քայրորդյան Վահան	
XX դարի 20–30–ական թվականների ըրդական ապստամբությունները և թուրք–իրանական հարաբերությունները.....	5
Քաղղասարյան Մուրին	
Բանակի դերը 1960–90–ական թվականներին Թուրքիայի նորազնամ գաղմընրացում.....	28
Կարապետյան Ռուբին	
Պայքարի նոր փուլ Պաղեստինի հանդեպ.....	40
Համբարյան Ազատ	
Սուլթանական կառավարության ազգային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի մանենդական քնակչության նկատմամբ (1898–1908 թթ.).....	50
Հովհաննիսյան Անուշ	
Օսմանյան կայսրության լրատվության պատմությունից (XIX դ.).....	62
Հովհաննիսյան Հ. Արտուկ	
Երեսարդենի կարգավիճակի հարցը ՄԱԿ–ում.....	69
Հովհաննիսյան Նիկոլայ	
Օսմանյան կայսրությունում Հայկական հարցի լուծման փրամանյան մոդելը.....	80
Ղազանջյան Ռևի	
Խրեհրդա–քեմալական հարաբերությունները 1920 թ. և Հայաստանի խնդրը մոսկովյան արխիվների գաղտնի փաստաթղթերի լրյսի ներքո.....	98
Մեռի Եսքրո	
Միջըրդական հակամարտությունների պատմաանների հարցի շուրջ.....	124
Սամվելյան Կարինն	
ՄԱԿ–ի տանկչխանները Իրաքի նկատմամբ.....	137
Սաֆրաստյան Ռուբին	
Հայ–թուրքական հարաբերությունների ուսումնասիրության նշանակչությունը միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսության համար. Ռոսխանական դիտարկչաններ.....	147
Ստամբուլյան Անուշ	
Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականությունը Մեռիի Բազարգանի կառավարման շրջանում.....	156

Բողոքյան Ազատ	
Պետության և կաթոլիկոսարանի փոխանարարներությունները Կիլիկյան Հայաստանում (մախամոմողրական շրջան)	169
Գրեկյան Երվանդ	
Ուսուցիչ ճակատանայաղ (պատմա-համեմատական վերլուծություն)	180
Կաստիկյան Քրիստինե	
Կաթոլիկ քարոզչությունը Իրանում և իայ իրականությունը	200
Հարությունյան Նիկողայ	
Նոր ընթերցումներ և մեկնարանություններ Այաննիսի ներառյալ ուրարտական սեպագրում	219
Մաքսույան Արթուր	
Քրիստոսաբանություն ու փրկագործական իշխանը ըստ «Ս. Գրեգորի վարդապետության» և Ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Կույումն ընծայության» երկի	233
Մովսիսյան Արտակ	
Օտարների կողմից մախամոմողրյան Հայաստանում թողնված գրավոր հուշարձանները և դրանց պատմական մշանակությունը	242
Մուրադյան Մամվել	
Հակոբ քանանա Կեսարացու «Հիշատակարանն» իբրև աղբյուր	262
Չաբանյան Պավել	
Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարի II կեսին և իայ քաղաքական միտքը	277
Քոսյան Աբամ	
Իստվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում	315

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Ավետյան Կարինե	
Տրդատ եպիսկոպոս Պալյան (1850-1923. կենսագործունեության համառոտ ակնարկ)	332
Խամոյան Մաքսիմ	
Լեզվի կառուցվածքի ձևավորման գործընթացի մոդելավորման հարցի շուրջ	354
Խաչիկյան Մարգարիտա	
Խուռիերին հողի ծագման և զարգացման շուրջ	364
Մկրտչյան Ներսես	
Հայերենի արեալային հոգնակներտ ձևույթները	369
Չալանյան Կառլին	
Հայ քրդագիտության պատմությունից (քրդագիտական առաջին կոնֆերանսը)	378
Ստեփանյան Աշոտ	
Որդան կարմիր	387

СОДЕРЖАНИЕ

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

Байбурджян Ваган	
Курдские восстания и ирано-турецкие отношения в 20–30-х гг. XX века	5
Багдасарян Сурен	
Роль Армении в процессе модернизации Турции в 1960–1990-х годах	28
Карапетиан Рубен	
Новый этап борьбы за Палестину	40
Амбарян Азат	
Национальная политика султанского правительства по отношению к мусульманскому населению Западной Армении (1898–1908 гг.)....	50
Оганесян Ануш	
Из истории просвещения в Османской империи (XIX в.).....	62
Оганесян Артак О.	
Вопрос о статусе Иерусалима в ООН	69
Оганесян Николай	
Ливанская модель решения Армянского вопроса в Османской империи	80
Казанджян Рем	
Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов	98
Мгом Шахро	
К вопросу о причинах и характере межкурдских конфликтов	124
Самвелян Карине	
Санкции ООН в отношении Ирака	137
Сафрастян Рубен	
Значение изучения армяно-турецких отношений для современной теории международных отношений: предварительные замечания	147
Стамболиян Ануш	
Политика США по отношению к Ирану в период правления Мехди Базаргана	156

Бозоян Азат	
Взаимоотношения государства и католикосата в Киликийской Армении (домонгольский период).....	169
Грекиан Ерванд	
Битва Увуша (историко—сравнительный анализ).....	180
Костикян Кристиане	
Католическая пропаганда в Иране и армянская действительность.....	200
Арутюнян Николай	
Новые чтения и интерпретации в нововыявленной урартской надписи Айаниса.....	219
Матевосян Артур	
Христология и сотериологический идеал согласно "Учению св. Григора" и "Огласительным поучениям" св. Кирилла Иерусалимского.....	233
Мовсисян Артак	
Письменные памятники в домаштопской Армении, оставленные иноземцами и их историческое значение.....	242
Мурадян Самвел	
"Памятная записка" священника Ацопа Кесараца как источник.....	262
Чобанян Павел	
Армяно—грузинские взаимоотношения во второй половине XVIII века и армянская политическая мысль.....	277
Косян Арам	
Религиозные центры Исувы в хеттский период.....	315

ФИЛОЛОГИЯ И КУЛЬТУРА

Аветян Карине	
Епископ Трдат Пальян (1850—1923: краткий очерк биографии и деятельности).....	332
Хамоян Максим	
К проблеме моделирования процесса становления языковой структуры.....	354
Хачикян Маргарита	
О возникновении и развитии хурритского артикля.....	364
Мкртчян Нерсес	
Армянские ареальные показатели множественности.....	369
Чачатян Карлен	
Из истории армянской курдологии (первая курдологическая конференция).....	378
Степанян Ашот	
Вордан Кармир.....	387

CONTENTS

MODERN AND CONTEMPORARY HISTORY

Bayburdyan Vahan	
The Kurdish Uprisings of 20 th Century 20-30-ies And the Turkish-Iranian Relations.....	5
Baghdasaryan Suren	
The Role of Army in Turkey's Modernization in 1960-1990S	28
Karapetyan Rouben	
A New Stage of Struggle for Palestine	40
Hambaryan Azat	
The National Politics of Sultan Government Toward Muslim Population of Western Armenia (1898-1908)	50
Hovhannisyan Anush	
From the History of Enlightenment in the Ottoman Empire (19 th century).....	62
Hovhannisyan Artak H.	
The Status of the Jerusalem in the UNO.....	69
Hovhannisyan Nikolay	
The Lebanese Model of Solution of Armenian Question in the Ottoman Empire.....	80
Ghazandjyan Rem	
The Soviet-Kemalist Relations in 1920 and the Question of Armenia under the Light of Secret Documents in Moscow Archives	98
Mhoi Shakro	
On the causes and nature of the conflicts between the Kurds.....	124
Samvelyan Karine	
The Sanctions of United Nations Against Iraq	137
Safrastyan Rouben	
The Importance of the Study of Armenian-Turkish Relations for the Theory of the International Relations. Preliminary Remarks	147
Stambolcuyan Anush	
The Policy of the USA Towards Iran During Mehdi Bazargan.....	156

ANCIENT AND MIDDLE AGES

Bozoyan Azat	
Les Relations Entre l'État et le Catholicosat in Arménie Cilicienne (Période pré-mongol)	169
Grekyan Yervand	
The Battle of Uaush (A Historic-Comparative Analysis)	180
Kostikyan Kristine	
Catholic Propagation in Iran and the Armenian Realty.....	200
Harouthiounyan Nicolay	
New Readings and Interpretations in the Urartian Ayanis Inscription.....	219
Matevosyan Arthur	
The Christology and Soteriological Ideal according to "St. Gregory's Doctrine" and "The Baptismal Catechism by St. Cyril of Jerusalem"	233
Movsisyan Artak	
Inscriptions Made by Foreigners of Pre-Mashtotsian Armenia and Their Historical Estimation	242
Muradyan Samvel	
The Synodicon by Priest Hacob the Caesarian as a Source	262
Chobanyan Pavel	
Armenian-Georgian Relations in the Second Half of the XVIII Century and the Armenian Political Idea	277
Kossyan Aram	
The Religious Centers of Isuwa in the Hittite Period	315

PHILOLOGY AND CULTURE

Avetyan Karine	
Trdat Pivxque Palean (1850-1923)	332
Khamoyan Maxim	
On the Problem of Modelling the Process of the Linguistic Structure.....	354
Khachikyan Margarit	
Towards the Origine and Evolution of the Hurrian Article	364
Mkrtchyan Nerses	
Armenian Areal markers of Plurality	369
Chachani Karlen	
From the History of the Armenian Kurdish Studies (The First Kurdological Conference)	378
Stepanyan Ashot	
Vordan Karmir (Red Worm)	387

ՄԵՐՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵՐԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ

XXI

Գեղ. խմբակի՝ Ա. Ա. Քաղաքաբյան
Դասակարգ. ճակատի՝ Ա. Գ. Կարաբյուրյան

Տպագրությանը՝ օխտի՝ 60x84/16:
Ծախսը՝ 25.5 ժամ., 21.41 էրան. ժամ., 23.72. ճամ.:
Տպագրությանը՝ 300 Գրե՛լ՝ արձանագրում

Տնօրինակ՝ «Ունեվակ-97» հաստատությունից տարանում,
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ. 54-89-32, 54-05-17,
էլ. փոստ՝ zangak@arminfo.com:

Տպագրված է «Ունեցակ-97» հրատարակչության տպարանում,
375010, Երևան, Վարդանանց փամբուղի 8, հեռ. 54-89-32, 54-05-17,
էլ. փոստ՝ zangak@arminfo.com: